


ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

**ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ
(XIX Դ. ՎԵՐԶ - XX Դ. ՍԿԻՉԲԲ)**



V

*Ակադեմիկոս
Հրանդ Ավերիսյանի հիշատակին*



**ACADEMIE DES SCIENCES DE LA
REPUBLIQUE D'ARMENIE
INSTITUT D'HISTOIRE**

VARUZHAN POGHOSYAN

**LA PREMIERE ETAPE DU GENOCIDE
DES ARMENIENS A TRAVERS LE PRISME
DE L'HISTORIOGRAPHIE ET DE LA
PENSEE PUBLIQUE FRANÇAISES
(FIN DU XIX^e – DEBUT DU XX^e SIECLES)**

EREVAN 2005

LES EDITIONS "GITOUTIOUN"

947.925 0-1915 →



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՔԲ
(XIX Դ. ՎԵՐՉ – XX Դ. ՍԿԻՉՔԲ)**

A II
90548



ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ-63.3 (2Հ)

Պ 797

Հրատարակվում է պետական աջակցությամբ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պ 797 **Վարուժան Պողոսյան**. Հայոց ցեղասպանության առաջին փուլը
ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի զնահատմամբ
(XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Ե., «Գլխություն» հրատ., 2005, 272 էջ:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ
հեղինակը ձեռնարկել է XIX դարի վերջի – XX դարի սկզբի ֆրանսիական
պատմագրության նվաճումների և ելևէջների համակողմանի ուսում-
նասիրությունը՝ ցեղասպանության առաջին փուլի՝ համիլոյան կոտորած-
ների պատմության զնահատման ասպարեզում: Մենագրության մեջ
քննական վերլուծության են ենթարկվել քաղաքական տարբեր կողմնո-
ւյալներ ունեցող ֆրանսիացի պատմաբանների, ինչպես նաև քաղա-
քական ու կյուրական գործիչների ուսումնասիրությունները:

Հասցեագրվում է պատմաբաններին և ընթերցող հանրությանը:

Պ $\frac{0503020913}{703(02)-2005}$ 2005

ԳՄԴ-63.3 (2Հ)

ISBN 5 – 8080 – 0628-7

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2005

ԱՌԱՋԱԲԱՆ

*Նրանց [հայերի] գործը
մարդկության գործն է:
Անատոլ Ֆրանս*

XIX դարի 90-ական թվականներին Աբդուլ Յամիդ II-ի նախաձեռնությամբ ծրագրված և Օսմանյան կայսրության տարածքում իրականացված արևմտահայության զանգվածային բնաջնջման քաղաքականությունը, որը հետագայում շարունակեցին անշեղորեն կենսագործել երիտթուրքերն ու քեմալականները, տասնամյակներ անց քաղաքագետները և միջազգային իրավունքի մասնագետները բնութագրեցին իբրև XX դարում արձանագրված առաջին ցեղասպանություն:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջադրվել են այս եղելության ժամանակագրական եզրերը սահմանող զանազան, անգամ անհարիր տեսակետներ: Ըստ պատմագրության մեջ գերիշխող տեսակետի՝ Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915 թ., քանզի բնաջնջման գործընթացը կլանել է անհամեմատ մեծ թվով՝ շուրջ մեկուկես միլիոնի հասնող զոհեր: Այս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ 1915 թ. ցեղասպանությանը նախորդել ու հաջորդել են համապատասխանաբար՝ համիդյան և քեմալական կոտորածները:

Դժվարությամբ ենք ըմբռնում, սակայն, թե որքանո՞վ է արդարացի միայն XIX դարի 90-ական թվականներին պետական քաղաքականության մակարդակով, էթնիկական հողի վրա տեղի ունեցած շուրջ 300000 մարդու ոչնչացման փաստը բնորոշել իբրև կոտորած: Ամենևին մտադրություն չունենալով խորամուխ լինելու այն տարակարծությունների զանազան մանրամասների մեջ, որոնց այս հարցը տեղիք է տվել,

այդուհանդերձ, նկատենք, որ ցեղասպանությունը դատապարտող՝ ՄԱԿ-ի Գլխավոր նստաշրջանի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածն ամբողջությամբ անտեսում է զոհերի թվաքանակը, իսկ փոխարենն ուշադրությունը կենտրոնացնում ցեղասպանության երևույթի սահմանման վրա¹:

Բացի դրանից, ժամանակակից ցեղասպանագետները «դիտավորության» հանգամանքը համարում են «ցեղասպանության» երևույթին բնորոշ առանցքային հատկանիշներից²: Հայրենական պատմաբաններից այս հարցի քննությանն անդրադարձել է Ռ. Սաֆրաստյանը, որի՝ «ցեղասպանությունը» «կոտորածից» տարբերակելու հարցում առաջադրած մեկնաբանությունները միանգամայն ընդունելի են: Վկայակոչելով «ցեղասպանության» հիմնական բնորոշիչներից մեկը՝ ռասայական, ազգային կամ էթնիկական խումբը ոչնչացնելու հարցում «մտադրվածության» կամ «դիտավորության» հանգամանքը, նա հասարակագիտական և իրավագիտական տեսանկյուններից այդ երևույթների միջև, իրավամբ, արծանագրում է «որակական», «այլ ոչ միայն քանակական» զանազանություն³:

Այս կտրվածքով՝ Հայոց ցեղասպանության ժամանակագրական շառավիղները սահմանելու հարցում շատ ավելի իրատեսական մոտեցում է ցուցաբերել ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը. «Երբ խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրու-

¹ Stén Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, т. 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментарий доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, М., 2002, с. 29.

² Stén օրինակ J. Balint, I. W. Charny, Définitions du génocide. – Le livre noir de l’humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 43-44.

³ Ռ. Սաֆրաստյան, Նախացեղասպանություն (proto-genocide). տեսության և պատմության խնդիրներ (Օսմանյան կայսրության օրինակով). – Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, *Ռուբեն Սաֆրաստյանի* ընդհանուր խմբագրությամբ, III, Երևան, 2005, էջ 29, 33:

թյունում Հայոց ցեղասպանությանը,– գրում է նա,– հարկ է նկատի ունենալ ոչ միայն 1914-1918 թթ. համընդհանուր կոտորածը, այլև XIX դարի վերջի և XX դարի սկզբի զանգվածային ջարդերն ու կոտորածները»⁴: Հայոց ցեղասպանության պատմության խոշոր գիտակի խորին համոզմամբ՝ «կարևորը զոհերի քանակը չէ. մի դեպքում՝ 300 հազար, մյուս դեպքում՝ միլիոնուկես: Մենք գիտենք, որ լինում են ինչպես մեծ, այնպես էլ փոքր ծավալի ցեղասպանություններ»⁵: Ըստ այդմ՝ 1890-ական թվականներին տեղի ունեցած զանգվածային կոտորածները նա բնութագրել է իբրև ցեղասպանություն⁶:

Հիրավի, մեր համոզմամբ՝ Հայոց ցեղասպանությունը հարկ է դիտել իբրև շուրջ երեք տասնամյակ հարատևած (1894-1922)՝ փուլային, անհամաչափ զարգացում ունեցած միատևական գործընթաց, որը պետական քաղաքականության մակարդակով⁷ իրականացրել են թե՛ համիդյան և թե՛ երիտթուրքական վարչակարգերը, ինչպես նաև քեմալականները: Հայոց

⁴ М. Г. Нерсисян, Предисловие.– Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Под редакцией М. Г. Нерсисяна, второе, дополненное издание, Ереван, 1982, с. III.

⁵ Տե՛ս Մ. Ներսիսյան, Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջը.– Մ. Ներսիսյան, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 14:

⁶ Մ. Ներսիսյան, Օսմանյան պետության «քաղաքակրթական միփայի» մասին.– Նույն տեղում, էջ 64, 67:

⁷ Պետական քաղաքականության առկայության հանգամանքը, որը ցեղասպանության պարագայում մենք համարում ենք *conditio sine qua non*, ժամանակակից ցեղասպանագետների շրջանում, այդուհանդերձ, տեղիք է տվել, տարակարծությունների: Տե՛ս օրինակ մեր օրերի խոշորագույն ցեղասպանագետներից՝ այս տեսակետի կողմնակից, ամերիկյան հայտնի քաղաքագետ Ռուդոլֆ Ջ. Ռումմելի և այն վիճարկող՝ Երուսաղեմում Չոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն Իսրայել Չառնիի բանավեճն այս աղիթով. I. W. Charny, *Démocide: vers un nouveau concept global. Présentation des travaux de R. J. Rummel.*– Le livre noir de l’humanité. Encyclopédie mondiale des génocides, p. 45-48; R. J. Rummel, *Le nouveau concept de démocide.*– Նույն տեղում, էջ 48-55. Նշենք նաև, որ այս հարցում Ռ. Ջ. Ռումմելի հետ համակարծիք է ամերիկյան խոշոր ցեղասպանագետ Իրվինգ Լուի Հորոուիցը. տե՛ս *Etude du génocide.*– Նույն տեղում, էջ 69:

ցեղասպանության գործընթացն, ի դեպ, նշված ժամանակահատվածում երբևէ չի մարել, այլ անընդմեջ իրականացվել է զանազան եղանակներով, ինչը հավաստել է եվրոպացի ժամանակակիցների գերակշռող մասը: Անշուշտ, այն զագաթնակետին է հասել 1915 թ., մի իրողություն, որը, սակայն, մեր կարծիքով, պատմաբաններին իրավունք չի վերապահում այս իրադարձությունը մասնատել «համիդյան» կամ «քեմալական» կոտորածների, «1909 թ. ջարդերի», «1915 թ. Մեծ եղեռնի» և դրանք բնութագրել իբրև տարանջատ եղելություններ կամ առավել ևս՝ տարբեր ցեղասպանություններ⁸: Ցավոք, ակադեմիկոս Ներսիսյանից բացի, Հայոց ցեղասպանությունն իբրև միասնական գործընթաց դիտել են սակավաթիվ պատմաբաններ⁹, որոնց թվում է ժամանակակից խոշոր ցեղասպանագետ Եհուդա Բաուերը (Իսրայել)¹⁰:

XIX դարի 90-ական թվականների կեսին Աբդուլ Համիդ II-ի սանձազերծած Հայոց ցեղասպանության առաջին փուլը, որը հարատևել է մինչ երիտթուրքական հեղափոխությունը, իր ծավալով և սոսկալի դաժանությամբ աննախադեպ էր նույնիսկ Օսմանյան կայսրության պատմության քառուղիներում, որի

⁸ Տես օրինակ С. С. Степанян, Предисловие.– Вольфганг и Зигрид Густы, Геноцид армян. Официальные документы из германских архивов, публикуемые впервые, Ереван, 2005, с. 10.

⁹ Տես օրինակ Moussa Prince, Un génocide impuni. L'arménocide, Beyrouth, 1975, p. 97-114, 147-242, 345-376; Լ. Խուրշուդյան, Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Երևան, 1995, էջ 34; Ս. Պողոսյան, Կ. Պողոսյան, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հ. առաջին, Հայերի բնաջնջման օսմանյան քաղաքականությունը, Երևան, 2000, էջ 30; Ю. Г. Барсегов, Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 17-22; *Նույնի* Предисловие.– Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, с. 11; E. G. Danielyan, The Armenien Genocide of 1894-1922 and the Accountability of the Turkish State, Yerevan, 2005; Ռ. Սաֆրաստյան, նշվ. աշխ., էջ 42:

¹⁰ Իր կարծիքն այս հարցի շուրջ նա հայտնեց 2005 թ. ապրիլի 20-21-ին Երևանում գումարված «Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» միջազգային համաժողովին ներկայացրած՝ «Անցյալ ցեղասպանությունների դասերը որպես ապագա ցեղասպանությունները կանխելու ուղեցույց» զեկուցումում:

«գրեթե բոլոր էջերը», ըստ ֆրանսիացի նշանավոր քաղաքական գործիչ, սոցիալիստ Ֆրանսիս դը Պրեսանսեի (1853-1914) դիպուկ բնորոշման՝ «աղտոտված են արյամբ»¹¹: Համիդյան կոտորածների ընթացքն ու ծավալը ֆրանսիացի ականավոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1897) Ալբեր Վանդալին (1853-1910) հիմք են տվել հայտարարելու, որ 1890-ական թթ. տեղի ունեցած՝ հայ ժողովրդի աննախադեպ բնաջնջման համեմատությամբ «1822 թ. Քիոսի, 1860 թ. Լիբանանի, 1876 թ. Բուլղարիայի կոտորածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ մանկական խաղեր»¹²:

Այս պայմաններում, ինքնին հասկանալի է, որ օսմանյան կառավարության հայահալած քաղաքականության ամեհի ալիքները ոչ միայն արյունաներկ են արել Արևմտյան Հայաստանի տարածքն ու Օսմանյան կայսրության զանազան բնակավայրերում (մասնավորապես, Կոստանդնուպոլսում) հանգրվանած հայկական համայնքները, այլև ալեկոծել են եվրոպացի մտավորականներից շատերի հույզերը, հարուցել նրանց անսանձ զայրույթը: Ի շարս այն երկրների (Անգլիա, Գերմանիա, Շվեյցարիա, Ռուսաստան և այլն), ուր համիդյան կոտորածներն անարծազանք չեն մնացել¹³, առանձնանում է ժողովրդավարական հինավուրց ավանդույթներ ունեցող Ֆրանսիան:

¹¹ Pour l'Arménie et la Macédoine. Préface de V. Bérard. Introduction de P. Quillard. Rapport de Francis de Pressensé, Paris, 1904, p. 21-22. ✓

¹² Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897. Paris, 1897, p. 35. ✓

¹³ Տես օրինակ Գ. Մելիք-Կարազյոզյան, Գերմանական օգնության ընկերությունները Տաճկահայաստանի համար, Թիֆլիս, 1901; Y. Ternon, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977, p. 131-133; А. Дж. Киракосян, Великобритания и Армянский вопрос (90-е годы XIX века), Ереван, 1990, с. 160-181; Ս. Գ. Ներսիսյան, Արևմտահայերի կոտորածները և ռուս մտավորականությունը 1894-1896 թվականներին. – «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1, էջ 15-24; Ռ. Սահակյան, Յոհաննես Լեփսիուսը և արևմտահայերի ճակատագիրը. – Յոհաննես Լեփսիուսը և հայ ժողովուրդը, Երևան, 1998, էջ 48-62; Ա. Ն. Հայրունի, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2001, էջ 47-72; Ա. Բախչինյան, Հայանպաստ շարժումը՝ Սկանդինավյան երկրներում (1896-1930-ական թվականներ). – «Պատմաբանասիրական հանդես», 2002, թիվ 3, էջ 55-58:

Ֆրանսիացի պատմաբան Ֆ. Մակլերն (1869-1938) իրավամբ նշել է, որ XIX դարի վերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայկական կոտորածներին առնչվող սարսափների՝ եվրոպա հասած արձագանքը Ֆրանսիայում հնչել է շատ ավելի ուժգին, քան այլուր՝ «շնորհիվ մի շարք մեծահոգի ֆրանսիացիների, որոնք դարձել են նահատակված ժողովրդի դատապաշտպանները»¹⁴: Նշենք, ի դեպ, որ ինչ վերաբերում է եվրոպայում հայանպաստ շարժման ծավալմանը, նույնն է հավաստել ՂՅԴ գործիչ Յրաչ Տասնապետյանը. «Հայանպաստ տրամադրություններն ու շարժումը ամենեն ավելի բեղուն հող գտան Ֆրանսայի մեջ, ուր այդ տարիներուն տիրապետող էին ընկերվարականներն ու արմատականները՝ մտայնությանց թե իշխանության տեսակետեն»¹⁵:

Հիրավի, համիդյան ժամանակաշրջանում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության գործընթացին առնչվող հավաստի տեղեկությունները, չնայած օսմանյան իշխանությունների կողմից կաշառված ֆրանսիական մամուլի լռակյացությանը¹⁶, շնորհիվ թե՛ Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետների անձնուրաց գործունեության և թե՛ հայ գործիչների (մասնավորապես, ՂՅԴ անդամների) Ֆրանսիայում ծավալած քարոզչական աշխատանքի, ոչ միայն հատել են նրա սահմանները, այլև վերհանել ֆրանսիական մտավորականության բողոքի բուռն ալիք: Անկասկած, Աբդուլ Համիդի գահակալության օրոք տեղի ունեցած հայկական կոտորածներին առնչվող իրադարձությունները որևէ երկրում

¹⁴ F. Macler. La nation arménienne. Son passé, ses malheurs, Paris. 1924, p. 45.

¹⁵ Ղ. Տասնապետեան, «Եւրոպական պրոպագանդ» (1899-1906). – «Ազդակ», 1983, թիվ 48, էջ 972:

¹⁶ Ըստ բուլղարացի հասարակական գործիչ Դիմիտր Սպիրովի (1868-1906) հավաստման՝ արևմտյան լրագրողներին կաշառելու համար սուլթանը տարեկան ծախսում էր 250000 թուրքական լիրա: Տե՛ս Դ. Ա. Սպիրով, Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896), Երևան, 1997, էջ 48: Այդ մասին վկայել են նաև ֆրանսիացի ժամանակակիցները: Տե՛ս օրինակ V. Bérard. La politique du sultan, Paris, 1897. p. 290; U. Gohier, Agir nous-même. – «Դրոշակ», 1900, թիվ 6, էջ 81:

այնպիսի մանրամասնությամբ չեն քննարկվել և ըստ արժանավոյն մեկնաբանվել, ինչպես Ֆրանսիայում, ուր ջարդարարներին խստագույնս նշավակել և անարգանքի սյունին են գամել տարբեր կողմնորոշումներ ունեցող բազում նշանավոր քաղաքական (Ժան Ժորես, Ֆրանսիս դը Պրեսանսե, Ժորժ Կլեմանսո, Դենի Կոշեն) և կրոնական (հայր Շարմետան, աբբա Պիզանի) գործիչներ, գրողներ (Անատոլ Ֆրանս, Սևերին կեղծանվամբ հայտնի՝ Կարոլին Ռեմի), պատմաբաններ (Ալբեր Կանդալ, Էդուարդ Դրիո և ուրիշներ) ու լրագրողներ, կազմակերպվել են հրապարակային ելույթներ, լույս են ընծայվել փաստաթղթերի ժողովածուներ, ականատեսների հուշեր, գրքեր, հոդվածներ: Նրանցից ոմանք հայ ժողովրդին զորավիզ են եղել, ելնելով, անտարակույս, գանազան՝ քրիստոնեական, մարդասիրական կամ քաղաքական նկատառումներից, սակայն հայտարարում, չնայած մասնավոր հարցերում ունեցած տարակարծություններին, ընդհանուր առմամբ, հանդես են եկել միասնական դիրքերից:

Այդուհանդերձ, հարկ է ընդգծել, որ ֆրանսիացի մտավորականների և, մասնավորապես, պատմաբանների գերակշռող մասը Հայկական հարցը սատարել է ելնելով գլխավորապես մարդասիրական մղումներից և անշահախնդրորեն կատարել իր քաղաքացիական պարտքը: Խստագույնս դատապարտելով արևմտահայության համար կործանարար հետևանքներով հղի ֆրանսիական կառավարության թրջամետ դիրքորոշումը՝ նրանք հակադրվել են Ֆրանսիայի պետական քաղաքականությունը կերտող՝ Երրորդ հանրապետության ղեկավարներին, առաջ բերել նրանց դժգոհությունը: Ուստի, սույն գրքի բնաբանում վկայակոչված Անատոլ Ֆրանսի խոսքերը խիստ հատկանշական են հայ ժողովրդի ողբերգությանն ի տես՝ ֆրանսիացի անվանի մտավորականներից և քաղաքական գործիչներից շատերի գրաված դիրքորոշումը բնութագրելու համար: Միաժամանակ հարկ է չանտեսել, որ Ֆրանսիայի, ինչպես նաև եվրոպական մեծ պետությունների համար առանցքային նշանակություն ունեցող որոշ հարցերում (օրինակ՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջակա-

նության պահպանման հիմնավորման խնդրում), այնուամենայնիվ, նրանք՝ չնչին բացառություններով, հավանություն են տվել ֆրանսիական կառավարության որդեգրած արտաքին քաղաքական կուրսին:

Հարկ է մանրամասնել, որ ինչ վերաբերում է ֆրանսիական պատմագրության՝ Հայոց ցեղասպանության արժարժման հարցում դրսևորած անթաքույց հետաքրքրությանը, ապա դրա ակունքներում խարսխվում են նաև մի շարք այլ էական հանգամանքներ: Նախ՝ XIX դարի 80-90-ական թվականները բնութագրվում են ֆրանսիական գաղութային քաղաքականության աննախադեպ ծավալումով, որը թելադրվում էր Երրորդ հանրապետության ղեկի մոտ գտնվող բուրժուազիայի ֆինանսական, տնտեսական և քաղաքական շահերով¹⁷: 1880-1899 թվականներին ֆրանսիական գաղութային կայսրության տարածքը՝ շնորհիվ Աֆրիկայում և Հեռավոր Արևելքում ձեռք բերված տիրույթների (Թունիս, Մադագասկար, Կոնգո, Գվինեա, Հնդկաչին և այլն) հասնում էր 3.7 միլիոն քառակուսի միլի՝ 56.4 միլիոն բնակչությամբ¹⁸: Ուստի՝ երկրում նկատելի հետաքրքրություն էր դրսևորվում արևելյան քաղաքականության և իբրև դրա անմիջական հետևանք՝ արևելյան երկրներում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Բացի դրանից, հարկ է չանտեսել այն ուշանակալից տեղաշարժերը, որոնք XIX դարի վերջին քառորդում ձևափոխել են ֆրանսիական պատմագրության դիմագիծը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, պոզիտիվիստական ուղղության ազդեցությունը կրող Գ. Սոնոյի՝ 1876 թ. հիմնադրած «Պատմական հանդեսի» շուրջ համախմբված մի աստղաբույլի (Է. Լավիս, Շ. Սենյոբոս, Շ.-Կ. Լանգլուա) գիտական բեղմնավոր գործունեությանը, որը հանուն պատմական ճշմարտության բացահայտման, ի շարս բազմազան խնդիրների, հետևողականորեն

¹⁷ А. З. Манфред. Внешняя политика Франции 1871-1891 годов, М., 1952, с. 243; П. П. Черкасов, Судьба империи. Очерк колониальной экспансии Франции в XVI-XX вв., М., 1983, с. 35.

¹⁸ В. И. Антюхина-Московченко, Третья республика во Франции. 1870-1918, М., 1986, с. 34.

առաջադրում է նաև պատմական սկզբնաղբյուրների մանրազնին քննության և այդ թվում՝ փաստաթղթերի ժողովածուների հրատարակության անհրաժեշտությունը¹⁹: Այս հանգամանքներն, անկասկած, մեծապես խթանել են Ֆրանսիայում՝ Հայոց ցեղասպանության գործընթացին նվիրված բազմաբնույթ և մեծաքանակ գրականության լույս ընծայմանը:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ հեղինակը ծեռնարկել է XIX դարի վերջի – XX դարի սկզբի ֆրանսիական պատմագրության նվաճումների ու ելևէջների համակողմանի ուսումնասիրությունը ցեղասպանության առաջին փուլի՝ համիդյան կոտորածների (1894-1908) մեկնաբանության ասպարեզում:

Հայոց ցեղասպանության պատմության լուսաբանմանը նվիրված հարուստ գրականությունը, որը մեր օրերում ունի հարյուր տաս տարվա պատմություն, կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի՝ սկզբնաղբյուրների հրատարակությունների և գիտական ուսումնասիրությունների: Սկսած XIX դարի վերջից լույս են ընծայվել այդ եղելության զանազան դրվագների պատմությունն արտացոլող անգլիական, գերմանական, ռուսական և այլ ծագում ունեցող արխիվային փաստաթղթերի ժողովածուներ²⁰, օտարազգի և հայ ականա-

¹⁹ Ch.-O. Carbonell, *Histoire et historiens. Une mutation idéologique des historiens français 1865-1895*, Toulouse, 1976, p. 413-417; G. Thuillier et J. Tulard, *Les écoles historiques*, Paris, 1990, p. 25-31; Л. В. Таран, *Историческая мысль Франции и России. 70-е годы XIX – 40-е годы XX в.*, Киев, 1994, с. 25-31.

²⁰ Թվարկեմք առավել կարևորները. Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897; The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to Viscount Grey of Fallodon, London, 1916; Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von D' Johannes Lepsius, Potsdam, 1919; Генцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М. Г. Нерсисян, Р. Г. Саакян. Под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966; второе, дополненное издание, Ереван, 1982; A. Beylerian, *Les grandes puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918)*, Paris, 1983 (տե՛ս նաև հայերեն քարզմանությունը՝ Ա. Պեյլերյան, Մեծ տերությունները, Օսմանյան կայս-

տեսների հուշեր, որոնք ամբողջացնում են մեր պատկերացումները Հայոց ցեղասպանության պատմության մասին, բացահայտում Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության տարբեր տարածաշրջաններում տեղի ունեցած իրադարձությունների մանրամասները, անառարկելիորեն հավաստում հայ ժողովրդի դեմ պետական մակարդակով թուրքական տարբեր վարչակարգերի իրականացրած ոճրագործության իրողությունը:

Նշենք, ի դեպ, որ ցեղասպանության պատմության սկզբնաղբյուրները պատմաբանները հազվադեպ են դարձրել առանձնահատուկ ուսումնասիրության նյութ²¹: Մենք մանրամասն վերլուծել ենք համիդյան կոտորածների պատմությանն առնչվող՝ XIX դարի վերջին Ֆրանսիայում հրատարակված սկզբնաղբյուրները, մասնավորապես, փաստաթղթերի ժողովածուները, որոնց լույս ընծայմանը մեծապես նպաստել են ֆրանսիական պատմագրության ոլորտում տեղի ունեցած շրջադարձերը: Սակավաթիվ, սակայն, արժեքավոր այդ հրատարակություններն ամփոփում են դիվանագիտական գրագրություններ, զեկուցագրեր, բարենորոգումների նախագծեր, ականատեսների վկայություններ և այլն:

րությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I-II, ֆրանսերենից թարգմանեց՝ *Վարուժան Պողոսյանը*, Երևան, 2005); United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by *Ara Sarafian*, v. I-III, Watertown, 1993-1995 (տե՛ս նաև հայերեն թարգմանությունը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, թարգմանությունը՝ *Հասմիկ Հայրապետյանի*, Երևան, 2004); Österreich-Armenien 1872-1936. Faksimilesammlung Diplomatischer Aktienstücke. Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr. *Artem Ohandjanian*. Band I-XII, Wien, 1995; Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. 'Состовитель, автор предисловия, введения и примечаний доктор исторических наук, профессор *Вардгес Микаелян*, Ереван, 1995; Documenti diplomatici italiani sull'Armenia. Seconda serie: 1891-1916. A cura de *M. Russo*, v. 1-2, Firenze, 1999; Вольфганг и Зигрид Густы, Геноцид армян. Официальные документы из германских архивов, публикуемые впервые, Ереван, 2005.

²¹ М. Г. Нерсисян, Немецкие и турецкие источники о геноциде армян. – «Պատմա-բանասիրական հանդես», 1985, թիվ 2, էջ 31-40:

Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում, հիրավի, մեծ ավանդ են ներդրել ֆրանսիացի պատմաբանները, որոնք ավելի քան մեկ դար այս իրադարձության պատմագրությունը հարստացրել են արժեքավոր աշխատություններով: Դեռևս XIX դարի 90-ական թթ. կեսին սկզբնավորված՝ Հայոց ցեղասպանության ֆրանսիական պատմագրությունը մեծապես օժանդակել է այս իրադարձության գիտական և համակողմանի ուսումնասիրությանը: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ֆրանսիայում լույս են տեսել Հայոց ցեղասպանության գործընթացին նվիրված բազմաբնույթ, պատմագիտական նշանակության առումով ոչ համարժեք աշխատություններ, որոնց գերակշռող մասի հեղինակները, մասնավորապես, պոզիտիվիզմին հարող պատմաբանները (Լավիս, Սենյոբոս և ուրիշներ), ինչպես նաև նապոլեոնագիտության ասպարեզում՝ Նապոլեոն I-ին ջատագովող ուղղության կարկառուն ներկայացուցիչները (Վանդալ, Դրիո), անողոքաբար մերկացրել են համիդյան վարչակարգի քաղաքականությունն արևմտահայության բնաջնջման կապակցությամբ, բացահայտել Հայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող եղելության բնույթը: Հարկ է մանրամասնել, որ ֆրանսիացի մի շարք պատմաբաններ և իրավաբաններ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմությունը լուսաբանել են նաև թե՛ Արևելյան հարցին և թե՛ համընդհանուր պատմությանը նվիրված ուսումնասիրություններում:

Անշուշտ, այս ասպարեզում պատմագիտական մտքի զարգացումը Ֆրանսիայում հարթ չի ընթացել: Ի սկզբանե դրան բնորոշ են եղել Հայոց ցեղասպանության պատմության մեկնաբանման հիմնական միտումները՝ սկսած ցեղասպանության իրողության հավաստումից մինչև դրա պատմական արժանահավատության ժխտումը, որոնք մենք ենթարկել ենք մանրազնիքնության:

Նպատակահարմար ենք գտել միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնել մեզ հետաքրքրող ժամանակա-

շրջանում Հայոց ցեղասպանության գործընթացի հանդեպ ֆրանսիացի քաղաքական գործիչների և գրողների որդեգրած դիրքորոշման վրա, որոնց բոցաշունչ ելույթները, փաստորեն, ֆրանսիական պատմագիտական մտքի նվաճումների անքակտելի մասն են: Ըստ այդմ՝ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ֆրանսիացի պատմաբանների ուսումնասիրություններից բացի, մենք քննարկել ենք նաև ամենանշանավոր գրողների և քաղաքական գործիչների կարևորագույն ելույթները, որոնք, չնայած կողմնորոշումների զանազանությանը, վերոնշյալ ժամանակաշրջանում նշանակալից ավանդ են ներդրել կործանման դատապարտված արևմտահայությանը զորավիզ լինելու ասպարեզում և խստագույնս դատապարտել են ցեղասպանության կազմակերպիչներին: Ֆրանսիացի մտավորականների թվում անանձնանում է հայ ժողովրդի մեծ ռահվիրա Պիեռ Քիառը (1864-1912), որի գործունեության վերլուծությանը նվիրել ենք առանձին գլուխ:

XIX դարի 90-ական թվականներին հայկական զանգվածային կոտորածները Ֆրանսիայում նշավակել են նաև կրոնական գործիչները: Հայոց ցեղասպանության հավաստի պատկերը բացահայտելու, համիդյան ջարդերի գործընթացին եվրոպական հասարակությանն իրազեկելու, ինչպես նաև նահատակվող արևմտահայությանն օգնության ձեռք մեկնելու ասպարեզում անժխտելի է ֆրանսիացի կրոնական գործիչ, առաքելական միսիոներ, Արևելքի դպրոցների բարեգործական ընկերության տնօրեն, Վատիկանի հանձնարարությամբ եվրոպական տարբեր երկրներում բազմիցս դիվանագիտական առաքելություններ ի կատար ածած հայր Ֆելիքս Շարմետանի լուման (1844-1921): Նա, սակայն, կաթոլիկ եկեղեցու միակ նվիրյալը չէ, ով ջանքեր է գործադրել հայ ժողովրդին բնաջնջումից փրկելու ուղղությամբ: Նրանից բացի, արևմտահայության իրավունքների պաշտպանությամբ 1890-ական թթ. հանդես է եկել նաև պատմաբաններին նվազ հայտնի մեկ այլ հոգևորական՝ արքա Պիզանին, որի հայանպաստ, սակայն, շատ

ավելի համեստ, քան նախորդի գործունեությունն առ այսօր չի արժանացել մասնագետների ուշադրությանը: Ուստի՝ անհրաժեշտ ենք համարել մանրամասնորեն կանգ առնել նրա գործունեության վրա ևս:

Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել XIX դարի 90-ական թվականներին ֆրանսիացի մտավորականների կազմակերպած՝ հրապարակային ելույթներին, որոնք ենթարկել ենք մանրակրկիտ վերլուծության, բացահայտել հեղինակների մոտեցումների յուրահատկությունները:

Հարկ է նշել, որ մեր կողմից ուսումնասիրվող թեման ցեղասպանության պատմագրության մեջ, ըստ էության, չի լուսաբանվել: Անշուշտ, «Արշակ Չոպանյանը և հայասիրական շարժումը Ֆրանսիայում» գրքում ֆրանսիացի պատմաբան Է. Քայաջյանը մասնակիորեն անդրադարձել է թեմային աղերսվող որոշ հարցերի, սակայն սոսկ ֆրանսիացի գործիչների՝ Արշակ Չոպանյանի (1872-1954) հետ ունեցած առնչությունների բացահայտման կտրվածքով²²: Վերջերս, XIX դարի վերջին – XX դարի սկզբին արևմտահայությանը սատարած զանազան ֆրանսիացի գործիչների հայանպաստ գործունեության հիմնական դրվագներն ամփոփող՝ տեղեկատվական բնույթի գրքույկ է հրատարակել Մ. Խարազյանը²³: Ոչ միայն հայասեր գործիչների՝ հեղինակի ընտրությունն է թերի (շրջանցվել են, մասնավորապես, շատ հայտնի պատմաբաններ), այլև քննարկվող նյութի դասակարգման հարցում բացակայում է անհրաժեշտ հստակությունը: Այբբենական սկզբունքով ներկայացվող ֆրանսիացի գործիչների թվում, օրինակ, Մ. Խարազյանն առանձին հոդված է նվիրել հայասերների՝ Բոյունսելի վեհաժողովին, միաժամանակ անտեսելով այն բոլոր վեհաժողովները, որոնց

²² E. Khayadjian, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, Marseille, 1986; 2^{ème} éd., Alfortville, 2001. Մենք կիզենք գրքի երկրորդ հրատարակությունը:

²³ Неизвестные имена: французские арменофилы (конец XIX – начало XX). Составитель, редактор, автор предисловия Марат Харазян. Ереван, 2003.

աշխատանքների ընթացքում այս կամ այն չափով արժարժվել են Հայկական հարցին նվիրված խնդիրները:

Ինչ վերաբերում է հայրենական պատմաբաններին, ապա՝ Հայոց ցեղասպանության ֆրանսիական պատմագրության մեզ հետաքրքրող ժամանակահատվածը նրանց ուշադրությունից ամբողջությամբ վրիպել է²⁴: Փոխարենը, ժամանակ առ ժամանակ, նրանք մակերեսորեն անդրադարձել են ֆրանսիացի գործիչներից ոմանց հայանպաստ ելույթներին: Սակայն անիրազեկ լինելով սկզբնաղբյուրներին, այս հարցի շուրջ տեղեկությունները նրանք քաղել են սոսկ հայկական և ռուսական լրագրերից կամ առավելագույնն՝ օգտագործել ֆրանսիացի գործիչների ելույթների ցաքուցրիվ թարգմանությունները, հաճախ սահմանափակվել հայ լրագրողների հոդվածների բովանդակության վերաշարադրությամբ և իբրև այս ամենի հետևանք՝ բավարարվել հպանցիկ դիտարկումներով²⁵:

Հեղինակն, անտարակույս, արժարժվող հարցերի շուրջ վերջնական խոսք ասելու, ինչպես նաև թեմային առնչվող

²⁴ Առ այսօր ֆրանսիական պատմագիտական մտքի վերլուծությանը՝ միայն XX դարի 60-80-ական թվականների կտրվածքով անդրադարձել է Ռ. Գ. Սահակյանը: Տե՛ս Ռ. Սահակյան, Հայկական ցեղասպանության պատմությունը ֆրանսիական հրատարակություններում. – Ռ. Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 223-239; *Մուլնի* Вопросы новой истории Армении в трудах французских авторов. – Новая история Армении в трудах современных зарубежных авторов, Ереван, 1993, с. 55-99. Առիթից օգտվելով նշենք, որ Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ կան պատմագիտական բնույթի եզակի ուսումնասիրություններ, որոնք նվիրված են համապատասխանաբար՝ հայրենական և արաբական պատմագրության ու պատմագիտության նվաճումներին: Տե՛ս Մ. Կարապետյան, Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 1999; *Մուլնի* Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005; Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004 (տե՛ս նաև անգլերեն թարգմանությունը՝ N. Hovhannisyanyan, Arab Historiography on the Armenian Genocide, Yerevan, 2005):

²⁵ Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965 էջ 139-141; Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից,

սկզբնաղբյուրներն ամբողջությամբ ընդգրկելու հավակնություն չունի: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Սոֆյա Եփեսացուի Պոլ Վալերի համալսարանի պրոֆեսոր Պիեռ Բարրալին, որը սիրալիրաբար մեզ է ուղարկել մեր կողմից ուսումնասիրվող թեմայի համար մեծ կարևորություն ունեցող՝ ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների գրչին պատկանող մի քանի գիրք և հոդվածների պատճեններ: Շնորհակալ ենք Փարիզի Նուբարյան գրադարանի տնօրեն Հարություն Գևորգյանին և Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակից Գևորգ ՏերՎարդանյանին՝ երկու արժեքավոր գրքույկների պատճեններ մեզ տրամադրելու համար²⁶:

Սույն թեմայի ուսումնասիրության անհրաժեշտության վրա մեր ուշադրությունը հրավիրել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նախկին տնօրեն, երջանկահիշատակ ակադեմիկոս

Երևան, 1976, էջ 207-209, 213; Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.-1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, էջ 94-101; Գ. Բ. Ղարիբջանյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան, 1986, էջ 15, 21-22; *Տուլնի* Геноцид армян и мировая общественность, Ереван, 1989, с. 30-34; *Տուլնի* Геноцид армян перед судом истории, Ереван, 1995, с. 50-54; А. Дж. Киракосян, նշվ. աշխ., էջ 130-131, 156-157; Ա. Ս. Համբարյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999, էջ 29-34; Ե. Ա. Գասպարյան, Հայասիրական շարժումը Ֆրանսիայում Առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան, 1999, էջ 9-14; Ա. Պողոսյան, Ֆրանսիացի մտավորականությունը և Հայկական հարցը. – Հայ-ֆրանսիական պատմաձևակութային առնչությունները. VII միջազգային գիտաժողովի նյութեր. «20-րդ դարի Ֆրանսիան և հայերը», Երևան, 20 և 22 սեպտեմբերի 2000, Երևան, 2001, էջ 40-48; Կ. Զ. Թառոյան, Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական թուրքիայի բռնատիրության դեմ 1878-1908 թթ., Երևան, 2001, էջ 425-436; Ա. Ս. Խաչատրյան, Հայասիրական դրսևորումները Ֆրանսիայում Սասունի ապստամբության ընթացքում. – «Բանբեր Երևանի համալսարանի», 2001, թիվ 3, էջ 117-123:

²⁶ Համապատասխանաբար՝ L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, Paris, 1896; Réponse du sultan à M. Clemenceau. Traduite par Urbain Gohier, Paris, 1896.

Հրանտ Ավետիսյանը (1927-2004): Տղերիս հեղինակը, որը երկար տարիներ աշխատել է Հ. Ավետիսյանի գլխավորած հաստատությունում, նրա հետ եղել է ջերմ, անկեղծ և անմիջական փոխհարաբերությունների մեջ: Իր՝ իբրև Հայոց ցեղասպանության պատմաբանի կայացման գործում հեղինակը մեծապես պարտական է նրա օժանդակությանն ու բարյացակամ վերաբերմունքին: Ուստի՝ սույն գիրքը նա սիրով նվիրում է ակադեմիկոս Ավետիսյանի անմոռաց հիշատակին:

ԳԼՈՒԽ I

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հայոց ցեղասպանության առաջին փուլի՝ համիդյան կոտորածների պատմությանն առնչվող ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրները բազմաբնույթ են: Դրանցից առավել մեծ կարևորություն ունի Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արխիվի վավերագրերն ամփոփող «Դեղին գիրքը», որն, ի դեպ, մեծարժեք սկզբնաղբյուր է ոչ միայն համիդյան կոտորածների, այլև Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությանը նվիրված փաստաթղթերի ժողովածուների թվում առհասարակ: «Դեղին գիրքը» լույս է տեսել 1897 թ.²⁷ Ֆրանսիայի Ազգային ժողովի մի շարք պատգամավորների գործադրած ջանքերի շնորհիվ: 1896 թ. նոյեմբերի 3-ին Ազգային ժողովի նիստում, երբ առաջին անգամ քննարկվում է Հայկական հարցը, պատգամավորներ ժան ժորեսը, Դենի Կոչենը և Ալբեր դը Մունը խստագույնս դատապարտում են ֆրանսիական կառավարության և, մասնավորապես, Արտաքին գործերի նախարար Գաբրիել Հանոտյի (1853-1944) թրջամետ քաղաքականությունը, որի հետևանքով Արտաքին գործերի նախարարության արխիվում պահվող՝ Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանն առնչվող փաստաթղթերը մինչ այդ մնացել են փակի տակ, ու պահանջում դրանց լույս ընծայումը: Ըստ ամերիկահայ պատմաբան Վ. Տատրյանի պատկերավոր արտահայտության՝ այս «այլախոհ» պատգամավորների²⁷ ճնշմամբ ֆրանսիական կառավարությունը մեծ ուշացումով իրականացրել է Արտաքին գործերի նախարարության արխիվի փաստաթղթերի մի մասի հրապարակումը:

²⁷ V. Dadrian, Histoire du génocide arménien: Conflits nationaux des Balkans au Caucase, Paris, 1996, p. 160. Տե՛ս նաև Y. Ternon, նշվ. աշխ., էջ 132:

«Դեղին գիրքն»²⁸ ընդգրկում է 1891-1897 թթ. Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի (1843-1924)²⁹, Երզրումում, Դիարբեքիրում, Կոստանդնուպոլսում, Ջնյունհայում և Դամասկոսում հավատարմագրված ֆրանսիացի դիվանագետների (Բերժերոն, Մեյրիե, Բուլինիեր, Ռուզոն, Գյուլլիուա)՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում ծավալված կոտորածների նկարագրություններն ամփոփող՝ Արտաքին գործերի նախարարության ղեկավարներին հղած զեկուցագրերը, ինչպես նաև Թուրքիայում բարենորոգումների նպատակով մեծ տերությունների ներկայացուցիչների մշակած նախագծերը:

«Դեղին գրքի» հավելվածում³⁰ հրատարակված փաստաթղթերը դասակարգված են աշխարհագրական սկզբունքով: Գրքի տասներեք բաժնից յուրաքանչյուրում ժողովված են Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության զանազան վայրերում՝ Անգորա (Անկարա), Ալեքսանդրետտա, Հալեպ և այլն գտնվող ֆրանսիացի դիվանագետների զեկուցագրերը, որոնք իրադարձությունների

²⁸ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897. Paris, 1897. Նշենք, որ «Դեղին գրքից»՝ 1894 թ. Սասունի, 1895-1896 թթ. Տրապիզոնի, Դիարբեքիրի, Սվազի, Ռոֆայի կոտորածներին առնչվող որոշ քաղվածքներ թարգմանվել են ռուսերեն: Տե՛ս Армянский вопрос по документам французской Желтой книги. – Братская помощь пострадавшим в Турции армянам, 2-е изд., М., 1898, отдел II, с. 95-124 (ավելի ուշ դրանք վերահրատարակվել են նաև «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում» ժողովածուում. տե՛ս Геноцид армян в Османской империи, с. 115-122). 1895-1896 թթ. Ջեյթունի իրադարձություններին նվիրված փաստաթղթերը վերատպվել են «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթում. տե՛ս "Pro Armenia", 1^{er} août 1903; 15 août 1903; 1^{er} septembre 1903; 15 février 1904; 15 mars 1904; 1^{er} avril 1904; 1^{er} mai 1904; 1^{er} juillet 1904; 15 septembre 1904. «Դեղին գրքում» ամփոփված մեծ թվով փաստաթղթեր վերահրատարակվել են նաև "The Armenian Genocide" (vol. 1, München, 1987) ստվարածավալ ժողովածուում:

²⁹ Կոստանդնուպոլսում նրա դիվանագիտական առաքելության մասին տե՛ս L. Villate, La République des diplomates. Paul et Jules Cambon, 1843-1935, Paris, 2002, p. 143-178.

³⁰ Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897.

պատկերն ուրվագծում են ըստ բնակավայրերի: Կրոնափոխությանը նվիրված է առանձին բաժին:

«Դեղին գրքում» հրատարակված փաստաթղթերը լույս են սփռում Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող մի շարք էական հանգամանքների վրա, որոնց քննությանը կանդրադառնանք ստորև:

Նախ՝ ֆրանսիացի դիվանագետներն անառարկելիորեն հավաստում են Հայկական հարցի գոյությունը. 1894 թ. փետրվարի 20-ին Կամբոնն այդ առիթով գրում է. «Հայկական հարցն այսօր գոյություն ունի: Ավելի քան մեկ տարի Հայաստանը և հարակից նահանգները դարձել են ցավալի իրադարձությունների թատերաբեմ: Մեր հյուպատոսները յուրաքանչյուր շաբաթ մեզ լուրեր են հաղորդում ձերբակալությունների, հայերի և իշխանությունների միջև տեղի ունեցող արյունալի բախումների մասին» (I, 10-11): Հայկական հարցի ծագումը Կամբոնն իրավամբ պայմանավորում է Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածով, նշելով, սակայն, որ այդ դարաշրջանում հայկական ազգային զարթոնքը դեռևս ծնունդ չէր առել: Հայկական կոմիտեների հիմնադրումը և գործունեությունը նա պատճառաբանում է այն հանգամանքով, որ Բարձր Դուռը չէր կատարում հայկական նահանգներում բարենորոգումների՝ իր ստանձնած պարտավորությունները: Դուռը, ինչպես նշում է Կամբոնը, «Հայաստանում ահաբեկչության, ձերբակալությունների, սպանությունների, գողությունների և այլնի վարչակարգը պահպանելու իր շահագրգռվածությամբ, թվում է, թե հաճույքով արագացնում է իրադարձությունների ընթացքը» (I, 12): Թվարկելով զանազան վայրերում տեղի ունեցող սպանությունները և հավաստելով հայերի համար ստեղծված սպառնալից իրավիճակը, դեսպանն իր մտավախությունն է հայտնում, որ նման պայմաններում կարող էր ծագել եվրոպական տերությունների միջամտության անհրաժեշտությունը: «Ահա թե ինչպիսին է Հայկական հարցի էությունը 1894 թ. սկզբին», – եզրակացնում է նա (I, 12):

* Այսուհետև քաղվածքները «Դեղին գրքից» կիղենք տեքստում. հռոմեական նիշերով՝ գիրքը (I) և հավելվածը (II), արաբական նիշերով՝ էջերը:

Ի սկզբանե, ֆրանսիացի դիվանագետների զեկուցագրերն անվերապահորեն վկայում են, որ Հայոց ցեղասպանությունն իրականացվում էր պետական քաղաքականության մակարդակով, կենտրոնական և տեղական իշխանությունների անմիջական հրահրմամբ ու հովանավորությամբ: Սասունի դեպքերի առիթով, օրինակ, էրզրունում Ֆրանսիայի հյուպատոս Բերժերոնը 1894 թ. նոյեմբերին գրում է Հանոտոյին, որ կառավարությունը մինչ այդ պահն «աչքերն էր փակում այն բոլոր հանցանքների առջև, որոնք ամեն պահի գործում էին քրդերն ու համիդիեները» (I, 19): Սասունի ապստամբությանը վերաբերող այլ զեկուցագրերում ևս, թե՛ Բերժերոնը և թե՛ Դիարբեքիում Ֆրանսիայի փոխհյուպատոս Մեյրիեն վկայում են, որ ռազմական իշխանությունները միայն Կոստանդնուպոլսից ստացված հրամանների հիման վրա են վճիռ կայացրել ապստամբ հայերին ճնշելու համար նշանակալից զինված ուժեր Սասուն ուղարկելու շուրջ (I, 15):

1895 թ. ի վեր, ֆրանսիացի դիվանագետներն ավելի բացահայտ են ընդգծում հայերի բնաջնջման գործընթացում օսմանյան իշխանությունների մեղսակցությունը: Կամբոնը փետրվարին գրում է կառավարական շրջաններում տիրող անիշխանության մասին, որն իրեն զգալ էր տալիս ավելի, քան երբևէ: Նրա հավաստմամբ՝ վարչությունն ու իշխանություններն իրենց օրինակով ու վարքագծով հրահրում էին մոլեռանդություն, իսկ բարքերում և մարդկանց մտքերում տիրում էր խառնաշփոթ: «Նահանգներում իրավիճակը, հավանաբար, ավելի վատթար է: Իշխանությունները շատ վատ են տրամադրված օտարերկրացիների և քրիստոնյաների նկատմամբ», – շարունակում է նա (I, 34): Դեսպանը խիստ է արտահայտվում, մասնավորապես, օսմանյան գերագույն իշխանությունների և պաշտոնյաների նկատմամբ: Կոտորածների ծավալման առնչությամբ, նոյեմբերի 4-ի թվակիր զեկուցագրում Կամբոնը նշում է կայսրության տարածքում նկատվող մեծ հուզումների, մահմեդականների մոլեռանդության աճի մասին, որն, ըստ նրա՝ չափ ու սահման չունի: «Օսմանյան իշխանությունների անտարբերությունը և սուլթանի շրջապատում գտնվող որոշ

պաշտոնյաների մեղսակցությունը [կոտորածներին – Վ. Պ.] բաջալերում են այս շարժումը», – շարունակում է նա (I, 165):

Կամբոնը խստագույնս նշավակում է, հատկապես, օսմանյան գերագույն ատյանի՝ Բարձր Դռան քաղաքականությունը: «Թեև ցավով են հավաստում այս աղետալի իրադարձությունների համար իշխանությունների վրա բարդվող պատասխանատվությունը, – գրում է նա նոյեմբերի 4-ին Թուրքիայի Արտաքին գործերի նախարարին, – իմ պարտքն են համարում, այդուհանդերձ, բողոքել Բարձր Դռան հանցագործ անտարբերության և հանցակցության առիթով՝ հենց նոր տեղի ունեցած այն *կանխամտածված կոտորածների* (ընդգծումը մերն է – Վ. Պ.) հարցում, որոնց զոհն են դարձել ոչ միայն հայերը, այլև քրիստոնեություն դավանող բոլոր անձինք» (I, 168):

Ֆրանսիացի դիվանագետները մատնանշում են «կարմիր սուլթանի» անձնական պատասխանատվությունը հայկական կոտորածների սանձազերծման հարցում: Կամբոնը հիմնավորապես բացահայտում է Սասունի ապստամբությունն արյան մեջ խեղդելու՝ Աբդուլ Յամիդ II-ի դիրքորոշումը. «Գնդապետ Իսմայիլ բեյը, – գրում է նա, – ելույթ է ունեցել՝ կարգադրելով զինվորներին հրի ծարակ դարձնել ու ավերել գյուղերը, իսկ ապստամբներին սրի քաշել, ավելացնելով, որ նրանք իրավասու են անելու այն ամենն, ինչ կամենում են, այն պայմանով, սակայն, որ ոչնչացնեն բոլոր մարդկանց: *Այդպիսին էր սուլթանի հրամանը*» (ընդգծումը մերն է – Վ. Պ.) (I, 42):

Կոստանդնուպոլսում գործերի հավատարմատար Բուլի-նիերը տվել է Աբդուլ Յամիդի հետևյալ հակիրճ գնահատականը. «Անհամար փաստերն ակնհայտորեն վկայում են, որ *մարդասպաններին զինում է անձամբ սուլթանը*, որը նրանց կարգադրում է հալածել հայերին» (courir sus à tout ce qui est Arménien)» (ընդգծումը մերն է – Վ. Պ.) (I, 275):

Ջանազան նահանգներում տիրող իրավիճակը մանրամասնորեն ներկայացնող «Դեղին գրքի» վավերագրերում փաստվում է նաև տեղական իշխանությունների ղեկավար դերը ցեղասպանության իրականացման գործում: 1895 թ. հոկտեմբերին Տրապիզոնում տեղի ունեցած կոտորածների առիթով

Ֆրանսիայի հյուպատոս Սիլլիերը հիմնվելով իր և իր գործընկերների ստացած հավաստի փաստերի վրա՝ գրում է Կամբոնին, որ խոսքը վերաբերում է կանխամտածված և հասունացած շարժման, որի մասին ակնհայտորեն վկայում են բազմազան մանրամասներ (II, 4):

Ելնելով Սվազում (Սեբաստիա) փոխհյուպատոս Կարլիեի՝ Կամբոնին հղած 1895 թ. նոյեմբերի 12-ի թվակիր զեկուցագրից, կարելի է եզրակացնել, որ այստեղ տիրել է միևնույն իրավիճակը. «Կոտորածը, հավանաբար, նախապատրաստված է եղել, — նշում է նա, — քանզի նշմարելի էր յուրօրինակ անկաշկանդություն: Այն, որ իշխանությունը հանցակից էր, թվում է հավանական: Գաղտնիքը լավ էր պահպանվել, թեև նախօրեին, երեկոյան, տրվել էին մի քանի գաղտնի ցուցումներ» (II, 39):

Դիարբեքիրում փոխհյուպատոս Մեյրիեն ևս 1895 թ. դեկտեմբերի 18-ին ընդգծում է տեղական մարմինների չարագուշակ դերը հայերի ոչնչացման գործում: «Ըստ իմ տեղեկությունների՝ ես հարկ եմ համարում հաստատակամորեն հայտարարել, — գրում է նա Կամբոնին, — որ գլխավոր կառավարիչը, զինվորական հրամանատարը, ժանդարմների պետը սարսափելի տեսարանների առջև մնացել են անտարբեր, և որ նրանք բացարձակապես ոչինչ չեն արել դրանք կանխելու համար, որ եթե նրանք ուղղակիորեն դրանց չեն մասնակցել, ապա նրանց վարքագիծը քաջալերելու բնույթ է կրել» (II, 31):

1895 թ. նոյեմբերին Յաճնում տիրող միևնույն իրավիճակն է արձանագրել Մերսինի հյուպատոս Սումմարիպան: Յամաձայն նրա հավաստման՝ տեղի կայմականը բնակիչներին հրամայել է կոտորել քրիստոնյաներին (II, 97):

Ըստ ֆրանսիացի դիվանագետների վկայությունների՝ հետագայում ևս պատկերը որևէ փոփոխություն չի կրել: Հիմնվելով Ուրֆայից (Ուռհա) ստացված տեղեկությունների վրա՝ Կամբոնը հավաստել է տեղական իշխանությունների «անգործությունը» և նրանց «մեղսակցությունը» հայկական ջարդերին (II, 46): Այդ առիթով Դիարբեքիրից Մեյրիեն նրան գրում է 1896 թ. հունվարի 8-ին. «Իրավիճակը շարունակում է

մնալ սպառնալից: Մահմեդականները չեն զինաթափվում: Կառավարության, բոլոր պաշտոնյաների և, մասնավորապես, կառավարչի դիրքորոշումը ուղի է հարթում մեքենայությունների համար» (II, 34):

Պետական մարմինների և բարձրաստիճան պաշտոնյաների վարքագծի մերկացումից բացի, «Դեղին գրքի» փաստաթղթերում բացահայտվում է նաև բանակի և ոստիկանության գործուն մասնակցությունն արևմտահայերի ցեղասպանությանը: Բազմիցս քննարկելով այս հարցը, Կամբոնը հայ բնակչության ոչնչացման գործուն ռազմական իշխանությունների ունեցած կործանարար դերի առիթով գրում է. «Հավաստի է, որ բազմաթիվ վայրերում, ուր անկարգություններ են արձանագրվել, կանոնավոր բանակը մասնակցել է հուզումներին, որոնք ճնշելու համար նրան կանչել էին» (I, 245): Անդրադառնալով Կեսարիայում տեղի ունեցած կոտորածներին, 1896 թ. հունվարին դեսպանը հավաստում է. «Ի մի բերված տեղեկությունները վկայում են, որ զորքը բացահայտորեն մասնակցել է կոտորածին ու կողոպուտին, իսկ զինվորները բարձրաձայն հպարտացել են չորս ժամ շարունակ սպանելու և կողոպտելու թույլտվություն ունենալու համար» (I, 196): 1896 թ. սեպտեմբերին Ակնում ծավալված ջարդերի առիթով արդեն, նա վկայակոչում է ստույգ փաստեր. «Նրանցից (հայերից – Վ. Պ.) շուրջ 2000-ին, որոնք թվում եղել են մեծ թվով կանայք և երեխաներ, սպանել են զորքերը: Հայկական թաղամասի 1150 տուն կողոպտվել է, դրանցից 980-ը հրկիզվել է: Կոտորածների պատասխանատվությունն ամբողջությամբ բարդվում է զորքերի վրա» (I, 296):

Հետաքրքրական է 1895 թ. դեկտեմբերի 18-ի թվակիր՝ Կամբոնին հղած Մեյրիեի հաղորդագրությունը, ըստ որի՝ Դիարբեքի «գրեթե բոլոր մահմեդականները, զինվորները, զափթիեները և երկրամասի քրդերը մասնակցել են այս սարսափելի կոտորածին... Ոստիկանությունը և զորքերը միջամտել են միայն զոհերի վրա գրոհելու համար: Ես տեսել եմ սեփական աչքերով, թե ինչպես են զինվորները և զափթիեները մահմեդականների և քրդերի հետ մեկտեղ կրակում քրիստոնյաների

վրա» (II, 30, 31): Սվազից նույնն է հավաստում Կարլինն. «Ձափթիեները և զինվորներն անծամբ մասնակցել են կոտորածին, ինչպես նաև կողոպուտին» (II, 40):

Ցեղասպանությունն ուղեկցվում էր հայկական բնակավայրերի կողոպուտով, հրկիզումով և ավերումով: Մեծ թվով զեկուցագրերում բերվում են հայկական վիլայեթներում տեղի ունեցած կողոպուտին առնչվող փաստեր: Քոչվոր քրդերի կողմից 1894 թ. Սասունի գյուղերը կողոպտելու և հրկիզելու մասին բազմիցս հիշատակում են Մեյրիեն և Բերժերոնը (I, 16, 18): Կամբոնը մատնանշում է երգրումում հայերին պատկանող 1500 կրպակի և հարյուրավոր տների կողոպուտը (I, 163, 172), նույն վիլայեթի գյուղերում՝ անասունների հափշտակումն ու բնակիչների ունեցվածքի թալանը, քրդական հրոսակախմբերի կողմից Դիարբեքիի շուկայի կողոպուտն ու հրկիզումը (I, 167), Անգորայի վիլայեթում ագարակների կողոպուտը և անասունների հափշտակումը (I, 196)՝ ընդգծելով, որ մեղավորները մնացել են անպատիժ:

Այս հարցի շուրջ Մերսինից Սունմարիպան գրում է Կամբոնին. «Այսօր կարելի է պնդել, որ ավարառուները գյուղական վայրերի տեր ու տնօրեններն են: Նրանք ձերբակալում են ճանապարհորդներին, նրանցից փրկագին պահանջում, ծեծում, իսկ նրանք իրենց շատ երջանիկ են զգում, երբ իրենց փողերը չեն հափշտակում» (II, 96): Հիմնվելով նրա իսկ տվյալների վրա, Կամբոնը հաղորդում է Ադանայի վիլայեթում 640 տան և խանութի կողոպտման մասին (I, 235): «Մեր գործակալն երգրումում ձեռք է բերել մի լիակատար ցուցակ,– գրում է դեսպանը,– որն արտացոլում է Մոլլա Սուլեյման գյուղի հայ բնակիչներից հափշտակած իրերի և անասունների քանակը: Այդ ցուցակն ակնհայտ է դարձնում, որ բացի անասուններից, եզներից, կովերից կամ ոչխարներից, հափշտակվել են հողանշակման համար անհրաժեշտ բոլոր իրերը և գործիքները, ամբողջ կահույքն ու տնային սպասքը» (I, 235): Բուլինիերը վկայում է, որ Օսմանյան բանկի հետ կապված միջադեպից հետո, Կոստանդնուպոլսում ևս արձանագրվել են կողոպուտի բազմաթիվ փաստեր (I, 264): Նա հիմնվում է, մասնավորապես,

մայրաքաղաքի խասքոյ թաղամասի օրինակի վրա, ուր հայերին պատկանող 800 տնից միայն տասն են գերծ մնացել կողոպուտից (I, 284): Սվազից Կարլիեն տեղեկացնում է Կամբոնին, որ հայերի բոլոր կրպակներն ու խանութներն ամբողջությամբ թալանվել են: Կողոպտիչները գողացել են նույնիսկ լուսամուտները (II, 39):

Հայոց ցեղասպանության իրականացման գործում, անտարակույս, նշանակալից է մահմեդականների մոլեռանդության հանգամանքը, որը չեն անտեսել ֆրանսիացի դիվանագետները: Այս առումով հատկանշական է Կամբոնի՝ 1895 թ. հոկտեմբերի 31-ի թվակիր զեկուցագիրը, որտեղ ասված է. «Մեր հյուպատոսների բազմաթիվ հեռագրերը, որոնք ես ամեն օր ստանում եմ և մանրամասն զեկուցագրերն ինձ տեղեկացնում են մահմեդականների գրգռվածության, ամենուր քրիստոնյաների վրա գրոհելու նպատակով նրանց ձեռնարկած բացահայտ նախապատրաստությունների, զենքի և ռազմամթերքի զննան, գաղտնի հավաքների, սադրանքների և սպառնալիքների մասին» (I, 162): Մահմեդականները, ըստ Կամբոնի մեկ այլ վկայության՝ սուլթանին են հղել բողոքի մի հեռագիր՝ ուղղված Անատոլիայի որոշ վիլայեթներում նախատեսվող վարչական բարենորոգումների իրականացման դեմ. «Նրանք հաստատականորեն տրամադրված են վաղը չէ մյուս օրը հարձակվել քրիստոնյաների վրա, եթե ակնկալված պատասխանն իրենց չգոհացնի» (I, 167):

Ալեքսանդրետտայի վիլայեթում մահմեդական խաժամուժի տրամադրվածության մասին պարզորոշ վկայում է նաև տեղի փոխհյուպատոս Լոնգվիլը, ով Կամբոնին հղած՝ 1895 թ. նոյեմբերի 22-ի թվակիր զեկուցագրում նշում է, թե ինչպես են զինված մահմեդականները շրջափակման մեջ պահում Չուրք Մարզպան գյուղը և գոչելով՝ «վրեժ լուծել մեր եղբայրների մարդասպաններից», ոչնչացնում բոլոր նրանց, ովքեր փորձում են այնտեղից դուրս ելնել (II, 117): 1896 թ. հունվարին նա շարունակում է հավաստել մահմեդականների ծայրահեղ գրգռվածությունը. «Մեր կողմերում մահմեդականների մոլեռանդությունը հեռու է մարելուց: Վայրագությունները

շարունակվում են ներքին նահանգների բազմաթիվ փոքր վայրերում, որոնց գրեթե անհայտ անվանումները նշված չեն որևէ քարտեզի վրա» (II, 103):

Մահմեդականների մոլեռանդությանն, անկասկած, մեծապես խթանում էր զոհերին և դահիճներին անջրպետող կրոնական զանազանության հանգամանքը: «Դեղին գրքում» զետեղված բազմաթիվ փաստաթղթերի հեղինակներ հավաստում են եկեղեցիների պղծումն ու ավերումը, հայ հոգևորականների նկատմամբ մահմեդական մոլեռանդների դրսևորած վայրագ վերաբերմունքը: Նշենք դրանցից մի քանիսը:

1896 թ. հունվարի 13-ին, օրինակ, Կամբոնն այս առիթով գրում է. «Աղջա-Գյունեյում` Չարշամբայի կազայում, տարածաշրջանի ելուզակներին պատժելու համար ուղարկված կանոնավոր բանակի զինվորները պատճառ են դարձել տարատեսակ անկարգությունների, պարաններով կապկպված քահանայի ներկայությամբ պղծել են ու կողոպտել եկեղեցին, իսկ բնակիչներին հայտնել, որ բռնություններ կգործադրեն բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չեն ընդունի իսլամը» (I, 195): 1896 թ. հունիսի 10-ին նա Արտաքին գործերի նախարարին է ներկայացնում 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Դերջանի կազայում տեղի ունեցած չարագործությունների պատկերն ամփոփող մի համառոտ աղյուսակ: Ըստ դրանում ամփոփված տեղեկությունների` Բազառիճում և Խաչիկ-Օղլու գոմում ներխուժել են եկեղեցի, քահանային վիրավորել, Քյոթուրում եկեղեցին վերածել են ախոռի, Փիրիսում ներխուժել են եկեղեցիները, որոնք կողոպտել են ու հրկիզել, Աղաթերում ավերել են երկու եկեղեցի, Կարաբուլաղում, Խնձրիում, Եսպեվերեկում` Սուրբ-Թորոսի և Սուրբ Դավթի վանքերը» (I, 237):

1895 թ. նոյեմբերի 12-ին Կամբոնից համանման տեղեկություններ է հաղորդում Սումնարիպան. «Միսիսում զինված բնակիչները, որոնց հետևել են բնակավայրի զինվորները և զափթիները, մուտք են գործել հայկական եկեղեցի, ոտնահարել սուրբ գրքերը, պղծել սուրբ սափորները, հանել քահանայի գլխարկը, որը լցրել են աղբով և մերկացրել նրա կնոջը» (II, 96):

Հիրավի, ի տարբերություն պատմության ընթացքում տեղի ունեցած այլ ցեղասպանությունների (օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեաների, գնչուների), Հայոց ցեղասպանության առանձնահատկություններից մեկը իրադարձությունների վրա կրոնական գործոնի թողած դրոշմն է, որը հայ ժողովրդի ողբերգության պարագայում, անտարակույս, ունեցել է էական դեր: Կրոնական գործոնի ազդեցությունը, որն իրավասու չենք շրջանցելու, այդուհանդերձ, միանշանակ չի եղել: Բացի մահմեդականների մոլեռանդությունը սաստկացնելուց, այն պատճառ է դարձել նաև ծավալի առունով աննախադեպ՝ զանգվածային կրոնափոխության համար: Այս իրողությունը ժխտելն անհնար է, իսկ լռության մատնելն անթույլատրելի, թեև Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ սոսկ այդ հիման վրա կոտորածներն իբրև լոկ կրոնական հիմք ունեցող իրադարձություն մեկնաբանող տեսակետն անընդունելի է և պատմական իրականության հետ որևէ աղերս չունի:»

Իրոք, իրադարձությունների բազմաթիվ ականատեսների վկայություններում, այդ թվում «Դեղին գրքում» իրատարակված զեկուցագրերում, արձանագրվել են մեծաքանակ արժանահավատ և անհերքելի փաստեր, որոնք անվերապահորեն վկայում են, որ ցեղասպանության ընթացքում՝ Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթներում մահվան դատապարտված հայերին բազմիցս հաջողվել է փրկվել կրոնափոխության միջոցով: Փաստորեն, այն եղել է միակ միջոցը, որը հայ բնակչությանը հնարավորություն է ընձեռել խուսափելու կոտորածից: Այդ մասին պարզորոշ վկայում է Անգլիայի դեսպան սըր Ֆիլիպ Կյուրրին 1896 թ. մարտի 10-ին Կամբոնին հղած նամակում: Հիմնվելով Բիրեջիկում (Հալեպի տարածաշրջան) գտնվող անգլիացի դիվանագետ Ֆիցմորիսից ստացած տվյալների վրա, նա գրում է. «Կոտորածի օրը բնակեցված էր 240 տուն: Այն բանից հետո, երբ սպանվել են 150 քրիստոնյա՝ 1500-ի հասնող կենդանի մնացած գրիգորյանները, բողոքականներն ու կաթոլիկներն իրենց իսկ ծնողների արյունաթաթախ դիակների առջև ու ամբոխի ճնշմամբ ընդունել են

իսլամը: Բիրեջիկում չի մնացել և ոչ մի քրիստոնյա» (II, 90): Զիմնվելով նույն սկզբնաղբյուրի վրա, 1896 թ. մայիսի 14-ին Կամբոնը գրում է Զանոտոյին. «Բիրեջիկի տարածաշրջանում արձանագրվել է կրոնափոխության 4300 դեպք, Ուրֆայում՝ 500, Սևերեկում՝ 200, Ադիյամանում և շրջակայքում՝ 900, վերջապես Ալբիստանում և Մարաշի շրջակայքում՝ բազում հարյուրավոր» (II, 92):

Կրոնափոխությունը զոհերին պարտադրվել է բռնությամբ: Այդ մասին է վկայում, օրինակ, Անգորայում Ֆրանսիայի փոխ-հյուպատոս Գյուլլիուան: 1895 թ. դեկտեմբերի 18-ին Կամբոնին հղած հաղորդագրության մեջ նա նշում է. «Ամենամոլեռանդները խորհում էին նաև այն մասին, որ օգտվելով ահաբեկչության հետևանքով ստեղծված մթնոլորտից՝ հենց նոր այրիացած կանանց, որբացած երիտասարդ աղջիկներին ու երեխաներին պարտադրեն իսլամը: Մահից խուսափելու համար շատերը համաձայնվել են դիմել կրոնափոխության: Նրանք, ովքեր մերժել են՝ կենդանի մեռվել են բոցերի մեջ» (II, 114): Իսկ Ուրֆայից՝ Զալեպում Ֆրանսիայի հյուպատոսին հղված 1896 թ. հունվարի 22-ի թվակիր նամակում այդ առիթով նշվում է. «Բիրեջիկում այսօր չկա գեթ մեկ քրիստոնյա: Բոլոր նրանք, ովքեր չեն սպանվել կամ մեռվել Եփրատը՝ հարկադրաբար ընդունել են իսլամը» (II, 50):

Կրոնափոխությամբ, սակայն, թուրք ջարդարարների մոլեգնությունն ամենևին չի նվազել: Զավատուրացությունը զուգակցվել է հայ կանանց նկատմամբ գործադրվող անասելի բռնություններով: Ընդ որում, ցեղասպանությունն իրականացնողները կյանքի են կոչել քրիստոնյա կանանց առևանգելու, գերեվարելու և հասարակական վայրերում վաճառելու՝ ստրկատիրական ժամանակներին բնորոշ վայրագ սովորույթը: Սասունում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում համիդիե գորամիավորումների գործած ոճիրների առիթով Մեյրիեն Դիարբեքիից 1895 թ. հոկտեմբերի 5-ին գրում է Զանոտոյին, որ նրանք «առևանգել են աղջիկներին և նույնիսկ հատել հղի կանանց որովայնը: Զավանաբար, զոհվել է 7500 մարդ, հրոճարակ դարձել 30 գյուղ և առևանգվել 400 կին: Տեղեկացնում

են, որ այս կանանցից 200-ը, պատվագուրկ լինելուց խուսափելու համար, հավանաբար, փորձել է ջրասույզ լինել» (I, 16): Դեկտեմբերի 18-ին, Արտաքին գործերի նախարարին հղած հերթական զեկուցագրում, Մեյրիեն անդրադառնալով Դիարբեքիում տիրող իրավիճակին, ի շարս այլ հարցերի, նշում է. «Քաղաքում առևանգել են հիսուն աղջկա և կնոջ: Գյուղերում առևանգվածների թիվն անհամար է» (II, 33):

Անգորայից Գյուիլլուան՝ 1895 թ. դեկտեմբերի 18-ին հայտնում է Կամբոնին, որ Կեսարիայում «մեծ թվով մերկ կանայք և երիտասարդ աղջիկներ են քշվել իրենց տներից ու հասարակական բաղնիքներից... նրանց անարգել են, այնուհետև՝ մորթել փողոցներում կամ առևանգել» (II, 114):

Կոտորածների ծավալմանը զուգընթաց՝ իրավիճակն աստիճանաբար բարդանում է: Ալեքսանդրետտայում Ֆրանսիայի փոխհյուպատոս Լոնգվիլը՝ 1896 թ. հունվարի 3-ին հայտնում է Կամբոնին. «Ուրֆայում ջարդերը վերակավել են վայրագորեն: Դեկտեմբերի 21-ին սկսված կոտորածը շարունակվում էր դեռևս ամսի 27-ին. մանրամասները մինչ այժմ հայտնի չեն: Ես տեղեկացրել եմ Ձերդ գերագանցությանը Բայասի (Պայաս) տարածաշրջանում քրիստոնյա ստրուկների վաճառքի մասին: Փաստը հավաստի է. երեք երիտասարդ կանայք բռնությամբ տարվել են Ուզբեկի գյուղի խոջայի մոտ, երկու այլ կանանց գնել է Դոտի-Աոլի անունով մի մահմեդական առևտրական՝ յուրաքանչյուրի համար վճարելով քսան թուրքական լիրա... Վեցերորդ երիտասարդ աղջկան վաճառել են կանոնավոր բանակի զինվորները Դորուկում» (II, 103):

1896 թ. հունիսի 10-ին Կամբոնը Հանոտոյին տեղեկացնում է Դերջանի կազայում 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբերին տեղի ունեցած անցքերի մասին: Ըստ նրա՝ Զյոթուրում և Ապրանքում տեղի են ունեցել բազմաթիվ առևանգումներ և բռնաբարություններ, Դվնիկում, Աստոյի գոմում, Մանթառայում և Կարաբուլաղում երիտասարդ կանանց և աղջիկների գերակշռող մասին բռնաբարել են (I, 237):

Ըստ Ուրֆայից Ֆրանսիայի հյուպատոսին հղված՝ 1896 թ. հունվարի 22-ի թվակիր նամակի՝ այնտեղ և Բիրեջիկում

հասարակական վայրերում շարունակվում է «էժան գներով կանանց և երիտասարդ աղջիկների վաճառքը» (II, 50):

Ֆրանսիացի դիվանագետների զեկուցագրերը պարզորոշ վկայում են, որ ստրկավաճառությունն ավելի լայն տարածում է գտել Յալեպի վիլայեթում: Այդ հարցի շուրջ՝ 1896 թ. նոյեմբերի 10-ին Կամբոնին հավաստի տեղեկություններ է հաղորդում Յալեպում Ֆրանսիայի հյուպատոս Պոնյոնը. «Ես հենց նոր տեղեկացա, որ Դիարբեքիրում, Ուրֆայում և այն վայրերում, ուր կոտորածներ են արձանագրվել, առևանգված երիտասարդ հայ աղջիկները, մի քանի ամսից ի վեր, գրեթե հրապարակայնորեն վաճառվում են Յալեպի Բաբ-Ներաբի թաղամասում: Անհնար է նշել վաճառված երիտասարդ աղջիկների նույնիսկ մոտավոր թիվը... Ի դեպ, գրեթե հավաստի է, որ իշխանությունը, որին հայտնի է քրիստոնյա ստրուկների վաճառքը, ոչինչ չի անում դրան ընդդիմանալու համար» (II, 123-124):

Յայոց ցեղասպանության պատմությանն առնչվող հիմնահարցերը «Դեղին գրքի» վավերագրերում լուսաբանվում են լայն կտրվածքով, ինչը հնարավոր է դարձնում հստակ պատկերացում կազմել օսմանյան իշխանությունների՝ կոտորածների պատասխանատվությունն ամբողջությամբ հայ ազգաբնակչության վրա բարդելու՝ ի սկզբանե ի հայտ բերած արատավոր միտումի մասին: Կամբոնի հարցումին, թե արդյո՞ք ստույգ է այն տեղեկությունը, ըստ որի՝ Դիարբեքիրում հայերը ներխուժել են մզկիթներից մեկը և դարձել առճակատման պատճառ, 1895 թ. նոյեմբերի 2-ին Մեյրիեն պատասխանում է. «Մահմեդականներն այս կոտորածին նախապատրաստվում էին վաղուց ի վեր. նրանք այն իրականացրել են կանովին, և որևէ սադրանք դրա պատճառ չի դարձել: Ինչ վերաբերում է հայերի մզկիթ ներխուժելու վարկածին, ապա այն չի աղերսվում իրականությանը» (I, 169): Անգորայում 1896 թ. սեպտեմբերին բռնկված հրդեհի առիթով, Կամբոնը տեղեկացնում է Յանտոյին, որ օգտվելով պատեհ առիթից՝ զինված մահմեդականները նետվել են դեպի քրիստոնյաների թաղամասը, մեղադրել հայերին մզկիթը հրկիզելու համար և վրեժխնդրության կոչել (I, 296):

Քանի որ այս ստոր գործելամիջոցին թուրքերը դիմել են ամենուր և հաճախ, այն, բնականաբար, պարբերաբար գրավել է ֆրանսիացի դիվանագետների ուշադրությունը, բայց դրա պատճառները մեկնաբանել է միայն Մերսինում փոխիյուպատոս Սունմարիպան: Թուրքերի՝ Ձեյթուն մուտք գործելուն հաջորդած իրադարձությունների առիթով Կամբոնին հղած՝ 1896 թ. հունվարի 3-ի թվակիր զեկուցագրում նա նշում է. «Համառելով հայերի ապստամբության շուրջ, կառավարությունն օգտագործում է իր միակ զենքը. այն է՝ ջանում է Եվրոպային համոզել իր անառարկելի իրավասության մեջ [հայերի ապստամբությունը ճնշելու հարցում – Վ. Պ.] և իր գործին զորավիզ լինելու համար անհրաժեշտ է համարում զեյթունցիների վրա բարդել այն վայրագությունների պատասխանատվությունը, որոնք գործելու սովորույթ միայն թուրքերն ունեն» (II, 61):

Հայերի նկատմամբ բուռն ատելությունն, անշուշտ, բոլոր թուրք պաշտոնյաներին չէ բնորոշ եղել: Նրանցից ոմանք սատարել են իրենց ենթակայության ներքո գտնվող հայ հպատակներին, պաշտպանել նրանց իրավունքները, խոչընդոտել, իրենց սահմանափակ հնարավորությունների սահմաններում, կոտորածների ծավալմանը: Այդ մասին են վկայում նաև «Դեղին գրքում» զետեղված բազմաթիվ զեկուցագրերի հեղինակներ:

1895 թ. հոկտեմբերի 4-ին Էրզրումից Բերժերոնը Կամբոնին հաղորդում է տեղում վալիի ձեռնարկած «անհրաժեշտ միջոցառումների» մասին, որոնք նպաստել էին խուսափելու տարբեր բնույթի պատահարներից (II, 15): Սիլլիերը 1895 թ. հոկտեմբերի 5-ին հայտնում է Կամբոնին, որ Տրապիզոնում ապստամբած մահմեդական բնակչության գործողությունները կարող էին, անտարակույս, հանգեցնել ավերածությունների, «եթե վալիին չհաջողվեր հանդարտեցնել գրգռված և ծայրահեղությունների դիմելու տրամադրված ամբոխին» (II, 2-3):

1896 թ. հունիսին Կամբոնը վկայակոչում է Դիարբեքրի գինվորական հրամանատար Ջիա փաշայի օրինակը, քանզի վերջինս «ընդդիմացել է նոր կոտորածներին, որոնց նախապատրաստվում էին գրեթե բացահայտորեն» (I, 241): Վերը հիշատակված՝ 1896 թ. սեպտեմբերին Անգորայում բռնկված

հրդեհի առիթով քաղաքում տեղի ունեցած հուզումների ընթացքում, ըստ Կամբոնի հավաստման՝ տեղի վալի Թևֆիկ փաշան «ցուցաբերել է մեծ եռանդ և զսպել խռովարարներին» (I, 296): Մինևույն փաստն է արձանագրում նաև Անգորայում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գյուլիլուան, ով վալիի ձեռնարկած միջոցառումները համարում է շահավետ. «Յիրավի,– նշում է նա,– անմիջապես ոտքի են հանվել ամբողջ գործը, ոստիկանությունը և ժանդարմերիան, ձեռնարկվել են նախազգուշական ամենավճռական միջոցառումներ... սպաներն ու զինվորները «սուլթանի անունից» փողոցներում կոչ են արել մահմեդական բնակչությանը թույլ չտալ կարգի որևէ խախտում» (II, 115):

Ինչպես տեսնում ենք, «Դեղին գրքում» Յայոց ցեղասպանության առաջին փուլին առնչվող իրադարձությունները լուսաբանվում են, հիրավի, ընդարձակ հենքի վրա³¹: Դրանում զետեղված դիվանագիտական գրագրություններից առավել արժեքավոր են, անտարակույս, Կամբոնի զեկուցագրերը, որոնք խարսխվում են գլխավորապես զանազան նահանգներում գտնվող ֆրանսիացի դիվանագետներից ստացված հավաստի տեղեկությունների վրա: Ինչպես իրավամբ նշել է իրադարձությունների ժամանակակից Լյուդովիկոս դը Կոնտանսոնը՝ Կամբոնն «ամիս առ ամիս, իսկ երբեմն օր առ օր, մեզ տեղեկացնում է արյունավի ողբերգության մանրամասներին»³²: Նրա անաչառ զեկուցագրերն, իրոք, բացահայտում են առաջին հերթին օսմանյան իշխանությունների ղեկավար դերն արևմտահայության բնաջնջման գործընթացում և աներկբայորեն հավաստում հայ բնակչության նկատմամբ գործադրված զանգվածային

³¹ «Դեղին գիրքն» ամփոփում է նաև այլազգի քրիստոնյաների, մասնավորապես, եվրոպացի հոգևորականների կոտորածներին առնչվող փաստեր, ինչպես նաև Արևմտյան Յայաստանի համար եվրոպացի դիվանագետների մշակած բարենորոգումների տարբեր նախագծեր, որոնք օսմանյան վարչակարգը երբևէ չի կենսագործել: Այդ մասին տես Վ. Պողոսյան, Ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրները 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին.– «Յայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2004, թիվ 9, էջ 110-111:

³² L. de Contenson, Les réformes en Turquie d'Asie. La question arménienne. La question syrienne. Deuxième édition. Paris, 1913, p. 24.

բռնությունները: Ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականության հետնախորքի վրա Կամբոնի դիրքորոշումը կարելի է բնորոշել իբրև խիզախում³³: Կամբոնի՝ ֆրանսիական կառավարության քաղաքականությանն անհարիր սկզբունքային վարքագիծը, որը եզակի երևույթ է դիվանագիտության պատմության մեջ, առաջ է բերել Հանոտոյի գայրույթը, ով այդ առիթով 1898 թ. իր դժգոհությունն է հայտնել նրա եղբորը՝ դիվանագետ Ժյուլ Կամբոնին: Նշենք նաև, որ Պոլ Կամբոնի անհնազանդությունը Հանոտոյին՝ դարձել է նախարարի՝ 1897 թ. կառավարությանը ներկայացրած հրաժարականի պատճառներից, որն, ի դեպ, մերժվել է³⁴: Ուստի՝ պատահական չէ, որ Վ. Տատրյանը Կամբոնին բնութագրում է իբրև «այլախոհ դեսպանի» և «այլախոհ դիվանագետի»³⁵. «Կամբոնը, – գրում է նա, – եզակիներից էր, ով ի հայտ է բերել այդչափ արիություն՝ իր կառավարությանը հաղորդելով 1894-1896 թթ. ընթացքի մեջ գտնվող կոտորածի «սարսափազդու» իրողությունները»³⁶:

Թեև Ֆրանսիայի ղեկավար շրջանների և, մասնավորապես, թրքամետ Հանոտոյի ջանքերի շնորհիվ Արտաքին գործերի նախարարության արխիվում պահվող մեծ թվով վավերագրեր «Դեղին գրքում» գիտակցաբար չեն ընդգրկվել, իսկ

³³ Նրա հայանպաստ գործունեության մասին տես L. Villate, նշվ. աշխ., էջ 157-166:

³⁴ Նույն տեղում, էջ 173:

³⁵ V. Dadrian, նշվ. աշխ., էջ 161:

³⁶ Նույն տեղում, էջ 169: Ա. Վանդալի համոզմամբ՝ «ֆրանսիացի հյուպատոսներն արել են այն ամենը, ինչ հարկ է, որ արվեր և փառքով են պսակել իրենց անունները՝ փրկելով բազմաթիվ մարդկային կյանքեր»: Տես Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] *Albert Vandal*. p. 17. Նշենք նաև, որ ֆրանսիացի խոշոր պատմաբան Էռնեստ Լավիսն այս ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում գործող ֆրանսիացի դիվանագետների և գործակալների վարքագիծը համարել է «քաջարի» և «հերոսական»: Տես E. Lavisse. Note sur le Livre Jaune // “Revue de Paris”, livraison du 15 mars 1897, p. 452. Իսկ իրադարձությունների մեկ այլ ժամանակակից՝ արքա Լ. Գոնդալն այս առիթով հավաստել է. «Մեր հյուպատոսները փոթորկի ժամանակ առաջինն են վտանգի ենթարկվել, վերջիններն են խորհել հանգստի մասին»: L. Gondal. La Question arménienne // “Annales catholiques”, 6 mai 1896. N 1283, p. 51.

ամփոփված փաստաթղթերի մի մասը հրատարակվել է կրճատումներով³⁷, ժողովածուում, այդուհանդերձ, համիդյան կոտորածների պատմության շուրջ հաղորդվում են բազմաբնույթ տեղեկություններ, որոնք մեծապես նպաստել են Հայոց ցեղասպանության շուրջ եվրոպացի ժամանակակիցների պատկերացումների ընդլայնմանն ու հստակեցմանը³⁸:

Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված փաստաթղթերի ժողովածուների թվում առանձնահատուկ ուշադրության է արժանի 1896 թ. Փարիզում լույս ընծայված «Հայաստանի կոտորածները. ականատեսների վկայություններ» խորագիրը կրող գիրքը³⁹, որի առաջաբանում անվանի քաղաքական

³⁷ Առ այսօր ամբողջական տեսքով հրատարակվել են միայն Դիարբեքիրում Ֆրանսիայի փոխխուպատոս Մեյրիեի գեկուցագրերը: Տե՛ս G. Meyrier. Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France 1894-1896. Présentée et annotée par C. Mouradian et M. Durand-Meyrier. Paris, 2000 (այս հրատարակության մասին մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, Գուստավ Մեյրիեն համիդյան կոտորածների մասին.– «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2004, թիվ 9, էջ 152-159): Կրճատումների հանգամանքը, անտարակույս, չի վրիպել ժամանակակիցների ուշադրությունից: Հարկ է առանձնացնել է. Լավիսին, որը խարազանել է Ֆրանսիայի ղեկավար շրջանների և, մասնավորապես, Հանտոյի պարսավելի դիրքորոշումն այս հարցում ու ապացուցել, որ փաստաթղթերի ընդգրկման առումով «Դեղին գիրքը» մեծապես զիջում է «Կապույտ գրքին»: Տե՛ս E. Lavissee, նշվ. աշխ., էջ 443-456: Տե՛ս նաև *Սուլյնի* La paix d'Orient // "Revue de Paris", livraison du 15 février 1898, p. 865. Հանտոյի վարքագիծը խստագույնս դատապարտել են նաև արևմտահայության ջերմեռանդ պաշտպաններ, սոցիալիստներ Ժ. Ժորեսը և Ֆ. դը Պրեսանսեն: Տե՛ս Œuvres de Jean Jaurès. Pour la paix. T. 1. Les alliances européennes (1887-1903). Textes rassemblés, présentés et annotés par Max Bonnafous, Paris, 1931, p. 131; Pour l'Arménie et la Macédoine, p. 40. Նրանց հայանպաստ գործունեության մասին տե՛ս սույն աշխատության III գլխում:

³⁸ Տե՛ս օրինակ Ffeliix Charmetant. Le Livre jaune et la question d'Orient // "Revue diplomatique et coloniale", 1897, N 1 du 1^{er} mars; P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie // "Revue des revues", livraison du 15 octobre 1901.

³⁹ Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896. Սույն ժողովածուն, ի դեպ, տպագրության է պատրաստել Արշակ Չոպանյանը, որի անունը, սակայն, հրատարակիչները որևէ տեղ չեն հիշատակել, հավանաբար, նրան հարվածի տակ չդնելու անհրաժեշտությունից դրդված: Այդ մասին տե՛ս Վ. Լ. Դալլաքյան, Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 94-95; E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 57: Նշենք, որ այս գրքում

գործիչ ժորժ Կլեմանսոն (1841-1929) տվել է ջարդարարների անաչառ գնահատականները⁴⁰: Տարբեր նահանգներում արևմտահայերի ցեղասպանության հիմնական դրվագներն արտացոլող փաստաթղթերի այս ժողովածուի մեջ զետեղվել են Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի քսան քաղաքից (Էրզրում, Երզնկա, Մալաթիա, Արաբկիր, Վան, Ուրֆա, Մարաշ և այլն) ստացված՝ հայ ականատեսների անստորագիր նամակները⁴¹, որոնք հնարավորություն են ընձեռում ամբողջական պատկերացում կազմել համիդյան կոտորածների ընթացքում օսմանյան կառավարության՝ արևմտահայության նկատմամբ կիրառած քաղաքականության հիմնական առանձնահատկությունների մասին: }

{Հրատարակված նամակների հեղինակները ցեղասպանությունն անվարան դիտում են իբրև պետական քաղաքականությամբ պայմանավորված իրադարձություն, բազմիցս մատ-

ամփոփված փաստաթղթերի մասին անստորագիր, ընդարձակ հաղորդագրություն է տպվել «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուում. տե՛ս Письма турецких жертв из Малой Азии (1895-1896 гг.).— Братская помощь пострадавшим в Турции армянам, с. 50-63. Մասնակի կրճատումներով այն վերահրատարակվել է նաև «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում» ժողովածուում: Տե՛ս Геноцид армян в Османской империи, с. 139-151.

⁴⁰ G. Clemenceau, Préface.— Les massacres d'Arménie. Témoignages des victimes, p. 5-18. Կլեմանսոյի առաջաբանի և նրա հայանպաստ գործունեության մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության III գլխում:

⁴¹ Խնդրո առարկա փաստաթղթերը հրատարակվել են անստորագիր, քանզի, հակառակ պարագայում, օսմանյան իշխանությունները, անտարակույս, դժան հաշվեհարդար կտեսնեին Արևմտյան Հայաստանում բնակվող դրանց հեղինակների հետ: Համեմատության կարգով նշենք, որ 1916 թ. Լոնդոնում «Հայերի նկատմամբ վերաբերմունքն Օսմանյան կայսրությունում (1915-16 թթ.)» փաստաթղթերի ժողովածուի լույս ընծայման պարագայում ևս, մինևույն պատճառով, փաստաթղթերի հրատարակության այս սկզբունքն են որդեգրել նաև Ջ. Բրայսն ու Ա. Թոյնբի: Իրականում, Թոյնբիի արխիվում պահպանված՝ այս ժողովածուի նախնական, սևագիր տարբերակում բոլոր փաստաթղթերին կից նշված են հեղինակների անունները: Այդ մասին տե՛ս Տ. Սարուխանյան, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Երևան, 2005, էջ 128:

նամշում հատկապես տեղական իշխանությունների դերն արևմտահայության ողբերգության գործընթացում: Այսպես, Տրապիզոնից ստացված՝ 1895 թ. հոկտեմբերի 12-ի թվակիր նամակի հեղինակն ընդգծում է, որ տեղի վալին և պաշտոնական այլ անձինք, որոնք արտաքուստ երաշխավորում էին հայերի ապահովությունը, ստախոսության և կեղծիքների միջոցով թուրք խաժամուժին բացահայտորեն դրդում էին նշված ժամին հարձակվել հայերի վրա: «Թուրքերին բաժանում են խմբերի և կառավարությունը նրանց հրացաններ, ատրճանակներ, փամփուշտներ և այլ զենքեր է հատկացնում», – նշվում է նամակում: Շրջապատված թուրք ելուզակներով՝ վալին ժամանել է հայկական թաղամաս և, ըստ նամակագրի՝ «անձամբ հրահանգներ տվել, մատնանշելով նրանց, մասնավորապես, հարուստներին, ում հարկ էր սպանել»⁴²:

1895 թ. հոկտեմբերին երզրունում տեղի ունեցած ջարդերի առիթով ականատեսը հաղորդում է, թե ինչպես են՝ «մորթեք գյավուրներին, ոչնչից մի երկյուղեք» կոչերով, թուրք բարձրաստիճան պաշտոնյաները դրդել ամբոխին կոտորել հայերին⁴³: Դեպքերի ականատեսները Սղերդից ևս տեղեկացնում են, որ քաղաքում ու նրա շրջակայքում «պաշտոնատար անձինք քաջալերում էին թուրք խաժամուժին և քուրդ հրոսակներին, նպաստում նրանց աղետաբեր մոլուցքի սանձազերծմանը»⁴⁴: Խարբերդում և նրա շրջակա գյուղերում տեղի ունեցած «սարսափելի իրադարձությունները», ինչպես հավաստում է այնտեղից ստացված նամակներից մեկի հեղինակը, «ծավալվել են վերից տրված հրամանի հիման վրա, որը մաքիավելիական գործելամիջոցներով կենսագործել են զլխավոր կառավարչի պաշտոնակատար Մուստաֆա փաշան և զինվորական հրամանատար Ռադիբ փաշան»: Եզրափակելով, նամակի հեղինակը ևս մեկ անգամ ընդգծում է այն մեծ պատասխանատվությունը, որը ստեղծված իրավիճակում բարդվում է նահանգային իշխանությունների վրա⁴⁵:

⁴² Les massacres d'Arménie. Témoignages des victimes, p. 25, 27.

⁴³ Նույն տեղում, էջ 52:

⁴⁴ Նույն տեղում, էջ 83:

⁴⁵ Նույն տեղում, էջ 122. 138-139:

Արաբկիրից 1895 թ. դեկտեմբերի 26-ին գրում են տեղական իշխանությունների՝ կոտորածների նախապատրաստության գործում ունեցած դերի, մասնավորապես, թուրք բնակչությանը զենք և ռազմամթերք բաժանելու մասին: Կոտորածից երկու օր առաջ, ինչպես նշվում է նամակում, «բանագնացներն այցելել են Արաբկիրի բոլոր գյուղերը և փողոցներում հայտարարել. «Բոլոր նրանք, ովքեր Մուհամեդի զավակներն են, այժմ իսկ պարտավոր են կատարել իրենց պարտքը, այն է՝ սպանել բոլոր հայերին և կողոպտել ու հրկիզել նրանց տները. ոչ մի հայ չպետք է խնայվի. այսպիսին է Պալեի (օսմանյան միապետի շուրջ համախմբված՝ համախոհների տխրահռչակ հանցախումբ – Վ.Պ.) հրամանը»... Ինչպես տեսնում ենք,– եզրակացնում է նամակագիրը,– իսկական մեղավորը կառավարությունն է, որն արձակել է այս հրեշավոր հրամանը»⁴⁶:

Հ Քննարկելով ցեղասպանությանն առնչվող խնդիրները՝ վավերագրերի հեղինակներն անդրադառնում են օսմանյան կառավարության հայահալած քաղաքականության այլևայլ դրսևորումներին: Հիշատակենք զանազան նահանգներում կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելուն վերաբերող բազմաթիվ փաստերից մի քանիսը: Ըստ ականատեսներից մեկի վկայության՝ կառավարության ներկայացուցիչները Տրապիզոնում թուրք բնակչությանը գրգռելու նպատակով հայտարարում էին, թե «հայերը՝ անգլիացիների հետ մեկտեղ ցանկանում են տապալել Օսմանի հարստությունը և վերացնել իսլամը»⁴⁷: Գրեթե միևնույն իրավիճակն է տիրել Երզնկայում, որտեղ, ինչպես վկայում է դեպքերի ականատեսը, թուրք պաշտոնյան ջանացել է ապացուցել, թե «կոտորածի սադրիչները եղել են հայերը: Նա նրանց ներկայացնում է այնպես, կարծեք նրանք ցանկացել են ապստամբել կառավարության դեմ և հարձակվել թուրքերի վրա»⁴⁸: Իսկ Բիթլիսում, ըստ նամակագրի հավաստման՝ ոստիկանությունը ձերբակալել է հայերին՝ «նրանց մեղադրելով կոտորածներ հրահրելու համար»:

⁴⁶ Նույն տեղում, էջ 143-144:

⁴⁷ Նույն տեղում, էջ 25:

⁴⁸ Նույն տեղում, էջ 52:

Բացի դրանից, խոշտանգումների ենթարկված հայերին հարկադրել են հեռագիր ուղարկել կենտրոնական իշխանություններին, որով նրանք ստանձնել են տեղի ունեցած անկարգությունների պատասխանատվությունը և խոստովանել, թե իբր իրենք են դրանք հրահրել⁴⁹: Նույնպիսի փաստեր են արձանագրվել նաև Արաբկիրից ստացված նամակներում, ուր հայ բանտարկյալներին ստիպել են ստորագրել համանման բնույթի ստահող հայտարարության տակ⁵⁰:

Բազմաթիվ նամակների հեղինակներ անդրադարձել են նաև բռնի կրոնափոխությանը: Ըստ նամակներում հիշատակված փաստերի՝ բռնի կրոնափոխության բազում դեպքեր են արձանագրվել Բաբերդում (Բայբուրդ), Բիթլիսում, Սղերդում, Մուշում, Խարբերդում, Արաբկիրում և այլուր: Վանի վիլայեթում, օրինակ, քրիստոնեական հավատքից հրաժարվել են՝ Խիզանում՝ 648, Սպարկերտում՝ 571, Մանրտանքում՝ 244, Գառգառում՝ 477 տան բնակիչներ⁵¹: Բալուում և Հիսնի-Մանսուրում՝ մահվան սպառնալիքի տակ հայերին հարկադրել են ուրանալ հավատքը, իսկ Մուշի նահանգում նույնիսկ քահանաներին են պարտադրել ընդունել իսլամը⁵²:

Նամակներում արտացոլված առանցքային խնդիրներից է նաև կանանց հանդեպ կիրառված բռնությունների և նրանց առևանգման իրողությունը: Ըստ նամակագիրներից մեկի վկայության՝ Մուշում «կանանց և աղջիկների առևանգումը դարձել էր սովորական երևույթ»⁵³: 1895 թ. աշնանը Բալուից տեղեկացնում են, որ բնակչության ընդհանուր թվում՝ բռնությունների ենթարկված կանանց թիվը հասնում է 60-ից 70 տոկոսի⁵⁴: Բացի այդ, նամակագիրներից շատերը շեշտում են նաև հայ կանանց՝ թուրքերին բռնությամբ կնության տալու հանգամանքը: 1895 թ. դեկտեմբերին, օրինակ, Խարբերդից գրում են. «Առևանգված

⁴⁹ Նույն տեղում, էջ 72, 77:

⁵⁰ Նույն տեղում, էջ 146, 149:

⁵¹ Նույն տեղում, էջ 96-97:

⁵² Նույն տեղում, էջ 196, 221:

⁵³ Նույն տեղում, էջ 89:

⁵⁴ Նույն տեղում, էջ 191:

երիտասարդ կանայք և կույսերը ենթարկվել են ամենավատթար բռնությունների և հարկադրաբար ամուսնացել թուրքերի հետ»⁵⁵: Նույնն է հավաստում նաև Արաբկիրի բնակիչներից մեկը, որը 1895 թ. նոյեմբերին հաղորդում է. «Երիտասարդ աղջիկներին և կանանց, որոնց ամուսիններին կոտորել են, սպառնալիքի տակ հարկադրում են ընդունել իսլամն ու ամուսնանալ իրենց հետ»⁵⁶:

Թեև ներկա ժողովածուն ամփոփում է լոկ հայկական ծագում ունեցող փաստաթղթեր, այդուհանդերձ, այն ևս համիդյան կոտորածների պատկերը մանրամասնորեն և անաչառ ներկայացնող սկզբնաղբյուր է: Նկատենք, որ այն արձագանքների է արժանացել ֆրանսիական մամուլում և մեծապես նպաստել միջազգային հասարակական կարծիքի ուշադրությունը հայկական կոտորածների վրա գամելուն⁵⁷:

... Հարկ է չանտեսել մեկ այլ ժողովածու ևս, որը հրատարակվել է անանուն հեղինակի աշխատասիրությամբ և ընդգրկում է քաղվածքներ ֆրանսիական տարբեր պարբերականներում («Լ'Արմենի», «Ռևյու դ'Օրիան», «Ռևյու դ'Օրիան քրետիեն») լույս ընծայված հոդվածներից⁵⁸: Առաջաբանում անանուն հեղինակը տվել է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի հետևյալ հակիրճ գնահատականը. «Այն ժամանակ, երբ թուրքը Կոստանդնուպոլսում հաճոյանում է Եվրոպային և նրան ձեռք մեկնում՝ տալով հազարավոր խոստումներ, որոնք կատարելու մտադրություն ամենևին չունի, կենտրոնական մահանգներում, Հայաստանում՝ սուզված արյան մեջ, սպանում է, կոտորում, հրկիզում և բռնաբարում»⁵⁹:

Առաջաբանում հեղինակը հայկական կոտորածներն իրավամբ, քննարկում է օսմանյան կառավարության՝ կայսրության տարածքում բնակվող զանազան ժողովուրդների նկատմամբ

⁵⁵ Նույն տեղում, էջ 127:

⁵⁶ Նույն տեղում, էջ 165:

⁵⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 60-62:

⁵⁸ La vérité sur les massacres d'Arménie. Documents nouveaux ou peu connus. Par un Philarmène, Paris, 1896.

⁵⁹ Նույն տեղում, էջ 5-6:

կիրառած ցեղասպան քաղաքականության հետևախորքի վրա, որը նրա մոտեցման առավելությունն է: Ըստ նրա՝ օգտվելով մեծ տերությունների միջև առկա տարածայնություններից, թուրքերը ոչ միայն հմտորեն ժխտում են իրենց դժնի արարքները, այլև հայերին մեղադրում քրդերի և այլոց գործած բարբարոսությունները հրահրելու համար: «Այսպիսին է տարիներ ի վեր տեղի ունեցող այն մռայլ կատակերգությունը, որի զոհը դարձել են հայերը, ինչպես նախկինում՝ հույները, Լիբանանի մարոնիտները, իսկ ավելի ուշ՝ բուլղարացիները»⁶⁰:

Ժողովածուն ամփոփում է 1895-1896 թթ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կոտորածներին վերաբերող հաղորդագրություններ, որոնց հեղինակների անունները չեն հրապարակվում: Բացի դրանից, այստեղ տպագրվել են նաև տեղեկատվական բնույթի հաղորդումներ Անատոլ Լեռուա-Քոլիոյի, հայր Շարմետանի և աբբա Պիզանիի՝ համիդյան կոտորածներին նվիրված հրապարակային ելույթների վերաբերյալ⁶¹:

Քանի որ խոսքը վերաբերում է Ֆրանսիական մամուլում արդեն տպագրված նյութերի վերատպությանը, սույն ժողովածուի գիտական արժեքը նվազ նշանակալից է: Այդուհանդերձ, այն ևս նպաստել է եվրոպական հասարակությանն Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայկական կոտորածներին իրազեկելու գործին:

Համիդյան կոտորածների պատմությանն առնչվող արժեքավոր սկզբնաղբյուրների թվում ուրույն տեղ են զբաղեցնում հայր Ֆելիքս Շարմետանի հրատարակած փաստաթղթերի ժողովածուները⁶²:

Վերոնշյալ ժամանակաշրջանում Ֆրանսիայում լույս

⁶⁰ Նույն տեղում, էջ 6:

⁶¹ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության V և VI գլուխներում:

⁶² Հայր Շարմետանի հրատարակած փաստաթղթերի ժողովածուների մասին (P[ère] F[élix] Charmetant, Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d.; *idem*: Arménie agonissante et l'Europe chrétienne. Appel aux chefs d'État. Paris, s. d.) մանրամասն տե՛ս սույն աշխատության V գլխում:

ընծայված՝ հայկական կոտորածների պատմությունը լուսաբանող սկզբնաղբյուրներից է նաև 1895-1896 թթ. Սվազում Ֆրանսիայի փոխիյուպատոս Մորիս Կարլիեի տիկնոջ՝ Էմիլի Կարլիեի օրագիրը⁶³: Գրառումներն սկսելով 1895 թ. օգոստոսին, ամուսնու հետ Սվազ ժամանելուց անմիջապես հետո, տիկին Կարլիեն մինչև 1896 թ. մարտի կեսերը բարեխղճորեն արձանագրում է քաղաքում և, մասամբ, նաև դրա շրջակայքում ծավալված իրադարձությունների ընթացքը:

Առաջին իսկ գրառումներում Կարլիեն թեպետ տարակուսանք է հայտնում Վանից ստացված՝ քրիստոնյաների կոտորածին վերաբերող լուրերի արժանահավատության շուրջ, այդուհանդերձ, հղելով Գլադստոնի՝ Աբդուլ Յամիդին տված «մեծ մարդասպան» հակիրճ բնութագիրը, եզրակացնում է, որ նրանից «ամեն ինչ սպասելի է»⁶⁴:

1895 թ. նոյեմբերին, դեռևս կոտորածների ծավալման առաջին օրերին, Կարլիեն հերքում է հայերի կարծեցյալ ապստամբությանն առնչվող վարկածը: Այդ առիթով, նոյեմբերի 5-ին նա գրառում է. «Մեզ հասնող մանրամասները վկայում են, որ ոչ թե հայերն են ապստամբել, այլ մահմեդականներն են սպանում ու կողոպտում»⁶⁵: Վկայակոչելով էրզրումում տեղի ունեցած անցքերը, Կարլիեն հիմնավորապես մերկացնում է թուրք ջարդարարների՝ կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու համար գործադրած ջանքերն ու նենգ գործելամիջոցները: «Էրզրումում սպանություններն սկսվել են անախադեպ ձևով: Քաղաքապետարանում ծառայող մի հայի սպանել են իր գրասենյակում, այնուհետև՝ սափրել նրա մորուքը և դիմահարդարել: Դրանից հետո, նրան հազցրել են թուրքական զգեստ, ապա՝ «վրեժ», «վրեժ» բացականչություններով դին են ու առաջ տարել քաղաքում»⁶⁶:

⁶³ M[ada]me Emilie Carlier, Au milieu des massacres. Journal de la femme d'un Consul de France en Arménie, Paris, 1903. Տիկին Կարլիեի օրագիրը, որոշ կրճատումներով, առաջին անգամ լույս է ընծայվել «Ռևյու դե դո մոնդ» ամսագրում: Sten Emilie Carlier, En Arménie. Journal de la femme d'un Consul de France // "Revue des deux mondes", livraison du 15 janvier 1903, p. 406-433.

⁶⁴ M[ada]me Emilie Carlier, Au milieu des massacres, p. 42.

⁶⁵ Նույն տեղում, էջ 51:

⁶⁶ Նույն տեղում, էջ 55:

Նկարագրելով Սվազուև ծավալված իրադարձությունները, Կարլիեն ուշադրությունը կենտրոնացնում է քաղաքի շուկայում տեղի ունեցած կոտորածների վրա: Ըստ նրա վկայության՝ այնտեղ ոչ մի հայ չի փրկվել, իսկ պահեստում ապաստանած անձանց կոտորել են զինվորները: «Այս պահին (նոյեմբերի 12-ին – Վ. Պ.) նրանց սպանում են սվինների հարվածներով: Այդ իսկ պատճառով աղմուկն արդեն դադարել է»⁶⁷: Կարլիեն մատնանշում է նաև հայերի կոտորածներին՝ զինվորներից բացի թուրք խաժամուժի և այլ վայրերից ժամանած լեռնականների ունեցած մասնակցությունը. «խաժամուժը վայրագություններ է գործել: Բայց քանի որ զենքեր չի ունեցել, իր զոհերին սպանել է մահակների, երկաթե ձողերի հարվածներով կամ քարերով նրանց գլուխը ջարդելով և կամ սարսափից համրացած նրանց կանանց առջև նույնիսկ պատրաստվել է նրանց ջրասույզ անել»⁶⁸: Որոշ վայրերում մարդասպաններն անգամ որպես գնդակ օգտագործել են գլխատվածների գլուխները⁶⁹: Իսկ նոյեմբերի 15-ին նա արդեն նշում է. «Ամբողջ քաղաքում տարածված է դիահոտ: Հարկադրված փակում են լուսամուտները»: Քաղաքի այն փողոցով, որով Կարլիեն անցել է, չի նշմարել ոչ մի դի, սակայն ամենուր տեսել է արյան հետքեր և կողոպտված տներ»⁷⁰:

Կարլիեն մանրամասնորեն անդրադառնում է նաև հայերի ունեցվածքի կողոպտման իրողությանը: Նոյեմբերի 12-ին նա այդ առիթով գրում է. «Զինվորները փողոցի ծայրն են հասնում ավարով ծանրաբեռնված, արյունաճերկ ձեռքերով... Ես տեսնում եմ մահմեդականների, որոնք անցնում են հրաշալի մետաքսե և ոսկեզօծ կտորներից բաղկացած ավարով ծանրաբեռնված... խաժամուժը շարունակում է կողոպտել հատկապես ամայի տները»⁷¹:

Ինչ վերաբերում է զոհերի թվին, ըստ Կարլիեի հաշվարկնե-

⁶⁷ Նույն տեղում, էջ 59:

⁶⁸ Նույն տեղում, էջ 68-69:

⁶⁹ Նույն տեղում, էջ 79:

⁷⁰ Նույն տեղում, էջ 80:

⁷¹ Նույն տեղում, էջ 68:

րի՝ Սվազում սպանվել է 1500 հայ, հիմնովին ավերվել 300 խանութ և 400 կրպակ: «Գրեթե բոլոր զոհերը,– շարունակում է նա,– տղամարդիկ են, սակայն առևանգել են ու վաճառել բազմաթիվ երիտասարդ աղջիկների»⁷²: Հարկ է, ի դեպ, նշել, որ Կարլին եզակի ականատեսներից է, ով չի շրջանցել հայերի կրած նյութական վնասների հարցը և հղելով հայերի իսկ կատարած հաշվարկները, հավաստել, որ դրանք տատանվում են 26 միլիոն թուրքական լիրայի սահմանում ⁷³:

Բուն Սվազում տեղի ունեցած կոտորածներից բացի, հիմնվելով ականատեսներից ստացած վկայությունների վրա, Կարլին ցաքուցրիվ տեղեկություններ է հաղորդում նաև քաղաքի շրջակա գյուղերում տիրող իրավիճակի շուրջ: Այսպես, նույնքերի 5-ին նա նշում է Կարահիսար, Ջարա, Դիվրիգի (Տերիկ) գյուղերի հրկիզման մասին. «Բոլորին սպանել են, բացառությամբ մի քանի հարյուր մանկահասակ երեխաների, որոնց թողել են ավերակների տակ: Նրանք փոքր անց սովից կմեռնեն»⁷⁴:

Տիկին Կարլինի հաղորդած տեղեկությունները թեև հավաստի են, այդուհանդերձ, լիարժեք լինել չեն կարող, քանզի նա հիմնվում է գլխավորապես իր անձնական դիտարկումների և մասամբ միայն որոշ ականատեսների վկայությունների վրա: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ խոսքն, այնուամենայնիվ, վերաբերում է սոսկ օրագրային գրառումների, այլ ոչ թե զանազան սկզբնաղբյուրների համադրման հիման վրա՝ սպառիչ վիճակագրական տվյալներ ամփոփող շարադրանքի: Ի դեպ, հաշվի առնելով Սվազում տեղի ունեցած կոտորածների շրջանում նրա խիզախ վարքագիծը՝ ֆրանսիական կառավարությունը նրան պարգևատրել է Պատվո լեգեոնի շքանշանով:

Ընդհանրացնենք. մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում լույս ընծայված ֆրանսիական տպագիր սկզբնաղբյուրներում, մասնավորապես, «Դեղին գրքում» զետեղված փաստաթղթերը մեծապես նպաստել են համիդյան կոտորած-

⁷² Նույն տեղում, էջ 91:

⁷³ Նույն տեղում, էջ 96:

⁷⁴ Նույն տեղում, էջ 51:

ների հավաստի պատկերի բացահայտմանը, ընդլայնել ֆրանսիացի պատմաբանների և քաղաքական ու կրոնական գործիչների գիտելիքները Հայոց ցեղասպանության գործընթացին առնչվող հարցերում, նրանցից շատերին (Է. Դրիո, Ժ. Բեքեր, Կուլբո, Դ. Կոշեն, Պ. Քիառ, հայր Շարմեստան), հնարավորություններ ընձեռել, ինչպես կտեսնենք ստորև, ցեղասպանության պատմության առաջին փուլի պատմության գիտական լուսաբանման համար:

Հարկ է նաև չանտեսել այն հանգամանքը, որ ֆրանսիական սկզբնաղբյուրներում ամփոփված վավերագրերը հակահարված են տալիս մեր օրերի` Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտող պատմության կեղծարարներին և դրանով իսկ ավելի քան մեկ դար անբողջությամբ պահպանում իրենց այժմեականությունը: Միայն ցավով ենք արձանագրում, որ առ այսօր հայրենական պատմաբանները ոչ միայն դրանք չեն ուսումնասիրել⁷⁵, այլև նույնիսկ չեն օգտագործել Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված իրենց աշխատություններում:

⁷⁵ Հիմնվելով հայկական լրագրերի տվյալների վրա, մեր նախորդներից ոմանք «Դեղին գրքի» մասին հաղորդել են սոսկ մակերեսային տեղեկություններ: Տես օրինակ Զ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 98-99:

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ֆրանսիայում լույս ընծայված պատմագիտական ուսումնասիրությունների որոշ մասը գրվել է ֆրանսիացի հեղինակների՝ Օսմանյան կայսրության տարբեր նահանգներ կատարած այցելությունների ընթացքում ստացած տպավորությունների հիման վրա: Նման բնույթի ուսումնասիրությունների թվում, որոնք, ըստ այդմ, ձեռք են բերում նաև սկզբնաղբյուրի նշանակություն, առավել արժեքավոր է հրապարակախոս Վիկտոր Բերարի (1864-1931) «Սուլթանի քաղաքականությունը» գիրքը: Հեղինակի հետաքրքրությունը Հայկական հարցի հանդեպ ծագել է դեռևս արյունալի իրադարձությունների սկզբնական փուլում, երբ, ըստ հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ, 1894 թ. հնչակյան կուսակցության անդամ Ստեփանոս Սապահ-Գյուլյանի (1861-1928) վկայության՝ ֆրանսիական «չափավորական հանրապետականների մի մասը ծածուկ մի պատվիրակություն ուղարկեց Հայաստան՝ գործերի դրությունն ուսումնասիրելու», որի կազմում ընդգրկված էր նաև «պ. Վիկտոր Բերար համակրելի երիտասարդը»⁷⁶:

Փարիզ վերադառնալուց հետո Բերարը զինվորագրվել է արևմտահայության պաշտպանության գործին և այդուհետև՝ պարբերաբար լուսաբանել Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները⁷⁷: Նրա առաջաբաններով տպագրվել են արևմտահայության և Հայկական հարցի պատմությանը

⁷⁶ Ս. Սապահ-Գյուլյան, Ֆրանսիան և հայոց խնդիրը. - «Նոր-դար», 6. I. 1897, թիվ 2:

⁷⁷ V. Bérard, Le sultan, l'islam et les puissances, Paris, 1907: *Մույնի* La révolution turque, Paris, 1909; *Մույնի* La mort de Stamboul. Considérations sur le gouvernement des Jeunes-Turcs, Paris, 1913.

նվիրված այլևայլ հրատարակություններ⁷⁸: Մեր թեմայի կտրվածքով մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Ռեյու դը Պարի» ամսագրում լույս ընծայված «Սուլթանի քաղաքականությունը» խորագիրը կրող նրա հոդվածաշարը⁷⁹, որի ընդլայնված տարբերակը 1897 թ. հրատարակվել է առանձին գրքով⁸⁰:

Բերարը հիմնվում է ոչ միայն իր անձնական տպավորությունների և ականատեսների վկայությունների վրա, այլև օգտագործում մատչելի սկզբնաղբյուրները, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերն ամփոփող «Կապույտ գիրքը», որը նրան հնարավորություն է ընձեռել անկողմնակալորեն ներկայացնել Օսմանյան կայսրությունում բնակվող քրիստոնյա ժողովուրդների և առաջին հերթին հայերի վիճակն իր ամբողջ բազմերան-

⁷⁸ Aghassi, *Zeitoun depuis les origines jusqu'à l'insurrection de 1895*. Préface par *Victor Bérard*, Paris, 1897; Pour l'Arménie et la Macédoine.

⁷⁹ V. Bérard. La politique du sultan // "Revue de Paris", livraison du 15 décembre 1896; livraison du 1^{er} janvier 1897; livraison du 15 janvier 1897. Իրավիճակի հավաստի պատկերն արտացոլող Բերարի այս հոդվածաշարը, անշուշտ, մեծապես նպաստել է նահատակվող արևմտահայության համակիրների շարքերի ստվարացմանը Ֆրանսիայում: Ինչպես հավաստել է Սապահ-Գյուլյանը՝ «Հայաստանի և հայոց բարեկամների թիվը գնալով ահագին ծավալ է ստանում Պարիզում: "Revue de Paris"-ի մեջ պ. Վիկտոր Բերարի գրած հոդվածներն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան, վասնզի ավելի քան հիսուն հոգի պատգամավորների ժողովի անդամներից իրենց առանձին համակրությունն են հայտնել պ. հոդվածագրին յուր շահագրգիռ հոդվածների համար: Նրանցից ոմանք առանձնակի շեշտած են, որ իրենք պատրաստ են հարկավոր ժամանակին արծագանք տալ յուր- ծայնին պատգամավորների ժողովի մեջ»: Տե՛ս Հայաստանի բարեկամները Ֆրանսիայում.– «Նոր-դար», 16. I. 1897, թիվ 6:

⁸⁰ V. Bérard. *La politique du sultan*. Paris, 1897. Թեպետ Բերարի գիրքը 1897-1900 թթ. ունեցել է չորս հրատարակություն, այդուհանդերձ, հաշվի առնելով դրա կարևորությունը, Մարտին Մելքոնյանը 2005 թ. վերահրատարակել է գրքի առաջին երկու գլուխները: Տե՛ս V. Bérard, *La politique du sultan. Les massacres des Arméniens: 1894-1896*. Préface de *Martin Melkonian*, Paris, 2005 (մենք կհղենք գրքի առաջին հրատարակությունը): Նշենք նաև, որ Բերարի գրքից մի հատված լույս է ընծայվել ռուսերեն թարգմանությամբ: Տե՛ս В. Берар, *Августовские убийства в Константинополе (1896 г.)*.– *Братская помощь пострадавшим в Турции армянам*, с. 83-93.

գությամբ, վերլուծել արևմտահայության հանդեպ Աբդուլ Չամիդի կիրառած քաղաքականության ելևէջները, ցեղասպանության դրդապատճառները: Մի կողմ թողնելով Բերարի քննարկած՝ Չայոց ցեղասպանությանն առնչվող զանազան հարցեր (XIX դարի 60-ական թթ. արևմտահայության քաղաքական զարթոնքը, հայկական կուսակցությունների գործունեությունը, Անգլիայի քաղաքականությունը և այլն), մեր ուշադրությունը կենտրոնացնենք սոսկ այն խնդիրների վրա, որոնք էական են ցեղասպանության մեկնաբանության ասպարեզում նրա գրաված դիրքորոշումը լուսաբանելու համար:

Անդրադառնալով Արևմտյան Չայաստանի տարբեր բնակավայրերում (Սասուն, Դիարբեքիր և այլն) 1890-ական թվականներին տեղի ունեցած հայկական կոտորածներին, Բերարը պարբերաբար մատնանշում է օսմանյան իշխանությունների ղեկավարությամբ՝ ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձության բնույթը⁸¹, բազմիցս վկայակոչում կայսրության սահմաններում՝ «Ղեկավարը թույլատրել է սպանել հայերին»՝ որպես ասույթ թևածող խոսքը⁸²: Ըստ նրա՝ օսմանյան պաշտոնյաների թողտվության հետևանքով 300000 մարդ զրկվել է կյանքից, իսկ 1894 թ. հուլիսի 1-ից ի վեր՝ ավելի քան 500 հայկական համայնքներ կործանվել են կամ փորձությունների ենթարկվել⁸³: Այս առիթով հարկ է նշել, որ Բերարը մեծ նշանակություն չի տալիս քրդերի՝ կոտորածներին ունեցած մասնակցությանը. «Նրանք միշտ ենթարկվել են սահմանադրական, քաղաքացիական և ռազմական իշխանություններին... և կոտորածի ժամանակ եղել միայն իշխանության գործակալները, տիրոջ կամակատարները»⁸⁴:

Մանրամասն քննարկելով հայկական տարբեր կուսակցությունների հիմնադրմանն առնչվող փաստեր, Բերարն Աբդուլ Չամիդի հայահալած քաղաքականության սամձագերծումը

⁸¹ V. Bérard, նշվ. աշխ., էջ 56, 64, 72:

⁸² Նույն տեղում, էջ 22, 27, 30, 74, 248:

⁸³ Նույն տեղում, էջ 75:

⁸⁴ Նույն տեղում, էջ 71-72: Տե՛ս նաև էջ 52:

պայմանավորում է, մասնավորապես, հնչակյանների գործունեությանը: Ինչպես նա նշում է, «հայերի գաղտնի մեքենայությունների առիթով իշխանությունների զանգատները, բնիկ մահմեդականների դժգոհությունը և անհանգստությունը նրա մոտ առաջ են բերել անհաղթահարելի սարսափներ»⁸⁵: Ուստի՝ 1880-ական թթ. վերջերից նրա կարգադրությամբ հայերի հանդեպ կիրառված զանազան բռնությունները (եկեղեցիների խուզարկումը, դպրոցների փակումը, սպանությունները, արտաքսումները և այլն), ըստ Բերարի՝ իրագործվել են միայն այն բանից հետո, երբ սուլթանը վերջնականապես համոզվել է, թե իբր «ամբողջ ազգը հետևում է կոմիտեներին»⁸⁶:

Փոքր-իսկ դրվատանքի չարժանացնելով հայկական կուսակցությունների գործունեությունը, կասկած իսկ չտածելով, որ «կոմիտեներն, անշուշտ, սխալվում էին և ազգին մղում դեպի վտանգավոր ուղի», նա, այնուամենայնիվ, խիստ քննադատության է ենթարկում սուլթանի որդեգրած դիրքորոշումը. «Բայց եթե կոմիտեները խարխափում էին պարսավելի և անօգտավետ քաղաքականության ոլորտում, սուլթանը պատրաստվում էր գործել շատ ավելի մեծ և շատ ավելի հանցավոր սխալ, կարծեք կանխակալորեն, ազգին շփոթելով կոմիտեների հետ, ժողովրդին՝ մի խումբ առաջնորդների հետ»,— գրում է նա⁸⁷: Միաժամանակ, նա համոզված է, որ եթե սուլթանը «նույնիսկ ընդուներ կոմիտեների պահանջները, կարելի է կարծել, որ նա կարող էր ծառայել իր կառավարության ու իր ժողովուրդների իրական շահերին»⁸⁸:

Ինչ վերաբերում է ցեղասպանության գաղափարի հասունացման մեկնաբանությանը, ապա Բերարն ուշադրությունը կենտրոնացնում է գլխավորապես Աբդուլ Յամիդի վրա կրոնական գործոնի ունեցած վճռորոշ նշանակության վրա, ընդգծում, որ համաձայն «մահմեդական հին ավանդույթի՝ կառավարությունը երբևէ չի շրջանցում հեկատոմբերը»: Բացի դրանից, նա

⁸⁵ Նույն տեղում, էջ 164:

⁸⁶ Նույն տեղում, էջ 166:

⁸⁷ Նույն տեղում, էջ 166, 175:

⁸⁸ Նույն տեղում, էջ 176:

մեծ նշանակություն է տալիս նաև մահմեդական մոլեռանդ քարոզիչների՝ սուլթանի վրա ունեցած ազդեցությանը, որոնք վերջինիս մեջ արմատավորել են այն գաղափարը, ըստ որի՝ գոյություն պահպանելու իրավունք կարող էին միայն մահմեդականներն ունենալ⁸⁹: «Այսպես, աստիճանաբար, միանգամայն տարբեր ուղիներով... ձևավորվել է, հասունացել, ճնշող դարձել կոտորածի գաղափարը», – եզրակացնում է նա⁹⁰:

Ակնհայտ է, որ ինչպես ժամանակակիցներից շատերը, Բերարը ևս ամբողջությամբ չի ըմբռնել ցեղասպանության գլխավոր դրդապատճառը՝ արևմտահայության բնաջնջման միջոցով Հայկական հարցին լուծում տալու Աբդուլ Համիդի մտադրությունը: Այդուհանդերձ, նրա տեսադաշտից չեն վրիպել մի շարք էական հանգամանքներ: Նշենք, օրինակ, որ նա մանրագնին վերլուծել է կայսրության մահմեդական բնակչությանը՝ մոտալուստ կոտորածներին հոգեբանորեն նախապատրաստելու ուղղությամբ սուլթանի ձեռնարկած քայլերը: Ըստ նրա մեկնաբանության՝ չբավարարվելով սոսկ կրոնական մոլեռանդության բորբոքմամբ, սուլթանը ջանում էր մահմեդականների շրջանում «կյանքի կոչել սոցիալական և քաղաքական հենք ունեցող ատելությունները»: Հենց դրանով է նա պայմանավորում Աբդուլ Համիդի՝ հայերի մտադրությունները կեղծելու նպատակով գործադրած ճիգերը: Ինչպես գրում է Բերարը՝ սուլթանը հավաստում էր, որ հայերին «սատարում է Եվրոպան, որը գործելով իսլամին ստորադաս դարձնելու նպատակով և հանուն քրիստոնեության շահերի՝ պահանջում է ոչ թե իրավունքներ, այլ արտոնություններ», որոնք կարող էին մահմեդականին կախման մեջ դնել քրիստոնյայից⁹¹: Զբավարարվելով սոսկ փաստի արձանագրմամբ՝ Բերարը խորամուխ է լինում այն հետևանքների բացահայտման մեջ, որոնց հանգեցրել էր սուլթանի քաղաքականությունը և մատնանշում, որ «ոչ միայն ամբոխն է իր արտոնություններն ու շահերը վտանգված համարել, այլև ծրագրված բարենորոգումներին

⁸⁹ Նույն տեղում, էջ 189-190, 192:

⁹⁰ Նույն տեղում, էջ 192-193:

⁹¹ Նույն տեղում, էջ 240:

վերաբերող լուրերը տազնապահար են արել վերնախավին»՝ նույնիսկ սուլթանի համախոհներին առժամանակ միավորելով երիտթուրքերի հետ⁹²:

Օսմանյան իշխանությունների՝ 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած բողոքի ցույցը չկանխելու իրողությունը Բերարը դիտում է իբրև բացահայտ սադրանք, որը հետապնդում էր սուլթանի նենգ մտադրությունների կենսագործմանը հիմնավորում տալու նպատակ: Ցույցին անմիջապես հաջորդած հայկական ջարդերը մայրաքաղաքում, նա համարում է «հետևողական կոտորածների սկիզբ», որոնք զանազան նահանգներում ծավալվել են իշխանությունների ուղարկած բանագնացների ազդանշանի հիման վրա⁹³: Ըստ կանխամտածված ծրագրի՝ ցեղասպանության իրականացումը նա հիմնավորում է բազմաթիվ փաստերով, որոնք վկայում են, որ իշխանությունները պաշտոնանկ էին անում այն բոլոր աստիճանավորներին, ովքեր ի հայտ էին բերում իրենց «անկարողությունը»՝ կոտորածներին առնչվող կարգադրությունների ի կատար ածման հարցում⁹⁴: Ակնհայտ է, որ զանազան կտրվածքներով քննարկելով Հայոց ցեղասպանության գործընթացին առնչվող հանգամանքները, Բերարը բազում փաստերով հիմնավորում է հայ ժողովրդի բնաջնջման պարագայում՝ օսմանյան վարչակարգի քաղաքականությանը բնորոշ կանխամտածվածության և դիտավորության իրողությունը, որը նրա մոտեցման անենամեծ արժանիքներից է:

Ընդհանուր առմամբ, նա եզրակացնում է. «Փոքր Ասիայում տեղի ունեցած կոտորածները շարունակվել են ավելի քան երկու տարի, ամայացրել մի տարածաշրջան, որն ավելի մեծ է, քան Ֆրանսիան և XX դարի նախաշեմին խոյացրել երեք հարյուր հազար մարդկային գլուխներից բաղկացած մի բուրգ, որը, հավանաբար, կմնա իբրև այդ ժամանակաշրջանի հուշարձաններից մեկը»⁹⁵: Ինչ վերաբերում է անձամբ Աբդուլ Համիդին,

⁹² Նույն տեղում, էջ 241-243:

⁹³ Նույն տեղում, էջ 195:

⁹⁴ Նույն տեղում, էջ 204-206:

⁹⁵ Նույն տեղում, էջ 200:

ապա նա, ինչպես նշում է Բերարը, արել է ամեն ինչ՝ «պատմության մեջ մարդասպանի փառապանծ մականունի արժանանալու համար»⁹⁶:

Բերարը, որի տեսադաշտից չի վրիպել նաև հայ ժողովրդի հանդեպ մեծ տերությունների կառավարող շրջանների դրսևորած անկարեկից վերաբերմունքը, անվարանորեն հավաստել է նրանց «անուղղակի մեղսակցությունը» Հայոց ցեղասպանությանը և հանգել այն համոզմունքին, ըստ որի՝ նրանց ծվատած տարածայնություններն Աբդուլ Համիդին հնարավորություն են ընձեռել «Հայաստանը վերածել անապատի»⁹⁷: Բերարը խիստ քննադատության է ենթարկել, մասնավորապես, ֆրանսիական կառավարության թրջամետ քաղաքականությունը. «Աբդուլ Համիդը, – գրում է նա, – նպաստում է, որ Ֆրանսիան և նրա ֆինանսիստներն ու ձեռնարկատերերը փող շահեն, իսկ նրա լրագրողներին դրամ ու շքանշաններ է բաշխում»⁹⁸:

Ինչ վերաբերում է համիդյան կոտորածների «լուսաբանման» հարցում ֆրանսիական մամուլի գրաված դիրքորոշմանը, որը հանգում էր կատարյալ անտարբերության, ապա ըստ Բերարի՝ այն ոչ այլ ինչ էր, եթե ոչ «լռության դավադրություն»: Նրա համոզմամբ, «լռության դավադրության համար, անկասկած, վճարում է թուրքական դեսպանությունը (ֆրանսիական տասնյոթ թերթեր ստանում են դրամական նպաստներ), սակայն այդ ամենը տեղի է ունեցել ֆրանսիական կառավարության հանդուրժողականության հետևանքով»⁹⁹:

Ըստ այս ամենի՝ պատահական չէ, որ Չոպանյանը Բերարի գիրքը բնութագրում է իբրև ականատեսի «սարսափի ու զայրույթի կենդանի աղաղակ»¹⁰⁰: Իսկ Ֆրանսիական ակադեմիայի

⁹⁶ Նույն տեղում, էջ 358:

⁹⁷ Նույն տեղում, էջ 196, 329:

⁹⁸ Նույն տեղում, էջ 282: Հետագա աշխատություններում նա քննադատական խոսքեր է ուղղում նաև Վիլիելմ II-ի հասցեին, նրան անվանում Աբդուլ Համիդի «տեր ու տնօրեն»: Sté u V. Bérard, *Politique française // "Revue de Paris"*, livraison du 1^{er} juillet 1905. p. 217.

⁹⁹ V. Bérard. *La politique du sultan*. p. 290.

¹⁰⁰ Sté u Բերարի՝ «Անահիտին» հղած մամակին կից Չոպանյանի մուտքի խոսքը. «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 4, էջ 124:

անդամ (1892) է. Լավիսը գրքի առաջաբանում տվել է Բերարի ուսումնասիրության հետևյալ բարձր գնահատականը. «Ժամանակակից քաղաքականության ամենակարևոր հարցերից մեկը Ֆրանսիայում առաջին անգամ ներկայացվել է իր ամբողջության մեջ, կոտորածների պատճառները բացահայտվել են, Եվրոպայի անուղղակի մեղսակցությունն ապացուցվել»¹⁰¹: Չանազան առիթներով թե՛ Լավիսը և թե՛ Չոպանյանը կրկին անդրադառնալով Բերարի գրքին՝ միանգամայն իրավամբ այն անվանում են «հիասքանչ»¹⁰²:

Բացի Բերարից, Լյուդովիկոս դը Կոնտանսոնը ևս Հայոց ցեղասպանությանն առնչվող զանազան դրվագներ քննարկում է Արևմտյան Հայաստանում ստացած անձնական տպավորությունների հիման վրա, նյութը շարադրում ըստ՝ «Արևելք կատարած ճանապարհորդությունների ընթացքում գրի առած նոթերի»¹⁰³: Ցեղասպանությանն ընդհանուր բնույթի գնահատականներ տալուց բացի, նա խոսքը կենտրոնացնում է նաև իր այցելած բնակավայրերում (Ուրֆա, Մարաշ, Այնթաբ և այլն) տեղի ունեցած իրադարձությունների վրա:

Արևմտահայության բնաջնջումը, Կոնտանսոնի կարծիքով, իրականացվել է «կարմիր սուլթանի» նախածեռնությամբ, որին, ինչպես և Գլադստոնը, անվանում է «մեծ մարդասպան»¹⁰⁴: Նրա համոզմամբ՝ ճգնաժամի դրսևորման եղանակները կախված են եղել «քաղաքական և կրոնական տեսանկյուններից ամենազոր միապետից՝ սուլթան-Աբդուլ Համիդից, որը կարող էր շրջանցել սպանությունները»¹⁰⁵: Ցեղասպանության «միակ պատասխանատուներ» նա համարում է օսմանյան կառավարությանն ուղեկավար շրջաններին, որոնց «գործելու կարգախոս տրվել էր

¹⁰¹ E. Lavissee. Préface. – V. Bérard. նշվ. աշխ., էջ II:

¹⁰² E. Lavissee. Notre politique orientale // “Revue de Paris”, livraison du 15 mai 1897, p. 275: A. Tchobanian. L’Arménie. son histoire, sa littérature, son rôle en Orient. Conférence faite le 9 mars 1897 à la salle de la Société de Géographie sous la présidence de M[onsieur] Anatol France. Paris, 1897, p. 10.

¹⁰³ L. de Contenson. Chrétiens et musulmans. Voyages et études, Paris, 1901, p. XIII.

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 65:

¹⁰⁵ Նույն տեղում:

վերից»¹⁰⁶: Ինչ վերաբերում է ցեղասպանությունն իրականացնողներին, Կոնտանտոնը մատնանշում է «հրամանի հիման վրա գործած» զինվորների և նրանց աջակցած մահմեդական բնակչության դերը, որոնք «ջանում էին օգտվել սուլթանի տված՝ հայերին սպանելու թույլտվությունից, ինչպես նաև հետապնդում էին ավարի իրենց բաժինը հափշտակելու նպատակ»¹⁰⁷: Ըստ այդմ՝ նա չի շրջանցում նաև մահմեդականների մոլեռանդության հանգամանքի էական նշանակությունը: Բիրեջիկում տեղի ունեցած կոտորածների առիթով նա նշում է, որ գրիգորյան, կաթոլիկ և բողոքական հայերի համատարած բնաջնջումն իրականացնում էր մոլլաների առաջնորդությամբ գործող մահմեդական բնակչությունը:

Կոնտանտոնի շարադրանքը պարզորոշ վկայում է, որ ինչպես ֆրանսիացի ժամանակակիցներից շատերը, նա ևս չի ընբռնել Հայոց ցեղասպանության իրական պատճառը և այն չի պայմանավորել սուլթանի՝ Հայկական հարցին «լուծում» տալու մտադրությամբ: Այդուհանդերձ, նա ուղղակի կապ է արձանագրել սուլթանի պանիսլամական գաղափարների և XIX դարի 90-ական թվականներին կրկին կյանքի կոչված զանգվածային կոտորածների միջև, որոնց իրականացումը դիտել է իբրև արևելյան բռնակալությանը բնորոշ հնամենի գործելամիջոց¹⁰⁸: «Աբդուլ Համիդը, – գրում է նա, – մնացել է նախ և առաջ՝ արևելյան բռնակալ», իսկ Արևելքում «պարբերաբար տեղի ունեցող արյունահեղությունները, կոտորածները դիտվում են իբրև կառավարման միջոց, որին դիմում են, որպեսզի գահակալի իշխանության հետ հաշվի մատեն»¹⁰⁹:

Կոնտանտոնը քննարկում է դեռևս իր ժամանակակիցների շահարկած՝ համիդյան կոտորածների մեկնաբանությանն առնչվող մի շարք էական խնդիրներ, օրինակ, Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակի հարցը, որը նրա տարբեր ժամանակակիցները նվազեցնում էին, քանզի հիմնվում

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 97:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 61:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 78:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 66, 67:

էին գլխավորապէս Վ. Քինեի անստույգ տեղեկությունների վրա¹¹⁰: Վկայակոչելով Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի տվյալները՝ նա հակահարված է տալիս այս քուր տեսակետի կողմնակիցներին, հավաստում, որ XIX դարի վերջին հայ ազգաբնակչության թիվը կայսրության տարածքում հասնում էր շուրջ երկու միլիոնի¹¹¹:

Կոնտանստնի ուշադրությունից չի վրիպել նաև ցեղասպանության գործընթացում հայերին վերագրվող կարծեցյալ պատասխանատվության հանգամանքը: «Տեղում իրադարձություններն ուսումնասիրելուց հետո, — գրում է նա, — ես խորհում եմ այն մասին, թե ի՞նչն է ավելի հարուցելու մեր զարմանքը՝ մի ամբողջ ազգի բնաջնջմանը վերաբերող հրամանն արձակած սուլթանի արյունալի բարբարոսությունը, թե այդ դժբախտների անխոհեմությունը, որոնք չունենալով Եվրոպայի հուսալի աջակցությունը, մի պահ հավատ են ընծայել իրենց գործի հաջողությանը»: Նա միանգամայն օրինաչափ է համարում «չլսված և չտեսնված չափերի հասնող» թուրքական կեղեքմանը դիմադրելու հայերի իրավունքը: «Ինձ հետ կհամաձայնվեն, — շարունակում է նա, — որ դա նրանց իրա-

¹¹⁰ Տես օրինակ P. Pisani. Les affaires d'Arménie, Paris. 1895, p. 19; E. Lamy. La France du Levant. Paris. 1900, p. 84; R. Pinon. L'Europe et l'empire Ottoman. Les aspects actuels de la question d'Orient. Paris, 1908, p. 43. Տես նաև Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, p. 2-7.

¹¹¹ L. de Contenson, նշվ. աշխ., էջ 152: Արևմտահայության թվաքանակի հարցը՝ իրադարձությունների ֆրանսիացի ժամանակակիցների շրջանում տեղիք է տվել իրարամերժ կարծիքների: Այդ մասին տես R. H. Kévorkian, P. B. Paboudjian. Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide. Paris, 1992, p. 53-55. Այս առիթով հարկ է նշել, որ ըստ Ա. Համբարյանի հավաստի հաշվարկների՝ 1860-1870-ական թթ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր շուրջ երեք միլիոն հայ, որից 2.5 միլիոնն Արևմտյան Հայաստանում: Տես Ա. Համբարյան, Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանի հարցի շուրջը. — «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 110: Տես նաև Պ. Ա. Սիմոնյան, Հայկական հարցը և ռուս հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թվականներին, Երևան, 2003, էջ 76; Գ. Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, էջ 363-368:

վունքների մեջ է մտնում և այս հարցում Ֆրանսիայում որևէ մեկին համոզելու հարկը չկա: Բայց ինչ կարող էին նրանք անել միայնակ և արդյո՞ք հուսալքման այդ սահմանեզրին չէին հասել այն պահին, երբ դադարել էին խորհելուց»¹¹²: Ակնհայտ է, որ առաջադրված հարցին հստակ պատասխան չտալով հանդերձ, նրա համակրանքն, այդուհանդերձ, անասելի տառապանքներ կրող հայ ժողովրդի, այլ ոչ թե նրա դահիճների կողմն է:

Թեպետ Կոնտանսոնը բացահայտորեն չի քննադատում եվրոպական պետությունների՝ հայկական կոտորածների հարցում դրսևորած անկարեկից վերաբերմունքը, նրա շարադրանքում, այնուամենայնիվ, թռուցիկ արտացոլվել են մեծ տերությունների քաղաքականության նկատմամբ քննադատական երանգներ: Վիլիելմ II-ին, օրինակ, նա բացահայտորեն անվանում է Աբդուլ Չամիդի բարեկամ¹¹³:

Կոնտանսոնի հպանցիկ, գուցեև ոչ միշտ սպառիչ, սակայն, անաչառ դիտարկումներն առավել մեծ արժեք են ստանում, եթե նկատի ունենանք, որ հեղինակը ֆրանսիացի եզակի մտավորականներից է, ով եղել է իրադարձությունների ականատեսը:

Չայոց ցեղասպանության առաջին փուլը մանրագնին քննության նյութ է դարձրել Ռ. Բարիդոնը, ով հիմնվելով հայ ականատեսների վկայությունների, ինչպես նաև անգլիացի քաղաքական գործիչների (Գլադստոն, Դիլոն և ուրիշներ) ելույթների վրա, վերհանել է համիդյան կոտորածների համառոտ, սակայն հավաստի պատկերը և խիստ քննադատության ենթարկել եվրոպական պետությունների վարած քաղաքականությունը¹¹⁴:

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում հայերի համար ստեղծված անելանելի կացության առիթով Բարիդոնը նշում է. «Նույնիսկ այդ պահին, որը նրանց (հայերի – Վ. Պ.) պատմության լավագույն ժամանակաշրջաններից էր, նրանց վիճակը նույնքան վատթար էր, որքան Ամերիկայի

¹¹² L. de Contenson, նշվ. աշխ., էջ 111-112:

¹¹³ Նույն տեղում, էջ 69:

— ¹¹⁴ R. Baridon, Arménie. Coup d'œil général et explicatif sur son histoire et les derniers événements, Paris, 1896.

ստրուկներինը՝ Քաղաքացիական պատերազմից առաջ... Նրանք երբևէ չեն ունեցել ոչ փոքր-իսկ անկախություն և ոչ էլ նույնիսկ իրենց կանանց ու երեխաներին պաշտպանելու իրավունք»¹¹⁵:

Վերլուծելով Բեռլինի վեհաժողովից հետո մեծ տերությունների և Օսմանյան կայսրության միջև ձևավորված փոխհարաբերությունները՝ Բարիդոնն առաջադրում է Արևմտյան Հայաստանի շուրջ ստեղծված քաղաքական իրավիճակի միանգամայն ընդունելի մեկնաբանություններ: Նա թափանցում է Հայկական հարցում Արդուլ Համիդի վարած խուսանավելու քաղաքականության խորքերը և բացահայտում դրա պատճառները, այն է՝ Բարձր Դուռը գիտակցում էր, որ իր՝ իբրև պետության գոյատևման անհրաժեշտությունը թելադրվում էր մեծ տերությունների միջև հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտությամբ: Վկայակոչելով հայ ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցած այս անառարկելի իրողությունը, նա հանգում է միանգամայն իրատեսական հետևության. «սուլթանը համարձակություն է ունեցել առաջին իսկ պահից խախտել իր բոլոր խոստումները և Բեռլինի պայմանագրի հաջորդ օրվանից ի վեր որդեգրել է քրիստոնյա հպատակներին ոչնչացնելու համակարգը»¹¹⁶:

Բարիդոնն անդրադառնում է համիդիե զորամիավորումների կազմավորման ուղղությամբ Արդուլ Համիդի գործադրած ջանքերին, դրանցում ընդգրկված հրոսակների հանցանքներին, ինչպես նաև 1895 թ. մայիսին՝ հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման պահանջով հանդես եկած մեծ տերությունների դեսպանների միջամտության հետևանքով տեղի ունեցած հայկական ջարդերին: «Ծրագիրը, որով առաջնորդվում էին, – նշում է նա, – հանգում էր մեծ թվով մարդկանց սպանությանը, որպեսզի անգոր դարձնեին տեղի քրիստոնյաներին, ապրողներից հափշտակեին գոյության յուրաքանչյուր միջոց, այնուհետև՝ սովամահության դատապարտեին կամ սպանեին նրանց, ովքեր կիրաժարվեին գրկաբաց ընդունել իսլամը»¹¹⁷:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 5:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 6:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 8:

Այս հարցը կարիք ունի առավել հանգամանալից քննության, քանզի Հայոց ցեղասպանության մեկնաբանության ասպարեզում Բարիդոնի հայացքների ամբողջ համակարգը խարսխված է դրա վրա: Հեղինակը նկարագրում է հայկական նահանգներում և Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կոտորածների մանրամասները, որոնք, սակայն, սխալմամբ պայմանավորում է սոսկ կրոնական առճակատման հանգամանքով և քննարկում իշխանությունների՝ կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա այլ ժողովուրդների նկատմամբ դրսևորած վերաբերմունքի ընդհանուր հենքի վրա:

Նախ՝ նշենք, որ հայերից բացի օսմանյան լծի տակ հեծում էին շատ այլ՝ թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական ժողովուրդներ, որոնց նկատմամբ ևս օսմանյան տարբեր վարչակարգեր պարբերաբար կիրառել են բնաջնջման քաղաքականություն, ուստի՝ Հայոց ցեղասպանությունն օսմանյան վարչակարգի ցեղասպան քաղաքականության ընդհանուր շղթայում տեղադրելու՝ Բարիդոնի մոտեցումը ողջունելի է, իսկ այդ առիթով տարակարծություններ տածելն իսկ անիմաստ է:

Սակայն Հայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում ուշադրությունը բեռեղով միմիայն, հիրավի, իր էական դերն ունեցած կրոնական դավանանքների տարբերության հանգամանքի վրա և այն ներկայացնելով իբրև արևմտահայության բնաջնջման միակ պատճառ¹¹⁸, հեղինակն ամբողջությամբ շրջանցում է այն առանձնահատկությունները, որոնք, հայ ժողովրդի ողբերգության պարագայում, բնորոշ էին Բարձր Դռան կիրառած օսմանյան պետական քաղաքականությանը և Հայոց ցեղասպանությունն ակնհայտորեն զանազանում էին քրիստոնյա այլ ժողովուրդների նկատմամբ գործադրված զանգվածային բռնություններից:

Ի վերջո, Հայոց ցեղասպանությունը Բարիդոնը մեկնաբանում է իբրև զուտ կրոնական հողի վրա խարսխված իրադարձություն և բացարձակապես չի հիմնավորում դրա իրական դրդապատճառները, տեսադաշտից, այդպիսով, դուրս թողնե-

¹¹⁸ Նույն տեղում, էջ 4, 10:

լով Հայկական հարցին «լուծում» տալու՝ սուլթանի որդեգրած յուրօրինակ տարբերակը, որի հեռահար նպատակը ոչ միայն հեղինակի բազմիցս իրավամբ շեշտած՝ կայսրության տարածքում բնակվող քրիստոնյաների, այդ թվում հայերի՝ ոչնչացումն էր, այլև բռնագրավված հայկական պատմական տարածքների հայաթափումն ու դիվանագիտության քառուղիները մխրճված Հայկական հարցից մեկընդմիջտ ձերբազատումը:

Նահատակվող հայությանն օգնության հասնելու միակ գործնական միջոցը հեղինակը համարում է Եվրոպայում հասարակական կարծիքի աշխուժացումը, որը և կհարկադրեր, ըստ նրա՝ մեծ տերությունների կառավարություններին լրջորեն զբաղվել «մարդասիրական այս գործով»¹¹⁹:

Իրադարձությունների անմիջական տպավորության ներքո է գրվել Գ. Ապպիայի՝ Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում տեղի ունեցած կոտորածների պատմությանը նվիրված գրքույկը¹²⁰: Հեղինակը սահմանափակվում է հպանցիկ դիտարկումներով, թռուցիկ հայացք նետում մի շարք վայրերում (Վան, Ձեյթուն և այլուր) տեղի ունեցած անցքերին: Համառոտակի ուրվագծելով 1895 թ. հոկտեմբերի 28-ից ի վեր Ուրֆայում տեղի ունեցած կոտորածների ընդհանուր պատկերը՝ Ապպիան նշում է թե՛ համիդիե զորամիավորումների և թե՛ քրդական հրոսակախմբերի մասնակցությունը հայերի ոչնչացման գործընթացին, հավաստում «բազում հարյուրավոր» մարդկանց բնաջնջման փաստը, 1500 կրպակի կողոպուտը, բազմաթիվ քրիստոնյաների՝ բռնի կրոնափոխության իրողությունը¹²¹:

Թեև հեղինակը չի անտեսում մահմեդականների մուեռանդության նշանակությունը, փաստեր է բերում, թե ինչպես են զանազան վայրերում բնակվող մահմեդականները հանդիմանել Ուրֆայի հավատակիցներին հայերի իհանդեպ «մեղմ» վերաբերմունք ցուցաբերելու համար¹²², այդուհանդերձ, նա ուշադրությունը կենտրոնացնում է հայկական կոտորածների՝

¹¹⁹ Նույն տեղում, էջ 14:

— ¹²⁰ G. Appia, *Enfants arméniens. Souvenirs de Noël 1895. Récits authentiques*, Paris. 1896.

¹²¹ Նույն տեղում, էջ 5:

¹²² Նույն տեղում:

ծրագրված բնույթի վրա: Նա ընդգծում է, մասնավորապես, տեղական իշխանությունների թողտվության հանգամանքը, որոնք ոչինչ չեն արել հանցագործներին պատժելու համար և մահմեդական խաժանուժին թույլատրել են կողոպտել հայերի ունեցվածքը:

Ցավով արձանագրելով, որ հոկտեմբերին տեղի ունեցած իրադարձություններն ազդարարել են սոսկ շատ ավելի լայնածավալ կոտորածների սկզբնավորումը, Ապպիան համառոտակի անդրադառնում է դեկտեմբերի վերջին տեղի ունեցած հայկական ջարդերի նախապատրաստական աշխատանքներին. «Թուրքական արդարադատության պաշտոնական ներկայացուցիչները՝ քաղաքի ամենաբարձրաստիճան ղեկավարներից մեկի՝ ոմն Յուսեյն փաշայի գլխավորությամբ, — նշում է նա, — միստ են գումարել և վճռել, որ բոլոր քրիստոնյաներին զինաթափելուց հետո, հարձակում կգործեն նրանց վրա Սուրբ ծննդի հաջորդ օրը՝ 1895 թ. դեկտեմբերի 27-ին»¹²³: Ապպիան բացահայտում է նաև թուրք ջարդարարների պարագլուխների որդեգրած նենգ գործելամիջոցները, որոնք կոտորածների պատասխանատվությունը հայերի վրա բարդելու նպատակով կեղծ կրակոց են կազմակերպել թուրքական զորքերի հրամանատարի վրա, ինչը և դարձել է կոտորածի շարժառիթը¹²⁴: Ընդհանուր առմամբ, հեղինակը հավաստում է, որ միևնույն փաստերն են արձանագրվել երկրի ամբողջ տարածքում, որոնց հետևանքով զոհվել է 100000 հայ, իսկ տասնյակ հազարավորներ՝ հարկադրաբար ուրացել են իրենց հավատքը¹²⁵:

Ելնելով նյութի ցաքուցրիվ շարադրանքից, կարելի է հավաստել, որ Ապպիան դեռևս ստույգ պատկերացումներ չի ունեցել Յայոց ցեղասպանության գործընթացի պատճառների և մանրամասների, Բարձր Դռան քաղաքականության ելևէջների, մեծ տերությունների՝ Ղայկական հարցում գրաված դիրքորոշման վերաբերյալ: Նա սահմանափակվել է գլխավորապես իր անձնական տպավորությունները թղթին հանձնելով: Ըստ

¹²³ Նույն տեղում, էջ 6:

¹²⁴ Նույն տեղում:

¹²⁵ Նույն տեղում, էջ 9:

այդմ՝ նպատակահարմար ենք գտնում արժեվորել նրա կատարած աշխատանքի՝ իր ժամանակի համար ունեցած զուտ տեղեկատվական նշանակությունը:

Այս ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության մեկնաբանության ասպարեզում մեծ հետաքրքրություն է դրսևորել «Ռեյու դե ռեյու» հանդեսի տնօրեն ժան Ֆինոն (1856-1922), ով առաջիններից է Ֆրանսիայում լուսաբանել համիդյան կոտորածների հավաստի պատկերը և ֆրանսիական հանրությանը ստույգ տեղեկություններ հաղորդելու նպատակով հրապարակել անգլիացի հասարակական և կրոնական գործիչ, Հայկական հարցին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Մաք Քոլ Մալքոլմի «Հայաստանը Եվրոպայի առջև» աշխատությունը¹²⁶: Դրա ընդարձակ ներածական հոդվածում Ֆինոն շոշափում է Օսմանյան կայսրությունում արևմտահայության բնաջնջմանն առնչվող որոշ հարցեր¹²⁷:

Հիմնվելով, իր իսկ հավաստմամբ, ամեն օր ստացվող նորանոր փաստերի վրա, Ֆինոն Հայոց ցեղասպանությունը մեկնաբանում է իբրև օսմանյան կառավարության կողմից պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձություն: «Մի ամբողջ քրիստոնյա և քաղաքակիրթ, խաղաղասեր ու խելացի ժողովուրդ,— գրում է նա,— որն ունի փառապանծ պատմական անցյալ, իսկ ներկայումս հարուստ գրականություն, անհետանում է մարդասպանների դանակների հարվածներից, որոնց բացահայտորեն հովանավորում է նույնքան բարբարոսական, որքան և դաժան կառավարությունը»¹²⁸: Ցեղասպանության գործընթացում նա արձանագրում է միայն մեկ՝ կոտորածների մոլեգնության աճին առնչվող փոփոխություն, որը «ժամանակ առ ժամանակ կրկնապատկվում

¹²⁶ **Malcolm Mac Coll**, L'Arménie devant l'Europe // "Revue des revues", livraison du 1^{er} septembre, 1895, p. 381-402; livraison du 15 septembre, 1895, p. 492-521. Նշենք նաև, որ երկու տարի անց Փարիզում այն վերահրատարակվել է տե՛ս **Malcolm Mac Coll**, L'Arménie devant l'Europe. Le gouvernement turc est une théocratie, Paris, 1897.

¹²⁷ **J. Finot**, Un peuple de martyrs! (La Question arménienne) // "Revue des revues", livraison du 1^{er} septembre 1895.

¹²⁸ Նույն տեղում, էջ 377:

է»։ Նուրբ երգիծանքով նա նշում է, որ օսմանյան կառավարութիւնը խոյս է տալիս քաղաքակիրթ երկրին բնորոշ «տարրական պարտավորութիւններից», սակայն, փոխարենը՝ կառչում է իր բոլոր իրավունքներից և դիմում «ժողովուրդների իրավունքին», որպէսզի կոտորածները շարունակելու թույլտվութիւն ստանա¹²⁹։

Սասունի ջարդերն անվանելով «սարսափելի», Ֆինոն նկատում է, որ դրանք «զարհուրանքով են համակել իրենց իսկ թուրքերին»¹³⁰։ Նա բացահայտում է համիդյան վարչակարգի էութիւնը, որը ոչ միայն չի խորշել կոտորածներից, կողոպուտից, գյուղերի ամայացումից, հազարավոր ընտանիքներ սնանկացնելուց, այլև չի քողարկել իր «անզորութիւնը կարգ ու կանոնը պահպանելու հարցում»։ «Ընդհանուր առմամբ, մենք մասնակցում ենք, – եզրակացնում է նա, – ամենահրեշտավոր ներկայացման՝ ընդհանուր իրավունքների նկատմամբ գործադրվող ոճիրների թագադրությանն ու մեծարմանը, որոնք պայմանավորված են եվրոպական պետութիւնների կողմից ճանաչված կառավարության դիրքորոշմամբ»¹³¹։ Ի դեպ, Ֆինոն ֆրանսիացի եզակի պատմաբաններից է, ով հարևանցիորեն ակնարկում է պատմական Հայաստանի ռազմակալման փաստը, հեզմանքով նշում, որ թուրքական կառավարութիւնը կոտորածն իրականացնում էր «*հր* (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.) տարածքներում»¹³²։

Ֆինոն մանրամասն քննարկում է եվրոպական պետութիւնների դիրքորոշումը և Հայկական հարցի հանդէպ նրանց դրսևորած անտարբերութիւնը պատճառաբանում Օսմանյան կայսրութեան գործերին միջամտելու ցանկութեան բացակայութեամբ, հանգամանք, որը կարող էր «եվրոպայի չորս անկյուններում հրդեհ բռնկել»¹³³։ Նա հիմնավորապէս հերքում է հայերի վրա բարոյվող անհիմն մեղադրանքները, ըստ որոնց՝ անկախու-

¹²⁹ Նույն տեղում։

¹³⁰ Նույն տեղում, էջ 378։

¹³¹ Նույն տեղում, էջ 377։

¹³² Նույն տեղում։

¹³³ Նույն տեղում, էջ 378։

թյուն ձեռք բերելու նրանց ձգտումները մեծ դժվարություններ են հարուցել եվրոպական դիվանագիտության համար: Ֆինոն զուգահեռներ է անցկացնում արևելահայերի և արևմտահայերի կացության միջև, ըստ այդմ՝ վկայակոչում Արևմտյան Հայաստանում բնակվող հայերի անապահովությանն առնչվող բազմապիսի փաստեր և հիմնավորում օսմանյան վարչակարգից արևմտահայության դժգոհության օրինաչափությունը: Հայաստանի անկախության հռչակման խնդրի շահարկման կապակցությամբ՝ նա տալիս է հետևյալ իրատեսական մեկնաբանությունը. «Խոսքը վերաբերում է այդ դժբախտ բնակիչների կյանքին և ունեցվածքին, այլ ոչ թե քաղաքական երազանքների»¹³⁴:

Ազատագրական շարժման զարթոնքն Արևմտյան Հայաստանում Ֆինոն պայմանավորում է մեծ տերությունների անտարբեր դիրքորոշմամբ և նշում, որ անհավասար պայքարում մահ փնտրող հայ երիտասարդությունը հույս էր տածում իր «հերոսական վախճանի միջոցով Եվրոպային դուրս բերել խոր ընդարմացումից»¹³⁵: Նա քննադատական խոսքեր է ուղղում ֆրանսիական դիվանագիտության հասցեին, որը «դժբախտություն է ունեցել իր հովանու ներքո վերցնել Թուրքիային» և միաժամանակ ֆրանսիացիներին հիշեցնում է հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնելու պարտքի զգացողության մասին:

Նշենք նաև, որ «Ռևյու դե ռևյու» հանդեսում Ֆինոն հրապարակել է նաև Չոպանյանի հրատարակության պատրաստած «Հայաստանի կոտորածները»՝ դեռևս անտիպ ժողովածուից մի նամակ՝ նվիրված Ուրֆայի կոտորածներին¹³⁶: Ի դեպ, դրա ծանուցման մեջ հանդեսի ղեկավարությունն իր վերաբերմունքն է հայտնել հայկական ջարդերի նկատմամբ և խստագույնս դատապարտել Աբդուլ Համիդին, քանզի օսմանյան գահակալը ձգտում էր, որ «իր ընդարձակ կայսրության բոլոր վայրերը հա-

¹³⁴ Նույն տեղում, էջ 379:

¹³⁵ Նույն տեղում:

¹³⁶ Les massacres d'Edesse. (Récit d'un témoin) // "Revue des revues", livraison du 15 juillet 1896. p. 153-160. Հմտ. Les massacres d'Arménie. Témoignages des victims. p. 239-258.

վասարապես ողողվեն արյամբ, ամայանան ու ավերվեն»: Պարբերական կոտորածները դիտելով իբրև պետական քաղաքականությամբ պայմանավորված եղելություն, որի նպատակը մի ամբողջ ժողովրդի ոչնչացումն է, հանդեսի ղեկավարությունը նահատակվող արևմտահայերին համարում է «եվրոպական դիվանագիտության դժբախտ գոհեր»¹³⁷:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև «Ռևյու դե ռևյուտում» տպագրված՝ Աբդուլ Յամիդին և նրա մերձավորներին նվիրված անստորագիր մի հոդված, ուր տրված է սուլթանի գործունեության համառոտ գնահատականը¹³⁸: Անանուն հեղինակն անկողմնակալորեն ուրվագծում է նրա դիմագիծը, անվանում նրան «արյունարբու հրեշ»¹³⁹, որը հետամուտ է մահմեդական կայսրության վերակազմավորմանն այն հիմունքներով, որոնք առաջադրել է Օմար խալիֆը¹⁴⁰: Ըստ նրա՝ նման կայսրության շրջանակներում կարող են գոյություն ունենալ մարդկանց երկու խումբ՝ հավատացյալները և նրանց ծառայող ռայան: Ընդգծելով, այսպիսով, օսմանյան վարչակարգի քաղաքականության ռասիստական էությունը, հեղինակն, այդուհանդերձ, գտնում է, որ Աբդուլ Յամիդը ոչ միայն ձգտում էր քաղաքական այդ կուրսը համատեղել իսլամի պատմության առաջին դրվագների հետ, այլև իրականացնում էր «հայկական կոտորածներ և թուրքերի արտաքսումներ»¹⁴¹: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 300000 հայի բնաջնջումը հեղինակը մեկնաբանում է, առանց մանրամասների մեջ թափանցելու, թե՛ սուլթանի՝ պանիսլամական գաղափարներին տուրք տալու միտումով, շրջանցելով, ի դեպ, օսմանիզմի գաղափարախոսության վերլուծությունն ու դրա իրականացման ասպարեզում Բարձր Դռան կրած անհաջողությունները և թե՛ դրանք դիտում է իբրև կայսրությունում տիրող խառնաշփոթ իրավիճակի ընդհանուր

¹³⁷ Les massacres d'Edesse. p. 153.

¹³⁸ Le maître et les serviteurs d'Yeldiz. (Dans l'intimité d'une Cour à la fin du XIX^e siècle) // "Revue des revues", livraison du 15 août 1897, p. 304-310; livraison du 15 septembre 1897, p. 409-417.

¹³⁹ Նույն տեղում, էջ 415:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 416:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 417:

շղթայի բաղկացուցիչ օղակ՝ առանց բացահայտելու ցեղասպանության գլխավոր պատճառները: Այդուհանդերձ, նա իրավամբ մատնանշում է հայկական կոտորածների հետևանքով տնտեսության ոլորտում կայսրությանը պատճառված վնասները, որոնց հետևանքով «անկում են ապրել առևտուրը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը»¹⁴²: Յեղիմակը քննադատական խոսքեր է ուղղում եվրոպական տերությունների հասցեին, որոնք սուլթանին թույլատրել են «իր գաղափարները վերածել քաղաքական գործողությունների»¹⁴³:

Նշված ժամանակահատվածում ֆրանսիացի պատմաբանների մի մասը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության լուսաբանմանն անդրադարձել է նաև Ֆրանսիայի արևելյան քաղաքականությանը և Արևելյան հարցի պատմությանը նվիրված ընդհանուր բնույթի աշխատություններում: Դրանցից առավել կարևոր է ֆրանսիացի նշանավոր պատմաբան, անվանի նապոլեոնագետ, Ֆրանսիայի արևելյան քաղաքականության խոշոր գիտակ էդուարդ Դրիոյի (1864-1947)¹⁴⁴ արևելյան հարցի պատմությանը նվիրված գիրքը¹⁴⁵, ուր նա մանրամասնորեն քննարկում է համիդյան կոտորածների պատմությունը:

Համառոտակի կանգ առնելով հայկական տարածքների մասնատման և XIX դարի 70-ական թթ. Հայկական հարցի ծագման վրա, նա հանգամանալից ներկայացնում է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի կացությունը 1880-1890-ական թվականներին, բազմիցս ընդգծում՝ Աբդուլ Համիդի քաղաքականության՝ Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրով ստանձնած պարտավորություններին անհարիր միտվածությունը և բարենորոգումների իրականացման հարցում

¹⁴² Նույն տեղում:

¹⁴³ Նույն տեղում:

¹⁴⁴ Տես օրինակ **E. Driault**. La politique orientale de Napoléon. Sébastiani et Gardane (1806-1808). Paris. 1904: *Առկնի* Napoléon et l'Europe. t. 1-5. Paris. 1912-1917.

¹⁴⁵ **E. Driault**. La question d'Orient depuis ses origines jusqu'à nos jours. Paris, 1898. Դրիոյի սույն գրքի չորրորդ հրատարակությունը լույս է տեսել 1909 թ.: Մենք, սակայն, կիզենք գրքի առաջին հրատարակությունը:

արևմտյան տերությունների գործադրած ջանքերի անարդյունավետությունը: «Անցել են ամիսներ, տարիներ,— գրում է նա,— իսկ ոչ մի բարենորոգում չի իրականացվել. հարկերը գանձվել են ավելի կամայականորեն, քրոջերը դարձել են ավելի աներկյուղ ու գիշատիչ, քան երբևէ, կառավարությունը նրանց ընձեռել է գործելու հնարավորություն, դեռ ավելին՝ քաջալերել է»:

Դրիոն իրադարձությունների եզակի ժամանակակիցներից է, ով խորամուխ է եղել համիդյան վարչակարգի քաղաքականության մանրամասների մեջ, քանզի նրա ելակետային դրույթը հանգում է այն բանին, որ սուլթանը վճռել էր «Հայկական հարցին լուծում տալ հայերին ոչնչացնելու միջոցով»¹⁴⁶: Նշելով 1892-1893 թթ. կրոնափոխության և հայերին վտարելու ուղղությամբ սուլթանի գործադրած ջանքերի մասին, Դրիոն՝ հիմնվելով «Դեղին գրքում» զետեղված փաստաթղթերի վրա, մանրամասնորեն նկարագրում է 1894-1895 թթ. կոտորածների ընթացքը: Նա խոսքը կենտրոնացնում է, մասնավորապես, 1894 թ. Սասունի իրադարձությունների, 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ողբերգական անցքերի, ինչպես նաև նոյեմբեր-դեկտեմբերին՝ «համաձայն Կոստանդնուպոլսից տեղ հասած հրամանների»¹⁴⁷: Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում ու քաղաքներում (Դիարբեքիր, Մուշ, Մալաթիա և այլն) իրականացված կոտորածների վրա:

Դրիոյի ուշադրությունից չի վրիպել նաև հայկական կուսակցությունների գործունեության հանգամանքը: Ըստ նրա մեկնաբանության՝ թե՛ եվրոպական տերությունների անարդյունավետ քաղաքականությունից և թե՛ Ռուսաստանի՝ իրենց նկատմամբ դրսևորած անբարյացակամ վերաբերմունքից վիատված (հեղինակը անհերքելի փաստերով հիմնավորում է Ալեքսանդր III-ի քաղաքականության հայահալած բնույթը)՝ հայերը տուրք են տվել հեղափոխական գործունեության և հետապնդել միայն մեկ նպատակ, այն է՝ հարկադրել «տերություններին և սուլթանին վերհիշել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի գոյության մասին... Անձամբ սուլթանի վարած

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 252:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 255:

քաղաքականությունը, հայկական կոմիտեների գործունեությունը, եվրոպական տերությունների անտարբերությունը կամ չկամությունը,— եզրակացնում է նա,— Չայաստանը նետել են ամենասարսափելի ողբերգությունների գիրկը»¹⁴⁸:

Եվրոպական պետությունների պասսիվ դիրքորոշման առիթով Դրիոն թեև ձեռնպահ է մնում նրանց հասցեին քննադատական խոսքեր ուղղելուց, այդուհանդերձ, իր տարակուսանքն է հայտնում առ այն, թե «ինչպես է Եվրոպան թուլատրել նման ոճրի իրականացումը, որը պատմության մեջ, միջնադարից ի վեր, համանմանը չունի»¹⁴⁹: Ինչ վերաբերում է Ֆրանսիայի քաղաքականությանը, ապա նա գտնում է, որ 1896 թ. Նիկոլայ II-ի Փարիզ կատարած այցից հետո Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը ֆրանսիական կառավարությունը վերածել է «ժամանակակից եվրոպական իրավունքի հիմնաքարերից մեկի ու դրել մեծ տերությունների համատեղ երաշխավորության ներքո»¹⁵⁰:

Եզրափակելով իր ընդհանրացումները, հեղինակը վկայակոչում է Գլադստոնի և Վանդալի Աբդուլ Չամիդին՝ համապատասխանաբար՝ «մարդասպան սուլթան» և «կարմիր սուլթան» տված մականունները: Ըստ նրա՝ Գլադստոնի գնահատականն ընդգրկում է, քանզի «զոհերի թիվը հասնում է զրեթե 150000-ի, իսկ այդ կտրվածքով՝ 1870-1871 թթ. ֆրանսապրուսական պատերազմն առավել սարսափազդու չի եղել»¹⁵¹:

XIX դարի 90-ական թվականներին հայ ժողովրդին բազմիցս սատարել է եռնեստ Լավիսը: Ֆրանսիայի արևելյան քաղաքականությանը նվիրված հոդվածներում, ինչպես և իր ժամանակակից ֆրանսիացի գործիչների գերակշռող մասը, նա հանդես է գալիս Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման դիրքերից, հավաստում, որ «Ֆրանսիան թուրքիայում ունի ֆինանսական մեծ շահախնդրություններ»¹⁵²:

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 252:

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 258:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 258-259:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 258:

¹⁵² E. Lavissee, Questions // "Revue de Paris", livraison du 15 janvier 1897, p. 459-

Օսմանյան կայսրության հովանավորի դեր ստանձնելը համարելով Ֆրանսիայի առաջնահերթ խնդիրներից մեկը, Լավիսն, այդուհանդերձ, համոզված է, որ նման քաղաքականությունը չի ենթադրում «սուլթանին իրավունք վերապահել վայրագ բռնակալության միջոցով վարկաբեկել այդ կայսրության գոյության իսկ փաստը»: Ավելին, նա գտնում է, որ Ֆրանսիայի պարտականությունների մեջ է մտնում Օսմանյան կայսրությունում բնակվող և անկախություն տենչացող ազգերի վերածնությանը զորավիգ լինելը¹⁵³:

Թեև Լավիսը մանրագնին չի քննարկում հայկական կոտորածների ընթացքը, նրա որոշ դիտարկումներն, այնուամենայնիվ, հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմել այդ իրադարձության շուրջ նրա ունեցած դիրքորոշման վերաբերյալ: Օսմանյան կառավարությունը բնութագրելով իբրև «կոպիտ, բարբարոսական և արատավոր»¹⁵⁴, նա «սարսափելի ճգնաժամի գլխավոր պատճառ» համարում է Աբդուլ Չամիդին, նշելով, որ «Արևելյան հարցն արդի ժամանակաշրջանում վերածվել է սուլթանի հարցի»¹⁵⁵:

Աբդուլ Չամիդին մեկ այլ առիթով անվանելով «վախկոտ բռնակալ, որին ատում են և արհամարհում իրենք իսկ՝ մահմեդականները»¹⁵⁶, Լավիսը Չայոց ցեղասպանությունը մեկնաբանում է իբրև կանխամտածված և նախապես ծրագրված իրադարձություն, 1895 թվականը համարում «մռայլ ժամանակաշրջան», երբ «կոտորածները հաջորդում էին կոտորածներին»¹⁵⁷: 1895 թ. Տրապիզոնում տեղի ունեցած ջարդերի առիթով նա նշում է. «Այսօր մենք իրազեկ ենք այդ կոտորածի

¹⁵³ Նույն տեղում, էջ 460-461:

¹⁵⁴ E. Lavissee, Notre politique orientale // “Revue de Paris”, livraison du 15 mai 1897, p. 282. Նշենք, որ Լավիսի այս հոդվածը մանրագնին քննական վերլուծության են ենթարկել հնչակյան կուսակցության օրգան «Նոր կյանք» ամսագրի թղթակիցները: Տե՛ս «Նոր կեանք», Ա տարի, 1898, թիվ 1, էջ 12-14; թիվ 4, էջ 60-63; թիվ 5, էջ 78-80:

¹⁵⁵ E. Lavissee, Questions, p. 463.

¹⁵⁶ E. Lavissee. La paix d’Orient // “Revue de Paris”, livraison du 15 février 1898, p. 865.

¹⁵⁷ E. Lavissee, Notre politique orientale. p. 297.

սարսափազդու մանրամասներին, որն իրականացվել է հստակ հրամանի հիման վրա, սկսվել ու ավարտվել ըստ տրված ազդանշանի»¹⁵⁸:

Լավիսի հողվածներում ակնառու է մեծ տերությունների և, մասնավորապես, Ֆրանսիայի ղեկավար շրջանների՝ հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ դրսևորած անտարբեր վերաբերմունքի, Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու ցանկության բացակայության քննադատությունը, հանգամանք, որը սուլթանին հնարավորություններ է ընձեռել անշեղորեն կենսագործելու արևմտահայության համատարած ոչնչացման քաղաքականությունը: Օսմանյան բանկի գրավման հետ կապված միջադեպի առիթով նա գրում է. «Անողորք բռնությունները, որոնք բազում շաբաթներ ի վեր նախապատրաստել էին դավադրությանն իրազեկ օսմանյան իշխանությունները, սարսափելի կոտորածները, որոնք դեսպանների աչքի առջև հարատևել են բազմաթիվ օրեր, ապացուցում են, թե որքան էր սուլթանը համոզված, որ Եվրոպայից երկյուղելու ոչինչ չունի»¹⁵⁹:

Լավիսը խարազանում է հատկապես Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Դանոտոյի թրքամետ քաղաքականությունը, որի ջանքերով «Դեղին գրքում» զետեղված մեծ թվով փաստաթղթեր հրատարակվել են կրճատումներով¹⁶⁰, ֆրանսիական կառավարության՝ հայկական կոտորածների իրողությունը ֆրանսիական հասարակությունից քողարկելու շահագրգռվածությունը, ինչպես Բերարը, բնութագրում է իբրև «լռության դավադրություն»¹⁶¹, ընդգծում դրա կազմակերպիչների վրա բարդվող մեծ պատասխանատվությունը: «Գնաժամը շարունակվում էր, – գրում է Լավիսը, – կոտորածները կրկնվում էին, կարմիր բիծն ընդարձակվում էր, ի՞նչ սուլթանը շարունակում էր ստել: Այս ամենը միմյանց հաջորդում էին

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 294-295:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 302:

¹⁶⁰ E. Lavissee, Note sur le Livre Jaune // “Revue de Paris”, livraison du 15 mars 1897. p. 443-451.

¹⁶¹ Նույն տեղում, էջ 455: Տես նաև E. Lavissee. Questions, p. 463.

կառավարության և մամուլի լռակյացության, հասարակության անիրազեկության պայմաններում»¹⁶²:

Ընդհանուր բնույթի ուսումնասիրությունների թվում իր ուրույն տեղն ունի Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1913) Էտիեն Լամիի (1845-1919) «Լևանտի Ֆրանսիան» մենագրությունը¹⁶³, ուր մանրակրկիտ վերլուծված են Ֆրանսիայի արևելյան քաղաքականության ելևէջները: Համիդյան կոտորածները դարձնելով հանգամանալից ուսումնասիրության նյութ, նա հայերի ճակատագիրն Օսմանյան կայսրությունում քննարկում է ոչ թե իբրև մասնակի երևույթ, այլ օսմանյան լծի տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին վիճակված տառապանքների ընդհանուր հենքի վրա, որոնց ազգային ինքնագիտակցության զարթոնքը պայմանավորում է հպատակների նկատմամբ թուրքերի հաստատած տիրապետությունը դատապարտող` XVIII դարի Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության առաջադրած վեհ սկզբունքներով: «Այդ պահից ի վեր, նրանց իղծերի անսամծելի հաստատակամության և ապստամբությունների հետևանքով Օսմանյան կայսրության առջև ծառայել է մեծ բարդությունների հետ կապված գոյատևման խնդիրը», – գրում է նա¹⁶⁴:

Բնութագրելով հայերին իբրև «խելացի, հարուստ, ճկուն և ճարպիկ» ժողովուրդ, նշելով XIX դարի ընթացքում նրանց փափագած` դավանանքի ազատության, անձի ապահովության և այլ իղծերի մասին, հեղինակը հավաստում է, որ խաղաղ իրավիճակը հարատևել է մինչև Աբդուլ Համիդի գահակալությունը, երբ օսմանյան միապետը, ինչպես նա մեկնաբանում է, «ցանկացել է միաժամանակ ճնշել կայսրության տարածքային

¹⁶² E. Lavisse, Note sur le Livre Jaune, p. 454.

¹⁶³ E. Lamy, նշվ. աշխ.: Մասնակի կրճատումներով այն առաջին անգամ լույս է ընծայվել 1898-1899 թթ. «Ռեյու դը Պարի» ամսագրում: Տե՛ս “Revue de Paris”, livraison du 15 novembre 1898; livraison du 15 décembre 1898; livraison du 15 janvier 1899; livraison du 1^{er} mars 1899; livraison du 15 avril 1899; livraison du 16 septembre 1899. Ամսագրում լույս տեսած գլուխներից որոշ հատվածներ թարգմանաբար տպագրվել են նաև «Նոր կյանք» ամսագրում: Տե՛ս «Նոր կեանք», Բ տարի, 1899, թիվ 19, էջ 291-295; թիվ 20, էջ 310-314:

¹⁶⁴ E. Lamy. նշվ. աշխ., էջ 74:

ամբողջականությանը սպառնող ազգային շարժումները և ձախողել լիբերալ բարենորոգումները, որոնք, նույնիսկ մահմեդականների շրջանում, քաջալերելով հեղափոխական ոգին՝ ի գորու էին սասանելու գահը և սպառնալու սուլթանի կյանքին»։ Նմանօրինակ երկյուղներից Աբդուլ Յամիդը, ըստ նրա՝ վճռել է ձերբազատվել «խլամական ոգուն, նախկին բռնապետությանը բնորոշ միջոցներին վերադառնալու և քրիստոնյա ազգերի նկատմամբ՝ մահմեդական ազգերին տրամադրվող գերիշխանության միջոցով»¹⁶⁵։ Կռահելով սուլթանի ռասիստական քաղաքականության էությունը, Լամին մատնանշում է, որ Աբդուլ Յամիդը ցանկանում էր «բռնության դեմ ճնշվածների մղած դիմադրությանը բռնության տեսք տալ և նրանց, ովքեր պաշտպանում էին իրենց ունեցվածքները, կանանց, երեխաներին՝ ներկայացնել իբրև օրինական իշխանության դեմ ոտքի ելած ապստամբների»¹⁶⁶։

Չանտեսելով 1890 թ. ի վեր հայերի կացության վատթարացումը, 1894 թ. սկիզբ առած ջարդերը, Լամին ուշադրությունը կենտրոնացնում է ամենակարևոր՝ ցեղասպանության իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող եղելության հանգամանքի վրա։ Սուլթանը, որն օգտվելով եվրոպական տերությունների տարածայնություններից, պատրաստվում էր լայնահուն ընթացք տալ հայերի բնաջնջման գործընթացին, նահանգներն է ուղարկում իր բանագնացներին, որոնք տանում էին կոտորածների իրականացմանն առնչվող հրամանները։ Միայն դրանք ստանալուց հետո են, ըստ նրա՝ տեղերում ձեռնամուխ եղել հայերի զանգվածային ոչնչացմանը, որի հետևանքով, համաձայն հեղինակի տվյալների՝ 1895 թ. «սպանվում է, այրվում կամ կենդանի հուղարկավորվում 150000 տղամարդ, կին և երեխա, իսկ 80000-ը զոհվում է թշվառությունից»։ Ֆրանսիացի պատմաբանը նրանց համարում է եվրոպական տերությունների «անգործունեության» զոհեր։ «Բարենորոգումների գաղափարը սուզվում էր համակ արյան մեջ, գոյատևում

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 85-86:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 86:

էր միայն հեղափոխության գաղափարը, որը հանգեցնում էր վրեժխնդրության»,- նշում է նա¹⁶⁷:

Այս առումով հատկանշական է այն բացատրությունը, որը Լամին տալիս է սուլթանի դիրքորոշմանը՝ կապված հայ հեղափոխականների կողմից Օսմանյան բանկի գրավման հետ: Կասկածից վեր համարելով Աբդուլ Յամիդի իրազեկությունը նախապատրաստվող գործողությանը, նա սուլթանի թողտվությունը մեկնաբանում է իբրև ցեղասպանության գործընթացի ծավալման համար տարերայնորեն ի հայտ եկած՝ պատեհ առիթը բաց չթողնելու խորամանկ մտադրություն: Խոսքը վերաբերում է մի առիթի, որը սուլթանը, հիրավի, անհապաղ օգտագործել է հերթական անգամ կայսրության մայրաքաղաքի փողոցներն արյունաներկ անելու համար. ըստ նրա տվյալների՝ այս անգամ զոհվել է 8000 մարդ: Ֆրանսիայի չափավոր դիրքորոշումն այս հարցում Լամին բնորոշում է իբրև մի վարքագիծ, որը վարկաբեկել է պետության բարոյական հեղինակությունը:

Ակնհայտ է, որ Լամին, իրադարձությունները մեկնաբանում է միանգամայն անկողմնակալ դիրքերից, սակայն, ֆրանսիական կառավարության քաղաքականության քննադատության հարցում դրսևորում զուսպ վերաբերմունք: Թեև նրան, անտարակույս, հաջողվել է կռահել Աբդուլ Յամիդի հայահալած քաղաքականության մի շարք եական նրբություններ, ինչպիսիք են Յայոց ցեղասպանության գործընթացն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությամբ պատճառաբանելը, Բարձր Դռան ռասիստական քաղաքականության էության բացահայտումը, զոհերին՝ ապստամբների ներկայացնելու և ըստ այդմ՝ արևմտահայության բնաջնջման պատասխանատվությունը հայերի վրա բարդելու սուլթանի ստոր մտադրությունը, այդուհանդերձ, որոշ սկզբունքային հարցերում նա թույլատրել է վրիպումներ: Մասնավորապես, իրականության հետ որևէ աղերս չունի հեղինակի այն պնդումը, ըստ որի՝ «ամբողջ Թուրքիայում

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 91-92:

սփռված հայ ազգը ոչ մի տեղ, նույնիսկ իր անունը կրող երկրամասում, մեծամասնություն չէր կազմում»¹⁶⁸:

Արևելյան հարցի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների թվում հարցադրումների ինքնատիպությամբ առանձնանում է Ժորժ Գոլիսի մենագրությունը, ուր Հայկական հարցի պատմությանն առնչվող զանազան խնդիրներ քննարկված են դրա թե պատմական և թե գաղափարական նախադրյալների կտրվածքներով¹⁶⁹: XIX դարում օսմանյան պետության ղեկավարների քաղաքականության հիմնական նպատակը համարելով կայսրության սահմաններից դուրս բնակվող մահմեդական ժողովուրդներին իրենց «հոգևոր իշխանությանը» ենթարկելու միտումը¹⁷⁰, հեղինակը հավաստում է, որ Աբդուլ Համիդի համար պանիսլամիզմը դարձել է զավթած իշխանությունը պահպանելու միակ հենարանը¹⁷¹:

Հայոց ցեղասպանության գործընթացը միանգամայն իրավամբ քննարկելով գլխավորապես այս հայեցակարգի շրջանակներում, Գոլիսը հայկական զանգվածային կոտորածները դիտում է իբրև պանիսլամիզմի իրականացրած «մեծ գործ», որով այն կարող էր հպարտանալ¹⁷²:

Հայկական հարցի ծագման քաղաքական ակունքներն արդեն, հեղինակը որոնում է Թանզիմաթի՝ XIX դարի առաջին կեսին Օսմանյան կայսրությունում սկիզբ առած բարենորոգումների ժամանակաշրջանում ծագած խնդրումներով, իսկ համիդյան կոտորածները բնորոշում իբրև Թանզիմաթի ճգնաժամ, որի ծավալմանը խոչընդոտել էր պանիսլամիզմը¹⁷³: Ընդհանուր առմամբ, Հայկական հարցի ծագումը Գոլիսն իրավամբ պայմանավորում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած՝ պայմանագրերում անրագրված բարենորոգումների իրականացման անհրաժեշտությամբ:

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 84: Այս հարցի մասին տես վերը՝ էջ 58:

¹⁶⁹ G. Gaulis. Les questions d'Orient. Paris, 1905.

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 10:

¹⁷¹ Նույն տեղում, էջ 25:

¹⁷² Նույն տեղում, էջ 43:

¹⁷³ Նույն տեղում, էջ 31:

Հարկ է Գոլխին արժանին հատուցել, քանզի Հայոց ցեղասպանության սանձազերծման մեկնաբանության հարցում նա կռահել է հայկական նահանգներում նախատեսված բարենորոգումների իրականացման խնդրի առաջնակարգ նշանակությունը, որը ենթադրում էր եվրոպական պետությունների միջամտությունը և մեծ տեղ է հատկացրել այդ խնդրին: Ցեղասպանության գլխավոր պատճառների թվում դասելով «եվրոպական միջամտության շարժառիթների վերացման» անհրաժեշտությունը, նա նշում է. «Աբդուլ Համիդի օրոք, ամեն անգամ երբ արտասանվում է բարենորոգում բառը, այն հանգեցնում է կարճատև կոտորածի»¹⁷⁴:

Հայոց ցեղասպանությունը պատճառաբանելով սուլթանի կանխամտածված քաղաքականությամբ՝ Գոլխը 1889 թ. համարում է նշանակալից տարեթիվ՝ սուլթանի հակահայկական քաղաքականության սանձազերծման ասպարեզում: Ըստ նրա՝ Աբդուլ Համիդն արհամարիելով եվրոպայից ակնկալվող դիմադրությունների հնարավորությունը, «վճռել է *իր եղանակով* (ընդգծումը մերն է – Վ. Պ.) վերջ տալ Հայկական հարցին»¹⁷⁵: Այսպիսով, հեղինակի հիմնական արժանիքներից է ցեղասպանության իրական պատասխանատուների դիմազերծումը. «ահռելի հանցագործության»՝ երեք հարյուր հազար հայի բնաջնջման կազմակերպիչներ նա համարում է սուլթանին և Պալեին: Այս «սարսափելի ողբերգության» գլխավոր գործող անձը, ըստ նրա՝ կարող էր լինել միայն «մի հրեշ», որին նկարագրելն իսկ անհնար է¹⁷⁶:

Ի շարս Հայոց ցեղասպանության հիմնահարցերի, Գոլխը քննարկում է Աբդուլ Համիդի՝ հայերին իբրև նախահարձակ եղող կոդմի ներկայացնելու վարկածը, բազում փաստերով ապացուցում, որ եվրոպական տերությունների առջև հայերին հիմնավորապես վարկաբեկելը՝ սուլթանի հետապնդած հիմնական նպատակներից էր: Նա ծանրանում է, մասնավորապես, քարոզչության ասպարեզում սուլթանի գործադրած եռանդա-

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 40:

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 33:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 28:

գին ջանքերի վրա, որոնք հետապնդում էին հայերին՝ իբրև սուլթանի դեմ մահափորձի կազմակերպիչների ներկայացնելու նպատակ, նշում, որ տարբեր բնակավայրերում սուլթանի բանագնացների այցելություններին հաջողում էին հայկական կոտորածներ¹⁷⁷: Դրանով իսկ նա մեկ անգամ ևս շեշտում է Զայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով տեղի ունեցող իրադարձության բնույթը:

Հպանցիկ հայացք նետելով հայկական կոտորածների «ամոթալի ժամանակաշրջանում» եվրոպական պետությունների քաղաքականության վրա, նա հեզմանքով նշում է, որ տերությունների միջամտությունը հանգել է միայն գրույցների, դատարկ սպառնալիքների և դիվանագիտական քայլերի¹⁷⁸:

Ինչպես տեսնում ենք, Զայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությունը շաղկապելով օսմանյան գահակալների պանիսլամական քաղաքականության հետ, Գոլիսն այն իրավամբ համարել է Զայոց ցեղասպանության հիմնական պատճառներից, ինչը նրա մոտեցման անժխտելի առավելությունն է:

Համիդյան կոտորածների գործընթացին հակիրճ, սակայն դիպուկ գնահատականներ է տվել նաև Ժորժ Բեքերը՝ XIX դարի 80-90-ական թվականների բալկանյան պատերազմների և Արևելյան հարցի պատմությունը լուսաբանող ուսումնասիրության մեջ¹⁷⁹: Չժխտելով «վերջին ժամանակներում» առկա անելանելի կացության բարելավման՝ հայերի մտադրությունները և բարենորոգումների կենսագործման նպատակով՝ նրանց հիմնադրած կուսակցությունների գոյության փաստը, Բեքերն, այդուհանդերձ, ամբողջությամբ բացահայտում է Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականության էությունը. «Սուլթան Աբդուլ Համիդը, — գրում է նա, — Հայաստանում տեղի ունեցող ան-

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 41:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 42:

— ¹⁷⁹ G. Becker, La guerre contemporaine dans les Balkans et la question d'Orient (1885-1897), Paris, 1899.

կարգությունները ճնշելու պատրվակի ներքո, բազում անգամներ այդ տարածաշրջան է ուղարկել զինված հրոսակախմբեր, որոնք կոտորել են հազարավոր քրիստոնյաների: Սուլթանի հանցակցությունը մարդասպանների հետ որևէ մեկի կասկածն այլևս չի հարուցում»: Հիմնվելով «Դեղին գրքում» ամփոփված փաստաթղթերի վրա, հեղինակը հավաստում է նաև Հայոց ցեղասպանության՝ իբրև նախապես ծրագրված եղելության փաստը:

Բեքերը համոզված է, որ եթե կայսրության տարածքում տերությունների՝ սուլթանին պարտադրած բարենորոգումների ծրագիրն անշեղորեն չիրականացվի, ապա հայկական կոտորածները, որոնք նա բնութագրում է իբրև «սարսափելի», յուրաքանչյուր պահի կարող են վերսկսվել:

Աբդուլ Համիդին նա տալիս է սպառնիչ գնահատականներ, անվանում բարենորոգումների բացահայտ թշնամի, որը դրանք կընդունի միայն այն պարագայում, եթե տերությունները դանակը նրա կոկորդին սեղմեն: Ըստ Բեքերի՝ Աբդուլ Համիդը հմտորեն համաձայնությունների է հանգում՝ իր իսկ խոստացած բարենորոգումների ծրագրի իրականացումը տապալելու նպատակով: Սակայն, սուլթանի քաղաքականությանն առնչվող նրա բացատրություններն ամենևին սպառնիչ չեն, քանզի նա այն մեկնաբանում է ելնելով գլխավորապես կրոնական գործոնի՝ վերջինիս կայացրած որոշումների վրա թողած վճռորոշ նշանակությունից: Բեքերի համոզմամբ սուլթանը «զգում է, որ այս բարենորոգումները միտում ունեն հավասարության եզրեր սահմանելու քրիստոնյաների և մահմեդականների միջև, հողմացրիվ անելու իր հպատակների կույր հավատքը և գիտակցում, որ փոքր անց դրանք իր ձեռքերից կկորզեն այն հզոր լծակը՝ կրոնական մոլեռանդությունը, որի միջոցով կարող է ոտքի հանել ամբողջ թուրքական կայսրությունը»: Չժխտելով հանդերձ Բեքերի իրավացիությունն այս հարցում, նշենք, որ բարենորոգումների ծրագրերի կենսագործման տապալման իրողությունը խարսխվում էր շատ ավելի լայն հենքի վրա, քան նա այդ ներկայացրել է: Բուլղարիայի՝ կայսրությունից անջատման իրողությունից ահաբեկված սուլթանն, անկասկած, շատ ավելի

սոսկում էր հայկական վիլայեթներին ինքնավարություն տրամադրելու հեռանկարից, հանգամանք, որն անբողջությամբ շրջանցել է Բեքերը:

Արևելյան հարցի և մասամբ Հայկական հարցի պատմությանն առնչվող որոշ խնդիրներ արժարծվել են նաև Ռ. Պինոնի գրքում, ով վերջինիս ծագումը պայմանավորում է Բեռլինի վեհաժողովում սկիզբ առած քննարկումներով¹⁸⁰: Պինոնի շարադրանքում չկան հայկական կոտորածների նկարագրություններ և դրանց տրված գնահատականներ, քանզի նրա ուշադրության կենտրոնում լոկ դիվանագիտական հարաբերությունների պատմությունն է:

Հանգամանորեն ամդրադառնալով մեծ տերությունների քաղաքականությանը, Պինոնը ջանում է բացահայտել Հայոց ցեղասպանության հարցում նրանց անտարբեր վարքագծի պատճառները և, մասնավորապես, Ֆրանսիայի որդեգրած քաղաքականության էությունը, որը հանգում էր Օսմանյան կայսրության տարածքային անբողջականության պահպանմանը: Այս բանաձևը, ինչպես նա նշում է, դարձել էր Ֆրանսիայի ավանդական քաղաքականության հիմնահարցերից մեկը, որը նա հարմարեցրել էր «իր կարիքներին և արդի հետաքրքրություններին»¹⁸¹: Տերությունների պասսիվ դիրքորոշման առիթով Պինոնն առաջադրում է իրատեսական մեկնաբանություն, այդ իրողությունը հիմնավորում մասամբ նրանց ծվատող տարածայնություններով, մասամբ հայ հեղափոխականների՝ Օսմանյան կայսրության տարածքում ծավալած գործունեությամբ, քանզի նման պայմաններում, եվրոպական պետությունների միջամտությունը կարող էր քաջալերել թուրքիայում այնպիսի գործողությունների իրականացմանը, որոնց դեմ նրանք խիստ օրենքներ էին կիրառում իրենց երկրներում: Իսկ այս ամենն Աբդուլ Համիդին հնարավորություն էր ընձեռում «բավարարվելու լայնահուն խոստումներով, հետաձգելու յուրաքանչյուր բնույթի բարենորոգումներ և շարունակելու կոտորածները»¹⁸²:

¹⁸⁰ R. Pinon, L'Europe et l'empire Ottoman. Les aspects actuels de la question d'Orient. Paris. 1908. p. 42.

¹⁸¹ Նույն տեղում, էջ 53:

¹⁸² Նույն տեղում, էջ 50:

Հայոց ցեղասպանության պատմությունը հպանցիկ քննարկել է նաև ֆրանսիացի մեծ պատմաբան՝ Շառլ Սենյորսը (1854-1942), որը XIX դարի Եվրոպայի քաղաքական պատմությանը նվիրված՝ ընդհանուր բնույթի ուսումնասիրության մեջ տվել է Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած անցքերի համառոտ, սակայն անկողմնակալ գնահատականները: Նշելով, որ արևմտահայության հանդեպ Աբդուլ Համիդի վարած քաղաքականությունը 1890 թ. ի վեր կրել է փոփոխություններ, նա հիշատակում է հայկական հեղափոխական փոքր կուսակցության ձևավորման մասին (առանց ճշգրտելու, թե որ կուսակցությանն է առնչվում խոսքը), որը հայերի համար պահանջում էր «ինքնավարություն և անձնական անվտանգության երաշխիքներ, այլ ոչ թե անջատում կայսրությունից»: Այդ պահանջներն, ըստ նրա՝ պատճառ են դարձել նախ՝ «իրական կամ կարծեցյալ հեղափոխականներին» դատապարտելու, այնուհետև՝ 1894-1895 թթ. «զանգվածային կոտորածների» համար, որոնք ղեկավարում էին «մահմեդական իշխանությունները և իրականացնում զինվորները կամ վարձու մարդասպանները, սակայն պաշտոնապես Եվրոպային ներկայացվում իբրև հայկական ապստամբություններ»¹⁸³:

Ինչպես տեսնում ենք, սահմանափակվելով նույնիսկ ամենահամառոտ դիտարկումներով և ձեռնպահ մնալով մանրամասների մեջ խորամուխ լինելուց, Սենյորսն իրադարձություններն արժեվորել է ըստ արժանվույն:

Ընդհանուր բնույթի աշխատությունների թվում ցանկանում ենք առանձնացնել Է. Լավիսի և Ա. Ռամբոյի խմբագրությամբ լույս ընծայված «Համընդհանուր պատմություն՝ IV դարից մինչև մեր օրերը» ծավալուն աշխատությունը, որն ամփոփում է Մ. Լ. Կահրնի «Իսլամական աշխարհը» ուշագրավ հոդվածը¹⁸⁴: Հեղինակը մանրամասնորեն քննարկում է կայսրության տարածքում բնակվող զանազան ժողովուրդների նկատմամբ՝

~ ¹⁸³ Ch. Seignobos. Histoire politique de l'Europe contemporaine. Evolution des parties et des formes politiques 1814-1896, Paris, 1897, p. 605.

— ¹⁸⁴ M. L. Cahun. Le monde islamique.— Histoire générale du IV^e siècle à nos jours. T. XII, Le monde contemporaine, 1870-1900. Ouvrage publié sous la direction de M[essieurs] Ernest Lavisse. Alfred Rambaud, Paris. 1901.

օսմանյան վարչակարգի կիրառած բռնի օսմանացման քաղաքականությունը և դրա ծախսողուն իրավամբ մեկնաբանում իբրև Հայոց ցեղասպանության հիմնական պատճառներից մեկը:

Անդրադառնալով XIX դարում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների քանակական հարաբերակցության կարևոր խնդրին, Կահրնը չի ճշգրտում քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայերի թվաքանակը, այդուհանդերձ, իրավամբ շեշտում է 1840-1870 թթ. կայսրության բնակչության (ներառյալ թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյաները) թվում օսմանցիների փոքրամասնության հանգամանքը¹⁸⁵: Թեև հեղինակը խոսքը կենտրոնացնում է տարբեր երկրներից Օսմանյան կայսրությունում բնակություն հաստատած մահմեդական ժողովուրդների օսմանացման գործընթացի վրա, որը, ինչպես նա իրավամբ ընդգծում է՝ 1829 թ. Հունաստանի ազատագրումից ի վեր, ավելի մեծ չափեր էր ընդունել (քանզի օսմանցիները ծուլել են իրենց իսկ կորցրած կամ ռուսների բռնագրաված տարբեր նահանգներից տեղափոխվող վերաբնակներին), այնուամենայնիվ, չի հստակեցնում Բարձր Դռան՝ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող այլազգիների հանդեպ կիրառած նոր՝ օսմանացման քաղաքականության հիմնական պատճառը, որն ահաբեկված ազգային-ազատագրական շարժումների զարթոնքից և, մասնավորապես, Հունաստանի կորստից, մակերեսային բարենորոգումների միջոցով հարկադրաբար դիմել էր խուսանավելու քաղաքականության, որի հեռահար նպատակը ժողովուրդների ծուլման և միասնական՝ օսմանական ժողովրդի ստեղծման միջոցով՝ կայսրության տարածքային մասնատման սկիզբ առած գործընթացի կանխարգելումն էր¹⁸⁶:

Կահրնն արձանագրում է, 1870 թ. ի վեր, դեպի Օսմանյան կայսրության տարածք մահմեդականների հոսքի աճ, որը, ինչպես նաև զանազան մահմեդական և քրիստոնյա ժողովուրդներով բնակեցված նահանգների անջատումը կայսրությունից,

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 479:

¹⁸⁶ Այդ մասին տես Ք. Ա. Сафрастьян, Доктрина османизма в политической жизни османской империи, Ереван, 1985, с. 18-47.

նպաստում է կայսրության տարածքում բնակչության կազմում օսմանցիների և այլոց, հարաբերակցության խախտմանը: Այս պայմաններում, ժողովուրդների բռնի օսմանացման ասպարեզում նա ընդգծում է հատկապես Աբդուլ Չամիդի չարագուշակ դերը, բայց և միաժամանակ նշում, որ այդ հարցում նրան մեծապես խոչընդոտում էր տարբեր ժողովուրդների (ալբանացիներ, արաբներ) շրջանում անջատողական ձգտումների վերելքը: 1894-1895 թթ. հայկական զանգվածային կոտորածների հարցը նա մեկնաբանում է այս հենքի վրա, որոնք իրավամբ համարում է ոչ թե «մասնավոր փաստ», այլ «քաղաքական համակարգի մշակած ծրագրի բաղկացուցիչ մաս, որը հանգում էր կայսրության այն ժողովուրդների բնաջնջմանը, որոնց ձուլելու հետ կապված հույսերն անհավանական էին և նրանց փոխարինմանն օսմանացման ենթակա այլ ժողովուրդներով»¹⁸⁷:

Կահընը բացահայտել է ոչ միայն կայսրության տարածքում տարբեր ժողովուրդների ազատագրական շարժման վերելքի դեմ պայքարի անհրաժեշտությունից դրդված՝ օսմանյան վարչակարգի կիրառած՝ մահմեդական և քրիստոնյա տարբեր ժողովուրդների միջև (ալբանացիների և հույների, քրդերի և հայերի) երկպառակություններ սերմանելու ստոր քաղաքականության բնույթը, այլ և, ի տարբերություն այլոց, բռնի օսմանացման քաղաքականության կիրառման որոշ նենգ եղանակներ, որը նրա մոտեցման առավելություններից է: Ղիցուք, համիդիե զորամիավորումների ստեղծումը նա մասամբ պայմանավորում է սուլթանի՝ քրդերի և արաբների օսմանացման գործընթացը դյուրին դարձնելու մտադրությամբ: «Բացի սպասվող զինվորական ծառայություններից,– նշում է նա,– այս զորքի ստեղծումը հետապնդում էր, մասնավորապես, քուրդ և արաբ ղեկավարներին շնորհվող աստիճանների (զինվորական – Կ. Պ.) և հնարավոր առաջընթացի միջոցով՝ նրանց ենթակայության ներքո պահելու, ինչպես նաև կանոնավոր բանակի սպաների հետ շփումների ճանապարհով՝ նրանց օսմանացնելու նպատակ»¹⁸⁸:

¹⁸⁷ M. L. Cahun, նշվ. աշխ., էջ 480:

¹⁸⁸ Նույն տեղում, էջ 482:

Կահլընի մոտեցումը, ինչպես տեսնում ենք, հետաքրքիր է և ինքնատիպ, քանզի նա՝ տողերիս հեղինակին հայտնի միակ ֆրանսիացի պատմաբանն է, որն ուշադրությունը կենտրոնացրել է բռնի օսմանացման քաղաքականության վրա և ջանացել, հնարավորության սահմաններում, 1890-ական թվականների հայկական գանգվածային կոտորածների սանձազերծման գործընթացը շաղկապել դրա ծախողման հետ: Այդուհանդերձ, նշենք, որ բռնի օսմանացմանն առնչվող նրա մեկնաբանությունները սպառիչ չեն: Նրան չի հաջողվել ամբողջությամբ բացահայտել կայսրության տարածքում բնակվող զանազան ժողովուրդների ծուլման ասպարեզում Բարձր Դռան որդեգրած քաղաքականության նախադրյալներն (ազգային-ազատագրական շարժումների վերելք, կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտություն և այլն) ու ելևէջները, օսմանիզմի գաղափարախոսության զարգացման փուլերին բնորոշ առանձնահատկությունները (հեղինակը նույնիսկ չի հիշատակել այդ գաղափարախոսությունը կերտող գործիչների անունները, շրջանցել է նաև օսմանացման գաղափարախոսության դրույթների ամրագրումն օրենսդրական փաստաթղթերում)¹⁸⁹:

Պատմաբաններից բացի Հայկական հարցի ծագումը և ցեղասպանության նախադրյալները հանգամանորեն վերլուծել է իրավաբանության դոկտոր Մաքս Շուբլիեն¹⁹⁰, որն օգտագործել է Անգլիայի և Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարությունների արխիվների վավերագրերն ամփոփող «Կապուլտ» և «Դեղին» գրքերը: Հայկական հարցի ծագումը նա իրավամբ պայմանավորում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած դիվանագիտական մեքենայություններով: Քննարկելով այն իրավիճակը, որում գտնվում էին արևմտահայերը Բեռլինի վեհաժողովին հաջորդած ժամանակաշրջանում, Շուբլիեն հավաստում է, որ նրանց կացությունն աստիճանաբար դարձել է ավելի անելանելի, իսկ թուրքերն, ի

¹⁸⁹ Այդ մասին մանրամասն տես Ք. Ա. Сафрастьян նշվ. աշխ., էջ 48-63:

¹⁹⁰ M. Choublier. La question d'Orient depuis le traité de Berlin. Etude d'histoire diplomatique. Paris. 1897.

վերջո, ընտրել են նրանց զանգվածաբար ոչնչացնելու միջոցով՝ այդ հարցին լուծում տալու տարբերակը:

Այս հենքի վրա նա քննարկում է օսմանյան կառավարության քաղաքականության մանրամասները, որը «Հայաստանը հեղեղում էր հազարավոր՝ չերքեզ և այլ վերաբնակներով՝ բնակչության ընդհանուր թվում հայերի քանակն, անկասկած, նվազեցնելու միտումով»¹⁹¹: Իսկ վերաբնակները որդեգրում են իրենց գոյությունը պահպանելու երկու հիմնական՝ հայ բնակչությանը կողոպտելու և կոտորելու ուղիները: «Հայերի կացությունը,– նշում է նա,– դառնում էր նույնիսկ ավելի վատթար, քան ռուս-թուրքական պատերազմից առաջ»¹⁹²:

Շուբլիեն տրամաբանական կապ է արծանագրում սուլթանի՝ բարենորոգումները կենսագործելու խնդրում դրսևորած չկամության և հայերի շրջանում անկախության գաղափարի հասունացման միջև: Չնայած տերությունների միջամտություններին, «սուլթանը,– ինչպես նա նշում է,– չէր կամենում կատարել այն խոստումները, որոնք իր հպատակներին տվել էր միայն ուժի գործադրման ներքո և որոնց պահանջները, նրա կարծիքով, հավասարազոր էին խռովության»¹⁹³: Այսպես, բարենորոգումների իրականացման ասպարեզում օսմանյան կառավարության ցուցաբերած համառությունը, քրիստոնյա կառավարիչ ունենալուն, քաղաքացիական օրենսգրքի մշակմանը, հարկերի կարգավորմանն առնչվող՝ հայերի պահանջների անտեսումը, դրդում է նրանց արտասահմանում հիմնադրել կուսակցություններ, որոնց գլխավոր նպատակը հանգում էր «բոլոր եղանակներով, այդ թվում ապստամբության միջոցով, հարկադրել օսմանյան կառավարությանը բարենորոգումների իրականացումը» և որոնք «խորհուրդ էին տալիս իրենց եղբայրներին գործել հանուն հայրենիքի ազատագրման և ուժի միջոցով դիմակայել կեղեքիչներին»¹⁹⁴: Հավանաբար, իրադարձությունների հետագա զարգացման ընթացքն ու ավարտը

¹⁹¹ Նույն տեղում, էջ 390:

¹⁹² Նույն տեղում, էջ 386:

¹⁹³ Նույն տեղում, էջ 391:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 397:

հաշվի առնելով, կուսակցությունների խորհուրդներին հետևելու իրողությունը Շուբլիեն անիրավացիորեն հայերի համար համարում է «դժբախտություն»:

Ինչ վերաբերում է համիդյան վարչակարգի քաղաքականությանը, ապա Շուբլիեն չի շրջանցում Աբդուլ Յամիդի ստոր գործելամիջոցները, համիդիե հեծելազորային զնդերի կազմավորումը մեկնաբանում է թե՛ հայերի շրջանում ըմբոստություններ հրահրելու և թե՛ դրանք ճնշելու միջոցներն ապահովելու՝ նրա մտադրությամբ¹⁹⁵: Յայերին զոհասեղանին դնելուց առաջ՝ նրանց իբրև ապստամբներ ներկայացնելու հանգամանքը, ըստ հեղինակի, Բարձր Դռան հետապնդած հիմնական նպատակներից էր:

Բուն ցեղասպանությունը Շուբլիեն դիտում է իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող եղելություն. «Դուռը վճռել է նրանց (հայերին – Վ. Պ.) բնաջնջել երկաթի, կրակի և սովի միջոցով»,- նշում է նա¹⁹⁶: Յեղինակը բացահայտում է օսմանյան կենտրոնական իշխանությունների հանցակցությունը տեղի ունեցած զանգվածային բռնությունների, որոնց ծավալման համար նշանաբան են ծառայել տերությունների պահանջած՝ բարենորոգումների կենսագործմանն առնչվող լուրերը: 1895 թ. աշնանը Կոստանդնուպոլսում կազմակերպված կոտորածների առիթով նա ընդգծում է պետական մարմինների անգործունեությունը, որոնք դրանք կանխելու համար ոչինչ չեն ձեռնարկել:

Մանրամասն վերլուծելով եվրոպական պետությունների քաղաքականությունը Յայկական հարցում, Շուբլիեն շեշտում է, հատկապես, նրանց մեղսակցությունը 1896 թ. կոտորածներին: Ըստ նրա՝ հայերին օգնություն ցուցաբերելու գործում մեծ տերություններին առավելապես խոչընդոտել է «փոխադարձ

¹⁹⁵ Յամիդիե զորամիավորումների գործած առաջին զանգվածային կոտորածն ըստ Ա. Պեյլերյանի՝ տեղի է ունեցել 1894 թ. օգոստոսին՝ Սասունում: Տես Ա. Պեյլերեան, Յամիդիե զորախումբերու կազմակերպութեան ծագումը (1890-1894).- «Յայկազեան հայագիտական հանդես», հ. ԺԴ., Պէյրուք, 1994, էջ 92:

¹⁹⁶ M. Choublier, նշվ. աշխ., էջ 400:

անվստահությունը, որը կազմալուծել է նրանց գործողությունները»¹⁹⁷: Օսմանյան կայսրության մասնատման խնդրի առիթով Շուբլիեն հավաստում է, որ դրա տարածքային ամբողջականության պահպանումը տերությունները վերածել էին «դոզմայի» և «հրաժարվել ռազմարշավից, որը կարող էր հանգեցնել կայսրության ամբողջ տարածքում բնակվող քրիստոնյաների հանընդհանուր կոտորածի»¹⁹⁸: Այս հարցում, սակայն, ցուցաբերելով ընդգրկուն մոտեցում, նա մեծ տերությունների քաղաքականությունը պայմանավորում է գլխավորապես նրանց ռազմավարական շահերով, կայսրության տարածքի մասնատման արդյունքում՝ նրանցից որևէ մեկի՝ Մերձավոր Արևելքում դիրքերի անրապնդման անցանկալի հեռանկարից խուսափելու անհրաժեշտությամբ: «Երբ ամբողջ Փոքր Ասիան արյունաներկ եղավ, – գրում է նա, – նրանց համար հիրավի անհնար դարձավ գործել Հայաստանում՝ առանց հարցականի տակ դնելու Օսմանյան կայսրության գոյությունը և վտանգելու հանընդհանուր առձակատման բռնկումից խուսափելու հնարավորությունը»¹⁹⁹:

Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող որոշ հարցեր, սակայն, շատ ավելի սահմանափակ ընդգրկումով, քան Շուբլիեն, քննարկել է նաև իրավաբան Ա. Կահյուեն՝ Արևելյան հարցի պատմությանը նվիրված ուսումնասիրության մեջ²⁰⁰: Հեղինակը, ի տարբերություն, հունական և բուլղարական հարցերի, չի ընդունում Հայկական հարցի գոյությունը և ըստ այդմ՝ Հայոց ցեղասպանությունը չի դիտում իբրև մի իրադարձություն, որը պատճառակցական կապի մեջ է եղել Բարձր Դռանը մեծ անհանգստություններ պատճառած այս հարցի լուծման անհրաժեշտության հետ: Չըմբռնելով Հայկական հարցի լուծումը (հեղինակը չի հիշատակում նույնիսկ Սան-Ստեֆանոյի պայմանագրում արձանագրված՝ արևմտահայությանը վերաբերող 16-րդ հոդվածի մասին)՝ Կահյուեն դրա

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 406:

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 419-420:

¹⁹⁹ Նույն տեղում, էջ 419:

²⁰⁰ A. Cahuet. La question d'Orient dans l'histoire contemporaine (1821-1905). Paris. 1905.

ժխտումը հիմնավորում է արտառոց մի կռվանով, այն է՝ հայ ժողովուրդն, իբր, Բեռլինի պայմանագրի կնքման ժամանակաշրջանում դեռևս չի ունեցել ազգային ինքնագիտակցություն, որը, սակայն, բնորոշ էր միայն Եվրոպայում ապաստանած մի քանի վտարանդիների²⁰¹:

«Անկախության գաղափարների» արմատացումն ու տարածումը, այդուհանդերձ, նա պայմանավորում է թե՛ հայ ժողովրդի հարստահարման սաստկացմամբ (ամասելի ծանր հարկեր, գողերին և հարստահարիչներին պատժելու հարցում՝ պետական մարմինների անընդունակություն, «մահմեդական հորդաների»՝ հատկապես, Ռուսաստանը լքած և Արևմտյան Հայաստանում հաստատված չերքեզների կողմից հայ բնակչության իրավունքների ոտնահարում և այլն) և թե՛ Բեռլինի վեհաժողովից հետո Եվրոպական տերությունների՝ արևմտահայության «զազրելի լուծը» մեղմացնելու հարցում դրսևորած անզորությամբ²⁰²:

Նշելով արտասահմանում հայկական հեղափոխական շարժման վերելքի, մասնավորապես, հնչակյան կուսակցության հիմնադրման մասին, Կահյուեն, այնուամենայնիվ, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, հանիրավի, բնութագրում է իբրև «անջատողական»²⁰³: Այդուհանդերձ, նրա մոտեցման նշանակալից առավելությունը հայերի նկատմամբ սուլթանի գրաված դիրքորոշման բացահայտումն է: Կահյուեն խարազանում է 1890-ական թվականներին ստեղծված իրադրության պայմաններում օսմանյան կառավարության՝ հայերի հանդեպ կիրառած քաղաքականությունը, որն «անհրաժեշտ բարենորոգումներ իրականացնելու փոխարեն, դիմել է ծայրահեղ կատաղի միջոցների» և աստիճանաբար թափ առնող հայկական շարժումից ասիաբեկված՝ «յուրաքանչյուր հայի դիտել իբրև Օսմանյան կայսրության թշնամու»²⁰⁴: Այդ հենքի

²⁰¹ Նույն տեղում, էջ 462:

²⁰² Նույն տեղում, էջ 463:

²⁰³ Նույն տեղում:

²⁰⁴ Նույն տեղում, էջ 464:

վրա է նա մեկնաբանում տխրահռչակ համիդիե գործամիավորումների կազմավորումը:

Վկայակոչելով «Կապույտ» և «Դեղին» գրքերում հրապարակված դիվանագիտական փաստաթղթերը, Կահյուեն 1890-ական թթ. հայկական զանգվածային կոտորածները դիտում է, փաստորեն, իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձություն: Բազմիցս անդրադառնալով 1894-1896 թթ. զանազան վայրերում (Սասուն, Տրապիզոն, Էրզրում, Սվազ, Դիարբեքիր, Մալաթիա և այլն) տեղի ունեցած զանգվածային կոտորածներին, նա պարբերաբար ընդգծում է դրանց կանխամտածված բնույթը²⁰⁵, շեշտում, նույնիսկ կայսերական ապարանքի հարևանությամբ տեղի ունեցող հայկական ջարդերը կասեցնելու հարցում օսմանյան իշխանությունների և բանակի չկամությունը, ջարդարարներին զինելու ուղղությամբ ոստիկանության սպաների և զինվորների գործադրած ջանքերը²⁰⁶: Դիցուք, 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած բողոքի ցույցին հաջորդած կոտորածների առիթով, նա նշում է. «Այս վայրագություններն, ի դեպ, քաջալերել են իշխանությունները, որոնք չեն ցանկացել դրանք կանխել»²⁰⁷:

Կահյուեի շարադրանքում նշանակալի տեղ է հատկացված մեծ տերությունների քաղաքականության վերլուծությանը: Տարբեր կտրվածքներով նա անդրադարձել է Օսմանյան կայսրության ներքին գործերին մեծ տերությունների միջամտության խնդրին և հանգել միանգամայն իրատեսական հետևությունների, այն է՝ վերոպական պետությունները բացառում են զինված միջամտության գաղափարը: Մեծ տերությունների որդեգրած նման դիրքորոշման պատճառների լուսաբանման հարցում, սակայն, նրա մեկնաբանությունները թերի են, քանզի սահմանափակվել է ուշադրությունը գլխավորապես Անգլիայի և Ռուսաստանի շահերի անհամատեղելիության վրա բևեռելով:

²⁰⁵ Նույն տեղում, էջ 466-469:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 472:

²⁰⁷ Նույն տեղում, էջ 467:

Այս հարցում հեղինակին հաջողվել է բացահայտել Արևմտյան Հայաստանի նկատմամբ թե՛ անգլիական և թե՛ ռուսական կառավարող շրջանների ակնկալությունները: Անգլիայի քաղաքականությունը, որը մեծ շահագրգռվածություն էր հանդես բերում բարենորոգումների միջոցով արևմտահայության իրավիճակը բարելավելու հարցում, որպեսզի Հայաստանը մնար օսմանյան վարչակարգի տիրապետության տակ՝ նա իրավամբ պայմանավորում է բրիտանական կառավարության՝ Մերձավոր Արևելքում Ռուսաստանի առաջխաղացմանը դիմակայելու մտադրությամբ²⁰⁸: Ինչ վերաբերում է ինքնակալության քաղաքականությանը, ապա Կահյուլեն հիմնավորում է հարևան՝ «ցանկալի» տարածաշրջանն իր ազդեցության ոլորտում պահելու Ռուսաստանի շահագրգռվածությամբ՝ այնտեղ իր տիրապետությունը հաստատելու հեռահար նպատակով:

Հեղինակը, սակայն, շրջանցել է Ֆրանսիայի քաղաքականության վերլուծությունը, որը համահունչ էր նրա դաշնակից Ռուսաստանի դիրքորոշմանը և հանգում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը: Ըստ այդմ՝ կայսրության ներքին գործերին զինված միջամտությունն անհարիր էր Ֆրանսիայի ռազմավարական շահերին: Ի դեպ, հեղինակի պնդումը, ըստ որի՝ եվրոպական հասարակական կարծիքը «համառորեն» արտահայտվում էր հօգուտ զինված միջամտության²⁰⁹, չի համապատասխանում իրականությանը, առավել ևս, որ այդ հավաստումը նա չի հիմնավորում որևէ փաստով: Այս առիթով իմաստ ունի նշել, որ նույնիսկ հայ ժողովրդի՝ Ֆրանսիացի ջերմեռանդ պաշտպանները (եզակի բացառություններով), որոնց գործունեությանը կանդրադառնանք ստորև, երբևէ չեն սատարել զինված միջամտության և դրանից անխուսափելիորեն բխող՝ Օսմանյան կայսրության մասնատման գաղափարը:

Նկատենք նաև, որ տերությունների կրավորական քաղաքականության հետնախորքի վրա, Կահյուլեն հմտորեն

²⁰⁸ Նույն տեղում, էջ 465:

²⁰⁹ Նույն տեղում, էջ 464-465:

բացահայտել է հայկական նահանգներում բարենորոգումների իրականացմանն առնչվող՝ Բարձր Դռանը մեծ տերությունների հղած բողոքներն անտեսելու հարցում օսմանյան գահակալի դիրքորոշման հիմնական պատճառը. «Սուլթանը գիտեր, – նշել է նա, – որ իր կառավարության դեմ հարկադրական միջոցներ կիրառելու հարցում տերությունների միջև համաձայնություն գոյություն չունի»²¹⁰: Բացի դրանից, նրա ուշադրությունից չի վրիպել նաև Աբդուլ Յամիդին խիստ բնորոշ խուսանավելու հակումը, որն անհրաժեշտության դեպքում, առկա իրավիճակը լիցքաթափելու մտադրությամբ, տերությունների դեսպաններին անվարանորեն սին խոստումներ էր շռայլում՝ կապված քրիստոնյաների կացության բարելավման, բարենորոգումների իրականացման հետ:

Ինչպես տեսնում ենք, թեպետ Կահյունեն ամբողջությամբ չի ընկալել Չայկական հարցի իմաստը, նույնիսկ ժխտել է դրա գոյությունը, իսկ երբեմն սահմանափակվել ոչ սպառնիչ մեկնաբանություններով, նա իր շարադրանքում, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ, հավաստի տեղեկություններ է հաղորդում Օսմանյան կայսրությունում սկիզբ առած Չայոց ցեղասպանության գործընթացի և դրան հարակից որոշ հարցերի մասին:

Չայոց ցեղասպանությունը, հիրավի, բարդ գործընթաց է, որն ունեցել է զանազան դրդապատճառներ, որոնցից մեկն իրավամբ նկատել է Պոլ դը Ռեզլան: Յամիդյան կոտորածների մեկնաբանման հարցում ձեռնպահ մնալով համակողմանի մոտեցում ցուցաբերելուց, նա, սակայն, ի տարբերություն այլոց, ուշադրությունը կենտրոնացնում է մեկ այլ էական հանգամանքի վրա՝ այն պատճառաբանում Օսմանյան կայսրությունում հայերի ծավալած ֆինանսական, արդյունաբերական և առևտրական գործունեությունը կասեցնելու սուլթանի մտադրությամբ: Այս իսկ պատճառով, ըստ նրա՝ Աբդուլ Յամիդը հրահրել է սարսափազդու կոտորած, որը «երբևէ հայտնի է եղել» և իր երկիրը զրկել հայ ժողովրդին հատկացված աննշան ազա-

²¹⁰ Նույն տեղում, էջ 461:

տությունների վրա խարսխված աջակցությունից²¹¹:

Տեղասպանությանն առնչվող որոշ հարցեր թռուցիկ արտացոլվել են նաև Աբդուլ Չամիդին նվիրված՝ ժորժ Դորիսի գրչին պատկանող կենսագրական ուսումնասիրության մեջ, որտեղ անկողմնակալորեն վերհանված են սուլթանի քաղաքականության զանազան ծալքերը և ուրվագծված է նրա իրական դիմագիծը²¹²: Չեղինակն իրավամբ գտնում է, որ ազգային փոքրամասնությունների հանդեպ վարած քաղաքականության ասպարեզում սուլթանն ի սկզբանե որդեգրել էր «*divide et impere*» սկզբունքը և «վերացնում էր այն արտոնությունները, որոնք կայսերական հրովարտակներով հատկացվել էին ոչ մահմեդական համայնքներին»²¹³: Նա հիշատակում է 1895 թ. Աբդուլ Չամիդի՝ «Բոսֆորի ալիքները բոլոր հայերի արյամբ բոսորագույն դարձնելուն» առնչվող հայտարարությունը և դրանով ընդգծում ցեղասպանության կանխանտածված բնույթը²¹⁴, 1896 թ. ծավալված իրադարձություններն անվանում «մեծ կոտորած»²¹⁵:

Տալով՝ իր ամբողջ գործունեության ընթացքում «Պետությունը ես եմ» և «Ինձնից հետո թեկուզ ջրհեղեղ» կարգախոսներով առաջնորդված օսմանյան գահակալի գործունեության ընդհանուր գնահատականը, հեղինակը, մասնավորապես,

²¹¹ P. de Réglá, *Au pays de l'espionage. Les sultans Mourad V et Abdul-Hamid II*, Paris, 1902, p. 129.

²¹² G. Dorys, *Abdul-Hamid intime*, Paris, 1901; 2^{ème} éd. 1903 (մենք կիղենք զրքի երկրորդ հրատարակությունը): Ըստ ժամանակակիցների հավաստման՝ Դորիս կեղծանվամբ հանդես է եկել ֆրանսիացի լրագրող Ա. Ադոսիդեսը: Տե՛ս A propos "d'Abd-ul-Hamid intime" // "Pro Armenia", 25 avril 1901. Այդ մասին տե՛ս նաև «Ամահիտ», 9 տարի, 1901, թիվ 1, էջ 3: Դորիսի գիրքն ամի՞ջապես թարգմանվել է անգլերեն և գերմաներեն լեզուներով (G. Dorys, *The Private Life of the Sultan of Turkey*, New York, 1901; G. Dorys, *Abdul Hamids Privatleben*, München, 1902): Նշենք նաև, որ այս զրքից որոշ հատվածներ թարգմանաբար տպագրվել են թե՛ «Ամահիտ» և թե՛ «Նոր կյանք» ամսագրերում: Տե՛ս «Ամահիտ», 9 տարի, 1901, թիվ 1, էջ 3-7; թիվ 3, էջ 63-67; թիվ 4-5, էջ 109-111; «Նոր կյանք», 7 տարի, 1901, թիվ 8, էջ 108-111; թիվ 9, էջ 119-121; թիվ 11, էջ 172-174:

²¹³ G. Dorys, նշվ. աշխ., էջ 63:

²¹⁴ Նույն տեղում, էջ 73:

²¹⁵ Նույն տեղում, էջ 73, 98:

ճշուն է. «Իր հարազատներին, ինչպես նաև իր հպատակներին նա միայն երկյուղ ու սարսափ է ներշնչել և թե՛ յուրայինների և թե՛ իր ժողովրդի համար կնճախ իբրև այնպիսի մի բռնակալ, ինչպիսին կա ամբողջ մարդկության համար, իսկ պատմության առջև՝ իբրև կարմիր սուլթան»²¹⁶:

Սուլթան Աբդուլ Յամիդի ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող մի շարք հարցեր մակերեսորեն քննարկում է բարոն Յ. դը Շվիտերը՝ օսմանյան գահակալների գործունեությանը նվիրված աշխատության մեջ²¹⁷: Յեղիմակը, սակայն, ուշադրությունը կենտրոնացնելով սուլթանի կազմակերպած զանազան պալատական դավերի, քաղաքական հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու հարցերի վրա, շրջանցում է նրա ազգային քաղաքականությանն առնչվող խնդիրների մանրամասն արծարծումը և սահմանափակվում համառոտ դիտարկումներով: Նա սոսկ թռուցիկ հիշատակում է XIX դարում Օսմանյան կայսրության կրած տարածքային կորուստների, արաբական աշխարհում, Ալբանիայում, Կրետեում՝ Բարձր Դռան տիրապետության դեմ բռնկված ապստամբությունների, ինչպես նաև «հայերի կոտորածների» մասին, որոնք բնորոշում է իբրև «կայսրությունը ցնցած ավելի աղետալի, քան արտաքին պատերազմները՝ իրադարձություններ»²¹⁸: Օսմանյան վարչությունում տիրող կատարյալ անիշխանության և կաշառակերության հենքի վրա նա ընդգծում է սուլթանի կամազրկության հանգամանքը, որի հետևանքով «ժողովուրդները տառապում են և կնքում իրենց մահկանացուն»²¹⁹: Այլ կերպ ասած՝ օսմանյան վարչակարգի լծի տակ հեծող ժողովուրդների անելանելի կացությունը, նրանց նկատմամբ կիրառվող բռնությունները, հալածանքները և զանգվածային կոտորածները, որոնց թվում հեղինակն, ի դեպ, հիշատակում է միայն հայերի բնաջնջման մասին, նա ամենևին չի պայմանավորում Բարձր Դռան պետական քաղաքականությամբ:

²¹⁶ Նույն տեղում, էջ 271:

²¹⁷ Le baron H. de Schwiter, Trois sultans. D'Abdul-Aziz à Abdul-Hamid, Paris, 1900.

²¹⁸ Նույն տեղում, էջ 51:

²¹⁹ Նույն տեղում, էջ 52:

Փոխարենը, բարոն Յ. դը Շվիտերը մանրամասնորեն քննարկում է ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիները և հավատարիմ Ֆրանսիայի ռազմավարությանը՝ առաջադրում մեծ թվով բարենորոգումների շտապ իրականացում՝ Օսմանյան կայսրության՝ մեծ տերությունների համար խիստ անցանկալի տրոհումը կանխելու նպատակով, որն, ըստ նրա՝ «մի քանի տարիների, եթե ոչ ամիսների» հարց էր դարձել: «Հարկ է, մի խոսքով, – գրում է նա, – որ կայսրությունում դադարեն իշխել բռնակալությունը, կամայականությունը և կաշառակերությունը»²²⁰: Նույնիսկ Աբդուլ Յամիդին անվանելով «այն երկրի դահիճը, որը նա կոչված էր ղեկավարելու», հեղինակն առաջարկում է նրան՝ առավելագույնը գահընկեց անել և այդ եղանակով շտկել աղետալի իրավիճակը, որի հետևանքով Թուրքիան հեռու է կործանումից²²¹: Ակնհայտ է, որ հեղինակի հիմնական նպատակը եղել է ոչ թե Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների անելանելի կացության վերլուծությունը, այլ կայսրության տարածքային ամբողջականության պահպանման հիմնավորումը: Ըստ այդմ՝ ինչպես և ֆրանսիացի ժամանակակիցներից շատերը, նա հանդես է գալիս իբրև տառապանքներ կրող և բնաջնջվող ժողովուրդների վիճակի բարելավմանն ուղղված բարենորոգումների իրականացման ջերմեռանդ կողմնակից:

Մեր թեմայի ուսումնասիրության կտրվածքով նվազ հետաքրքրություն է ներկայացնում օսմանյան նախկին պաշտոնյա Պ. Ֆրենոնի՝ Աբդուլ Յամիդի գահակալությանը նվիրված աշխատությունը, թեև նրան ևս հաջողվել է հիմնավորապես բացահայտել Օսմանյան կայսրությունում առկա իրավիճակը²²²: Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև քրիստոնյա ժողովուրդների բնաջնջման փաստը չդարձնելով ուսումնասիրության նյութ, հեղինակը բավարարվում է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա հպատակների ոչնչացմանն

²²⁰ Նույն տեղում:

²²¹ Նույն տեղում, էջ 53:

²²² P. Frémont, Abd ul-Hamid et son regne. Par un ancien fonctionnaire ottoman. Paris. 1895.

առնչվող թռուցիկ ակնարկներով²²³: Ուրվագծելով Օսմանյան կայսրությունում տիրող բռնակալական վարչակարգի մանրամասն և արժանահավատ պատկերը (պետական մարմինների չարաշահումներ, իշխանության ներկայացուցիչների գործադրած բռնություններ, աստիճանավորների շրջանում կաշառակերության աճ, ավագակության և գողության աննախադեպ ծավալում), հեղինակն, ըստ էության, որևէ զանազանություն չի նշմարում այն կացությունների միջև, որոնցում գտնվել են սուլթանի մահմեդական և քրիստոնյա հպատակները: Հակառակ դեպքում, նա չէր հավաստի, որ «առաջինները տառապում են նույնքան, եթե ոչ ավելի, քան երկրորդները, սակայն որևէ մեկը նրանց հարցը եվրոպական հասարակական կարծիքի դատին չի ներկայացնում»²²⁴:

Ելնելով շարադրանքից, կարելի է ենթադրել, որ Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակին քաջածանոթ հեղինակը շրջանցել է քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ համիդյան վարչակարգի կիրառած հալածանքները և կոտորածները՝ տուրք տալով, հավանաբար, ֆրանսիական կառավարության թրքամետ քաղաքականությանը կամ կատարել է հատուկ պատվեր:

Եզրափակելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում մանրամասնել մի էական հանգամանք, այն է՝ մեր քննարկած ուսումնասիրությունները ֆրանսիացի պատմաբանները գրել են Հայոց ցեղասպանության շուրջ՝ չունենալով դեռևս ամբողջական և լիարժեք տեղեկատվություն, որն իր դրոշմն է թողել նրանց շարադրանքի և վերլուծությունների վրա: Այս պայմաններում, նրանց գերակշռող մասը հաճախ սահմանափակվել է Հայոց ցեղասպանության սոսկ այս կամ այն պատճառների վերլուծությամբ, դրանք չի քննարկել պատճառակցական կապի մեջ, իսկ նրանցից ոմանք հաճախ տեսադաշտից դուրս են թողել ցեղասպանության գլխավոր պատճառները: Նրանցից մի մասին հաջողվել է, այդուհանդերձ, մասամբ բացահայտել Հայոց ցեղասպանության որոշ հիմնական պատճառներ (Հայկա-

²²³ Նույն տեղում, էջ 98-100:

²²⁴ Նույն տեղում, էջ 45:

կան հարցին լուծում տալու անհրաժեշտություն, բռնի օսմանացման քաղաքականության ձախողում և այլն), դիմազերծել կազմակերպիչներին և արևմտահայության հանդեպ անկարեկից դիրքորոշման համար խարազանել մեծ տերությունների, այդ թվում Ֆրանսիայի, ղեկավար շրջաններին:

Թեև Յայոց ցեղասպանության ժամանակակից ֆրանսիացի պատմաբաններն իրադարձության պատճառների և հարակից հարցերի շուրջ չեն ունեցել (և չէին կարող ունենալ) միասնական հայեցակարգ, իսկ նրանցից ոմանք առաջադրել են անգամ իրականությանը չհամապատասխանող մեկնաբանություններ (օրինակ՝ ցեղասպանությունը պայմանավորել են լոկ կրոնական զանազանության հանգամանքով), այդուհանդերձ, այս իրադարձության պատմության գիտական մեկնաբանության ասպարեզում կատարել են առաջին, գուցե և երբեմն երբեք և քայլերը և դրանով իսկ հող նախապատրաստել հետագա տասնամյակներում պատմաբանների հաջորդ սերունդների առավել բեղմնավոր գիտական գործունեության համար:

**ԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հայկական կոտորածների կազմակերպիչների դիմագերծմանը մեծապես նպաստել են ֆրանսիացի նշանավոր գրողները, հրապարակախոսներն ու զանազան կողմնորոշումներ ունեցող քաղաքական գործիչները: Հայ ժողովրդի շահերն ու իրավունքները սատարած ֆրանսիացի գործիչների փայլուն համաստեղության մեջ իր ուրույն տեղն ունի աշխարհահռչակ վիպասան Անատոլ Ֆրանսը (1844-1924), ում հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ երբևէ չի խամրել: Համիդյան կոտորածները նրան դրդել են ամենաեռանդուն ձևով աջակցելու՝ ի նպաստ նահատակվող արևմտահայությանը Ֆրանսիայում ձևավորվող շարժմանը²²⁵: Պատահական չէ, որ 1900 թ. Ժան Ժորեսի, Ժորժ Կլեմանսոյի, Ֆրանսիս դը Պրեսանսեի և Եվգենի դը Ռոբերտիի հետ մեկտեղ Ֆրանսն ընդգրկվել է ՀՅԴ ջանքերով Փարիզում հիմնադրված²²⁶ և արևմտահայության հուսակտուր վիճակն ու հայկական կոտոր

²²⁵ Այդ շարժման մասին տես V. Duclert et G. Pécout, *La mobilisation intellectuelle face aux massacres d'Arménie (1894-1900)*. – Les exclus en Europe, 1830-1930. Sous la direction d' A. Guslin et D. Kalifa, Paris, 1999, p. 325-326. XIX դարի 90-ական թվականներին հայ ժողովրդի պաշտպանությամբ հանդես եկած Անրի Ռոշֆորի (1831-1913) հայանպաստ գործունեության մասին տես E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 44-46:

²²⁶ Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 33; Ծ. Պ. Աղայան, Հայկական ջարդերը և մեծ տերությունների քաղաքականությունը. – Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 281: 1899-1900 թթ. Եվրոպայում հայանպաստ շարժում ծավալելու ասպարեզում թե ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ, ՀՅԴ անդամ Մ. Վարանդյանը (1870-1934) և թե Հ. Տասնապետյանն ընդգծում են, մասնավորապես, Քրիստափոր Միքայելյանի, ինչպես նաև բժիշկ Հովհաննես Լոռիս-Մելիքովի դերը: Տես Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, առաջին հատոր, Պարիզ, 1932, էջ 193, 204, 318; Հ. Տասնապետեան, նշվ. աշխ., էջ 972-973:

րածները լուսաբանող «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի (1900-1908, 1912-1914) ղեկավար մարմնի կազմում, որի գլխավոր խմբագիրը Պիեռ Քիառն էր:

Սկսած XIX դարի 90-ական թթ. երկրորդ կեսից Ֆրանսը պարբերաբար մասնակցել է ոչ միայն Ֆրանսիայում, այլև եվրոպական այլ երկրներում գումարվող՝ օսմանյան վարչակարգի դատապարտմանը նվիրված միջազգային գիտաժողովների աշխատանքներին, ջարդարարներին տվել հակիրճ, սակայն դիպուկ գնահատականներ: Նրա առաջին ելույթն առնչվում է 1897 թ. մարտի 9-ին Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում կայացած Չոպանյանի՝ հայ ժողովրդի պատմությանը և հայ գրականության անցած ուղուն նվիրված հրապարակային ելույթին: Նախագահելով այս նիստը, բացման համառոտ խոսքում Ֆրանսը համիդյան կոտորածները բնութագրում է իբրև «դժնդակ և հետևողական, որոնց ընթացքում՝ իր հզորությամբ ու փոքրոգությամբ սարսափազդու, ահաբեկչության նկատմամբ մեծ հակում ունեցող բռնակալ սուլթանի հրամանով գոհվել է երեք հարյուր հազար հայ»²²⁷: Հիշարժան է, ի դեպ, սուլթանին տված նրա շատ ավելի սպառնիչ մեկ այլ բնորոշում. «Իր թշվառ ամենագորության գրկում մշտապես դողահար մի հրեշ՝ Աբդուլ Համիդ II-ը, ով սոսկում է իր հանցագործություններից և սփոփվում նոր հանցանքներին ի տես, 1893-1895 թթ. կախել, քառատել, կենդանի այրել է երեք հարյուր հազար հայի և դրանից հետո նողկալի շրջահայացությամբ և հետևողականորեն հետամուտ է այս որբացած ժողովրդի ոչնչացմանը»²²⁸: Հայոց ցեղասպանությունը, Ֆրանսի կարծիքով, իրականացվում էր նրա իսկ որդեգրած քաղաքական ծրագրով, որը «հանգեցնում էր ամբողջ հայ ազգի բնաջնջմանը»²²⁹:

²²⁷ A. France. [Préface].– A. Tchobanian. L'Arménie. son histoire, sa littérature, son rôle en Orient. Conférence faite le 9 mars 1897 à la salle de la Société de Géographie sous la présidence de M[onsieur] Anatol France, Paris, 1897, p. 6.

²²⁸ Pour l'Arménie et la Macédoine, p. 185.

²²⁹ A. France. Pour l'union arménienne // "Pro Armenia", 25 mai 1901. Սույն հոդվածի բնագրին անտեղյակ Ա. Մնացականյանը հղելով դրա հայերեն թարգմանությունը, որը զետեղվել է 1907 թ. ժնկում լույս ընծայված «Եվրոպացիների կարծիքը Հայկական դատի մասին» ժողովածուում, ըստ այդմ, այն սխալմամբ թվագրել է 1907 թվականով: Տես Ա. Ն. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 140:

Հայ ժողովրդի ոչնչացմանը խոչընդոտելու ամենաարդյունավետ միջոցը մեծ գրողը համարում է Աբդուլ Համիդի ծրագրերի «մերկացումը և դրանց կենսագործման յուրաքանչյուր փորձի մասին ամբողջ աշխարհին իրազեկելը՝ առաջին իսկ նախանշանի ի հայտ գալուն ևեթ»: Հենց այս հարցում է, որ նրա համոզմամբ, ֆրանսիացիներն ի զորու են օժանդակելու հայերին, քանզի, ըստ նրա՝ «կոտորածներն անիրագործելի են դառնում, երբ դրանք ազդարարվում են աշխարհում»²³⁰: Միաժամանակ Ֆրանսն առաջարկում է ստեղծել հայկական համայնքների ամրակուռ միություն, որը նրանց հնարավորություն կընձեռեր հովանավորելու «սպառնալիքի տակ գտնվող իրենց եղբայրներին: Նրանց գործողությունը միայն այս պայմանով կարող է արդյունավետ լինել, քանզի այն համընդհանուր կլինի: Նրանց գործը մարդկության գործն է», – եզրահանգում է նա²³¹: Այս իսկ պատճառով, նա չի զլանում կշտամբանքի խոսքեր ուղղել ֆրանսիական կառավարության և մամուլի հասցեին, որոնք իրենց լռությամբ հասարակությանը «գրեթե անտեղյակության մեջ» էին պահում²³²:

Իրադարձությունների զարգացմանը զուգընթաց՝ Ֆրանսի հետաքրքրությունը հայերի ճակատագրի նկատմամբ աճել է, մղելով նրան դարասկզբին ակտիվորեն մասնակցելու Իտալիայում՝ Հայաստանի և Մակեդոնիայի հարցերին նվիրված միջազգային հավաքների աշխատանքներին: 1903 թ. մայիսի 7-ին, Հռոմում՝ Մամուլի միության սրահում կազմակերպված նիստում հանդես գալով բացման խոսքով, նա կրկին անդրադառնում է համիդյան կոտորածներին, մատնանշում «անոթաբեր լռություն պահպանող Եվրոպայի առջև՝ բնաջնջող սուլթանի գործած սպանությունները» և պահանջում հանուն հայերի իրավունքների պաշտպանության «անհրաժեշտ ու վեհ գործի» կենսագործել Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի որոշումները²³³: Միևնույն պահանջը նա առաջադրել է իր

²³⁰ A. France, Pour l'union arménienne.

²³¹ Նույն տեղում:

²³² A. France, [Préface], p. 6.

²³³ Pour l'Arménie et la Macédoine, p. 172-173.

հաջորդ ելույթներում: 1903 թ. մայիսի 21-ին, Յոռմի «Ադրիանո» թատրոնում ունեցած հրապարակային ելույթում հայերի նկատմամբ՝ ըստ Բեռլինի վեհաժողովի հողվածների՝ տերությունների ստանձնած պարտավորությունների ի կատար ածմանն առնչվող պահանջը Ֆրանսը համարում է «արդարացի» և կոչում Եվրոպայում ձևավորել այնպիսի հասարակական կարծիք, որը նպաստեր 61-րդ հողվածի կենսագործմանն ու ապահովեր «Հայաստանի և Մակեդոնիայի անդորրը, ազատագրեր Եվրոպան անընդմեջ անհանգստություն պատճառող և վաղուց ի վեր Արևելյան հարց կոչվող հասկացությունից»²³⁴: Մեկ այլ առիթով՝ 1904 թ. հունիսի 29-ին Լոնդոնում գումարված՝ Հայկական հարցին և Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներին հղած նամակում նա վերստին ակնարկում է մեծ տերությունների՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններին միջամտելու անհրաժեշտության մասին. «Այն, ինչ դուք պահանջում եք, հստակ է, օրինական, գործնական... Արդյո՞ք հնարավոր է, որ հովանավորի դեր ստանձնած և, հետևաբար, պատասխանատվություն կրող Եվրոպան... անգոր լինի սուլթանի երեք հարյուր հազար հպատակի սպանության հարցում»²³⁵:

Ինչպես տեսնում ենք, Հայոց ցեղասպանությանը նվիրված առաջին իսկ ելույթներում Ֆրանսը ոչ միայն արևմտահայերի կոտորածները դիտել է իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձություն և հանուն արևմտահայության փրկության տերություններից պահանջել իրականացնել գործնական քայլեր, այլև ցեղասպանության իրողությունը քողարկելու համար քննադատել է եվրոպական, այդ թվում, ֆրանսիական կառավարություններին²³⁶:

²³⁴ Նույն տեղում, էջ 185-186:

²³⁵ Report of the International Conference on the Situation of the Near East. Held in London on 29th June 1904, London, 1904, p. 18. Տե՛ս նաև “Pro Armenia”, 15 juillet 1904.

²³⁶ Ա. Ֆրանսի այս ժամանակաշրջանի հայանպաստ ելույթների մասին տե՛ս նաև Գ. Հովման, Անատոլ Ֆրանսը և հայերը (ծննդյան 150-ամյակի առթիվ). – «Սովետական գրականություն», 1969, թիվ 6; Ե. Գասպարյան, Անատոլ Ֆրանսը և հայ ժողովուրդը, Երևան, 2003, էջ 22-94:

Առաջիններից մեկը, ով Ֆրանսիայում անկողմնակալ դիրքերից քննարկել է համիդյան կոտորածների սկզբնական փուլը գրող Կարոլին Ռենին (1855-1929) է, որը պատմության մեջ հայտնի է Սևերին կեղծանվամբ: Ծավալված իրադարձությունների շուրջ դեռևս չունենալով մույնիսկ մանրակրկիտ տեղեկություն, նա հայկական կոտորածներին վերաբերող առաջին իսկ լուրերը ստանալուն ևեթ ձեռնամուխ է եղել Սասունում տեղի ունեցած անցքերի պատկերը, թեկուզ և հպանցիկ, ֆրանսիական հանրությանը ներկայացնելու գործին: Սևերինի «Հայաստանի կոտորածները» խորագիրը կրող հոդվածը կարելի է անվարանորեն համարել առաջին «լույսի շողը»՝ մեզ հետաքրքրող հարցում «խավարի թագավորության» մեջ խարխափող ֆրանսիական իրականության մեջ²³⁷:

Սևերինը համառոտակի անդրադառնում է Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձություններին, հիշատակում հրկիզված գյուղերի անունները, նշում, որ Հայաստանի վրա հարձակում գործած 50000 օսմանյան զինվորների գերակշռող մասը (շուրջ 40000-ը) եղել են քրդեր, որոնց համեմատում է «վայրենի գազանների» հետ: Հանրությանը «հրեշավոր վայրագություններին» առնչվող մանրամասներին նա տեղեկացնում է շվեյցարական թերթերից մեկում տպագրված հոդվածից մեջբերումներ կատարելու միջոցով:

Հավանաբար, անհրաժեշտ սկզբնաղբյուրների բացակայության պատճառով Սևերինը ցեղասպանությունը սխալմամբ մեկնաբանում է իբրև կրոնական պատճառներ ունեցող իրադարձություն. «Ձեր նման մարդիկ,– դիմում է նա իր հայրենակիցներին,– նենգորեն, նողկալիորեն կոտորվել են հազարներով, բայց նրանց կոտորել են քրիստոնյա լինելու պատճառով»²³⁸:

²³⁷ Այն տպագրվել է «Լա լիբր պարուլ» լրագրում 1895 թ. փետրվարի 3-ին: Մենք, սակայն, հիմնվում ենք հոդվածի վերատպության վրա, որը լույս է տեսել «Լ'Արմենի» թերթում. Séverine, Les massacres d'Arménie // "L'Arménie". 1^{er} avril, 1895.

²³⁸ Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության մասին առաջին տեղեկությունները Սևերինը ստացել է հայր Շարմետանից, որն այդ ժամանակաշրջանում արևմտահայության բնաջնջումը մեկնաբանում էր իբրև լուկ կրոնական դրդապատճառներ ունեցող եղելություն: Այս հանգամանքն,

Հետաքրքրական է Սևերիհի գրաված սկզբունքային դիրքորոշումը՝ ֆրանսիական կառավարության որդեգրած քաղաքականությունը խարազանելու հարցում: Նա խստագույնս դատապարտում է Ֆրանսիայի ղեկավար շրջանների անկարեկից վարքագիծը, նրանց լռակյացությունը բնութագրում իբրև՝ «եսասիրությունից սկիզբ առնող հանցագործ ամտարբեություն, եսասիրություն, որը փակում է աչքերն ու ականջները»: Ուստի՝ Սևերիհը հաստատականորեն կոչ է անում «անարգանքի սյունին գամել» ֆրանսիական քաղաքականությունը կերտողներին, որոնց անվանում է «բարբարոսների հանցակիցներ»²³⁹:

Ֆրանսիայում համիդյան կոտորածները դատափետած մտավորականների թվում առանձնանում է ֆրանսիացի ակադեմիկոս քաղաքական և պետական գործիչ, 1875 թվականից ֆրանսիական ռադիկալների պարագլուխ, 1906-1909 և 1917-1920 թթ. Ֆրանսիայի վարչապետ, գրական հարուստ ժառանգություն թողած (թե՛ քաղաքական և թե՛ գեղարվեստական բնույթի 26 գրքի հեղինակ) Ժորժ Կլեմանսոն: Առաջին անգամ համիդյան կոտորածներին նա անդրադարձել է 1896 թ. Փարիզում լույս ընծայված՝ «Հայաստանի կոտորածները. ականատեսների վկայություններ» խորագիրը կրող և Հայոց ցեղասպանության հավաստի պատկերը ներկայացնող փաստաթղթերի ժողովածուի առաջաբանում, ուր ջարդարարներին տվել է խիստ գնահատականներ²⁴⁰: Կլեմանսոյի

անտարակույս, իր դրոշմն է թողել Սևերիհի մեկնաբանությունների վրա: Ըստ նրա վկայության՝ հայր Շարմետանը նրան հրավիրել է իր մոտ և զրույց ունեցել Արևմտյան Հայաստանն ալեկոծած իրադարձությունների մասին: Հայաստանը, ինչպես հավաստում է Սևերիհը, մինչ այդ նրա համար եղել է սոսկ աշխարհագրական հասկացություն: Միայն դրանից հետո է նա զինվորագրվել հայ ժողովրդի շահերի պաշտպանության գործին: *St'en Pour l'Arménie indépendante*, Paris, 1920, p. 65-66.

²³⁹ Սևերիհի հաջորդ ելույթների մասին տես Մ. E. Khayadjian, *նշվ. աշխ.*, էջ 28, 41-44:

²⁴⁰ G. Clemenceau, *Préface.*— *Les massacres d'Arménie. Témoignages des victimes.* Եշենք, որ Կլեմանսոյի առաջաբանը մասնակի կրճատումներով հետագայում տպագրվել է «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթում. տես "Pro Armenia". 10-25 avril 1902.

համոզմամբ «այս ժողովածուն խիստ պատեհ է այն պահին, երբ սկսում են կրկին խոսել հայկական նահանգներում տեղի ունեցող «խռովությունների» մասին: Հայտնի է, թե ինչ իմաստ է պարունակում այս բառը: Այսպիսին է հայերի պարբերական կոտորածները մատնանշող պաշտոնական մեղմ արտահայտությունը: Այս տեսակետից, անտեղյակ ձևանալն այլևս թույլատրելի չէ»²⁴¹:

Առաջին իսկ ելույթում Կլեմանսոն Արևմտյան Հայաստանում ծավալված իրադարձությունները բնութագրում է իբրև «նողկալի», «սոսկալի» տեսարաններ, իսկ հայ ժողովրդի կրած տառապանքները՝ «գարիհուրելի մարտիրոսություն»: Նա ցավով ընդգծում է, որ թերևս անհնար կլինի երբևէ ունենալ XX դարի նախաշեմին «ապրող մարդկության համար անպատվաբեր այն տեսարանների ամբողջական պատկերը, որոնց թատերաբեմն է դարձել Անատոլիան անծայրածիր ամիսների ընթացքում»²⁴²:

1901 թ. «Պրո Արմենիա» լրագրում լույս ընծայած «Այլու-նոտ ձեռքը» հոդվածում Կլեմանսոն Հայոց ցեղասպանությունը քննարկում է արդեն շատ ավելի լայն հետնախորքի վրա և այն դասում XIX-XX դարերի սահմանագծում տարբեր աշխարհամասերում (Աֆրիկա, Ասիա) տեղի ունեցած զանազան զանգվածային բռնությունների շարքը: Օսմանյան կայսրությունում ընթացքի մեջ գտնվող հայկական կոտորածների շուրջ նա, մասնավորապես, նշում է. «Փոքր Ասիան դարձել է նողկալի տեսարանների ականատես, որոնք նվազ նշանակալից չեն: Այստեղ կարմիր սուլթանն է, որը քրիստոնեության բարեհաճ հովանավորությամբ, սրով ու հրով, ղեկավարում է բնաջնջումը Հայաստանի նահանգներում»: Ըստ այդմ՝ նա Աբդուլ Համիդին անվանում է «թագակիր ավագակ», որը «կողոպտում է քաղաքներն ու գյուղերը, կոտորում անզեն մարդկանց, եկեղեցիներում հրկիզում (ինչպիսի՜ անարգանքներից հետո) կանանց, երեխաներին, ծերունիներին, մարդկանց ստվար խմբերը քշում ամայի հարթավայրեր՝ առանց ծածկի, գոյության միջոցների,

²⁴¹ G. Clemenceau, նշվ. աշխ., էջ 5-6:

²⁴² Նույն տեղում, էջ 10-11:

որոնց կյանքին վերջ է տալիս մականը՝ նրանց վերահաս որս դարձնելով գայլերի համար»²⁴³:

Արևմտահայության ցեղասպանության մանրամասները մշտապես տեսադաշտում պահող Կլեմանսոն 1904 թ. կոտորածների ժամանակաշրջանում առանձնահատուկ ուշադրություն է հրավիրում օսմանյան կառավարության նենգ գործելամիջոցների վրա, մերկացնում սուլթանի՝ ջարդերի պատասխանատվությունը հայերի վրա բարդելու արատավոր վարքագիծը: Ինչպես նա նշում է, Վանում հայերի ապստամբության «հետքն իսկ նշմարելի չէ: Եթե հայերն ապստամբեն, թուրքը խիստ երջանիկ կլինի պաշտոնապես այդ հավաստելու համար»²⁴⁴:

Հռետորական եզակի տաղանդով օժտված, խորհրդարանական նիստերում ծավալված բանավեճերի ընթացքում քաղաքական ախոյաններին բազմիցս ջախջախիչ հարվածներ հասցրած և դեռևս XIX դարի 80-ական թվականներին «Կառավարություններ տապալող» ու «Վագր» մականունների արժանացած Կլեմանսոյի ըմբոստ ոգին ամբողջությամբ դրսևորվում է նաև Հայկական հարցին նվիրված նրա ելույթներում: Հղելով Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածը, նա տալիս է դրան հաջորդած անցքերի հետևյալ դիպուկ գնահատականը. «Պայմանագրերը խաբեություններ են, սուլթանի խոստումները, բոլոր տերությունների պատվիրակների ստորագրած պայմանագրերի հովանավորական բնույթի հոդվածները՝ մեռյալ տառեր: Ոչինչ չի փոխվել, ոչինչ չի արվել. այնժամ, երբ մեկ վճռական խոսքը կարող էր բավարար լինել այդչափ աղետները կանխելու համար՝ նույնիսկ ոչինչ չի ասվել»:

Ընդդիմության մեջ գտնվող, 1893 թ. ի վեր ֆրանսիական խորհրդարանի պատգամավորի կարգավիճակ այլևս չունեցող

²⁴³ G. Clemenceau, La main sanglante // “Pro Armenia”, 25 novembre 1900.

²⁴⁴ G. Clemenceau, Pour les Arméniens // “Pro Armenia”, 15 septembre 1904. Հայերի կարծեցյալ ապստամբության վարկածի մասին տես Ն. Վ. Կարապետյան, 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունը. – Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 474; Հ. Մ. Պողոսյան, Սասունի պատմություն (1750-1918), Երևան, 1985, էջ 255-266:

Կլեմանտոյի շանթերը, մասնավորապես, անողոք են ֆրանսիական պետության ղեկավարների հանդեպ. «Մեր կառավարողները ոչինչ չեն արել և, բացի դրանից, այսօր էլ ոչինչ չեն անում խոչընդոտելու համար այդ վայրագության կրկնությանը»²⁴⁵: Նա հետևողականորեն կշտամբում է «մարդու իրավունքների» օրրան Ֆրանսիայի կառավարությանը, որը չի համարձակվում «արդարություն պահանջել կամ նույնիսկ մարդասիրական որևէ խոսք ասել» և որի պաշտոնական ներկայացուցիչ, 1898-1902 թթ. պատգամավորների պալատի նախագահ Պոլ Դեշանելը սեղմում է Աբդուլ Յամիդի՝ «մորթված երեխաների արյան մեջ կարմրագունած» «արյունոտ ձեռքը»²⁴⁶:

Սակայն, չբավարարվելով սոսկ իրադարձությունների նկարագրությամբ կամ դրանց մեկնաբանությամբ, Կլեմանտոն դեռևս առաջին ելույթում առաջադրում է ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու իր տարբերակները: Ըստ նրա՝ «Օսմանյան կայսրությունում ազգերի և կրոնների միջև թշնամանքը դադարեցնելու միակ միջոցը կառավարության կողմից ամենքի՝ մահմեդականների և քրիստոնյաների համար բարեհաճ վերաբերմունքի ապահովումն է»: Ուստի՝ նրա կարծիքով, սուլթանի տիրույթներում, իշխանությունը հարկ է տրամադրել այնպիսի վարչակարգի, որը «հետևողականորեն իրականացվող սպանության, կողոպուտի, մոլեռանդ բարբարոսության սանձազերծած զագրելի բռնությունների փոխարեն» ի վիճակի լինի արդարադատության և իրավունքի հովանու ներքո խաղաղություն հաստատել²⁴⁷:

Ստեղծված անելանելի կացությունը շտկելու համար Կլեմանտոն պահանջում է ընտրել միակ հնարավոր՝ կոտորածների կասեցման ուղին: Ճիշտ է, հարցի լուծման նախընտրած նրա սկզբնական տարբերակը, ինչպես այդ ակնհայտ դարձավ շնորհիվ իրադարձությունների հետագա ընթացքի, ամենևին իրատեսական չէր. «Բավական կլինի սուլթանին հասկացնել, — գրում է նա, — որ չկա փրկության այլ միջոց, քան խաղաղ

²⁴⁵ G. Clemenceau, Préface, p. 13.

²⁴⁶ G. Clemenceau, La main sanglante.

²⁴⁷ G. Clemenceau, Préface, p. 15.

բարենորոգումները, անկողմնակալ ձևով արդարություն և վերահսկողություն սահմանող կառավարության հաստատումը, որը կհաջորդի ամենագարշելի, քմահաճ իշխանությանը և հավասարապես օգտակար կլինի նրա բոլոր հպատակների համար»²⁴⁸: Հակառակ դեպքում, ինչպես ենթադրում է Կլեմանսոն, կծագի տերությունների զինված ուժերի միջամտության անհրաժեշտությունը:

Իրադարձությունների ծավալումը հետագա տարիներին՝ Կլեմանսոյին աստիճանաբար հանգեցնում է Հայոց ցեղասպանությունը միմիայն եվրոպական մեծ տերությունների գործնական և համատեղ ջանքերի միջոցով կասեցնելու անհրաժեշտության գաղափարին: Նա բազմիցս անդրադառնում է այս հարցի կարևորությանը, խստագույնս քննադատում թե՛ Ֆրանսիայի և թե՛ Բեռլինի պայմանագրի ներքո ստորագրած մյուս տերությունների կառավարություններին՝ ստանձնած պարտավորությունները չկատարելու պատճառով: Տերությունները «չեն հասել նույնիսկ այն բանին, որ մեծ դահիճները պաշտոնանկ արվեն», – մի առթիով գրում է նա²⁴⁹: 1904 թ. կոտորածները Կլեմանսոյին դրդում են «կարմիր սուլթանի՝ Հայաստանում կազմակերպած՝ պարբերաբար տեղի ունեցող կոտորածներին վերջ տալու» նպատակով հանդես գալ Ֆրանսիայի և նրա դաշնակից Ռուսաստանի միջև այդ խնդրին առնչվող համաձայնություն կայացնելու առաջարկությամբ²⁵⁰:

Այս հարցն իր արտացոլումն է գտել նաև 1904 թ. հունիսի 29-ին Լոնդոնում գումարված՝ վերը նշված միջազգային կոնֆերանսին հղած Կլեմանսոյի նամակում, ուր վերստին մատնանշելով արևմտահայության նկատմամբ իրագործված վայրագությունները, որոնց նախադեպը, նրա իսկ խոսքերով, «հնարավոր չի պատկերացնել բարբարոսության ամենամռայլ ժամանակներում», նա արդեն առաջադրում է Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու անհրաժեշտությունը: «Այսօր հայտնի է, – գրում է նա, – որ անհնար է այնտեղ

²⁴⁸ Նույն տեղում, էջ 16:

²⁴⁹ G. Clemenceau, Pour les Arméniens.

²⁵⁰ G. Clemenceau, Rappel au devoir // “Pro Armenia”, 15 juin 1904.

ունենալ վայրագության սանձագերծման կրկնությունն արգելակող որևէ այլ երաշխիք, քան այնպիսի վարչակարգի հաստատումը, որը տերությունների համաձայնության շնորհիվ վերջապես կարգ ու կանոն և խաղաղություն պարտադրի ու խարսխվի միայն բոլոր քաղաքացիների հանդեպ անկողմնակալորեն արդարություն հաստատող հենքի վրա: *Չարկ է, որ տերությունները միջամտեն* (ընդգծումը մերն է – Վ. Պ.): Անհնար է ամոթալի անտարբերությամբ շարունակ քաջալերել վերջին շնչուն գտնվող ինքնակալության խելահեղ հանցագործներին»²⁵¹:

Կլեմանսոն, ըստ նրա կենսագիրներից մեկի բնորոշման՝ «հանուն գաղափարի պայքարող մարտիկ է, այլ ոչ թե պամֆլետագիր»²⁵²: Ըստ այդմ՝ ընծեռված բարենպաստ առիթը նրա ուշադրությունից չի վրիպել այս հարցում Վատիկանի գրաված անկարեկից դիրքորոշումը դատապարտելու համար: Այդ քայլն, անկասկած, պայմանավորված էր XIX դարի 80-90-ական թվականներին կաթոլիկ եկեղեցու դեմ ռադիկալների մղած անգիջում պայքարով, որոնք ի շարս այլ խնդիրների, համառորեն առաջադրում էին եկեղեցին պետությունից անջատելու պահանջը²⁵³, որն իրականության վերածվեց միայն 1905 թ.: «Չռոմի եկեղեցին, որը մեծ ազդեցություն ունի միապետությունների և հանրապետությունների ժողովուրդների ու թագավորների վրա, արդյո՞ք այս առիթով այն ամենն է արել, ինչ նրան թույլատրում են անել գործելուն նպաստող՝ նրա ունեցած բացառիկ միջոցները: Դա այդպես չի թվում», – եզրակացնում է նա²⁵⁴: Ի դեպ, Չռոմի պապի հասցեին, որի կողմից «լսելի չէ բողոքի որևէ խոսք, խղճմտանքի կոչ», քննադատական խոսքեր են հնչել նաև Կլեմանսոյի հետագա ելույթներից մեկում²⁵⁵:

²⁵¹ Report of the International Conference..., p. 20. Տե՛ս նաև «Pro Armenia», 15 juillet 1904.

— ²⁵² G. Lecomte, Clemenceau, Paris, 1919, p. 224.

²⁵³ Այդ մասին տե՛ս Պ. Сеньобос, Третья республика 1871-1900. – История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 7, М., 1939, с. 34-59; Э. Шенон, Римская церковь и некатолические культы 1870-1900. – Там же, т. 8, М., 1939, с. 60; В. И. Антюхина-Московченко, Гзվ. աշխ., էջ 177-181, 190, 215:

²⁵⁴ G. Clemenceau, Préface, p. 14.

²⁵⁵ G. Clemenceau, La main sanglante.

Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին անարգանքի սյունին գամած ֆրանսիացի գործիչների թվում Կլեմանսոն առաջիններից էր, որը ոչ միայն բողոքի իր խրոխտ ծայնն է բարձրացրել և մինչ այդ՝ արևմտահայերի կոտորածներին գրեթե անտեղյակ ֆրանսիական ու եվրոպական հասարակությանը ներկայացրել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող անցքերի հավաստի պատկերը²⁵⁶, այլև, ի տարբերություն այլոց, նահատակվող ժողովրդի հանդեպ դրսևորած անվշտակից վերաբերմունքի համար դատապարտել է Ֆրանսիայի պետական քաղաքականությունը:

Բազում տարիներ անց, 1905-1907 և 1917 թթ. ռուսական հեղափոխությունների ազդեցության ներքո, Կլեմանսոյի հայացքներն էվոլյուցիա կապրեն, նա շեշտակի շրջադարձ կկատարի ծախից աջ՝ մեկընդմիշտ լքելով արմատական ժողովրդավարի դիրքերը: Անփոխոխ չի մնա նաև նրա դիրքորոշումը Հայկական հարցում: Սակայն դա դեռ առջևում է, իսկ տվյալ ժամանակաշրջանում նա հանդես է գալիս դեռևս իբրև հայ ժողովրդի ջերմեռանդ պաշտպան, ուստի՝ մենք համամիտ ենք Գ. Նզրուրյանի հետ, ով այս առիթով գրել է. «Իր մահից 45 տարի հետո Կլեմանսոն միշտ մնում է «Օրորի» և «Պրո Արմենիայի» այն պայծառ դեմքը, որ մեր պատմության ամենից դժնդակ ժամանակաշրջանին, իր հուժկու ձայնը բարձրացրեց

²⁵⁶ Ինչպես նշեցինք վերը, Կլեմանսոյի առաջաբանով լույս տեսած «Հայաստանի կոտորածները» ժողովածուն արձագանքների է արժանացել ֆրանսիական մամուլում: Այս պայմաններում՝ միանգամայն օրինաչափ է, որ թե այս ժողովածուի լույս ընծայումը և թե՛, մասնավորապես, Կլեմանսոյի առաջաբանը հարուցել են Աբդուլ Համիդի անսամձ գայրույթը: Սուլթանն անհապաղ արձագանքել է ռադիկալների պարագլխի ելույթին, հանդես եկել նրան անվանարկող ծավալուն պատասխանով, որտեղ Կլեմանսոյին անվանել է «քրիստոնյա, շուն» (Réponse du sultan à M. Clemenceau. Traduite par *Urbain Gohier*, Paris, 1896, p. 7, 11): Շատ ավելի՝ եվրոպական տերությունների գաղութատիրական քաղաքականության դեմ ուղղված «philippika», քան «pro domo sua» հիշեցնող Աբդուլ Համիդի պատասխանը պարզորոշ վկայում է, որ նա, ըստ էության, ընդունում է կայսրության զանազան տարածքներում հայ ժողովրդի բնաջնջման փաստը: Հակառակ դեպքում նա չէր հավաստի, որ «մեր (իմա՝ թուրքերի – Կ. Պ.) ձեռքերի վրա արյուն կա» (նույն տեղում, էջ 41):

ի խնդիր մեր բազմաչարչար ժողովրդի արդար իրավունքների»²⁵⁷:

Հարկադրված ենք միայն ցավով նշել, որ Կլեմանտոյի քաղաքական գործունեությանն առնչվող այս դրվագները հանիրավի չեն արժանացել նրա կենսագիրներից շատերի ուշադրությանը²⁵⁸:

Համիդյան կոտորածները դատապարտած ֆրանսիացի հանրահայտ քաղաքական գործիչների թվում է գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1911) Դենի Կոշենը (1851-1922), ում հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ ծագել է վերը հիշատակված «Հայաստանի կոտորածները» ժողովածուում ամփոփված փաստաթղթերին ծանոթանալուց հետո²⁵⁹: Մեծ թվով գրքերի հեղինակ Կոշենի գրական ժառանգությունից մեզ հետաքրքրում է «Բարբարոսների դեմ» խորագիրը կրող ժողովածուն²⁶⁰, որն ամփոփում է քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ թուրքերի գործած ոճրագործություններին և զաղութային քաղաքականության հարցերին նվիրված՝ 1896-1899 թթ. Ազգային ժողովում նրա ունեցած մերկացուցիչ ելույթները: 1896 թ. նոյեմբերի 3-ի և 1897 թ. ապրիլի 3-ի ելույթներն ուղղակիորեն առնչվում են արևմտահայերի կոտորածներին, ևս մեկը՝ 1897 թ. փետրվարի 12-ի ելույթը՝ արևելյան երկրներում տեղի ունեցած իրադարձություններին, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությանը:

1896 թ. նոյեմբերի 3-ին, Ազգային ժողովի նիստում, ուր առաջին անգամ քննարկվում էր Հայկական հարցը²⁶¹, Կոշենը

²⁵⁷ Գ. Նգրուրեան, Զլեմանսօ մարդը.— «Ալիք» (Թեհրան), 10. XII. 1974, թիվ 279:

²⁵⁸ Տե՛ս օրինակ G. Lecomte, նշվ. աշխ.; G. Geffroy, Clemenceau, Paris, 1919; G. Suarez, Clemenceau, t. 1-2, Paris, 1932; W. Williams, The Tiger of France, New York, 1949; Д. П. Прицкер, Жорж Клемансо. Политический портрет, М., 1983. Համիդյան կոտորածների առիթով Կլեմանտոյի ելույթների մասին ակնարկ իսկ չկա նաև «Հայկական հարց» հանրագիտարանում: Տե՛ս Բ. Սահակյան, Կլեմանտո.— Հայկական հարց, Երևան, 1996, էջ 186-187:

²⁵⁹ Տե՛ս E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 75:

²⁶⁰ D. Cochon, Contre les barbares, Paris, 1899.

²⁶¹ Ըստ Սապահ-Գյուլյանի վկայության՝ այս քննարկումը կազմակերպվել էր հնչակյան կուսակցության նախածեռնությամբ: Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, Պրովիդանս, 1916, էջ 173:

հանդես է եկել ծավալուն զեկուցմամբ: Այդ առիթով, Ա. Չոպանյանին հղած անթվակիր նամակում նա գրում է. «Ես վճռել եմ խորհրդարանում հարց բարձրացնել Սուլչի և Սասունի իրադարձությունների մասին: Ես կարծում եմ, որ այդ անօգուտ կլինի: Սակայն ես կցանկանայի տեսնել, թե ինչպես է, այսպես կոչված Պալատում, ընդլայնվում այն բանավեճը (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.), որը ծավալվել է սուլթանի հետ: Ինձ տեղեկություն հաղորդելու հարցում ես հույսեր եմ տածում ձեզ հետ»²⁶²:

Առաջին իսկ ելույթում Կոշենը թեև չի ժխտում վաղուց ի վեր հայ ժողովրդի գլխին դամոկլյան սրի մնան կախված վտանգի առկայությունը, այնուամենայնիվ, ցնցված հայկական կոտորածների չափերից՝ հայտարարում է. «Փոքր Ասիայում հենց նոր տեղի ունեցած իրադարձությունները երևակայությունից վեր են և հասել են այնպիսի սարսափելի աստիճանի, որ մենք իրավասու ենք ասելու, թե դրանք կանխատեսելի են եղել»²⁶³:

Հետագայում հայացք նետելով դարեր ի վեր հայ ժողովրդին վիճակված արհավիրքների վրա, Կոշենն արևմտահայերի ցեղասպանության կազմակերպիչներին և իրականացնողներին ոչնչով չի զանազանում «հին բարբարոսներից»: 1895 թվականն անվանելով «տխուր և միաժամանակ ամենանողկալի, ամենաարտառոց տարի», նա թուրքերի ոճրագործությունները համենատում է այնպիսի ասպատակիչների ամենադժնի արարքների հետ, ինչպիսիք են Լենկ Թեմուրն ու շահ Աբբասը²⁶⁴:

Հիմնվելով «Դեղին գրքի» վրա, Կոշենը մանրամասնորեն հիշատակում է 1894 թ. Սասունում թուրքերի գործած վայրագությունների մասին: Առճակատման պատճառ համարելով արևմտահայերի անհանդուրժելի վիճակը, նա ուշադրությունն, այդուհանդերձ, հրավիրում է ավելի կարևոր՝ պետական պաշտոնյայի հրամանատարությամբ գործող, զինված ուժերի

²⁶² Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, (այսուհետև՝ ԳԱԹ). ֆ. Ա. Չոպանյանի, բաժին III, վավ. 6191:

²⁶³ D. Cochen, նշվ. աշխ., էջ 1:

²⁶⁴ Նույն տեղում, էջ 5-6, 22:

միջամտության հանգամանքի վրա, «որոնք խաղաղությունը վերականգնելու պատրվակով սպանում էին և կողոպտում»: Ի վերջո, «Սասունում հաստատվել է կարգ ու կանոն, բայց այդ կարգ ու կանոնն այնտեղ հաստատվել է, որովհետև այնտեղ այլևս գոյություն չունի ո՛չ մի կանգուն տուն, որովհետև ո՛չ մի բնակիչ այլևս կենդանի չէ»,– եզրակացնում է նա²⁶⁵:

Կոշենը ներկայացնում է Կոստանդնուպոլսում և Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում տեղի ունեցած կոտորածների ահարկու տեսարանները, չի վարանում ընդգծել, որ մարդկանց հիշողության մեջ դրանք վերակենդանացնում են վաղեմի ժամանակների, բարբարոսական երկրների պատմությանն առնչվող եղելությունները: 1896 թ. Տրապիզոնի «նշանավոր և սոսկալի» կոտորածը, ըստ նրա՝ «սարսափելիության առունով գերազանցել է մյուս բոլորին»: Ընդհանուր առմամբ, ինչպես նա բազմիցս նշում է, Օսմանյան կայսրությունում մոլեզունում է «ահաբեկչություն և հանցագործություն սփռող սարսափելի վարչակարգ», «կանխամտածված ձևով կյանքի կոչված զազրելի համակարգ»²⁶⁶:

Հայկական կոտորածները Կոշենը, փաստորեն, դիտում է իբրև օսմանյան կառավարության՝ վաղուց ի վեր հայերի նկատմամբ կիրառած քաղաքականության տրամաբանական շարունակություն: Նրա տեսադաշտից չեն վրիպել թուրքական կառավարության կողմից հայկական դպրոցների փակման, եկեղեցիների գործունեության արգելման, հայերի նկատմամբ կիրառվող հալածանքների, նրանց ունեցվածքի կողոպուտի, գանձվող՝ զարհուրելի չափերի հասնող հարկերի իրողությունները, որոնցով և պայմանավորում է հայերի ըմբոստությունը:

Առանձնահատուկ կարևորություն տալով այս հարցին, Կոշենը հանգամանորեն քննարկում է 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած ցույցը և սուլթանին հղած նրանց հանրագրի պահանջները, որը բնութագրում է իբրև հնչակյան կուսակցության դրոշմը կրող՝ «հեղափոխական

²⁶⁵ Նույն տեղում, էջ 10, 40-41:

²⁶⁶ Նույն տեղում, էջ 46, 51, 89:

բնույթի փաստաթուղթ»։ Հաշվի առնելով օսմանյան պետության ղեկավարների շահարկած՝ այս հարցի ամբողջ կարևորությունը, պատգամավորների պալատի նիստում Կոշենը հրապարակում է փաստաթղթի բնագիրը, այն ենթարկում մանրակրկիտ վերլուծության և հավաստում, որ հանրագիրը ոչ միայն «խելահեղ հեղափոխականների» մտքի արգասիքը չէ, այլև չի պարունակում որևէ չափազանցություն։ «Ես մեծ կարևորություն եմ տալիս ձեզ դրան իրազեկելու հարցին,– դիմում է նա պատգամավորներին,– որովհետև թե հայերի դեմ ուղղված և թե՛ թուրքական իշխանությանը պաշտպանելու համար օգտագործվող հզոր փաստարկը հանգում է հետևյալին. բոլոր երկրներում կան հեղափոխականներ, նիհիլիստներ, անարխիստներ. նիհիլիստներ՝ որոնց թուրքական իշխանությունը հարկադրված է եղել ամենախիստ ձևով պատժել»²⁶⁷։

Լինելով չափավոր հայացքների տեր քաղաքական գործիչ, խորհրդարանական նիստերի դահլիճում տեղ զբաղեցնելով աջ պատգամավորների կողքին, Կոշենն ազնվորեն հայտարարում է հեղափոխականների հանդեպ տածած իր անհամակրալից վերաբերմունքի մասին, սակայն «կառավարությունները,– շարունակում է նա,– հնձում են այն, ինչ ցանում են, և եթե նրանք ձգտում են խաղաղության՝ վստահություն չահելու և ազատություն ընծեռելու միջոցով պարտավոր են քաղաքացիների խաղաղությունն ապահովելու ցանկություն դրսևորել։ Ես կարծում եմ, որ երբ նրանք, դրա փոխարեն, ի վիճակի են միայն ավերածություն սփռող ահաբեկչական իշխանություն հաստատել, ապա չպետք է տևական հնազանդություն ակնկալեն»²⁶⁸։ Կասկած չտածելով, որ հայ ժողովուրդը փոքր իսկ պատասխանատվություն չի կրում ստեղծված իրավիճակի համար, Կոշենը «հանցագործներ» է անվանում «նիսնց, ովքեր հղացել են *անհանգստություններ պատճառող ազգությանը բնաջնջելու հրեշավոր գաղափարը* (ընդգծումը մերն է – Վ. Պ.), նրանց, ովքեր ազատություններ տալով կրքերին՝ դիմել են զենքի»²⁶⁹։

²⁶⁷ Նույն տեղում, էջ 11։

²⁶⁸ Նույն տեղում։

²⁶⁹ Նույն տեղում, էջ 30։

Ի վերջո, Հայոց ցեղասպանությունը Կոշենն ուղղակիորեն պատճառաբանում է « Հայկական հարցին՝ հայերին ոչնչացնելու միջոցով լուծում տալու (ընդգծումը մերն է – Վ. Պ.) սուլթանի մտադրությամբ, որը նա սկսել է կենսագործել»²⁷⁰ և այն պայմանավորում Օսմանյան կայսրության ղեկավարների՝ պետական մակարդակով իրականացրած քաղաքականությամբ: Խոսելով, օրինակ, Ուրֆայի կոտորածների մասին, նա առանց փոքր-իսկ այլևայլության ընդգծում է, որ ամեն ինչ կատարվում էր «իշխանությունների հրահրմամբ և օսմանյան կառավարության նողկալի մեղսակցությամբ»: Մեկ այլ առիթով, տալով ջարդերի ընդհանուր գնահատականը՝ նա նշում է. «այսպիսիք են այն արարքները, որոնք իրագործվել են թուրքական իշխանության աչքի առջև, նրա մեղսակցությամբ և օգնությամբ»²⁷¹:

Կոշենը քննադատական խոսքեր է ուղղում եվրոպական պետությունների ղեկավարների հասցեին՝ արևմտահայությանն օժանդակություն չցուցաբերելու պատճառով, հավաստում, որ եվրոպական ժողովուրդները քսան տարուց ի վեր ոչինչ չեն արել հայերի տառապանքներն անդքելու, նրանց իրենց հովանու ներքո վերցնելու համար, իսկ «քաղաքակիրթ տերությունների բարեհաճ թողտվությունը» ճանապարհ է հարթել բարբարոսական հանցագործությունների իրականացման համար: Փակուղուց ելնելու նպատակով՝ նա առաջարկում է «պաշտպանել ոչ թե միայն մեկ ազգի և կամ միայն նրա համար երաշխիքներ ու արտոնություններ պահանջել», այլ ոտքի հանել Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր դժբախտ հպատակներին ու բարենորոգել ամբողջ երկիրը²⁷²:

Համիդյան կոտորածների կազմակերպիչներին նշավակելու գործում, անկասկած, անուրանալի է Ֆրանսիացի սոցիալիստների, մասնավորապես, Ժան Ժորեսի և Ֆրանսիս դը Պրեսանսեի ներդրումը: XIX դարի վերջին Ֆրանսիայի քաղաքական երկնակամարում փայլատակում է սոցիալիստական և միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ,

²⁷⁰ Նույն տեղում, էջ 39:

²⁷¹ Նույն տեղում, էջ 25-26:

²⁷² Նույն տեղում, էջ 30:

բոցաշունչ հռետոր ժան ժորեսի (1859-1914) անունը: Անշուշտ, նրա՝ իբրև 1905 թ. ի վեր ֆրանսիական սոցիալիստական միասնական կուսակցության ղեկավարի, «Յունամիտե» սոցիալիստական լրագրի հիմնադրի (1904) քաղաքական գործունեության հիմնական դրվագները դեռ առջևում էին: Այդուհանդերձ, 1885-1889, 1893-1898 թթ. լինելով Ազգային ժողովի պատգամավոր, ժորեսը ծավալել է բեղուն քաղաքական գործունեություն, որն ընդգրկել է բազմազան ոլորտներ: Այս առիթով նրա հակիրճ, սակայն դիպուկ գնահատականը տվել է ֆրանսիական սոցիալիստական շարժման պատմության խոշոր գիտակ ժան Բրյուսան. «Զե՞ որ ժորեսն առաջին հերթին գործունյա մարդ էր կամ ավելի ստույգ՝ բարձրաշնորհ քարոզիչ, մարդ, ով պայքարում էր օրեցօր, հռետոր, լրագրող, ով լուր ստանալուց անմիջապես հետո պետք է ելույթ ունենար, չնայած այն բանին, որ նրան, բնականաբար, դեռ հայտնի չէին այս կամ այն իրադարձության բոլոր կողմերը, որոնց առիթով հարկ էր գրավել որոշակի դիրքորոշում»²⁷³:

Հիրավի, առաջին իսկ հպանցիկ ծանոթությունը ժորեսի՝ 1896-1897 թթ. ելույթներին մեզ հանգեցնում է այն հանոզման, որ եվրոպայում տեղի ունեցող և ոչ մի նշանակալից՝ այդ թվում եվրոպական պետությունների գաղութատիրական քաղաքականությանն առնչվող իրադարձություն, չի վրիպել նրա աչալուրջ հայացքից: Ժորեսը, ով այս ժամանակաշրջանում արդեն հետևողականորեն դատապարտում է գաղութատիրության կործանարար հետևանքները, բնականաբար, չէր կարող շրջանցել այնպիսի մի արտառոց և անմախաղեպ եղելություն, ինչպիսին էր Հայոց ցեղասպանությունը, որին նվիրված ելույթները նրա քաղաքական գործունեության անքակտելի մասն են կազմում: Ուստի՝ պատահական չէ, որ ի շարս՝ մեծ հռետորի անողոք քննադատությանը ենթարկված՝ եվրոպական տերությունների գաղութատիրական քաղաքականությանն առնչվող հիմնահարցերի, խորհրդային ականավոր պատմաբան Ալբերտ Մանֆրեդը հիշատակում է նաև Հայոց ցեղա-

²⁷³ Ж. Брюа, Жан Жорес и колониальная проблема. – Французский ежегодник – 1958, М., 1959, с. 59.

սպանության կազմակերպիչների խարազանման իրողությունը, մասնավորապես, ընդգծելով, որ ժորեսը «զայրույթով էր նշավակում հայերի կոտորածներն ու բնաջնջումը թուրքական սուլթան Աբդուլ Յամիդի կողմից»²⁷⁴:

Ժորեսի դիրքորոշման պարզաբանման համար խիստ հատկանշական է մեծ աղմուկ հարուցած «Հայերի կոտորածները» թեմայով ելույթը, որով 1896 թ. նոյեմբերի 3-ին նա հանդես է եկել Ազգային ժողովում: Ժորեսը, ում այդ քննարկմանը մասնակցելու առաջարկությամբ դիմել է Սապահ-Գյուլյանը, տալով իր համաձայնությունը՝ խնդրել է վերջինիս իրեն տրամադրել հայ ժողովրդի անցյալին վերաբերող տեղեկություններ և նրա աջակցությամբ ծանոթացել անհրաժեշտ գրականության, այդ թվում Վ. Լանգլուայի աշխատասիրությամբ լույս ընծայված՝ հայ պատմիչների (Խորենացու, Եղիշեի և այլոց) գործերի թարգմանություններն ամփոփող ժողովածուին²⁷⁵:

Իր ելույթում նկարագրելով հայկական վեց վիլայեթում տեղի ունեցող կոտորածները, որոնք, ըստ նրա՝ հազիվ թե կարող էին նախադեպ ունենալ, ժորեսը մատնանշում է. «Այլևս փոքր խմբերով չէ, որ կոտորում էին, այլ քաղաքներում՝ մեկ օրում 3000 և 4000 զոհից բաղկացած ստվար զանգվածներով՝ շեփորի հնչյունների ներքո, դատավճռի իրականացման կանոնավորությամբ»²⁷⁶: «Ամենանողկալի կոտորածների»²⁷⁷ մանրամասները նրան հանկարծակիի են բերել, և այդ վայրագություններից ապշահար՝ ժորեսը հայտարարում է. «Ինձ թվացել է, թե այդ հեռավոր և դժնդակ արևելյան երկնակամարում հառնել են Երեսնամյա պատերազմի բոլոր սարսափները»: Այդուհանդերձ, նրա խորագնին հայացքն անմիջապես թափանցել է եղելության եության մեջ: «Էականը, նշանակալիցը՝ մարդկային

²⁷⁴ А. З. Манфред, Жан Жорес – борец против реакции и войны (к столетию со дня рождения). – А. З. Манфред, Очерки истории Франции XVIII-XIX вв. Сборник статей, М., 1961, с. 412.

²⁷⁵ Ս. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 173:

²⁷⁶ Œuvres de Jean Jaurès. Pour la paix. T. I. Les alliances européennes (1887-1903). Textes rassemblés, présentés et annotés par Max Bonnafous, Paris, 1931. p. 125.

²⁷⁷ Ելույթ տեղում, էջ 126, 132, 159:

վայրագության սանձագերծումը, վերակենդանացումը չէ այն-տեղ: Էականը հենց այն է, որ այն զարթոնք է ապրել ոչ թե տարերայնորեն, այլ հրահրվել է, քաջալերվել գործող օրենքները հարգող կառավարության կողմից»: Այդ իսկ պատճառով, ջարդերի ամբողջ պատասխանատվությունը նա բարդում է Աբդուլ Չամիդի վրա, ով «կազմակերպել է, ղեկավարել կոտորածները»²⁷⁸:

Զբավարարվելով այս փաստի արձանագրմամբ, ժորեսը մեծ հմտությամբ և խորաթափանցությամբ ի հայտ է բերել Աբդուլ Չամիդի հայատյաց քաղաքականության ակունքները, Չայոց ցեղասպանության սանձագերծումն իրավացիորեն պատճառաբանել բալկանյան որոշ երկրների՝ օսմանյան լծի թոթափմամբ, որից երկյուղած սուլթանը մեծ մտավախություն է դրսևորել հայերի առաջադրած պահանջների նկատմամբ: Ըստ նրա իրատեսական մեկնաբանության՝ ի վիճակի չլինելով բարենորոգումների միջոցով արդարացի վարչակարգ հաստատել, կայսրության տարածքային ամբողջականության հնարավոր մասնատումը կանխելու մտադրությամբ, Աբդուլ Չամիդը գերադասել է դիմել Չայկական հարցի լուծման ուժային տարբերակին: «Նա կարծել է, պարոնայք, և կարծել է իրավամբ, – ընդգծում է ժորեսը, – որ այս ծրագիրն ավարտին հասցնելու համար հարկ է, որ ինքը Եվրոպային կատարված փաստի՝ իրագործված կոտորածի առջև կանգնեցնի: Նա տեսել է, թե ինչպես է Եվրոպան վարանում, որքան է նա անվճռական, տարածայնություններով բզկտված և մինչ կոտորածի եռուն շրջանում՝ հիրավի տարանջատված ու անզոր դեսպանները նրան ձանձրացնում էին մարդասիրությանը և բարենորոգումներին վերաբերող ծիծաղելի խոսակցություններով, նա դաշույնի միջոցով ավարտին էր հասցնում բնաջնջումը՝ *ծերբազատվելու համար Չայկական հարցից* (ընդգծումը մերն է – Վ. Պ.)»²⁷⁹: Ակնհայտ է, որ ինչպես և Կոչենը, ժորեսը սակավաթիվ ժամանակակիցներից է, ով ամբողջ խորությամբ ըմբռնել է արևմտահայության ողբերգության

²⁷⁸ Նույն տեղում, էջ 125:

²⁷⁹ Նույն տեղում, էջ 126:

գլխավոր պատճառը, այն է՝ Հայկական հարցը՝ հայերին ոչնչացնելու միջոցով լուծելու Աբդուլ Համիդի նախընտրած միակ հնարավոր եղանակի բուն էությունը:

Սուլթանի որդեգրած քաղաքականությունն, ի վերջո, ինչպես 1896 թ. նոյեմբերի 11-ին «Դեպեշ դը Տուլուզ» լրագրում լույս ընծայած «Նոր փաստ» հոդվածում հավաստել է ժորեսը, հանգեցրել է այն բանին, որ «երկու տարուց ի վեր ավելի քան հարյուր հազար մարդ է կոտորվել, բռնությունների ենթարկվել, խոշտանգվել»²⁸⁰: Ելնելով իրականության անսքող պատկերից, նա եզրակացրնում է. «Հայաստանը գտնվում է վայրագությունների իրագործող վարչակարգի տիրապետության ներքո, որոնց հետ, հայտնի չէ, թե արդյո՞ք համեմատելի են մոնղոլների ասիական բռնությունները»²⁸¹:

Ընդհանուր առմամբ, ժորեսի՝ հայկական կոտորածները շոշափող բոլոր ելույթներին բնորոշ է ոչ թե փաստերի խճողումը կամ սոսկ թվարկումը, այլև, հռետորական կրքից բացի²⁸², պատշաճ մակարդակով իրադարձությունների հանդեպ դրսևորած վերլուծական մոտեցումը²⁸³: Ինչ վերաբերում է նրա քննարկած

²⁸⁰ Նույն տեղում, էջ 136: Նշենք, որ 1896 թ., մեկ այլ առիթով, հավանաբար, ավելի ստույգ տվյալներ ստանալուց հետո, նա «Աբդուլ Համիդի հրամանով և մասնակցությամբ ոչնչացված հայերի թիվը» հասցնում է 200000 մարդու: Տե՛ս Ж. Жорес, Против войны и колониальной политики. Редакция и вступительная статья А. З. Манфреда, М., 1961, с. 115:

²⁸¹ Œuvres de Jean Jaurès, p. 136.

²⁸² Հր. Աճառյանը, որը Փարիզում մասնակցել է ժորեսի՝ հայկական կոտորածներին նվիրված ելույթներից մեկին, այն բնութագրել է իբրև «հույակապ»: ժորեսն, ըստ նրա՝ «առյուծի պես թռավ տեղից և իր որոտալի ծայնով այնպիսի մի ճառ սկսեց, որ ամբողջ հասարակությունը ցնծալի ծափերով ողջունեց»: Տե՛ս Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1969, էջ 176: ժորեսի՝ 1896 թ. նոյեմբերի 3-ի ելույթին բարձր գնահատական է տվել Մ. Վարանդյանը՝ ամվանելով այն «ընդարձակ ու մտրակող» ճառ, որը «ճշմարիտ փոթորիկ մը հանեց պարլամենտական և կառավարական շրջաններուն մեջ» (տե՛ս Մ. Վարանդեան, Եշվ. աշխ., էջ 192): Ըստ նրա՝ «Ֆրանսական սոցիալիզմի պարագլուխը այն օրերեն ի վեր դարձավ Ֆրանսայի հայանպաստ շարժման սյուներեն մեկը, անոր ամենեն հեղինակավոր ներկայացուցիչը, Պրեսանսեին հետ»: Տե՛ս նույն տեղում:

²⁸³ Արժեվորելով, օրինակ, ժորեսի՝ 1896 թ. նոյեմբերի 3-ի ելույթը, Սապահ-Գուլյանը նշել է. «ժորեսի այդ օրվա ճառը կմնա մի գլուխգործոց՝ մարդկային լեզվի ճարտարախոսության մեջ: Դեմոսթենես, Ցիցերոն ունեն

հարակից հարցերին, ապա առաջին հերթին նկատելի է արևմտահայության հանդեպ եվրոպական տերությունների և, մասնավորապես, Ֆրանսիայի ղեկավար շրջանների անկարելից վերաբերմունքի անողորք քննադատությունը: Ընդդիմության մեջ գտնվող սոցիալիստը չէր կարող լռությամբ շրջանցել՝ արևմտահայերի ճակատագրում, փաստորեն, կործանանար նշանակություն ունեցած այս էական հանգամանքը, որը, հիրավի, նրա գրեթե այն բոլոր ելույթների առանցքում է, որոնցում, գուցե և հարևանցիորեն, քննարկվել են Հայոց ցեղասպանությանն առնչվող զանազան հարցեր²⁸⁴:

1896 թ. նոյեմբերի 3-ի ելույթում բանավիճելով Արտաքին գործերի նախարարի հետ, հայկական կոտորածների հարցում ժորեսը նրա ուշադրությունը հրավիրել է ոչ միայն սուլթանի, այլև Եվրոպայի կրած պատասխանատվության վրա: Քանի որ մեծ տերությունները չեն կատարել Բեռլինի վեհաժողովի պայմանագրով ստանձնած պարտականությունները, նա արևմտահայերին համարել է «եվրոպական բանասրկության զոհեր»²⁸⁵: Դեռ ավելին, Ֆրանսիական կառավարությանը, որը չի կամեցել բողոքի որևէ խոսք ուղղել ջարդարարների հասցեին, նա բնորոշում է իբրև «լիակատար բնաջնջման» «մեղսակից»: Թեպետ ժորեսի այս հայտարարությունն առաջ է բերել միստի նախագահի ընդվզումը, որը նրանից պահանջել է հրաժարվել այդ

հրաշակերտներ, բայց նրանցից և ոչ մեկը հաջողել է այնպիսի կենդանի պատկեր տալ, ինչպես արավ ժորեսը Սասունի 1894-ի ժողովրդական ապստամբության և կռվի իրադարձությունները ներկայացնելիս... Հայ հեղափոխականները, մեր նահատակները, մեր Ս. Գործը երբեք ավելի բարձր թարգման չէին կարող ունենալ»: Տե՛ս Ս. Սպալահ-Գյուլյան, *Մշվ. աշխ.*, էջ 174, 175: Ըստ Պ. Քիառի հավաստման՝ ժորեսի այս ելույթը եղել է «հիասքանչ»: Տե՛ս P. Quillard, *La Quinzaine // "Pro Armenia"*. 10 août 1901.

²⁸⁴ Տե՛ս օրինակ 1897 թ. փետրվարի 22-ին Ազգային ժողովում արտասանած «Կրետեի իրադարձությունները» ելույթը: Նշենք, որ Ե. Գասպարյանի կողմից իբրև «հայկական կոտորածներին» նվիրված «բուռն ճառ» բնութագրվող այս ելույթը Հայոց ցեղասպանությանը չի աղերսվում, թեև դրանում ևս հանդիպում ենք այդ հարցին նվիրված որոշ դիտարկումների: Տե՛ս Ե. Ա. Գասպարյան, *Հայաստանի արևմտահայերի և Առաջին աշխարհամարտի տարիներին*, էջ 9-10 (հմմտ. ժորեսի ելույթի բնագրի հետ՝ *Œuvres de Jean Jaurès*, p. 140-147):

²⁸⁵ Նույն տեղում, էջ 123:

բառից, քանզի, նրա համոզմամբ՝ հայկական կոտորածների հարցում ֆրանսիական կառավարությունը որևէ մեղսակցություն չի ունեցել, աննկուն հռետորն, այնուամենայնիվ, մնացել է անասան. «Եթե ես կարողանայի, պարոնայք,— դիմում է նա պատգամավորներին,— ակնթարթորեն վերացնել վերջին երեք տարվա պատմության ընթացքում մեր բոլորի վրա բարդվող պատասխանատվությունները, որքան դյուրին կլիներ ինձ համար... հրաժարվել իմ միտքն արտահայտող այդ բառից, մի բան, որը շատ վաղուց արած կլինեի»²⁸⁶:

Անձ տերություններին բնորոշ անվճռական վարքագիծը ժորեսը, վերջին հաշվով, պատճառաբանել է նրանց միջև առկա տարածայնություններով, նրանց հատուկ «նկրտումներով, նախանձով, ամոթալի եսասիրությամբ», որոնց հետևանքով նրանք «թուլատրել են կոտորել մի ամբողջ ժողովրդի»²⁸⁷:

Ժորեսը մանրամասն քննության է ենթարկել ոչ միայն Ֆրանսիայի, այլև նրա դաշնակից Ռուսաստանի՝ Հայկական հարցում գրաված պարսավելի դիրքորոշումը: Նա ինքնակալությանը մեղադրել է Հայաստանն էլ ավելի թուլացնելու մտադրությամբ՝ տեղի ունեցող եղեռնական անցքերին միջամտելուց գիտակցաբար ձեռնպահ մնալու համար, որը կարող էր նրան հնարավորություն ընձեռել հետագայում շատ ավելի դյուրությամբ իր տիրապետությունը հաստատել այդ երկրում, իսկ Ֆրանսիային՝ իր դաշնակից Ռուսաստանին սիրաշահելու նպատակով «Դեղին գրքի» հրատարակությունը հետաձգելու համար²⁸⁸: «Երեք տարուց ի վեր,— հայտարարում է նա,— ֆրանսիական կառավարությունն արևելյան գործերի շուրջ լռություն է պահպանում: Նա անտարբեր է մնացել հայ ժողովրդի կոտորածի, սպանդի, նրա հանդեպ կիրառվող բռնությանն ի տես,

²⁸⁶ Նույն տեղում, էջ 133: Ժորեսի ելույթի բնագրին անձանոթ Ջ. Կիրակոսյանը, հիմնվելով Սապահ-Գյուլյանի հաղորդած անստույգ տեղեկությունների վրա, խնդրո առարկա երկխոսությունը ներկայացրել է խեղաթյուրված ձևով: Ըստ նրա՝ ժորեսն իբր հայտարարել է, թե «պատրաստ է ետ վերցնելու իր ասածը, եթե Ֆրանսիան ջնջի վերջին չորս տարիների իր պատմությունը»: Տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 97:

²⁸⁷ Œuvres de Jean Jaurès, p. 127.

²⁸⁸ Նույն տեղում, էջ 131:

ժողովուրդ, որը նախկինում մեր երկրի մասին հավատով ու հարգանքով էր խոսում»²⁸⁹: Ժորեսը խիստ քննադատել է նաև ֆրանսիական մամուլը՝ պահպանած «կատարյալ լռության» համար, որի «մի մասին,– ինչպես նա նշում է,– ուղղակիորեն կամ անուղղակիորեն, լռակյացության համար վճարել են»²⁹⁰:

Արևմտահայության ճակատագրի հանդեպ ի հայտ բերած անկարեկից վերաբերմունքի համար ժորեսը պախարակում է երրորդ հանրապետության ղեկավարներին. «Այդ դուք եք, որ տարիների ընթացքում առնվազն անտարբերությամբ ու թուլակամորեն դարձել եք խառնակության և անկարգությունների բոլոր պատճառների խորացման դիտորդը, այդ դուք եք, որ ժամանակին հայերի համար փութաջանորեն բարենորոգումներ չեք պահանջել, այդ դուք եք, որ թույլատրել եք ոչնչացնել այս ժողովրդին»²⁹¹: Մեկ այլ առիթով, այս փաստերի հիման վրա, ժորեսն Աբդուլ Չամիդին անվանում է ֆրանսիական կառավարության և Արտաքին գործերի նախարարության ղեկավարների «բարեկամ»²⁹²: Նրա համոզմանը՝ «Եվրոպայի մեղսակցությունը» մեծապես քաջալերել է սուլթանին²⁹³:

Ժորեսն անդրադարձել է նաև մեծ աղմուկ պատճառած՝ Օսմանյան կայսրության մասնատման խնդրին, որի ծագումը պայմանավորում է «պարզապես այն փաստով, որ սուլթանի իշխանության ներքո համախմբված տարբեր ժողովուրդներն այնտեղ (կայսրությունում – Վ. Պ.) անհրաժեշտ երաշխիքներ չեն ունեցել: Արևելյան հարցը կրկին կյանքի է կոչվել, որովհետև հայ ժողովուրդը կոտորվել է»,– հավաստում է նա²⁹⁴: Սակայն, ի վերջո, ինչպես արևմտահայությանը սատարած ժամանակի գրեթե բոլոր ֆրանսիացի գործիչները, ժորեսը ևս սահմանափակվել է սոսկ իր համաձայնությունը հայտնելով Չանոտոյի՝ օսմանյան հարցի վերջնական կարգավորմանը վերաբերող այն առաջարկության հետ, ըստ որի՝ սուլթանը պարտավոր է ընդունել

²⁸⁹ Նույն տեղում, էջ 139:

²⁹⁰ Նույն տեղում, էջ 132:

²⁹¹ Նույն տեղում, էջ 141:

²⁹² Նույն տեղում, էջ 150:

²⁹³ Նույն տեղում, էջ 168:

²⁹⁴ Նույն տեղում, էջ 140:

նել կայսրության բոլոր ժողովուրդների համար նախապատ-
րաստված բարենորոգումների ծրագիրը, քանզի հակառակ
դեպքում կծագի «դրանք նրան պարտադրելու» միջամտության
անհրաժեշտությունը: 1897 թ. փետրվարի 22-ին պատգամավոր-
ների պալատում ունեցած ելույթում նա սոսկ կսկիծ է հայտնել,
որ նման քաղաքականությունը որդեգրվել է «շատ մեծ
ուշացումով»²⁹⁵:

Հայ ժողովրդին մեծ հետևողականությամբ և կրքոտու-
թյամբ սատարած ֆրանսիացի քաղաքական գործիչների թվում
է Սարգու իրավունքների լիգայի նախագահ, Ազգային ժողովի
պատգամավոր Ֆրանսիս դը Պրեսանսեն, ով Հայկական հար-
ցով սկսել է հետաքրքրվել ավելի վաղ, քան շատ այլոք: Տարբեր
ատյաններում ցեղասպանության կազմակերպիչների դատա-
պարտմամբ բազմիցս հանդես եկած Պրեսանսեի առաջին
հոդվածը, որը նախորդել է փաստաթղթերի տարբեր ժողո-
վածուների, այդ թվում «Դեղին գրքի» լույս ընծայմանը, նրա
հետագա ելույթներից զանազանվում է իրադարձություններին
տրված մեկնաբանությունների հարցում հեղինակի դրսևորած
չափավոր մոտեցմամբ, որն, անկասկած, պայմանավորված է
եղել կոտորածներին վերաբերող անհրաժեշտ տեղեկա-
տվության բացակայությամբ, հեղինակի անբավարար իրա-
զեկությամբ²⁹⁶:

Պրեսանսեն համառոտակի անդրադարձել է համիդյան
ջարդերի ամենացույց ղրվագներին, ընդհանուր գծերով ներ-
կայացրել 1894 թ. Սասունի «վայրագ» կոտորածը, որը տեղի էր
ունենում «գերագույն իշխանությունների հրամանով և նրանց
աչքի առջև»: Հավանաբար, տակավին որևէ հստակ պատկերա-
ցում չունենալով, թե ովքեր են մարմնավորում «գերագույն
իշխանությունները», նա շարունակում է. «Ասվել է, որ վերից
հրահանգ է տրվել այս տարածաշրջանների հայերին բնաջնջե-
լու մասին: Անկախ այն բանից, թե որ կողմ է շրջվում հայացքը,

²⁹⁵ Նույն տեղում, էջ 142:

²⁹⁶ F. de Pressencé, La Question arménienne // "Revue des deux mondes", 3^e
livraison. 1^{er} décembre 1895.

ի հայտ են գալիս միայն դահիճներ՝ բայց ոչ հովանավորներ կամ դատավորներ»²⁹⁷:

Միևնույն զուսպ վերաբերմունքն է նա դրսևորում 1895 թ. Կոստանդնուպոլսում հայերի կոտորածների գնահատման հարցում. «Շատ հավանական է, որ իշխանությունները փակել են աչքերը, եթե չասենք, որ շարժման գլուխ են անցել: Արդյո՞ք հարկ է հավատ ընծայել բարբարոսական մաքիավելիակա-նությանը ոգեշնչվելու հանգամանքին և ելըզ-Քյոշքից տրված նշանաբանին: Հայերն այդ են պնդում, բայց անհերքելի փաստերը չեն բավականացնում»: Այսպես, անհրաժեշտ սկզբնաղբյուրների սակավության պատճառով Պրեսանսեն սահմանափակվել է ընդհանուր բնույթի դիտողություններով, որոնք, հարկավ, բավական հեռու են քննարկվող հարցերին սպառիչ մեկնաբանություններ տալուց: Այդուհանդերձ, նա անվարան մատնացույց է արել ծայր առած վայրագությունների սանձահարման հարցում օսմանյան կառավարության՝ իր կարծիքով դրսևորած անզորությունը²⁹⁸:

Հաջորդ տարիներին աճել է Պրեսանսեի հետաքրքրությունը հայերի և քրիստոնյա այլ ժողովուրդների հանդեպ օսմանյան կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության նկատմամբ: Ծանոթությունը զանազան փաստաթղթերի ժողովածուներում հրապարակված վավերագրերի հետ նպաստել է կոտորածների չափերի, ընթացքի և դրանց կազմակերպիչների մասին ամբողջական պատկերացումների ձևավորմանը: Այդ մասին է վկայում Հայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում նրա դիրքորոշման կրած էական փոփոխությունը: Թե՛ ֆրանսիական խորհրդարանում և թե՛ այլ միջավայրերում բազմիցս մասնակցելով համիդյան կոտորածների շուրջ ծայր առած քննարկումներին և ունենալով մերկացուցիչ ծավալուն ելույթներ, XX դարի սկզբին նա հանդես է գալիս արդեն իբրև թուրք ջարդարարների և առաջին հերթին Աբդուլ Համիդի հետևողական դատափետող:

1903-1904 թթ. Պրեսանսեն պարբերաբար լուսաբանում է

²⁹⁷ Նույն տեղում, էջ 675:

²⁹⁸ Նույն տեղում, էջ 683-684:

հայկական կոտորածները, դրանք բնութագրում իբրև Հայաստանում «ահռելի չափերով» տեղի ունեցած «գարհուրելի ողբերգություն»²⁹⁹: Պատգամավորների պալատում ունեցած զանազան ելույթներում նա մանրագնին քննարկում է 1894-1896 թթ. Սասունի և Սուշի ջարդերը, հայերի անհնազանդությունը մեկնաբանում այն բանով, որ ոչ միայն Բարձր Դռան հովանավորությունը հայցող նրանց դիմումներն են մնացել անարձագանք, այլև իշխանությունների ներկայացուցիչներն են եռանդազին ջանքեր գործադրել նրանց ունեցվածքը կողոպտելու հարցում: Դրան հետևել է «մարդասպան զորավար» Ջեքի փաշայի գլխավորությամբ գործող զորքերի միջամտությունը, որը հանգեցրել է «սարսափազդու ողբերգության ծավալմանը»³⁰⁰:

Տալով XIX դարի 90-ական թթ. կոտորածների ընդհանուր գնահատականը, Պրեսանսեն, Փարիզում կայացած 1903 թ. փետրվարի 15-ի ելույթում հայտարարում է. «Քաղաքակիրթ աշխարհին հատկապես շանթահարում է հենց այն, որ խոսքը ժողովրդի մոլեռանդության հանկարծահաս ժայթքմանը չէ վերաբերում: Ո՛չ, դա կազմակերպված բարբարոսություն էր, քանզի մեծ մարդասպանի դրոշմը կրող սուլթանի աչքի առջև կոտորածը սկսվում և ավարտվում էր ստույգ ժամի, վերսկսվում՝ երբ դրան վերաբերող հրաման էր արձակվում՝ արյունամերկ անելով մի ամբողջ երկրամաս՝ սկսած Վանա լճի ափերից մինչև Կոստանդնուպոլիս»³⁰¹:

1904 թ. Սասունում հայերի ըմբոստության պատճառ Պրեսանսեն համարում է ժողովրդի տառապալից վիճակը և այն վիատությունը, որի մեջ նրան նետել էր «արևմտյան դիվանագիտությունը», հանգամանք, որը սասունցիներին դրդել էր «անհրաժեշտ դիմադրություն» կազմակերպել³⁰²: Հիմնվելով ֆրանսիացի դիվանագետների գրագրությունների վրա, նա Հայոց ցեղասպանության ամբողջ պատասխանատվությունը բարդում է օսմանյան կառավարության և անձամբ Աբդուլ

²⁹⁹ Pour l'Arménie et la Macédoine, p. 85, 93.

³⁰⁰ Sassoun et les atrocités hamidiennes. Genève, 1904. p. 13, 14.

³⁰¹ Pour l'Arménie et la Macédoine, p. 23.

³⁰² F. de Pressencé, Les massacres d'Arménie // "Pro Armenia". 1^{er} juin 1904.

Համիդի վրա, քանզի, ըստ նրա՝ գրեթե մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը տեղի է ունեցել համաձայն վերջինիս հրահանգների³⁰³, որին բնութագրում է «մեծ մարդասպան», «Հայաստանի դահիճ», «թագակիր դահիճ», «Ելդըզ Քյոչքի մենակյաց, որի ձեռքը կարմրագունել է արյունից» պիտակներով³⁰⁴: Ինչպես տեսնում ենք, 1900-ական թվականների սկզբին արդեն, նա Հայոց ցեղասպանությունը դիտում է իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձություն, որը վկայում է նրա հայացքների ակնհայտ էվոլյուցիայի մասին:

Ինչպես և ժորեսը, Պրեսանսեն կրքոտությամբ դատապարտում է եվրոպական տերությունների, այդ թվում Ֆրանսիայի ամոթաբեր վարքագիծը Հայկական հարցում, որը դարձել է «1896 թ. կոտորածների անգործունյա, եթե ոչ անտարբեր ականատեսը»³⁰⁵: Ըստ նրա՝ 300000 հայի կոտորածի պատասխանատվությունը միանշանակորեն կրում է եվրոպան³⁰⁶: Ինչ վերաբերում է ֆրանսիական կառավարության քաղաքականության քննադատությանը, ապա՝ Պրեսանսեն մեղադրում է, մասնավորապես, Հանոտոյին՝ ամենակարևոր դիվանագիտական վավերագրերը «Ղեղին գրքում» աղճատված գետեղելու համար, ինչը հանգեցրել է իրականության ամբողջական պատկերի խեղաթյուրմանը³⁰⁷: Պրեսանսեն շատ ավելի անողոք է նախարարի քաղաքականության ընդհանուր գնահատականի հարցում, քանզի նրա համոզմամբ՝ Հանոտոն «խաբեությունը վերածել է մեղսակցության»³⁰⁸:

Հայկական հարցն անվանելով «սուրբ գործ»³⁰⁹, Պրեսանսեն ջանքեր է գործադրում դրա լուծման լավագույն տարբերակը որոնելու ուղղությամբ և, ի վերջո, հանդես է գալիս

³⁰³ Sassoun et les atrocités hamidiennes. p. 15, 17.

³⁰⁴ Նույն տեղում, էջ 3; Pour l'Arménie et la Macédoine, p. 33, 38; F. de Pressencé, Les massacres d'Arménie.

³⁰⁵ F. de Pressencé, Asie Mineure // "Pro Armenia". 15 septembre 1904.

³⁰⁶ Sassoun et les atrocités hamidiennes. p. 17.

³⁰⁷ Pour l'Arménie et la Macédoine. p. 40.

³⁰⁸ F. de Pressencé, Les massacres d'Arménie.

³⁰⁹ F. de Pressencé, Asie Mineure: տե՛ս նաև Une lettre de M. Pressencé // "Pro Armenia". 15 avril 1904.

իբրև՝ դիվանագիտական ուղիներով եվրոպական մեծ տերու-
թյունների միջամտության կողմնակից: Վկայակոչելով 1904 թ.
Սասունում 21 գյուղի հրկիզման իրողությունը, նա այդ փաստն
ինքնին բավարար է համարում պահանջելու համար Եվրոպայի
և, մասնավորապես, Ֆրանսիայի հրատապ միջամտությունը³¹⁰:
Նա համոզված է, որ քաղաքակիրթ աշխարհն իրավասու չի իր
անտարբերությամբ երկրորդ անգամ թույլատրելու այս
դժբախտ ժողովրդի լիակատար արյունաքանությունը: «Ավելի
քան երբևէ, – շարունակում է նա, – ես համառորեն հավատում
եմ, որ բոլոր նրանք, ովքեր ստորագրել են Բեռլինի
պայմանագիրը և [Բարձր] Դռան կոնցեսիաների պատճառով չեն
կորցրել իրենց խիղճը, պետք է Կոստանդնուպոլսում համատեղ
քայլ ձեռնարկեն, որը բավական կլինի արյունահեղությունը
կասեցնելու համար»³¹¹:

Ինչպես տեսնում ենք, թե՛ Ժորեսը և թե՛ Պրեսանսեն եվրո-
պական պետությունների միջամտությունը սահմանափակել են
Բարձր Դռան վրա դիվանագիտական խողովակներով ճնշում
գործադրելու և արևմտահայության համար նախատեսված բա-
րենորոգումները նրան պարտադրելու շրջանակներում, շրջան-
ցելով, փաստորեն, օսմանյան իշխանությունների ներքին գոր-
ծերին զինված միջամտություն ցուցաբերելու հնարավորության
տարբերակը:

Այդուհանդերձ, կասկածից վեր է, որ Ժորեսի և Պրեսանսեի
բոցավառ ելույթները նշանակալից երևույթներ են ֆրանսիա-
կան քաղաքական դաշտում (առավել ևս եթե նկատի ունենանք,
որ դրանց մի մասը հնչել է Ազգային ժողովի ամբիոնից), որոնց
ճառագայթները լույս են սփռել այն քողի վրա, որով ֆրանսիա-
կան կառավարության թրքամետ քաղաքականությունն Օսման-
յան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններն
անջրպետում էր եվրոպական հասարակության լայն խավերից:

Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների բազ-
մազանությամբ աչքի է ընկնում հայտնի քաղաքական գործիչ,
պատգամավոր, կոմս Ալբեր դը Մունի (1841-1914) ելույթը, որով

³¹⁰ F. de Pressencé. Les massacres d'Arménie.

³¹¹ Նույն տեղում:

1896 թ. նոյեմբերի 3-ին նա հանդես է եկել Ազգային ժողովի նիստում³¹²:

Հայկական հարցն իրավամբ դիտելով իբրև «հիմնավորց և ահարկու» Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս³¹³, դը Մուները հակադրվում է եվրոպական հանրության շրջանում լայն տարածում գտած այն մտայնությանը, ըստ որի՝ օսմանյան կառավարությունն ի վիճակի չէ սանձահարել հայկական զանգվածային կոտորածներն իրականացնող արյունռուչտ բարբարոսների հրոսակախմբերի գործողությունները: Նա հիմնավորապես բացահայտում է Աբդուլ Համիդի դերն ու մասնակցությունը համիդիե զորամիավորումների կազմավորման գործում, որոնք կրելով նրա անունը, դրանով իսկ ստացել են «պաշտոնական ինվեստիտուրա»: «Ես կարդացել եմ,– հավաստում է նա,– որ հաջողության են հասել, մասնավորապես, քրդերից բաղկացած՝ կազմակերպված ջարդարարների հրոսակախմբեր ստեղծելու հարցում»³¹⁴:

Ընդգծելով Հայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով տեղի ունեցող գործընթացի բնույթը, դը Մուները մանրամասնորեն քննարկում է նաև կոտորածներն անմիջականորեն իրականացնողների դերն ու բազմիցս շեշտում ոչ միայն այլազգիներից (քրդեր, լազեր, չերքեզներ) բաղկացած համիդիե զորամիավորումների, այլև զափթիեների ու «սպաների հրամանատարությամբ գործող» կանոնավոր բանակի զինվորների դերը³¹⁵:

1896 թ. օգոստոսի 26-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կոտորածների առիթով, դը Մուները հիմնվելով «բոլոր ականատեսների» վկայությունների վրա, հավաստում է «մարդասպանների հրոսակախմբերի վերածված՝ թուրք բնակչության» մասնակցությունը հայերի բնաջնջմանը, որին նախապես զինել էին նմանատիպ մահակներով և այնքան լավ նախա-

³¹² Discours d'interpellations relatives aux événements d'Arménie // "Annales catholiques", 14 novembre 1896, N 1338.

³¹³ Նույն տեղում, էջ 81:

³¹⁴ Նույն տեղում, էջ 72:

³¹⁵ Նույն տեղում, էջ 72, 73:

պատրաստել այդ գործին, որ «տարօրինակ ներդաշնակությամբ կոտորածը Ստամբուլում սկսվում էր այն նույն ժամին, երբ Օսմանյան բանկի դեմ կատարված գրոհից հետո այն բռնկվում էր Ստամբուլից ահռելի տարածության վրա գտնվող Ղալաթիայում»³¹⁶:

Հայոց ցեղասպանության՝ իբրև վերից տրված հրահանգների հիման վրա իրականացված եղելության բնույթը դը Մուըը հաստատում է նաև նահանգներում օսմանյան պաշտոնյաների չարագուշակ դերի բացահայտմամբ: Այս հարցում նա ցուցաբերում է համակողմանի մոտեցում և վկայակոչում հավաստի փաստեր առ այն, թե ինչպես են օսմանյան պաշտոնյաներից ոմանք սատարել հայերին: Դրանով նա մեկ անգամ ևս ընդգծում է այն համզամանքը, որ ցանկության առկայության պարագայում, ցեղասպանության գործընթացը հնարավոր էր կանխել: «Իրավասու չենք ասելու, թե ավազակներին սանձահարելն անհնարին էր, թե պաշտոնյաները թույլ էին, անգոր: Ոչ, ամենուր, որտեղ ցանկություն է դրսևորվել այդ անելու՝ հաջողության են հասել: Եղել են մի քանի ազնիվ պաշտոնյաներ, որոնք դիմակայել են կոտորածներին... Եթե օսմանյան պաշտոնյաները դրսևորեին եռանդ և հաստատակամություն, կարող էին խոչընդոտել նվազագույնը կոտորածների գերակշռող մասի իրականացմանը»³¹⁷:

Հայոց ցեղասպանության՝ իբրև կանխամտածված եղելության փաստը դը Մուըը հիմնավորում է նաև օսմանյան պաշտոնյաների նկատմամբ կենտրոնական կառավարության որդեգրած վարքագծի բացահայտման միջոցով, ընդգծելով այն անառարկելի իրողությունը, ըստ որի և ոչ մի պաշտոնյա երբևէ որևէ պատժի չի ենթարկվել: «Ամենամեղավորները, ամենավարկաբեկվածները, – գրում է նա, – արժանացել են բարեհաճ վերաբերմունքի, պարգևատրվել են: Նրանցից ոմանց կանչել են Կոստանդնուպոլիս և մեծարել: Փոխարենը, նրանց, ովքեր իրենց պարտականությունն ամբողջությամբ չեն կատարել,

³¹⁶ Նույն տեղում, էջ 74:

³¹⁷ Նույն տեղում, էջ 73:

ովքեր ջանացել են դիմադրել՝ հանդիմանել են, պաշտոնանկ արել, երբեմն ենթարկել ավելի խիստ պատժի»³¹⁸:

Դը Մուսնն առանձնահատուկ ուշադրություն է հրավիրում արևմտահայության նկատմամբ օսմանյան իշխանությունների գործադրած զանազան բռնությունների վրա (խուզարկություններ, բանտարկություններ, աքսոր), որոնք շատերին հարկադրում էին որդեգրել տարագրության դժնդակ ճանապարհը և հանգրվանել այլ երկրներում: «Խոսքը վերաբերում է օջախից զուրկ և հուսալքված մի ամբողջ ժողովրդի աղետալի զանգվածային տարագրությանը», – եզրակացնում է նա³¹⁹: Այս հարցի մեկնաբանության ասպարեզում նրա դիրքորոշումն ընդգրկում է և անկողմնակալ: Դը Մուսնն առաջադրում է սպառնիչ բացատրություններ՝ հիմնավորապես մերկացնելով օսմանյան իշխանությունների ստոր գործելամիջոցները: Խոսքը վերաբերում է անելանելի կացության հետևանքով հայերի տարագրությանն առնչվող հարցում նրանց գրաված դիրքորոշմանը: «Արդարացնելու համար այս բոլոր սարսափները, Ամատուլիայի քաղաքներն են ուղարկվում հատուկ պաշտոնյաներ, – գրում է նա, – որոնք, ահաբեկչության և խոշտանգումների միջոցով, կոտորված բնակչության դժբախտ բեկորներից, սպառնալիքի տակ, կորզում են գրավոր հայտարարություններ, որոնցով նրանք ընդունում են, որ միակ, իրական մեղավորները հայերն են և, բախտի տարօրինակ քմահաճույքով, սուլթանին են հղում շնորհակալություններ այն հովանավորության համար, որը նրա կառավարությունը դրսևորում է իրենց հանդեպ»³²⁰:

Դը Մուսնն, ի տարբերություն իր բազմաթիվ ժամանակակիցների, անդրադառնում է հայկական կուսակցությունների, մասնավորապես, հնչակյանների գործունեությանը, որոնց նկատմամբ, ելնելով նրա ելույթից կարելի է հավաստել, որ համակրանքի նշույլ իսկ չի տածում: Այդուհանդերձ, նրանց, իր կարծիքով, անշրջահայաց գործողությունները «չեն արդարացնում այլոց վայրագությունը: Ի դեպ, – շարունակում է նա, –

³¹⁸ Նույն տեղում, էջ 74:

³¹⁹ Նույն տեղում, էջ 75:

³²⁰ Նույն տեղում:

հարկ է հարցին մոտենալ միանգամայն անկեղծ դիրքերից: Բռնություններին ձեռնամուխ լինելու համար թուրքերը չեն սպասել հնչակյան կոմիտեի կազմավորմանը և իրավասու ենք... լսելի դարձնել, որ հեղափոխական կազմակերպության կազմավորումն ավելի շուտ հակահարված էր, քան սադրանք»³²¹:

Հայերի ընդդիմությունը քննարկելով շատ ավելի լայն հենքի վրա, դը Մուլեն այն մեկնաբանում է նահանգներում՝ նրանց համար առկա «անհանդուրժելի» կացությամբ և վկայակոչում բազմաթիվ փաստեր, այդ թվում հղում է հայ ակամատեսների վկայությունները, հիմնավորելու համար Օսմանյան կայսրությունում արևմտահայության համար ստեղծված անելանելի վիճակը³²²:

Դը Մուլենի խորհրդածություններում որոշակի տեղ է զբաղեցնում մեծ տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ դրսևորած անտարբեր վարքագծի քննադատությունը: Ըստ նրա համոզման՝ Եվրոպան պարտավոր է միջամտել, քանզի Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածով ստանձնել է նման պարտավորություն: Նա կսկիծով է հավաստում, որ թեպետ այդ պահից ի վեր անցել է արդեն տասնութ տարի, տերություններն, այդուհանդերձ, ոչինչ չեն արել, բարենորոգումների իրականացման ուղղությամբ, որի արդյունքում անպատժելիության հետևանքով՝ տարիների ընթացքում բազմապատկվել են «անընդմիջելի չարաշահումներն» ու տառապանքները³²³:

Դը Մուլենը, սակայն, հանդես է գալիս ոչ միայն իբրև Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների կենսագործման ջերմեռանդ պաշտպան, այլև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման կողմնակից և հավաստում, որ «խաղաղության երաշխիքը» թաքնված է հենց դրանում³²⁴: Այնուամենայնիվ, նա գտնում է, որ կայսրության տարածքային ամբողջականության պահպան-

³²¹ Նույն տեղում, էջ 78:

³²² Նույն տեղում, էջ 78-80:

³²³ Նույն տեղում, էջ 80:

³²⁴ Նույն տեղում, էջ 82:

նունը կարող է խարսխվել միմիայն նրա «բնակիչների ապահովության» վրա, «մասնավորապես, նրանց, որոնց ազգությունը, կրոնը զանազանվում են իրենց տիրակալների ազգությունից և կրոնից»³²⁵:

Հայ ժողովրդին դը Մունը մատուցել է մեկ այլ մեծ ծառայություն ևս: Ինչպես արդեն նշել ենք, ժորեսի ու Կոչենի հետ մեկտեղ, նա պահանջել է Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արխիվի՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող վավերագրերն ամփոփող «Դեղին գրքի» լույս ընծայումը³²⁶, որն իրականացվել է մեկ տարի անց:

Մեր վերլուծած ելույթներն ակնբախ են դարձնում այն հետաքրքրությունը, որը հայկական կոտորածների սանձագերծման պահից ի վեր արևմտահայության ճակատագրի նկատմամբ դրսևորել են մի շարք ֆրանսիացի մտավորականներ և քաղաքական գործիչներ՝ հայ ժողովրդի պատմության ամենաօրհասական ժամանակաշրջաններից մեկում: Չնայած նրանք դավանել են միանգամայն տարբեր, երբեմն անհամատեղելի, քաղաքական հավատամքներ, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին խարազանելու, եվրոպական մեծ տերությունների, այդ թվում Ֆրանսիայի, ղեկավար շրջանների վարած թրջանետ քաղաքականության, հայ ժողովրդի գոյատևման հարցում նրանց ի հայտ բերած անտարբեր վերաբերմունքի քննադատության հարցերում ցուցաբերել են անկողմնակալ մոտեցում և հանուն արևմտահայության փրկության հանդես եկել, ընդհանուր առմամբ, միասնական դիրքերից, առաջադրել կոտորածների կասեցման զանազան տարբերակներ: Նրանցից ոմանք ելնելով քաղաքական նկատառումներից՝ իրենց ելույթներում արժարժվող հարցերը, ըստ անհրաժեշտության, օգտագործել են քաղաքական այս կամ այն ախոյանին կամ խմբակցությանը պախարակելու, անգամ տապալելու միտումից դրդված: Թեև նրանց ջանքերը, ցավոք, շոշափելի արդյունքների չեն հանգեցրել, այդուհանդերձ, անհետևանք չեն մնալ: Ցանկանում ենք, մասնավորապես, ընդ-

³²⁵ Նույն տեղում:

³²⁶ Նույն տեղում, էջ 71:

գծել այն մեծ դերը, որը նրանք ունեցել են համիդյան կոտորածների հավաստի պատկերը ֆրանսիական հասարակությանը ներկայացնելու գործում, որն ուրանալն անթույլատրելի է:

Բացի դրանից, հարկ ենք համարում չանտեսել մեկ այլ էական հանգամանք ևս: Դ. Կոշենի, Ժ. Ժորեսի, Ա. դը Մուենի և խորհրդարանային խմբակցության այլ պատգամավորների (Գ.-Ա. Յուրբար, Ա. Միլերան)³²⁷ Ազգային ժողովում ծավալած հայանպաստ գործունեությունը նշանավորել է Հայկական հարցի քննարկման նոր փուլ: Նրանց ջանքերի շնորհիվ Ֆրանսիայի օրենսդիր մարմնում 1896-1897 թթ. բազմիցս հավուր պատշաճի, հանգամանակից քննարկվել են համիդյան կոտորածներին առնչվող հարցերը, որոնց հետևել են մի շարք պատգամավորների՝ օրակարգով հաստատված՝ Արտաքին գործերի նախարարից բացատրություններ պահանջող հարցերը³²⁷, ինչը միանգամայն նոր երևույթ էր, առաջընթաց քայլ՝ Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը եվրոպայում հրապարակայնություն տալու ասպարեզում:

Ֆրանսիացի պատգամավորների գործունեությունն այս ասպարեզում հիրավի արժանի է դրվատանքի: 1896 թ. նոյեմբերի 3-ին Ազգային ժողովում Ժորեսի ելույթից հետո Կոշենը, Յուրբարը և դը Մուենը Հանոտոյից պահանջել են բացատրություն՝ Հայկական հարցում վարած քաղաքականության շուրջ: Թեև Արտաքին գործերի նախարարի քաղաքականությունը, որը հանգել է ոչ թե հայերի, այլ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող բոլոր մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների կացության բարելավման պահանջին և միաժամանակ եվրոպական պետությունների համատեղ ջանքերով՝ կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանը³²⁸, ինչն, անշուշտ, նրան շատ ավելի է մտա-

³²⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս V. Duclert et G. Pécout, նշվ. աշխ., էջ 330-331:

³²⁸ Discours de M. Hanotaux, Ministre des Affaires étrangères, à la séance de la Chambre des députés du 3 novembre 1896.– Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, p. 312-319.

հոգել, ձայների բացարձակ մեծամասնությամբ (402-ը 90-ի հարաբերությամբ)³²⁹ արժանացել է պատգամավորների հավանությանը, այդուհանդերձ, ֆրանսիական խորհրդարանում Հայկական հարցի քննարկումն ինքնին աննախադեպ երևույթ էր: Ուստի՝ օրինաչափ է, որ Հայկական հարցի պաշտպանների վարքագիծն արժանացել է հայ ժամանակակիցներից՝ Մ. Վարանդյանի բարձր գնահատականին³³⁰:

³²⁹ Տե՛ս Y. Ternon, նշվ. աշխ., էջ 319; V. Duclert et G. Pécout, նշվ. աշխ., էջ 331:

³³⁰ Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 193:



Արշակ Չոպանյան



Նայր Շարմերան



Պիեռ Բիստ



Պոլ Կամբոն



Գուսարավ Մեյրիե



Անապոլ Ֆրանս



Վիկտոր Բերար



Ժան Ժորես



Ֆրանսիս դը Պրեսանտ



Դենի Կոշեն



Ժորժ Կլեմանսո

ՀԱՎՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԻԵՌ ՔԻԱՌԸ

Հայոց ցեղասպանության հավաստի պատկերը լուսաբանելու, թուրք ջարդարարներին խարազանելու, մեծ տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ դրսևորած անվշտակից վերաբերմունքը նշավակելու ասպարեզում անգնատահելի ավանդ է ներդրել հայ ժողովրդի անմնացորդ նվիրյալ, բանաստեղծ, գրականագետ և թարգմանիչ Պիեռ Քիառը, որի հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ ծագել է ցեղասպանության գործընթացի սանձազերծման առաջին իսկ պահից և ընդլայնվել դրա զարգացմանը զուգընթաց:

Ինչպես Բերարը և դը Կոնտանսոնը՝ 1893-1896 թթ. Կոստանդնուպոլսում բնակություն հաստատած Քիառը ցեղասպանության ֆրանսիացի եզակի ժամանակակիցներից է, ով եղել է համիդյան կոտորածների առաջին փուլի ականատեսը: Այստեղ նրան աշխատանքի էին հրավիրել Բերայի հայկական ուսումնարաններից մեկում ֆրանսերեն և լատիներեն դասավանդելու համար: Կոստանդնուպոլսում հաստատվելուց փոքր անց, նա փիլիսոփայություն և գրականության պատմություն դասավանդելու հրավեր է ստացել նաև Ղալաթիայի հայկական Կեդրոնական վարժարանից, որը բարյացակամորեն ընդունել է³³¹: Մանկավարժական գործունեությունից բացի, Քիառն այստեղ զբաղվել է նաև բանասիրական աշխատանքներով, թարգմանել հին հունական փիլիսոփայության վերջին՝ նորպլատոնական դպրոցի ներկայացուցիչների՝ Պորփյուրի (232-304), ասորի իմաստասեր Յամբլիքոսի (250-330) ստեղծագործությունները, ինչպես նաև 2-3 դարի հույն գրող Կլավդիոս Էլիանոսի «Հողագործական նամակները»³³²:

³³¹ E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 26:

— ³³² Les lettres rustriques de Claudius Aelianus, Presentin. Traduites du grec en français par Pierre Quillard, Paris, 1895. Նշենք, որ հետագայում Քիառը թարգմանել է նաև Սոֆոկլեսի «Ֆիդելետես» ողբերգությունը, ինչպես նաև մ. թ. ա. 3-րդ դարի հույն գրող Հերոնոսի «Մնջակատարությունները». տե՛ս

Այսպես, ըստ Քիառի ֆրանսիացի ժամանակակիցներից մեկի՝ Ա. Ֆերդինանդ Յերոլդի դիպուկ բնորոշման՝ «Արևելք կատարած այցելությունը փոխել է նրա կյանքի ընթացքը»³³³: Թեպետ XIX դարի վերջին և XX դարի սկզբին նա ծավալել է քաղաքական բազմաբնույթ գործունեություն (ակտիվորեն մասնակցել է Մակեդոնիայում տեղի ունեցած իրադարձությունների, Դրեյֆուսի գործին, Ջոլայի դատավարությանն առնչվող քննարկումներին, եղել է Մարդու իրավունքների լիգայի հիմնադիրներից, 1904 թ. ընտրվել է դրա կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ 1911 թ.՝ գլխավոր քարտուղար³³⁴), այդուհանդերձ, Հայկական հարցը մշտապես մնացել է նրա մտորումների և զբաղումների առանցքում:

Հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ Քիառի հետաքրքրության աճին մեծապես նպաստել են 1894 թ. սկիզբ առած նրա բարեկամական փոխհարաբերություններն ու սերտ համագործակցությունն Արշակ Չոպանյանի հետ, որոնք ընդհատվել են միայն ֆրանսիացի մտավորականի վաղաժամ մահվամբ³³⁵:

Sophocle, Philoctètes, trad. du [grec] et mis à la scène par *Pierre Quillard*, Paris, 1896; P. Quillard. Les Mimes d'Hérodas. Traduction littéraire, accompagnée de notes, Paris, MCM [1900]: Ի դեպ, նրա՝ իբրև բանաստեղծի և թարգմանչի բարձր գնահատականը տվել են ֆրանսիացի գրողներն ու գրականագետները (Ա. Ֆրանս, Ա. Ֆոնտենաս, Ա. Ֆերդինանդ Յերոլդ): Տես նրանց ելույթները 1912 թ. փետրվարի 16-ին Փարիզում զումարված՝ Քիառի հիշատակին նվիրված նիստում. A la mémoire de Pierre Quillard, Paris, 1912, p. 11-12, 58, 60-70, 144-145. Քիառի գրական գործունեության մասին տես նաև A. Vahramian, De l'affaire Dreyfus au mouvement arménophile: Pierre Quillard et *Pro Armenia* // "Revue d'histoire de la Shoah". Le monde juif, N 177-178, janvier-août 2003. Ailleurs, hier, autrement: connaissance et reconnaissance du génocide des Arméniens, p. 336-338.

³³³ A la mémoire de Pierre Quillard, p. 143.

³³⁴ Այս ասպարեզներում Քիառի ծավալած գործունեության շուրջ տես Ֆ. դը Պրեսանսեի և այլ ժամանակակիցների՝ նրա հիշատակին նվիրված ելույթները: Նույն տեղում, էջ 73-99, 149, 168:

³³⁵ Ա. Չոպանյանի արխիվում պահպանվել է Քիառի՝ նրան հղած տասնութ նամակ՝ նրանց գործունեության պոլիսյան ժամանակաշրջանից ի վեր, որոնք, սակայն, նվիրված են երկրորդական խնդիրների: Տես ԳԱԹ, ֆ. Ա. Չոպանյանի, բաժին III, վավ. 9455-9473: 1908 թ. Քիառի առաջաբանով է լույս ընծայվել Չոպանյանի թարգմանությամբ իրականացված հայ հեղինակների պոեմների ժողովածուն. A. Tchobanian, Poèmes. (Traduction française). Préface de *Pierre Quillard*, Paris, 1908.

Ֆրանսիական հանրության ուշադրությունը հայկական կոտորածների վրա առաջին անգամ Քիառը հրավիրել է դեռևս 1895 թ., երբ Սորիս Լևեյր կեղծանվամբ³³⁶ հանդես է եկել 1894 թ. Սասունի անցքերին նվիրված հոդվածով³³⁷: Հեղինակը տեղի ունեցած «սարսափելի կոտորածների», «բարբարոսական, զազրելի գործողությունների» մասին, ըստ իր հավաստման՝ առաջին լուրերը քաղել է անգլիական և ֆրանսիական որոշ լրագրերից: Հիմնվելով մատչելի, թեև դեռևս սակավաթիվ, այդուհանդերձ, «անառարկելի արժանահավատություն» ունեցող սկզբնաղբյուրների վրա (խոսքը վերաբերում է, մասնավորապես, Սասունի կոտորածների հետաքննությունը վարած քննիչ հանձնաժողովի «Համատեղ հաղորդագրությանը»³³⁸ և կոտորածների երեք հայ ականատեսներից ստացված տեղեկություններին), նա հետապնդում է «անկողմնակալ և ստույգ շարադրանքի» միջոցով՝ Օսմանյան կայսրության տարածքն ակեկոծած այն իրադարձություններին հրապարակայնացում տալու նպատակը, որոնց մինչ այդ ֆրանսիական հանրությունն իրազեկ չի եղել³³⁹:

Հավանաբար, դեռևս հստակ պատկերացում իսկ չունենալով թե՛ Հայկական հարցի ծագումը պայմանավորած պատմական հանգամանքների և թե՛ դրա գոյության մասին, Քիառն, այնուամենայնիվ, մակերեսորեն անդրադառնում է օսմանյան «բարբարոսական վարչության» կողմից «ճնշված ու սնանկացած» արևմտահայության կացությանն Օսմանյան կայսրությունում մինչ Բեռլինի վեհաժողովի գումարումը և իրավամբ մատնանշում, որ հայերը դարեր շարունակ «ուժի դեմ ուժով գործելու» ցանկություն չեն դրսևորել: Վերջիններս, սակայն, նրա կարծիքով, քառորդ դարից ի վեր «գիտակցել են տարրա-

³³⁶ Այդ մասին տե՛ս վերը նշված՝ Քիառի հիշատակին նվիրված նիստում Չոպանյանի ելույթը. A la mémoire de Pierre Quillard, p. 35.

³³⁷ M. Leveyre, Les massacres des Sasounkh // "Revue de Paris", livraison du 1^{er} septembre 1895.

³³⁸ Տե՛ս «Դեղին գրքում»՝ Rapport collectif des Délégués consulaires adjoints à la Commission d'enquête sur l'affaire de Sassoun. – Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, p. 96-111.

³³⁹ M. Leveyre, նշվ. աշխ., էջ 74:

կան, այդ թվում, կողոպուտին և կոտորածին դիմակայելու իրավունքներ ունենալու անհրաժեշտությունը»³⁴⁰: Ինչ վերաբերում է Բեռլինի վեհաժողովին հաջորդած տասնամյակներին, ապա հեղինակը գտնում է, որ իրադարձությունների զարգացման ընթացքը «դաժանորեն հուսախաբել է» հայերին և հողմացրիվ արել բարենորոգումների ճանապարհով «լավագույն ճակատագրի» արժանանալու նրանց հույսերը:

Լ Օսմանյան կայսրությունում անընդմեջ տեղի ունեցող խմորումների փաստը նա մեկնաբանում է տեղական իշխանությունների գործադրած կեղեքումների սաստկացմամբ և արդարադատության կատարյալ բացակայությամբ³⁴¹: Այդ հենքի վրա է նա քննարկում նաև արևմտահայության նկատմամբ կիրառված զանգվածային բռնությունների շարժառիթները: Ըստ նրա՝ 1894 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածների անմիջական պատճառ է դարձել այն անելանելի կացությունը, որում գտնվում էին տարեկան վեց կամ յոթ անգամ կեղեքիչ հարկեր վճարելու անընդունակ հայերը, որոնք հարկադրված են եղել զինված ընդհարումների մեջ մտնելու իրենց անողոքաբար կողոպտող հարստահարիչների հետ³⁴²:

Սասունի տարբեր գյուղերում տեղի ունեցած կոտորածների գլխավոր իրականացնողներ հեղինակը համարում է քուրդ ելուզակներին և համիդիե զորամիավորումներին, չանտեսելով, այդուհանդերձ, Մուշից ժամանած զորքերի չարագուշակ դերը ծավալված իրադարձությունների ընթացքում, քանզի նրանք հանդես են եկել ոչ միայն իբրև հայկական գյուղերի վրա կազմակերպված հարձակումների «անտարբեր» դիտորդներ, այլև ակտիվ մասնակիցներ³⁴³:

Քիառի ուշադրությունից չեն վրիպել նաև ջարդարարների ստոր գործելամիջոցները. «Քանի որ բնաջնջումը կատարյալ չի եղել՝ այն ավարտին հասցնելու մտադրությամբ դիմել են

³⁴⁰ Նույն տեղում, էջ 75:

³⁴¹ Նույն տեղում, էջ 76:

³⁴² Նույն տեղում, էջ 79-80:

³⁴³ Նույն տեղում, էջ 83:

խորամանկության», – նշում է նա³⁴⁴: Ըստ այդմ՝ զենքերը վայր դնելու պայմանով հայերին ներում են խոստացել, սակայն, Անդրք լեռան ստորոտում անձնատուր եղած վաթսուց երիտասարդի կենդանի թաղել են: Այդուհանդերձ, «ամենանողկալի վայրագությունները», ինչպես նա նշում է, «սառնասրտորեն իրականացվել» են Գելիեգուզանում³⁴⁵: Ընդհանուր առմամբ, համաձայն հեղինակի հաշվարկների՝ Սասունի տարածաշրջանում «վայրագորեն կոտորվել» է շուրջ վեց հազար բնակիչ և «ավերվել հազար ութսունութ տնից բաղկացած քսաներկու գյուղ»³⁴⁶:

Ինչպես տեսնում ենք, Քիառը շեշտը դնում է Սասունի տարածաշրջանում արձանագրված դեպքերի թվարկման վրա և անկողմնակալորեն ուրվագծում իրադարձությունների ընդհանուր պատկերը: Այս առումով, կասկածից վեր է, որ իր առջև ծառացած հիմնական խնդիրը նա կատարել է հավուր պատշաճի: Կանգ առնենք, սակայն, նրա սակավաթիվ մեկնաբանությունների վրա ևս:

Ընդունելով, որ կոտորածները Սասունի տարածաշրջանում «սարսափելիության առումով շատ ավելի ողբերգական» են, քան այլ վայրերում տեղի ունեցած անցքերը, նա իրավամբ եզրակացնում է. «Ամենևին հավաստի չէ, որ չափ ու սահման չունեցող վայրագությունից գատ, դրանք եղել են անսպասելի: Դրանք ընդամենն այն անհանդուրժելի բռնությունների կրկնությունն են, սակայն, ավելի ծանր հանգամանքներում, որոնց զոհը հայերն անընդմեջ դարձել են գրեթե ամենուր և որոնք կարող են, ի դեպ, այսօր կամ վաղը հատել բարբարոսության միևնույն վերջնագիծը»³⁴⁷: Այս հարցում հարկ է նրան արժանին հատուցել:

Կոտորածների պատասխանատուներին դիմազերծելու

³⁴⁴ Նույն տեղում, էջ 84:

³⁴⁵ Նույն տեղում:

³⁴⁶ Նույն տեղում, էջ 86: Սասունում զոհված հայերի թվաքանակի շուրջ ստույգ տվյալներ չկան. այն տատանվում է մինչ տաս հազարի սահմանում: Այդ մասին տես Գ. Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 202-203:

³⁴⁷ M. Leveyre, նշվ. աշխ., էջ 86-87:

հարցում, սակայն, Քիառի մեկնաբանություններն ամենևին սպառնիչ չեն: Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Աբդուլ Համիդին նա զերծ է պահում նվազագույն իսկ պատասխանատվությունից և ենթադրում, որ սուլթանի ապաշնորհ խորհրդականներին չի հաջողվի մոլորեցնել «խելացիությամբ» ու «բարյացակամությամբ» օժտված միապետին, ում կհաջողվի վերահաստատել «խաղաղությունը» և ապահովել հայ ժողովրդի «բարգավաճումը»³⁴⁸: Առավել ևս Օսմանյան կայսրության մայրաքաղաքում բնակվող՝ իրադարձությունների ժամանակակցի նման դիրքորոշումը խորհրդածությունների տեղիք է տալիս: Անտարակույս, այն գուցեև պայմանավորված է եղել Քիառի՝ ցեղասպանության գործընթացին ոչ լրիվ իրազեկությամբ, որի հետևանքով նա դեռևս անկարող է եղել ըմբռնել դրա էությունը և այն դիտել իբրև պետական քաղաքականության մակարդակով կյանքի կոչված իրադարձություն: Նման մեկնաբանությունը, սակայն, մեր կարծիքով համոզիչ չէ:

Մտորելով վերոնշյալ հարցում Քիառի գրաված դիրքորոշման շուրջ, հարկ է չանտեսել մի շարք էական հանգամանքներ: Նախ՝ չի բացառվում, որ սկիզբ առած կոտորածները կանխարգելելու ցանկությամբ նա գործադրել է օսմանյան իշխանություններին սթափեցնելու ճիգեր և, հավանաբար, փորձել սուլթանին սիրաշահելու միջոցով խոչընդոտել դրանց հետագա ծավալմանը: Բացի դրանից, պատահական չէ, անշուշտ, որ Կոստանդնուպոլսում բնակվող օտարերկրացին կոտորածներին նվիրված իր առաջին հոդվածները լույս է ընծայել կեղծամվամբ³⁴⁹: Հակառակ դեպքում, նա կարող էր, ըստ Չոպան-

³⁴⁸ Նույն տեղում, էջ 91: Այս հարցի կապակցությամբ «Մեծ եղեռնը և Ֆրանսիան (1915-1918 թթ.)» (Երևան, 2000) դոկտորական ատենախոսության մեջ Ե. Գասպարյանը նշում է, թե իբր Քիառն «իր հողվածն ավարտում էր սուլթան Համիդին ուղղված կոչով՝ «վերջ տալ հայկական կոտորածներին և երկրում հաստատել հանգստություն» (էջ 26): Իրականում, ոչ միայն Գասպարյանի հղած՝ Քիառի հողվածի համապատասխան էջում (91), այլև դրա բնագրում առհասարակ ամհնար է գտնել նման եզրահանգում:

³⁴⁹ Կոստանդնուպոլսում բնակվելու ժամանակաշրջանում Քիառի գրած հաջորդ և մեզ համար դեռևս անմատչելի հողվածը ևս, որը նվիրված է Ա. Չոպանյանի աշխատասիրությամբ հրատարակված «Հայաստանի

յանի վկայության՝ հարվածի տակ դնել ոչ միայն իրեն, այլև այն հաստատությունները, ուր աշխատում էր³⁵⁰:

Հարկ է չանտեսել նաև այն իրողությունը, որ ֆրանսիացի մտավորականը Կոստանդնուպոլսում գտնվել է թուրքական ոստիկանության աչալուրջ հսկողության ներքո, հանգամանք, որն, անկասկած, իր կնիքն է դրոշմել նրա չափավոր մեկնաբանությունների վրա³⁵¹:

1896 թ. Փարիզ վերադառնալուց հետո, Քիառի հայանպաստ գործունեությունը թևակոխում է նոր փուլ: XIX դարի վերջին և XX դարի սկզբին նա գրում է կոտորածների զանազան փուլերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, պարբերաբար հանդես գալիս ֆրանսիական մամուլում, մասնակցում Հայկական հարցին նվիրված միջազգային հավաքների աշխատանքներին, 1897-1902 թթ. անդամակցում Չոպանյանի նախածեռնությամբ Փարիզում հիմնադրված «Ֆրանս-հայկական կոմիտեին», որի կազմում ընդգրկված էին նաև հայ ժողովրդի շատ այլ բոցաշունչ պաշտպաններ, ինչպիսիք էին Վ. Բերարը, Ա. Վանդալը, Է. Լավիսը, Դ. Կոչենը, հայր Շարմետանը և ուրիշներ³⁵²: Կասկածից վեր է, որ Քիառի հայանպաստ գործունեության ամենավառ դրվագներն անքակտելիորեն կապված են «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի հրատարակության հետ: Այս լրագիրն, ի դեպ, ինչպես նշել է Մ. Վարանդյանը՝ «պիտի հանդիսանար ոչ միայն իբրև տեղեկատու աղբյուր և հայկական դատի արծարծող, — նա պիտի դառնար կենդանի օջախ մը, որու շուրջը հետզհետե պիտի

կոտորածները» ժողովածուին (*Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896*). լույս է տեսել կեղծանվամբ (*M. L. Rogre, Les massacres d'Arménie. Quelques documents et remarques en l'honneur de sultan Abdul-Hamid, de la civilisation européenne et de l'alliance franco-russe // "Mercure de France", septembre 1896*): Այդ մասին տես՝ E. Khayadjian, *Նշվ. աշխ.*, էջ 61; A. Vahramian, *Նշվ. աշխ.*, էջ 341:

³⁵⁰ A la mémoire de Pierre Quillard, p. 35.

³⁵¹ Նշենք, ի դեպ, որ օգտագործած կեղծանունն, այդուհանդերձ, չի փարատել Քիառի՝ իբրև հողվածագրի հանդեպ թուրքական ոստիկանության տածած կասկածները, ինչը և հանգեցրել է նրա կարծառն ձերբակալությանը: Քիառն ազատ է արձակվել ֆրանսիական դեսպանության միջամտությունից հետո միայն: Տես՝ նույն տեղում, էջ 36:

³⁵² E. Khayadjian, *Նշվ. աշխ.*, էջ 75:

համախմբվեին Ֆրանսայի ու բոլոր երկիրներու հայասերները՝ ընդհանուր ճիգերով առաջ տանելու Չայաստանի ազատագրության դատը»³⁵³: Այս ասպարեզում Քիառը, հիրավի, իրեն դրսևորել է իբրև անգերազանցելի մարտիկ: Ստանձնելով պարբերականի գլխավոր խմբագրի պարտականությունները՝ նա լրագրի գրեթե յուրաքանչյուր համարում հանդես է եկել ծավալուն հոդվածներով և ամենայն մանրամասնություններով լուսաբանել Արևմտյան Չայաստանում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքը, մեկնաբանել մեծ տերությունների քաղաքականության ելևէջները³⁵⁴: Գործունեության այս շրջանում նրա առաջաբաններով հրատարակվել է նաև Չայկական հարցին և դրան հարակից հարցերին նվիրված մի քանի գիրք³⁵⁵:

Փարիզում հաստատվելուն հաջորդած տարիներին հայկական կոտորածների ծավալունը և դրանց առնչվող ստույգ տեղեկությունների հոսքը, ինչպես նաև ծանոթությունն արդեն հրապարակի վրա գտնվող՝ «Դեղին գրքին», մեծապես նպաստել են, որ իրադարձությունների շուրջ Քիառի պատկերացումներն ընդլայնվեն: Նրա հայացքների ակնհայտ էվոլյուցիայի կնիքն են կրում նրա բազմապիսի ելույթները, որոնց բնորոշ են Չայոց ցեղասպանության՝ իբրև պետական քաղաքականության մակարդակով իրականացվող իրադարձության մեկնաբանունը, այդ գործընթացի առանձնահատկությունների բացահայտումն ու մանրազնին քննությունը,

³⁵³ Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 204:

³⁵⁴ Լրագրի հիմնադրման մանրամասների, այդ ասպարեզում Քիառի ներդրած լուծայի, ինչպես նաև նրա՝ իբրև գլխավոր խմբագրի գործունեության մասին տես A. Vahramian, նշվ. աշխ., էջ 343-347: Ի դեպ, Ա. Վահրամյանը Քիառին իրավամբ անվանում է «լրագրի ոգին»: Նույն տեղում, էջ 345:

³⁵⁵ L'assassinat du Père Salvatore par les soldats tures. Témoignage d'Aghassi, un des quatre chefs de l'insurrection de Zeitoun. Avec préface de *Pierre Quillard*, Paris, 1897: G. Dorys, Abdul-Hamid intime. Préface de *Pierre Quillard*, Paris, 1903; Pour l'Arménie et la Macédoine. Préface de *Victor Bérard*. Introduction de *Pierre Quillard*, Paris, 1904: Aknouni, Les plaies du Caucase. Avec préface de *Francis de Pressensé* et introduction de *Pierre Quillard*, Genève, 1905.

Աբդուլ Յամիդի և նրա հանցախմբի դիմագերծումն ու դատափետուլնը, եվրոպական պետությունների, և, մասնավորապես, Ֆրանսիայի, անկարեկից դիրքորոշման անողոք քննադատությունը:

Քիառի ելույթների թիրախում հառնում է Աբդուլ Յամիդի հայատյաց կերպարը, ում նա հիմնավորապես մերկացնում է իբրև հայկական կոտորածների կազմակերպչի, անվանում «մեծ մարդասպան», «կայսերական ավազակ», «կարմիր զազան», «մարդկային կերպարանք ունեցող հրեշավոր զազան», «նորին արյունոտ մեծություն»³⁵⁶ և այլն: «Սուլթանը, – գրում է նա, – կրում է անձնական պատասխանատվություն: Աբդուլ Յամիդը և ստորադաս հանցագործները, որոնք նրա հպատակները լինելով իշխում են նրա վրա, հայկական տառապանքների իրական հեղինակներն են... Այդ նրա ցանկությամբ են սպանում. նրա բանազնացները կտրում-անցնում են նահանգները, իսկ կոտորածների ազդանշանը տրվում է նրա փոքրիկ սպիտակ ձեռքով»³⁵⁷:

Ինչպես տեսնում ենք, մի քանի տարի առաջ՝ հայկական կոտորածներին Աբդուլ Յամիդի ունեցած մասնակցության հարցում, անկախ այն բանից, թե ինչ պատճառներով, դեռևս թերահավատություն դրսևորող Քիառն այժմ արդեն հանդես է գալիս նրան անարգանքի սյունին գամողի դերում: Նրա համոզմամբ՝ «բարենորոգումների փոխարեն, սուլթան Աբդուլ Յամիդը նախապատրաստել է և 1893-1896 թթ. իրականացրել սարսափազդու կոտորածներ, որոնք ամենանշանավոր տիրակալների գահակալության պատմության ընթացքում երբևէ չեն արձանագրվել»³⁵⁸:

³⁵⁶ P. Quillard, Préface. – G. Dorys, Abdul-Hamid intime, p. VII, X; *Մույնի* La Quinzaine // “Pro Armenia”, 10 décembre 1900; *Մույնի* La Quinzaine // “Pro Armenia”, 25 septembre 1901; *Մույնի* La Quinzaine // “Pro Armenia”, 15 juillet 1904.

³⁵⁷ P. Quillard, Pro Armenia // “Pro Armenia”, 25 novembre 1900.

³⁵⁸ P. Quillard, Pour l’Arménie. Mémoire et dossier, *Cahiers de la quinzaine* (3^e série, 19^e année) Paris, 1902, p. 6. Ե. Գասպարյանի այն հավաստումը, ըստ որի՝ Քիառի նախորդ գրքերը, գրքույկներն ու հոդվածները «հավաքվեցին հայ ժողովրդի շահերը պաշտպանող» սույն ժողովածուի մեջ (Ե. Գասպարյան, Մեծ եղեռնը և Ֆրանսիան (1915-1918 թթ.), էջ 27) չի համապատասխանում

Ի դեպ, Քիառն ամբողջությամբ բացահայտում է XIX դարում Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հանդեպ՝ օսմանյան գահակալների վարած ցեղասպան քաղաքականության էությունը, Հայոց ցեղասպանությունը քննարկում շատ այլ, այդ թվում մահնեղական, ժողովուրդների բնաջնջման ընդհանուր հետևախորքի վրա, որը վկայում է հարցի նկատմամբ նրա դրսևորած ընդգրկումն մոտեցման մասին: «Հայտնի է, – գրում է նա 1906 թ., – թե վերջին դարի ընթացքում ինչ է իրենից ներկայացրել բռնությունների այս վարչակարգը: Նա պարբերաբար ողողվել է արյան ծովերով, սակայն կոտորածները քիչ-անքի՝ պարբերաբար հանգեցրել են կայսրության տարածքի փոքրացմանը»: Քիառը մատնանշում է 1822-1904 թթ. Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցած զանգվածային կոտորածները, որոնց զոհը դարձել են հույները, քաղղեացիները, մարոնիտները, բուլղարացիները, եզդիները, հայերը³⁵⁹: Խոսքը կենտրոնացնելով Աբդուլ Համիդ II-ի քաղաքականության վրա, նա վերջինիս բնութագրում է իբրև զանազան ժողովուրդների, այդ թվում թուրքերի դահճի, սակայն միաժամանակ հավաստում, որ սուլթանն «իր արյունալի գործը պսակել է սառնասրտորեն մտահղացված և հետևողականորեն իրականացված երեք հարյուր հազար հայի բնաջնջմամբ»³⁶⁰:

1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած՝ բարենորոգումների իրականացման խնդրանք հետապնդող «Խաղաղ ցույցի» ճնշմանը հետևում է «մեծ կոտորածների ժամանակաշրջանը», որի ընթացքում «երեք հարյուր հազար մարդ սպանվում է, կախվում, այրվում,

իրականությամբ: Նշենք, ի դեպ, որ այս գրքի հանձնարարականը Քիառը ստացել է «Cahiers de la quinzaine» մատենաշարի հրատարակիչ Շառլ Պեգիից: Այդ մասին տես G. Leroy, L'Arménie dans l'œuvre et la pensée de Charles Péguy // "Revue d'histoire de la Shoah". Le monde juif, N 177-178, p. 359-361. Այս գրքի մասին մանրամասն հաղորդագրություն է տպագրել «Դրոշակը» (1902, թիվ 8, էջ 125-126):

³⁵⁹ P. Quillard. La Quinzaine // "Pro Armenia", 15 mars 1906.

³⁶⁰ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 25 décembre 1900.

մորթագերծ արվում, մասնատվում, քառատվում»³⁶¹: Այս ջարդերի պատասխանատվությունը Քիառը բարդում է Պալեի վրա, որի իշխանությունը բնորոշում է իբրև «կամայական և անհանդուրժելի»: Ինչպես նա նշում է, «համընդհանուր անպահովության» մթնոլորտում խարխափող Օսմանյան կայսրությունում գոյություն ունի «գաղտնի, կոլեկտիվ և պատասխանատվությունից զուրկ իշխանություն, որի չարագուշակ դերը պարբերաբար ի հայտ է եկել մեր միջամտության անհրաժեշտությունն առաջադրող իրադարձությունների ընթացքում»: Խոսքը վերաբերում է Պալեին, որն «ամայացրել է երկիրը և իր բռնություններով ու բռնատիրությամբ ամենուր ապստամբությունների պատճառ դարձել»³⁶²: Ընդհանուր առմամբ, հայկական կոտորածները նա դիտում է իբրև «համատեղ ջանքերով և վաղուց ի վեր նախապատրաստված» ծրագրի հիման վրա իրականացվող եղելություն³⁶³:

Զբավարարվելով սոսկ Աբդուլ Յամիդի մտահղացմամբ իրականացված՝ հայկական զանգվածային կոտորածների փաստի արձանագրմամբ, Քիառը վերլուծում է հայերի հանդեպ նրա վարած երկդիմի քաղաքականությունն ու ստոր գործելամիջոցները: Անվանելով նրան «Աստծո ստվերը երկրի վրա», որն անձամբ է զբաղվում այն ամենով, ինչ տեղի է ունենում Օսմանյան կայսրությունում, նա հավաստիացնում է, որ «հավանաբար, վստահություն չտածելով կառավարման իր իսկ կիրառած միջոցների գերազանցության հանդեպ», սուլթանը վճռել է փոխել մարտավարությունը և երկյուղներից

³⁶¹ P. Quillard, *Diplomatie secrète du sultan (novembre 1897 - octobre 1898)* // "Revue de Paris", livraison du 15 juin 1899, p. 883. Այս հոդվածի հայերեն թարգմանությունը («Նոր կեանք», Բ տարի, 1899, թիվ 12, էջ 186-191) մանրագնին քննության է ենթարկել Մ. Քոչարը. տե՛ս **М. Кочар**, *Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX – начале XX веков*, Ереван, 1988, с. 53-63.

³⁶² P. Quillard & L. Margery, *La question d'Orient et la politique personnelle de M. Hanotaux*, Paris, 1897, p. 27-28.

³⁶³ P. Quillard, *Les nouveaux massacres d'Arménie* // "Revue des revues", livraison du 15 octobre 1901, p. 115.

ծերբազատվել «մերթ դիվանագիտության, մերթ ուժի միջոցով»³⁶⁴:

Քիառը վեր է հանում հայկական հեղափոխական կոմիտեների գործունեությանը քաջատեղյակ Աբդուլ Յամիդի նենգ վարքագծի էությունը, որը չի խորշել Փարիզում հայ հեղափոխականների հետ հարաբերություններ հաստատել³⁶⁵ և Վիլիելմ II-ի Արևելք ուղևորվելու նախօրյակին, հնարավոր, սակայն տհաճ միջադեպերից խուսափելու մտադրությամբ՝ 1897 թ. հոկտեմբերին սկսել է բանակցել նրանց հետ³⁶⁶: Նա հանգամանորեն վերլուծում է հայերին ներում շնորհող և բազմապիսի խոստումներ շռայլող՝ 1898 թ. ապրիլի 15-ին Աբդուլ Յամիդի հրապարակած հրովարտակը և ընդգծում, որ սուլթանը «չի իրականացրել իր խոստումներից ոչ մեկը»³⁶⁷: Այս պայմաններում, Քիառը միանգամայն օրինաչափ է համարում հեղափոխական գործունեությունը շարունակելու ուղղությամբ հայկական կուսակցությունների ցանկությունը, քանզի Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում տիրող իրավիճակը նրանց ամենևին չէր տրամադրում որդեգրելու «պասսիվ դիրքորոշում»:

³⁶⁴ P. Quillard, *Diplomatie secrète du sultan*, p. 884.

³⁶⁵ Մ. Քոչարը հիմնավորապես ապացուցում է, որ սուլթանի հանձնարարությամբ Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպան Մուհիր բեյը կարող էր բանակցել միայն Լոնդոնից Փարիզ ժամանած վերակազմյալ հնչակյան կուսակցության ներկայացուցիչների հետ: Տե՛ս M. Кочар, *Նշվ. աշխ.*, էջ 62-63: Պատահական չէ. ի դեպ, որ սույն հոդվածը գրեթե ամբողջությամբ թարգմանաբար լույս է ընծայվել, ինչպես նկատեցինք, այդ կուսակցության օրգան՝ «Նոր կյանք» ամսագրում:

³⁶⁶ Նշենք նաև, որ դեռևս 1896 թ. հոկտեմբերին Աբդուլ Յամիդն իր ներկայացուցիչների միջոցով սկսել էր ժնկում բանակցություններ վարել ՅՅԴ հետ, որոնք հարատևել են մինչև 1899 թ. մարտը: Այդ մասին տես Մ. Վարանդեան, *Նշվ. աշխ.*, էջ 196-199; M. Кочар, *Նշվ. աշխ.*, էջ 41-52: Ըստ Մ. Վարանդյանի դիպուկ բնորոշման՝ ՅՅԴ հետ սուլթանը բանակցում էր սոսկ «Եվրոպայի աչքին թոզ փչելու նպատակով»: Բանակցությունների գործընթացը նա անվանում է «նենգամիտ խաղ», որով, ըստ նրա՝ «հին աղվեսը կուզեր մեկ քարով երկու թռչուն որսալ. հեղափոխական բռնկումներու սպառնալիքը հեռացնել և մեկ ալ բերանը զոցել արևմտյան ազգերուն, որոնք կը շարունակեին ռեֆորմներու գործադրությունը պահանջել»: Տե՛ս Մ. Վարանդեան, *Նշվ. աշխ.*, էջ 197, 199:

³⁶⁷ P. Quillard. *Diplomatie secrète du sultan*, p. 886.

Համիդյան կոտորածների պատմությունը վերլուծած ժամանակակիցների մեծամասնությունը խոսքը կենտրոնացրել է գլխավորապես 1894-1896 և 1904 թվականներին տեղի ունեցած իրադարձությունների վրա: Ի տարբերություն նրանց, Քիառը բազմիցս հավաստել է Հայոց ցեղասպանության գործընթացի շարունակական բնույթը, պարբերաբար անդրադարձել 1899-1901 թթ. Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածներին ևս, որոնց նվիրված նրա ուսումնասիրություններն առանձնանում են ոչ միայն արժանահավատությամբ, այլև սպառնիչ մեկնաբանություններով³⁶⁸: XIX-XX դդ. սահմանագծին «գաղտնի հետապնդումների» կարճատև ժամանակահատվածին հաջորդած՝ Մուշում և Սասունում վերսկսված բռնությունները նա «անկանխատեսելի» չի համարում: Մանրամասն նկարագրելով 1899-1901 թթ. Սասունի տարածաշրջանի զանազան գյուղերում ծավալված իրադարձությունները (քրդերի և կանոնավոր զորքերի կողմից գյուղերի կողոպուտ, ավերում, հրկիզում, բնակչության կոտորած և այլն), Քիառը Մուշի և Բիթլիսի շրջակայքում տեղի ունեցած ջարդերի պատասխանատվությունն անվարանորեն բարդում է «սուլթանի կառավարության» վրա, որը երկու տարուց ի վեր որոշել էր «հաշիվները մաքրել սասունցիների հետ»³⁶⁹:

Նշենք, որ 1901 թ. Մուշի հարթավայրում տեղի ունեցած կոտորածները նա պայմանավորում է XIX դարի սկզբից ի վեր հայ բնակչության աճով³⁷⁰: Ի վերջո, օսմանյան կառավարության գործադրած ջանքերի շնորհիվ, ինչպես կսկիծով արձանագրում է Քիառը, Մուշի հարթավայրում 1901 թ. հուլիսի 23-ից ի վեր, «տիրում է կատարյալ լռություն՝ մահվան լռությունը»³⁷¹:

Հիրավի, համիդյան ժամանակշրջանում Հայոց ցեղասպանության գործընթացին բնորոշ են եղել թե՛ փուլային, անհամաչափ զարգացումը և թե՛ բնակչության ոչնչացման զանազան եղանակների կիրառումը, որը չի վրիպել Քիառի

³⁶⁸ Տես օրինակ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie; *Նույնի* Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 44-50.

³⁶⁹ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie. p. 120.

³⁷⁰ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 63.

³⁷¹ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie. p. 124.

խորաթափանց հայացքից³⁷²: Սուլթանը, ինչպես կատարելապես բացահայտում է Քիառը, զանգվածային կոտորածների միջանկյալ ժամանակահատվածներում դիմել է արևմտահայության ոչնչացման տարատեսակ գործելամիջոցների, ինչպիսիք են անհատական սպանությունները, արհեստականորեն կազմակերպված սովը, առանց իշխանությունների թույլտվության բնակավայրից բնակավայր տեղափոխվելու արգելքը³⁷³, բանտերում կիրառվող խոշտանգումները, բռնի կրոնափոխությունը և այլն: Ի վերջո, Աբդուլ Յամիդի քաղաքականության իրական նպատակը, անկախ դրա կենսագործան եղանակների զանազանությամբ, Քիառի համոզմամբ հանգում էր հայ ժողովրդի «համատարած բնաջնջմանը»³⁷⁴:

Հայոց ցեղասպանությունը պայմանավորելով պետական քաղաքականությամբ, Քիառը կտրականապես մերժում է այն իբրև կրոնական հենք ունեցող իրադարձություն մեկնաբանող տեսակետը: Լուի Մարժերիի հետ մեկտեղ նա վճռականորեն հանդես է գալիս այս անընդունելի մոտեցման կողմնակից Հանոտոյի դեմ և խիստ քննադատության ենթարկում նրա թրջամետ դիրքորոշումը: Վկայակոչելով 1896 թ. Օսմանյան բանկի գրավման միջադեպին հաջորդած` Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կոտորածների ընթացքում մայրաքաղաքում մահմեդական բնակչության` հայերին ապաստանելու փաստերը, Քիառն ապացուցում է, որ քրիստոնյաների ու մահմեդականների միջև առկա հակամարտությունը և կրոնական զանազանության հողի վրա թուրքերի դրսևորած մոլեռանդության հանգամանքն

³⁷² Տես օրինակ P. Quillard, *Diplomatie secrète du sultan* p. 898; *Մույնի* Pro Armenia // “Pro Armenia”, 25 novembre 1900; *Մույնի* Pour l’Arménie. Mémoire et dossier, p. 10-36; Pour l’Arménie et la Macédoine, p. 251-255.

³⁷³ Այդ մասին մանրամասն տես Ա. Ս. Համբարյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), էջ 48: Նշենք, որ բնակչության ոչնչացման նպատակ հետապնդող նման գործելամիջոցները` ժամանակակից ցեղասպանագետները բնութագրում են իբրև էթնոսայդ (etnocide): Տես I. W. Charny, *Proposition de cadre de définition pour les crimes de génocide.* – *Le livre noir de l’humanité*, p. 38.

³⁷⁴ Տես 1903 թ. հոկտեմբերի 25-ին Փարիզի Սառա-Բեննար թատրոնում գումարված նիստում նրա ունեցած ելույթը. Pour l’Arménie et la Macédoine, p. 256.

արևմտահայության բնաջնջման գործընթացում վճռորոշ դեր չեն ունեցել³⁷⁵:

Բանավիճելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների պատկերը խեղաթյուրող հեղինակների հետ՝ Քիառը հիմնավորապես հերքում է սկզբունքային նշանակություն ունեցող մի շարք հարցերում նրանց առաջադրած թյուր տեսակետները կապված, մասնավորապես, Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակի նվազեցման հետ: Հիմնվելով Բեռլինի վեհաժողովին՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի ներկայացրած վիճակագրական տվյալների վրա՝ նա կայսրության տարածքում բնակվող հայերի թիվը սահմանում է շուրջ երեք միլիոնի եզրերում: «Թվում է, թե Ներսես պատրիարքի վիճակագրությունը, – գրում է նա, – շատ ավելի մոտ է իրականությանը, քան եվրոպացի դիվանագետների վիճակագրությունը, որոնք, կարելի է հավաստել, որ թույլ են տալիս երկու սխալ: 1. Հայ բնակչության ընդհանուր թվաքանակը շատ ավելի մեծ է, քան այն, որը նրանք հավաստում են: 2. Ասիական թուրքիայի որոշ տարածաշրջաններում այդ բնակչությունը կազմում է բացարձակ մեծամասնություն»³⁷⁶:

Քիառն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հայկական կուսակցությունների գործունեությունն իբրև անգլիական և ռուսական «բանասարկությունների» հետևանք մեկնաբանելու հարցի վրա և վիճարկում այդ թյուր տեսակետը: Իր իրազեկության սահմաններում նա խոսքը կենտրոնացնում է, մասնավորապես, 1893 թ. Մարզվանում տեղի ունեցած իրադարձությունների վրա, որոնց ընթացքում հնչակյանների նախաձեռնությամբ՝ մահմեդականներին՝ սուլթանին գահընկեց անելու կոչող պաստառների տարածմանը հաջորդել էին հայերի նկատմամբ գործադրված բռնություններ, իսկ ամերիկացի միսիոներների կառուցած օրիորդաց քոլեջը կիսով չափ հրկիզվել էր: Մանրամասն քննարկելով օտարերկրյա միսիոներների վարքագիծն այս անցքերի ընթացքում՝ նա եզրակացնում է, որ

³⁷⁵ P. Quillard & L. Margery, նշվ. աշխ., էջ 17-18:

³⁷⁶ P. Quillard. Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 59-60.

նրանց և հայ հեղափոխականների միջև որևէ համաձայնություն երբևէ չի կայացվել: Ընդհակառակը, նա ընդգծում է, որ Արևմտյան Հայաստանում գտնվող միսիոներներն Անգլիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում հրապարակայնորեն հայտնում էին իրենց անհամաձայնությունը հայերի ծավալած հեղափոխական գործունեության հետ և, նույնիսկ, նրանց վերագրում քաղաքական այնպիսի նպատակներ, որոնց հայ հեղափոխականները երբևէ հետամուտ չէին եղել³⁷⁷:

Հայկական հեղափոխական շարժման հանդեպ՝ ինքնակալական Ռուսաստանի մոտեցման հարցում ևս Քիառը գրավում է խիստ սկզբունքային դիրքորոշում, մանրամասն անդրադառնում Սարգիս Կուկունյանի խմբի գործունեությանը և դատավարությանը³⁷⁸, մերկացնում ռուսական կառավարության հայահալած քաղաքականությունը: Հայ ժողովրդի բնաջնջման առնչությամբ նա զայրույթով արձանագրում է, որ ռուսական ինքնակալությունը դաժանորեն հալածել է բոլոր նրանց, ովքեր անկախ այն բանից, թե ինչ ձևով՝ խոսքով կամ գրչով փորձել են անդրադառնալ այդ ողբերգությանը: «Եթե որևէ մեկը սպանվածների նկատմամբ համակրանք էր ցուցաբերում, – նշում է նա, – նրան բաժին էին հասնում խուզարկություններ, բանտարկություններ, արտաքսում»³⁷⁹:

Քանի որ Հայոց ցեղասպանության հարցում ինքնակալության որդեգրած նման պարսավելի դիրքորոշումը համահունչ էր մեծ տերություններից շատերի, այդ թվում, Ֆրանսիայի դիրքորոշմանը³⁸⁰, միանգամայն օրինաչափ է, որ հայ ժողովրդի

³⁷⁷ Նույն տեղում, էջ 70:

³⁷⁸ Նույն տեղում, էջ 71-73:

³⁷⁹ Նույն տեղում, էջ 73:

³⁸⁰ XIX դարի 90-ական թվականներին՝ Հայկական հարցում Ռուսաստանի և Ֆրանսիայի գրաված համահունչ դիրքորոշման խնդիրը մանրամասն վերլուծել է խորհրդային խոշոր պատմաբան Վ. Խվոստովը, ով այդ ժամանակաշրջանում ինքնակալության և սուլթանի միջև հաստատված բարեկամությունը համարել է Օսմանյան կայսրությունում «բոլոր ազատագրական շարժումների» խոչընդոտող հանգամանք: Տե՛ս В. Хвостов. Ближне-восточный кризис 1895-97 гг. – “Историк-марксист”, 1929, т. 13, с. 22. Հայկական հարցում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետաքրքրությունների համընկնման հարցին խորհրդային պատմաբաններից

անմնացորդ նվիրյալի գործունեության ասպարեզում մեծ տեղ է գրավել եվրոպական տերությունների քաղաքականության խարազանումը: Քիառը բազմիցս անարգանքի է ենթարկում արևմտահայության ճակատագրի հանդեպ եվրոպական պետությունների անկարեկից վերաբերմունքը. «1895-1896 թթ. կոտորածներն, այսպիսով, նախապատրաստվել են երբեմն վեց ամիս առաջ: Հյուպատոսներն ու դեսպանները զուր են տեղեկացրել իրենց նախարարներին, որոնք պարբերաբար մնացել են կուլյր ու համր», – ցավով նշում է նա³⁸¹: Ֆրանսիացի մտավորականը տալիս է տերությունների ղեկավար շրջանների դիրքորոշման անողոք, դիպուկ և մերկացուցիչ գնահատականը. «Բոլոր նրանք, ում հետ ճնշվածները հույսեր են կապել՝ նրանց հաջորդաբար դավաճանել են: Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, հանրապետությունները, միապետությունները, գահակալները նրանց մատնում են իրենց թշվառ ճակատագրին կամ ակտիվորեն դառնում Աբդուլ Համիդի հանցակիցները»³⁸²:

Եվրոպական պետությունների քաղաքականությունը կեր-

մանրամասն անդրադարձել է նաև Ն. Կինյապինան: Հանգամանորեն հիմնավորելով, որ դաշնակից երկրների քաղաքականությունը հանգում էր սոսկ սուլթանի վրա՝ հայերի համար բարենորոգումների իրականացման պահանջ հետապնդող «դիվանագիտական ճնշման», նա, սակայն, ի տարբերություն Վ. Խվոստովի՝ ինքնակալության արևելյան քաղաքականության ընդհանուր գնահատականի հարցում առաջադրել է, մեր կարծիքով, վիճահարույց մի թեզ, այն է՝ 1890-ական թվականներին Ռուսաստանը, հավատարիմ իր ավանդական քաղաքականությանը, ստանձնել էր քրիստոնյաների հովանավորի դեր: Տես **Н. С. Киняпина**, *Восточный вопрос во внешней политике России второй половины XIX в. – Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII – начало XX в.* Отв. ред. **Н. С. Киняпина**, М., 1978, с. 262-263. Նշենք նաև, որ Ֆրանսիայի քաղաքականությունը Հայկական հարցում Մ. Վարանդյանն իրավամբ ամբողջությամբ պայմանավորել է Ռուսաստանին սիրաշահելու՝ ֆրանսիական ղեկավար շրջանների մտադրությամբ: «1871-ին պարտված և հոշոտված Ֆրանսան դեռ կը դողար գերման թշնամու հանդեպ և Ռուսաստանը անոր կը թվեր միակ փրկության խարսիսը... Որքան ալ խոր կարեկցություն ու համակրանք ուներ Ֆրանսան հայ տառապող ժողովրդի հանդեպ, իր սեփական շահը այնուամենայնիվ վեր դասեց ամեն ուրիշ մտահոգութենե և չկամեցավ «հայոց խաթեր» հարված մը տալ ֆրանս-ռուսական դաշնակցության»: Տես **Մ. Վարանդեան**, *նշվ. աշխ.*, էջ 316:

³⁸¹ **P. Quillard**, *La Quinzaine* // “Pro Armenia”, 25 janvier 1901.

³⁸² **P. Quillard**, *La Quinzaine* // “Pro Armenia”, 10 avril 1901.

տող պետական գործիչներին քննադատելուց բացի, որոնց հետաքրքրություններին համապատասխանում է, որ «տասնչորս տարեկան երեխաների լեզուն կտրեն, աղջիկներին բռնաբարեն, տղամարդկանց սպանեն, գյուղերն ավերեն»³⁸³, հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած անտարբեր վերաբերմունքի համար նա պախարակում է նաև եվրոպական ժողովուրդներին. «Բազում ամիսների ընթացքում Եվրոպայի ժողովուրդները մասնակցել են նրա (հայ ժողովրդի – Վ. Պ.) ոչնչացմանը, ինչին կարող էին դյուրությամբ խոչընդոտել»³⁸⁴:

Քիառը պարբերաբար ընդգծում է եվրոպական պետությունների մեղսակցությունը հայկական կոտորածների սանձազերծմանը, Եվրոպային անվանում 1894-1896 թթ. «մարդկության դեմ իրականացված՝ պատմության մեջ աննախադեպ հանցագործության» մեղսակից³⁸⁵: Նրա համոզմամբ «ամենազորության և անպատժելիության գաղափարը» սուլթանին ներշնչել է մեծ տերությունների «ամոթալի թողսվությունը»³⁸⁶: Այս առիթով նա գրում է. «Թուրքիայում չեն սպանում առանց Եվրոպայի թույլտվության և հանցակցության: Եթե միայն մեկ տերություն արգելի սպանել, գազանն ազատություն չի տա իր մագիլներին: Ահա այսպիսին է ճշմարտությունը»³⁸⁷: Եվրոպական պետությունների անգործությունը Քիառը մեկնաբանում է նրանց միջև առկա անհամաձայնությամբ, որը ոչ միայն ճանապարհ է հարթել զանգվածային կոտորածների իրականացման համար, այլև հուսալքել է հայերին³⁸⁸: Ըստ այդմ՝ նա հետագայում հավաստում է, որ սուլթանն իրավասու էր արյամբ հեղեղել և հրկիզել Բալկաններից մինչև Արարատ, Սև ծովից մինչև Պարսից ծոցն ընկած տարածքները, իսկ սոսկ իրենց շահերով առաջնորդվող քաղաքակիրթ պետությունները, այդ ամենին ի տես, մնալու էին անտարբեր դիտորդի դերում³⁸⁹:

³⁸³ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 25 décembre 1901.

³⁸⁴ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 10 avril 1901.

³⁸⁵ P. Quillard, Les nouveaux massacres d'Arménie, p. 125.

³⁸⁶ P. Quillard, Préface.– Dorys, Abdul-Hamid intime, p. XI.

³⁸⁷ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 10 octobre 1901.

³⁸⁸ P. Quillard & L. Margery, նշվ. աշխ., էջ 11, 16, 19:

³⁸⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia". 25 décembre 1900.

Զբավարարվելով այս փաստի արձանագրմամբ՝ Քիառը խորանուխ է լինում տերութունների անտարբերության ակունքներում: Ստացված «վատթարագույն տեղեկությունների» հիման վրա ներկայացնելով Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը, նա ընդգծում է, որ եվրոպական հյուպատոսներն ու դեսպանները չեն միջամտում իրադարձությունների ընթացքին, քանզի շատ ավելի մտահոգված են ֆինանսական կոնցեսիաներ և շքանշաններ ստանալու, քան բարենորոգումներ պահանջելու հարցով³⁹⁰: Միևնույն պատճառաբանությամբ նա անվարան մեղադրում է եվրոպական պետական գործիչներին, որոնք «իրենց համարում են իրատես և առանց խորշանքի շնչում են թափված արյան հոտը: Նրանք մնում են անտարբեր, երբ սուլթանը սպանում է իր երեք հարյուր հազար հպատակին, հուսալով, որ փոխարենն իրենց ազգերն ու իրենք կստանան հանքերի և երկաթուղիների կոնցեսիաներ կամ պատվազրկող շքանշաններ»³⁹¹:

Քիառը հիմնավորապես բացահայտում է հատկապես ֆրանսիական կառավարության թրջամետ քաղաքականության գլխավոր պատճառը. «*Կայսրության մասնատումից խուսափելու համար* (ընդգծումը մերն է – Վ. Պ.), *Ֆրանսիան ամոթահար է լինելու՝ զոհերի և դահիճների պայքարում վերջիններիս աջակցելու պատճառով*» (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.)³⁹²: Նշենք, որ նա անողոք է, մասնավորապես, Հանոտոյի նկատմամբ, ով, նրա համոզմամբ, «իրեն պատվազրկել» է³⁹³ և դարձել «մարդասպանին նվիրված՝ նրա հանցակիցը»³⁹⁴:

Արևմտահայության վիճակը բարելավելու նպատակով Քիառը պահանջում է Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործումը՝ եվրոպական տերությունների գործունե միջամտությամբ: «Հայկական նահանգների «բնականոն» վիճակը, – գրում է նա, – մնում է սարսափազդու և

³⁹⁰ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”. 10-25 avril 1902.

³⁹¹ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”. 1^{er} mai 1903.

³⁹² P. Quillard & L. Margery, նշվ. աշխ., էջ 24:

³⁹³ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”. 25 janvier 1901.

³⁹⁴ P. Quillard, Préface.– Dorys, Abdul-Hamid intime, p. X.

աշխարհի ոչ մի ժողովուրդ չէր կարող, առանց անհետանալու նույնքան երկար գոյատևել նման վարչակարգի ենթակայության ներքո: Ուստի՝ մենք չենք դադարելու պահանջել... Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործումը: Պահանջելով ոչ թե արտոնություններ, այլ իրավունքներ, որոնք նրանց հատկացվել են իրավաբանական այս հիման վրա՝ հայերը չեն ներկայացնում որևէ չափազանցված կամ անիրագործելի պահանջ»³⁹⁵:

Վկայակոչելով պատմական անցյալը, Քիառը փոքր-իսկ պատրանքներ չի տածում՝ կապված հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման հարցում օսմանյան վարչակարգի կարծեցյալ ցանկության հետ: «Ավելի քան հիսուն տարուց ի վեր, թուրքական կառավարությունն ապացուցել է, որ անկարող է եղել բարենորոգվելու: Նախորդ վարչակարգերի համեմատությամբ՝ համիդյան վարչակարգն ավելի է վատթարացրել կացությունը և անհնար է ակնկալել որևէ բարենորոգում առանց եվրոպական միջամտության: Յոթ տարվա պարբերական հարստահարումներից, գաղտնի սպանություններից, մասնակի կոտորածներից հետո, այսօր հայերի կացությունը նույնքան ճգնաժամային է, որքան 1896 թ., որովհետև եվրոպան չի ցանկացել պահանջել և վերահսկել այն բարենորոգումները, որոնք պահանջում էր նոտաներով ու հուշագրերով և որոնց մասին մոռանում էին դրանց ներքո ստորագրելուց անմիջապես հետո», – գրում է նա 1903 թ.³⁹⁶: Ուստի՝ «պարզունակ բանավոր դիտողությունները», որոնցով, անհրաժեշտության դեպքում, կարող էր հանդես գալ 1898-1906 թթ. Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար Տեոֆիլ Դելկասեն (1852-1923), ըստ նրա՝ բավարար լինել չէին կարող³⁹⁷:

Նշելով, որ սուլթանի խոստումները գրեթե նույնքան անհամար են, որքան և նրա զոհերը, օսմանյան վարչակարգի նենգ քաղաքականության ելևէջներին քաջաժանոթ Քիառը պնդում է, որ հայերի համար նախատեսված բարենորոգումները հարկ

³⁹⁵ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 25 novembre 1902.

³⁹⁶ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 decembre 1903.

³⁹⁷ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 mars 1903.

է սուլթանին «պարտադրել, այլ ոչ թե խոնարհաբար ներկայացնել»³⁹⁸ (ընդգծումը մերն է – Վ. Պ.): «Կարմիր գագանին» սանձահարելը և ոչնչացնելը նա համարում է «կայսերական մարդասպանի» գոյությունը հանդուրժող և նրան քաջալերող քրիստոնյա և քաղաքակիրթ ժողովուրդների ներկայացուցիչների և ղեկավարների հրատապ պարտականությունը³⁹⁹:

Ստեղծված անելանելի կացությունը շտկելու «միակ հնարավոր» ուղին, նրա համոզմամբ, ոչ միայն հայկական վեց վիլայեթում բարենորոգումների իրականացումն է, այլև եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաների հսկողության ներքո գտնվող վարչակարգի հաստատումը⁴⁰⁰:

Ըստ այդմ՝ միանգամայն օրինաչափ է, որ ի տարբերություն, հայ ժողովրդի՝ իր ժամանակակից ֆրանսիացի գրեթե բոլոր պաշտպանների, Քիառը, հանդես է գալիս իբրև Օսմանյան կայսրության ներքին գործերին եվրոպական տերությունների զինված միջամտության կողմնակից: «Քանզի հավաստի է, որ ազատություն ստացած, իր բռնակալական կրքերի գիրկը նետված Աբդուլ Յամիլը երբեք չի իրականացնի տարրական բարենորոգումներ, որոնք պահանջում են նրա հպատակները, հարկ է, այսպիսով, դրանք նրան պարտադրել դրսից: Եվրոպական զինված միջամտությունը, որը համապատասխանում է պայմանագրերի տառին և ոգուն, ամենաարդյունավետ միջոցներից է՝ հարկադրելու համար մեծ մարդասպանին անձնատուր լինել»⁴⁰¹: Քիառը սոսկ իր տարակուսանքն է հայտնում, որ օտար զինված միջամտության նպատակահարմարության շուրջ կարող է հարուցվել փոքր-իսկ կասկած: Ըստ նրա՝ զինված միջամտությունն առաջադրվել է ոչ թե հայերի քմահաճույքի հիման վրա, այլ Բեռլինում, երբ եվրոպական տերությունները և Թուրքիան միմյանց հետ ստորագրել են 61-րդ հոդվածը, հավաստելով բարենորոգումների անհրաժեշտությունը՝ Եվրոպայի

³⁹⁸ Pour l'Arménie et la Macédoine, p. 257.

³⁹⁹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 10 juillet 1901.

⁴⁰⁰ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 97.

⁴⁰¹ P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1^{er} novembre 1901.

վերահսկողությամբ: «Բնագիրը հստակ է և փոքր-իսկ երկինաստության տեղիք չի տալիս», – նշում է նա⁴⁰²:

Ձինված միջամտության անհրաժեշտությունը Քիառը ջանում է հիմնավորել միանգամայն տարբեր կտրվածքներով: Նախ՝ նա հարցը քննարկում է բարոյական հարթության վրա, շեշտում XX դարի սկզբին տերությունների՝ Չայոց ցեղասպանության գործընթացին իրազեկ լինելու հանգամանքը, որոնք, ոչ հեռավոր անցյալում ընթացքի մեջ գտնվող լայնատարած կոտորածների մասին հստակ պատկերացումներ դեռևս չունեին. «Արդյոք Եվրոպան կթողնի, որ Մարդասպանն անպատժելիորեն գործի երկրորդ անգամ: Թեև քաղաքակիրթ կոչվող կառավարությունների երկշտությունը չափ ու սահման չունի, նրանց համար դժվարին կլինի չմիջամտել. չորս տարուց ի վեր լույս է սփռվել իրականացված հրեշավոր դաժանությունների վրա և դժվարությամբ ենք ըմբռնում, որ Աբդուլ Չամիդն ի վիճակի կլինի կրկին կոտորել, դեռևս լռակյացությամբ գործող մեծ տերությունների հանցակցությամբ»⁴⁰³: Չայ ժողովրդի նկատմամբ նոր բռնությունները կանխարգելելու նպատակով՝ նա իր պարտքն է համարում անխոնջաբար մերկացնել Աբդուլ Չամիդի իրականացրած հանցանքները, քանզի հարկը չկա, որ «նրա եվրոպացի հանցակիցները՝ ցարերը, կայսրերը, թագավորները, հանրապետության նախարարները կարողանան գանգատվել անհրազեկությունից, ինչպես 1895-1896 թթ.»⁴⁰⁴:

Այնուհետև՝ ելնելով XX դարի սկզբին Եվրոպայում տիրող քաղաքական իրավիճակի առանձնահատկություններից, Քիառն առաջադրում է զինված միջամտության իր տարբերակը. այն է՝ պարտադրելու համար սուլթանին վերջապես կենսագործել Բեռլինի պայմանագրի հոդվածները, ըստ նրա՝ ամենևին անհրաժեշտ չի լինի ապահովել եվրոպական բոլոր մեծ տերությունների համաձայնությունը: Նա գտնում է, որ հայ ժողովրդին կատարյալ բնաջնջումից փրկելու համար բավական կլինի մեծ

⁴⁰² Նույն տեղում:

⁴⁰³ P. Quillard. La Quinzaine // “Pro Armenia”, 25 mars 1901.

⁴⁰⁴ P. Quillard. La Quinzaine // “Pro Armenia”, 25 juillet 1901. Տե՛ս նաև P. Quillard. La Quinzaine // “Pro Armenia”, 25 novembre 1902.

տերություններից ընդամենը մի քանիսի միջև դաշինքի կայացումը⁴⁰⁵:

Հայոց ցեղասպանության գործընթացի կասեցման ասպարեզում եվրոպական տերությունների միջամտության արդյունավետությունը Քիառը բազմիցս հիմնավորում է վկայակոչելով XX դարի սկզբին Մուշի տարածաշրջանում ծավալված իրադարձություններին առնչվող հավաստի փաստեր, երբ ֆրանսիացի պատգամավորների ջանքերով այնտեղ ուղարկված հյուպատոսական գործակալի սոսկ ներկայությունը բավական է եղել կանխելու հայ ազգաբնակչության՝ նախապատրաստված կոտորածը: «Ամեն ինչ պատրաստ էր կոտորածի համար, սակայն համիդյան ծրագիրը ժամանակին հայտնի դարձավ եվրոպայում: Մասնավորապես Ֆրանսիայում՝ բոլոր կուսակցություններին հարող պատգամավորները հուզվեցին: Նրանք հասան այն բանին, որ նախարարը (Արտաքին գործերի – Վ. Պ.) հյուպատոսական գործակալ ուղարկի, որին հայերն ընդունեցին իբրև փրկչի: Այս տարի (1903 թ. – Վ. Պ.) այլևս չսպանեցին»⁴⁰⁶:

1901-1902 թթ. պատգամավորների՝ այս ուղղությամբ ձեռնարկած քայլերը Քիառը համարում է արդյունավետ, քանզի նախազգուշական, շատ պարզունակ այդ միջոցի շնորհիվ հաջողվել է 1903 թ. Սասունում և Մուշում խուսափել սուլթանի նախապատրաստած կոտորածներից: «Վերջին տարում Մուշի հարթավայրի գյուղացիները ֆրանսիացի պատգամավորին դիտել են իբրև ազատարարի», – գրում է նա⁴⁰⁷: Այդ իսկ պատճառով նա դրվատում է Դելկասեին, որն իրեն «փառքով է պսակել՝ վերջին երկու տարվա ընթացքում (1902-1903 թթ. – Վ. Պ.) խոչընդոտելով վերջնական կոտորածի իրականացմանը»⁴⁰⁸:

⁴⁰⁵ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 98.

⁴⁰⁶ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 1^{er} août 1903.

⁴⁰⁷ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 1^{er} septembre 1903. Տես նաև P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 25 novembre 1902.

⁴⁰⁸ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”. 1^{er} août 1903. Հարկ է նշել, որ Ս. Վարանդյանը ևս բարձր է գնահատել այս ժամանակաշրջանում տարածաշրջանի հայության փրկությանն ուղղված ֆրանսիացի դիվանագետների գործողությունները և սկզբնաղբյուրների հիման վրա հավաստել է, որ

Իրադարձությունների զարգացումը, սակայն, ընդունում է բոլորովին այլ ընթացք: 1904 թ. օսմանյան վարչակարգը նախապատրաստվում է Սասունում իրականացնել հայկական նոր կոտորածներ: Այդ ամենին քաջատեղյակ Քիառը մեկ անգամ ևս զուր ջանքեր է գործադրում եվրոպական պետությունների ղեկավարներին սթափեցնելու ուղղությամբ: Քանի որ սուլթանի մտահղացած նոր հանցանքը դեռևս չէր իրականացվել, իսկ եվրոպական երկրների ղեկավար շրջանները չէին կարող գանգատվել անիրազեկությունից, նա առաջարկում է նախօրոք փրկարար միջոցներ ձեռնարկել՝ մինչև նոր կոտորածների իրականացումը պաշտոնանկ անել Ձեքի փաշային, ետ կանչել կայսերական զորքերը և ցիրուցան անել քուրդ աշիրեքներին: Այլապես, նրա կարծիքով, եվրոպական կառավարությունները՝ նույնքան, որքան Աբդուլ Յամիդը, պատասխանատվություն կկրեն թափված արյան համար⁴⁰⁹: Քիառը մատնանշում է, մասնավորապես, ֆրանսիական, անգլիական և ռուսական կառավարություններին, որոնք թեպետ այս անգամ ժամանակին տեղեկացվել էին, այնուամենայնիվ, հանուն հայերի փրկության գործնական միջոցներ չէին ձեռնարկել: Ուստի՝ նա ցավով գրում է. «Չգործելով եռանդուն ձևով, եվրոպական տերություններն ի սկզբանե մասամբ դարձել են ներկա կացության պատասխանատուներ և հանցակիցներ՝ ոչ այնքան անտարբերությամբ, որքան ցանկության բացակայությամբ»⁴¹⁰:

Այդուհանդերձ, եվրոպական տերությունների զինված միջամտությունը հապաղում է, որին հետևում են հայկական կոտորածները Սասունում 1904 թ.: Հիասթափված Քիառն այլևս չունենալով հարցի լուծման այս տարբերակի հետ կապված

«Ֆրանսական հյուպատոսը գտնվեր է իր մարդկային կոչումի բարձրության վրա, որ նա ճշմարիտ հայու մը՝ պես պաշտպաներ է հայ ժողովուրդը... և որ հյուպատոսներու նշանակումը ուրիշ վտանգված վայրերում ու անոնց աչալուրջ հսկողությունը միևնույն ժամանակ Պոլսո դեսպանի մշտնջենավոր հորդորներն ու ազդարարությունները Ք[արծր] Դռան՝ ազատեցին մեր ժողովուրդը մյուս վիլայեթներուն մեջ ևս»: Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 318:

⁴⁰⁹ P. Quillard. La Quinzaine // "Pro Armenia". 15 mars 1904.

⁴¹⁰ P. Quillard. La Quinzaine // "Pro Armenia", 15 mai 1904.

երաշխիքներ, արդեն արձանագրում է, որ առկա պայմաններում չի կարող լինել որևէ այլ գործնական այլընտրանք, քան հայերի հեղափոխական գործունեությունը⁴¹¹:

Պատահական չէ, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումների մանրամասները մշտապես գտնվել են Քիառի ուշադրության կենտրոնում, որոնք նա ենթարկել է մանրազնին վերլուծության: Ելնելով հարցի կարևորությունից, որի պատմությունը խեղաթյուրում են թուրք պատմաբանները⁴¹², ինչպես նաև հաշվի առնելով դրա նկատմամբ հայրենական պատմաբանների ցուցաբերած հետաքրքրությունը⁴¹³, նպատակահարմար ենք գտնում մանրամասն քննարկել Քիառի մեկնաբանությունները, որոնք ձեռք են բերում մեծ այժմեականություն:

Ի տարբերություն զանազան քաղաքական կողմնորոշում ունեցող ֆրանսիացի բազմաթիվ գործիչների (Ժ. Կլեմանսո, Ժ. Ժորես, Դ. Կոչեն և ուրիշներ), նա իրադարձությունների եվրոպացի եզակի ժամանակակիցներից է, ով անդրադառնում է հայ

⁴¹¹ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 1^{er} novembre 1905.

⁴¹² Տե՛ս օրինակ K. Gürün, Le dossier arménien. Paris, 1984, p. 151-201; E. Uras, The Armenians in History and the Armenian Question, Istanbul, 1988, p. 713-780. Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 307-324:

⁴¹³ Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից; *Տուլնի* Անդրանիկ. դարաշրջան, դեպքեր, դեմքեր, Երևան, 1994; Հ. Մ. Պողոսյան, նշվ. աշխ.; Լ. Հ. Սկրտչյան, Ջեթունի ապստամբությունը, 1895-1896 թթ., Երևան, 1995; Հ. Ռ. Սինոնյան, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա-Բ, Երևան, 1996; *Տուլնի* Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I-II, Երևան, 2003; Մ. Գ. Ներսիսյան, Հայ ազատագրական շարժումը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները.– Մ. Գ. Ներսիսյան, Պատմության կեղծարարները (հողվածներ և հաղորդումներ), Երևան, 1999, էջ 58-75; *Տուլնի* Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ; Ա. Ս. Համբարյան, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.); Կ. Չ. Թառոյան, նշվ. աշխ.; Հ. Բ. Գրիգորյան, Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Երևան, 2002; *Տուլնի* Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Երևան, 2004; Է. Կոստանդյան, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թթ.), Երևան, 2005, էջ 133-157:

Ժողովրդի մղած ազատագրական պայքարին և փորձում, սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում, հավուր պատշաճի արժեվորել՝ հայ ֆիդայիների ծավալած պայքարի մանրամասները: «Հայերին հաճախ մեղադրել են արիության բացակայության համար,— գրում է նա,— և շատերը զարմանում են, որ երեք հարյուր հազար մարդ թույլատրել է իրեն սպանել «ինչպես ոչխարների»՝ առանց դահիճների դեմ դիմադրություն կազմակերպելու: Սակայն, մոռանում են ասել, որ թե՛ Կոստանդնուպոլսում և թե՛ նահանգներում կատարելապես անգն հայերը գտնվում են կանոնավոր զորքերի, ոստիկանների և համիդիեների կամ գերազանց զենքերով զինված ոչ պաշտոնական, սովորական մարդասպանների դեմ հանդիման... Փոխարենը, ամենուր, որտեղ հայերը զենք ունեն՝ այնպես, ինչպես հելլեն պալիկարներն ու արմատոլները և սերբ կամ բուլղար հայդուկները, գիտեն, թե ինչպես պաշտպանվեն»⁴¹⁴:

Ազատագրական պայքարի օրինաչափությունը Քիառը հիմնավորում է օսմանյան բռնատիրության պայմաններում օրինականության կատարյալ բացակայությամբ: Նրա համոզմամբ՝ կայսրության տարածքում, ուր գոյություն չունի օրինական ճանապարհով հասարակական կարծիքի դրսևորման որևէ եղանակ, ուր չկան մամուլի ազատություն կամ նույնիսկ «խորհրդակցական ժողով» և որտեղ ամեն ինչ կախված է գահակալի հայեցողությունից, հարկ է, որ հրաշք տեղի ունենա, որպեսզի վերջինս կամովին հրաժարվի անսահմանափակ իշխանությունից: «Հրաշքի բացակայության պարագայում,— նշում է նա,— միակ ազդու միջոցը մնում է ազատամիտ մարդկանց կամքը, որոնք նախապես անմնացորդ նվիրաբերել են իրենց կյանքը»⁴¹⁵:

Իրատեսական այս մոտեցումն իր արտացոլումն է գտել դեռևս Քիառի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված առաջին՝ 1894 թ. Սասունի կոտորածներին առնչվող՝ Մորիս Լևեյո կեղծանվամբ լույս ընծայված հոդվածում: Այստեղ առաջադրված վերլուծությունները, որոնց արդեն անդրադարձանք, պարզորոշ վկայում են, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը նա ի

⁴¹⁴ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83.

⁴¹⁵ P. Quillard. La Quinzaine // "Pro Armenia", 1^{er} novembre 1905.

սկզբանե պայմանավորում է սուսկ օսմանյան վարչակարգի ճի-
րաններում հեծող արևմտահայության հուսակտուր վիճակով:

Հաջորդ ելույթներում՝ թուրք ելուզակների դեմ հայ ժո-
ղովրդի մղած պայքարը Քիառը դիտում է իբրև ինքնապաշտ-
պանության ցայտուն դրսևորում: 1895 թ. սեպտեմբերին Կոս-
տանդնուպոլսում հնչակյանների նախածեռնությանը կազմա-
կերպված ցույցի առիթով նա ընդգծում է ցուցարարների հիմ-
նական նպատակը, այն է՝ օսմանյան «վերնախավին տեղեկաց-
նել բարենորոգումների իրականացմանն առնչվող՝ Կոստանդ-
նուպոլսի հայերի ցանկություններին»: Քիառը ցավով է նշում,
որ բռնությունների տեղիք տված՝ միանգամայն խաղաղ նպա-
տակ հետապնդող այս գործողության ընթացքում ոստիկանու-
թյունը՝ զինված մահմեդական բնակչության օժանդակությամբ,
«կոպտորեն ետ է մղել» ցուցարարներին: Միայն դրանից հետո
են հայերն ապաստանել եկեղեցիներում և, ինչպես նա նշում է,
նրանցից շատերը, ովքեր «զենքեր են ունեցել՝ վճռել են պաշտ-
պանվել յուրաքանչյուր նոր հարձակումից»⁴¹⁶:

Հայերի՝ ընդամենը պաշտպանվելու, այլ ոչ թե նախահար-
ձակ լինելու՝ մեծ կարևորություն ունեցող հանգամանքը Քիառը
քննարկում է բազմիցս, վկայակոչում 1895 թ. Ձեթունում, 1896
թ. Վանում և այլուր արձանագրված՝ ազատագրական պայքարի
այլևայլ դրվագներ⁴¹⁷: 1901 թ. ի վեր, Արևմտյան Հայաստանի
զանազան վայրերում սուլթանի հայահալած քաղաքակա-
նության սաստկացման հետ կապված՝ Քիառը պարբերաբար
քննարկում է այս հարցը. «Այսօր նրանք (հայերը – Վ. Պ.)
պաշտպանվում են, ինչպես արդեն պաշտպանվել են Ձեթու-
նում, Սասունում, Օսմանյան բանկում: Արդեն նույնիսկ այն
տարածաշրջաններում, ուր կայսերական կամքն իրականաց-
նողներն ամենադաժան ձևով ավերածություններ են սփռել,
հայտնվել են վրիժառուներ, որոնք ուժին դիմակայում են ուժով
և սպանում իրենց ազգի դահիճներին»⁴¹⁸: Քննարկելով 1904 թ.
ապրիլի 10-ից մինչև մայիսի 5-ը Սասունում տեղի ունեցած

⁴¹⁶ P. Quillard, *Diplomatic secrète du sultan*, p. 883.

⁴¹⁷ Տես օրինակ P. Quillard, *Pour l'Arménie. Mémoire et dossier*. p. 83-88.

⁴¹⁸ P. Quillard, *La Quinzaine // "Pro Armenia"*, 10 septembre 1901.

անցքերը, ի շարս բազում անհերքելի փաստերի վկայակոչման, ինչպիսիք են օսմանյան կառավարության քաղաքականության կանխամտածված բնույթն ու նրա սադրիչ գործողությունները կամ բազում ամիսներ ի վեր, նոր կոտորածների նախապատրաստմանը ճանապարհի հարթած եվրոպական պետությունների հանցավոր անտարբերությունը, նա առանձնացնում է նաև «հայերի հերոսական դիմադրության» իրողությունը⁴¹⁹:

Զբավարարվելով, սակայն, ընդհանուր բնույթի դիտարկումներով, Քիառը համակողմանի վերլուծության է ենթարկում ֆիդայական շարժման հետ կապված զանազան մանրամասներ, որը նրա մոտեցման անժխտելի արժանիքներից է: Նախ՝ նա հայ վրիժառուներին զերծ է պահում արյունալի իրադարձությունների հետևանքով նրանց վրա բարդվող փոքր-իսկ պատասխանատվությունից, իրադարձություններ, որոնք «վերստին տեղի են ունենում և անընդմեջ շարունակվում հայկական վիլայեթներում: Բոլոր նրանց կարծիքով, ովքեր տեղում անմիջականորեն իրազեկ են դարձել մի ամբողջ ազգի աղետին՝ ազգերի բնականոն կյանքը դժոխային է: Այստեղ և այլուր ժողովված անհամար վկայություններն ապացուցում են, որ թվում է, թե ցանկացած բնույթի հարստահարումների և տառապանքների ենթակա այս դժբախտների համար, որոնք շրջապատված են թշնամիների վերածված հարևաններով, մահն ազատագրում է»⁴²⁰: Այս պայմաններում, Քիառը ոչ միայն ֆիդայական շարժման ծագումն է համարում միանգամայն օրինաչափ, այլև նվազագույն իսկ տարակուսանք չի տածում արևմտահայության՝ ֆիդայիներին սատարելու հարցում դրսևորած բուռն ցանկության շուրջ. «Այս շարժումն արհեստածին չէ, – գրում է նա, – և հայ ժողովուրդը, որն ամբողջությամբ գիտակցել է իր աղետալի վիճակը, չի հապաղի, ընդհանուր առմամբ, լռակյացությամբ կամ բացահայտորեն զորավիգ լինել այն անձանց, որոնց եվրոպական փաստաթղթերում այլևս

⁴¹⁹ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 1^{er} juin 1904.

⁴²⁰ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 novembre 1904.

չեն համարձակվում ավագակներ անվանել»⁴²¹:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ ի սկզբանե լայն տարածում է գտել այսպես կոչված՝ «հայկական ապստամբության» հետ կապված վարկածը, ըստ որի՝ զանգվածային կոտորածների պատճառ են դարձել հայերի «խռովությունները»: Այս հարցի շուրջ 1904 թ. բանավեճի մեջ ընդգրկվելով Դելկասեի հետ, Քիառը գրում է. «Երբ ամենավայրագ բռնակալությանը ենթակա մարդիկ զենքի են դիմում և պաշտպանում յուրայինների պատիվն ու կյանքը, դա բռնություն չէ. այդ կոտորածն է, որը բնութագրվում է իբրև գերագույն իշխանության գործողություն և հեղված արյան համար հարկ է հաշվետվություն պահանջել միայն սուլթան Աբդուլ Համիդից»⁴²²:

Հիմնվելով զանազան սկզբնաղբյուրներից քաղված տեղեկությունների վրա, Քիառը հերքում է համիդյան պաշտոնյաների, մասնավորապես, Ֆրանսիայում Օսմանյան կայսրության դեսպան Մունիր բեյի՝ 1904 թ. Փարիզում տարածած ստահող լուրերը, ըստ որոնց՝ Սասունի իրադարձությունները կարող էին վաղուց ի վեր հրահրած լինել հեղափոխականները⁴²³: Այս առիթով Քիառը գրում է. «Սկսած 1901 թ. զորքերում գտնվող մասոնական առաջնորդները ստացել են Սասունում զորանոցներ կառուցելու հանձնարարություն: Այդ ժամանակ բնակիչները կրքոտությամբ բողոքել են... Դա նշանակում էր զինվորների ողորմածությանը հանձնել իրենց կանանց և աղջիկներին՝ երբ դաշտերում աշխատելու համար իրենք հեռանային տներից: Այդ իսկ տարի, Մուշից եկած մասոն առաջնորդները և զինվորական ստորաբաժանումները հարկադրված են եղել հրաժարվել իրենց նախածեռնությունից, իսկ կանայք նրանց վտարել են: Այդ պահից ի վեր, յուրաքանչյուր տարի գարնանը զորքերն առաջանում էին դեպի Սասուն և դրան զուգընթաց քուրդ աշիրեթներն էին տեղաշարժ-

⁴²¹ Նույն տեղում:

⁴²² P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 15 juin 1904.

⁴²³ P. Quillard. La Quinzaine // "Pro Armenia". 1^{er} juillet 1904.

վում և նախապատրաստվում պայքարի, կողոպուտի ու ավարառության»⁴²⁴:

Ընդհանուր առմամբ, Քիառը գտնում է, որ «երկարատև ու ճարպկորեն հղացած ծրագրին հետամուտ»՝ Աբդուլ Յամիդը 1904 թ. գարնանը խորհում էր, որ բարենպաստ պահը վրա էր հասել հայկական նոր կոտորածների ձեռնամուխ լինելու համար: Ըստ այդմ՝ նա ուշադրությունը հրավիրում է հայ ֆիդայիներին նախապես վարկաբեկելու ուղղությամբ սուլթանի ձեռնարկած քայլերի վրա: «Միաժամանակ ստահող հեռագրերը տարածում են ֆիդայիների իրականացրած բռնություններին առնչվող լեգենդը, – գրում է նա, – որոնց մեղադրում են մահմեդականների գյուղերում կանանց ու երեխաներին կոտորելու և քուրդ աղջիկներին առևանգելու համար: Դա ճշմարտությանը հակասող պատկեր է, քանզի երբ Անդրամիկը գրոհել է Դապիկ գյուղը, որի բնակիչները նրան ոչնչացնելու նպատակով դավադրություն էին հյուսում, նախքան տղամարդկանց պատժելը, ինչին նրանք արժանի էին, նախ և առաջ՝ քուրդ աղջիկներին և կանանց վնասագերծել է ցանկացած չարիքից՝ ուղեկցելով հայկական ընտանիքներ: Սակայն նախքան ֆիդայիներին ոչնչացնելն ու Սասունի և Մուշի հարթավայրի բնակչությանը կոտորելը՝ հարկ էր նրանց վարկաբեկել եվրոպական հասարակական կարծիքի առջև»⁴²⁵: Նշենք, որ հայ ֆիդայիներին բնորոշ վեհության ու մեծահոգության էական հանգամանքը, Քիառն ընդգծել է նաև Խանասորի արշավանքին նվիրված՝ իր գրավոր ելույթում (որին մանրամասն կանդրադառնանք ստորև), ուր հավաստում է, որ ռազմական այս գործողության ընթացքում հաղթանակած ֆիդայիներին արգելված էր կողոպուտել և բռնություններ գործադրել կանանց ու երեխաների նկատմամբ⁴²⁶:

Այսպես, վկայակոչելով հայ ֆիդայիների՝ մահմեդական բնակչության հանդեպ դրսևորած բարյացակամությունը, Քիառը միաժամանակ ուշադրությունը բևեռում է մեկ այլ կարևոր

⁴²⁴ Նույն տեղում:

⁴²⁵ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”. 15 mai 1904.

⁴²⁶ P. Quillard, Pour l’Arménie. Mémoire et dossier, p. 85.

իրողության, այն է՝ թուրք ժողովրդի՝ նրանց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի վրա: Նրա համոզմամբ ֆիդայիները պարկեշտ վարքագծով «արժանանում են թե նրանց (զորքերի – Վ. Պ.), որոնց՝ հրեշավոր կառավարությունը պարտադրում է ոչնչացնել իրենց և թե՛ իրենց գործողությունների ականատեսը դարձած թուրք գյուղացիների հարգանքին ու հիացմունքին... Այդ բնակչությունը (մահմեդական – Վ. Պ.) ևս տառապում է: Նա արդեն գիտակցում է, որ հայկական ապստամբությունն օրինաչափ է և որ փրկությունը կարելի է ակնկալել միայն քաղաքակիրթ տերությունների՝ սուլթանին պարտադրած բոլորովին այլ վարչակարգի հաստատումից»⁴²⁷:

Քիառը խորին ակնածանքով է արտահայտվում «աներեր քաջությանը»⁴²⁸ դեպի մահն ընթացող ֆիդայիների մասին, որոնք, ինչպես նա նշում է, «շռայլորեն հեղել են իրենց հերոսական արյունը հանուն անհուսալի գործի»⁴²⁹: «Երբեք, ի դեպ, – գրում է նա մեկ այլ առիթով, – ֆիդայիները չեն զլացել իրենց գործողությունների պտուղները ճաշակելուց: Նրանք, անկասկած, կարող էին ապրիլին (1904 թ. – Վ. Պ.) ստանալ իրենց անձնական անվտանգության բոլոր երաշխիքները: Նրանք այդ չեն ցանկացել, քանզի համառորեն վճռել էին պահանջել նվազագույն բարենորոգումներ, որոնք Եվրոպան, ահա ավելի քան քառորդ դարից ի վեր, խոստացել էր նրանց հայրենակիցներին»⁴³⁰:

Ինչ վերաբերում է ֆիդայիների նպատակներին, ապա դրանք, ըստ Քիառի՝ հանգում էին սոսկ հայ ժողովրդի ոտնահարված տարրական իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորման պահանջին: Անդրադառնալով կաթողիկոս Խրիմյանի՝ 1904 թ. տերություններին հղած նամակներից մեկին, որով վերջինս պահանջում էր ոչ թե ազգային անկախություն, այլ միայն բարենորոգումների իրականացում և ժողովրդի գոյության պահպանման նվազագույն երաշխիք-

⁴²⁷ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 novembre 1904.

⁴²⁸ Նույն տեղում:

⁴²⁹ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 1^{er} novembre 1905.

⁴³⁰ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 novembre 1904.

ներ, ինչպիսիք են բռնագրավված ունեցվածքը կողոպտված հայերին հանձնումը, վտարանդիներին հայրենիք վերադառնալու թույլտվության ընձեռումը, հայերի ազատ տեղաշարժը թե երկրի ներսում և թե՛ դրանից դուրս, համընդհանուր ներման շնորհումը, քրդերից և չերքեզներից պաշտպանվելու իրավունքը⁴³¹, Քիառը գրում է. «Արդյո՞ք ֆիզիկական և բարոյական տառապանքներից վիատված ֆիդայիները... չարացած սարսափելի պայքարից, որը մղում են հազար անգամ գերազանցող ուժերի դեմ, յուրաքանչյուր պահի հալածվում են և գտնվում մահվան սպառնալիքի տակ, կրավարարվեն նման ողջախոհ և չափավոր պահանջներով: Այսօր դրանում կասկածներ տածելն իսկ անհնար է: Անդրանիկի՝ եվրոպացի հյուպատոսներին հանձնած հուշագիրը⁴³², որը նրանք խոստացել են փոխանցել իրենց համապատասխան կառավարություններին, որևէ հիմնահարցում չի զանազանվում կաթողիկոսի մամակից»⁴³³:

Հարկ է նաև նշել, որ ազատագրական շարժման վերելքը XX դարի սկզբին Քիառը մասամբ պայմանավորում է նաև եվրոպական պետությունների կատարյալ անտարբերությամբ: «Եթե պաշտոնական եվրոպան, – գրում է նա, – չկատարի իր տարրական պարտականությունը, ֆիդայիները չեն թույլատրի սպանել իրենց հայրենակիցներին, որոնց կպաշտպանեն: Սասունից և այլ վայրերից նրանք կկարողանան հասնել այնտեղ, որտեղ վտանգ ծառանա»⁴³⁴:

Արդեն ազատագրական շարժման ելևէջների առիթով, Քիառը մեկ անգամ ևս ընդգծում է հայ ժողովրդի հաստա-

⁴³¹ Կաթողիկոսի այս և այլ մամակների մասին տե՛ս է. Ա. Կոստանդյան, Սկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 434:

⁴³² Անդրանիկի և ՀՀԳ գործիչներ Սարհատի (Գևորգ Չաուշ) ու Տարոնեցու ստորագրությունները կրող՝ 1904 թ. հուլիսի 5-ի պահանջագրի մասին մանրամասն տե՛ս Դ. Ռ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գ. Ա, էջ 196-199: Ի դեպ, Դ. Սիմոնյանը հավաստում է, որ պահանջագիրը «չուներ Օսմանյան կայսրությունից անջատվելու որևէ տրամադրություն»: Նույն տեղում, էջ 198:

⁴³³ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 août 1904.

⁴³⁴ P. Quillard. La Quinzaine // “Pro Armenia”, 1^{er} août 1903.

տակամոթյունն ու անկոտրում կամքը պայքարը շարունակելու ուղղությամբ: «Եվրոպայում նվազ կամ ոչ այնքան հայտնի՝ համեմատաբար նոր փաստերը հայերին ներկայացնում են այլ լույսի ներքո,— գրում է նա,— և թույլ չեն տալիս նրանց դիտել իբրև նախախնամության կողմից՝ զոհերի ողորմելի կացության դատապարտվածների»⁴³⁵: Իբրև այս հավաստման հիմնավորում՝ Քիառը խոսքը կենտրոնացնում է, մասնավորապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենացցուն դրվագներից Խանասորի արշավանքի և Առաքելոց վանքում Անդրանիկի կազմակերպած դիմադրական պայքարի վրա:

Խանասորի արշավանքի մասին Քիառը, ըստ իր խոստովանության՝ տեղեկությունները քաղել է 1897 թ. գերմանական «Ցուքունֆտ» պարբերականում լույս ընծայված հոդվածից⁴³⁶ և ջանացել ընդհանուր գծերով ոչ միայն ներկայացնել այդ գործողության պատկերը, այլև անգամ բացահայտել դրա պատճառները: 1897 թ. հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերը ՅՅԴ նախածեռնությամբ 253 դաշնակցականից բաղկացած ռազմարշավային մի խումբ անցնում է պարսկա-թուրքական սահմանը, ներխուժում Պարսկաստանին սահմանամերձ տարածք և Խանասորի դաշտում խիզախ հարձակում իրականացնում մազրիկ ցեղին պատկանող քուրդ հրոսակախմբերից մեկի վրա՝ հակառակորդին պատճառելով մեծ կորուստներ: Տալով ընդամենը 19 զոհ, խումբը վերադառնում է Պարսկաստան⁴³⁷: Խանասորի արշավանքը հետապնդում էր գլխավորապես եվրոպական դիվանագիտության ուշադրությունը Հայկական հարցի վրա վերստին հրավիրելու նպատակ և համապատասխանում էր ՅՅԴ որդեգրած՝ ազատագրական շարժման նոր մարտավարությանը⁴³⁸:

⁴³⁵ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 83.

⁴³⁶ Խոսքը վերաբերում է գերմանացի ճանապարհորդ Բ. Ֆիշերի «Հայոց մի հաղթությունը» հոդվածին, որը Լևոն Աթաբեկյանի թարգմանությամբ տպագրվել է «Դրոշակում» (1897, թիվ 13):

⁴³⁷ Խանասորի արշավանքի մասին տես Մ. Վարանդեան, նշվ. աշխ., էջ 177-189; Բ. Գրիգորյան, Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., էջ 65:

⁴³⁸ Մանրամասն տես Բ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56-57:

Գիտակցելով Խանասորի արշավանքի կարևորությունը⁴³⁹, Քիառը, չունենալով ստույգ տեղեկություններ, ուշադրությունն, այդուհանդերձ, կենտրոնացնում է դրա վրա: Նա, սակայն, արշավանքը մեկնաբանում է իբրև ինքնաբուխ ծնունդ առած գործողություն և այն պայմանավորում բացառապես հայ ֆիդայիների վրեժխնդրությամբ⁴⁴⁰, որը կյանքի էր կոչվել ի պատասխան 1896 թ. Պարսկաստան տեղափոխվող՝ Վանի ինքնապաշտպանության մասնակիցներից շատերի կոտորածի, որոնց նահանջի ճանապարհին պաշարել էր քրդական նշված հրոսակախումբը (անհավասար պայքարում հայերը տվել էին 384 զոհ): Ինչպես տեսնում ենք, հավաստի սկզբնաղբյուրների բացակայության պատճառով՝ Քիառը չի ըմբռնել այս գործողության նշանակությունը: Բացի դրանից, ակնհայտ է, որ ազատագրական շարժումների արդի պատմագրության նվաճումների լույսի ներքո՝ նրա մեկնաբանություններն ամենևին սպառնիչ չեն (նույնիսկ ՀՀԴ՝ իբրև հարձակման նախաձեռնողի մասին նրա շարադրանքում չկա փոքր-իսկ ակնարկ): Իրադարձության մասին ունենալով, ըստ էության, աղոտ պատկերացումներ, նա չի խուսափել նաև փաստական անճշտություններից (ըստ նրա՝ օրինակ, ռազմարշավային խումբը բաղկացած է եղել երեք հարյուր մարտիկից, իսկ մարտադաշտից ճողոպրած մագրիկ ցեղի առաջնորդը՝ իբր սպանվել է):

Քիառի զանազան ելույթներում բազմիցս հառնում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ղեկավար գործիչները, մասնավորապես, Սերոբն ու Անդրանիկը: «Այնպիսի ղեկավարներ, ինչպիսին Սերոբն է, որին անվանել են Սերոբ փաշա, մարտնչել են բազում տարիներ շարունակ՝ քուրդ և թուրք բռնակալիկների դեմ գործադրելով արդարացված

⁴³⁹ Խանասորի արշավանքն, ի դեպ, հայրենական պատմագրության մեջ տեղիք է տվել իրարաներժ գնահատականների: Եթե Հ. Պողոսյանի կարծիքով արշավանքն ընդամենը «ձախողված գործ էր», ապա՝ Հ. Գրիգորյանն այն համարում է «աննախադեպ երևույթ հայոց ազատամարտի համար»: Հմմտ. Հ. Մ. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից (1850-1900), Երևան, 1988, էջ 289; Հ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 65:

⁴⁴⁰ P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 84.

բռնություններ»⁴⁴¹: Նա ցավով է արձանագրում, թե ինչպիսի
նենգ եղանակներով է իրականացվել Սերոբի սպանությունը,
սակայն, միաժամանակ անվարանորեն ընդգծում է, որ Վանում,
Մուշում և Սասունում նրա սկսած պայքարը հաջողությամբ
շարունակում է Անդրանիկը⁴⁴²:

Վերջինիս մասին Քիառն արտահայտվում է առանձնակի
համակրանքով, նրա գործունեությանն առնչվող դրվագները
քննարկում զանազան ելույթներում: Օրինակ՝ 1904 թ. մայիսին
Քիառն մանրամասն վերլուծելով նրա առաջադրած պահանջ-
ները, մեկ անգամ ևս հիմնավորում է ֆիդայական շարժման
գլխավոր միտումը: «Եվրոպական նախարարներին խրատելու
համար լավ կլինի նրանց տեղեկացնել,– նշում է նա,– թե ո՞վ է
այս ավազակը, որն այսօր մահվան սպառնալիքի տակ է, քանզի
իր ժողովրդի գործը պաշտպանել է իրեն մատչելի միջոցնե-
րով»⁴⁴³: Ներկայացնելով Անդրանիկի կենսագրությանն
առնչվող համառոտ տեղեկություններ, Քիառն հանգամանորեն
անդրադառնում է 1901 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Մու-
շից արևելք գտնվող Առաքելոց վանքում վերջինիս կազմա-
կերպած հերոսական դիմադրությանը, որը նպատակ ուներ դի-
մակայել թուրք հարստահարիչներին և մատնացույց անել հայ
ժողովրդի կենսունակությունը⁴⁴⁴: Վկայակոչելով իր տրամադ-
րության տակ եղած՝ կրոնական սկզբնաղբյուրից բխող մի փաս-
տաթուղթ, Քիառն թվարկում է այն հայտարարությունները,
որոնցով ազատագրական շարժման պարագլուխը նոյեմբերին
հանդես է եկել վանքում տեղի ունեցած ընդհարումների ժամա-
նակ հակառակորդի պատվիրակների հետ վարած բանակցու-
թյունների ընթացքում և դրանք համարում է «արժեքավոր»: Նա

⁴⁴¹ Նույն տեղում, էջ 86:

⁴⁴² Նույն տեղում:

⁴⁴³ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 mai 1904.

⁴⁴⁴ Առաքելոց վանքում Անդրանիկի խմբի մղած մարտերի մասին տես
Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից,
էջ 189-196; Հ. Ս. Պողոսյան, Սասունի պատմություն (1750-1918), էջ 250-
253; Հ. Ռ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 118-130, Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ.,
էջ 189-191:

Անդրանիկի ներկայացրած հայտարարություններն ամփոփում է վեց կետում.

«1. Որ ինքն ու իր խումբը ապստամբներ չեն, այլ պաշտպանում են թե՛ իրենց և թե՛ քրդերի զոհը դարձած հայրենակիցների կյանքը:

2. Որ իրենք երբևէ չեն կողոպտել գյուղերը, հարձակվել բանագնացների վրա, սպանել անպաշտպան մարդկանց:

3. Որ իրենք սպանել են Բշարե հալիլիև և երեք այլ քրդերի, որոնք եղել են Շուշնամերկի սպանությունների հեղինակները:

4. Որ փոխարենը (և նա ներկայացնում է ամբողջական թվարկում), ինչպես Մուշի, այնպես էլ Սասունի գյուղերում քրդերն են իրականացրել անհամար կողոպուտներ, գողություններ, սպանություններ և կոտորածներ:

5. Որ իրենք ճանաչում են սուլթանի իշխանությունը, բայց որ մեկ սուլթանը բավական է և չեն ցանկանում ունենալ ուրիշների՝ հանձինս քուրդ առաջնորդների, որոնք՝ ինչպես սուլթաններ, տնօրինում են հայերի կյանքը և ունեցվածքը, նրանցից հարկեր գանձում և ըստ իրենց քնահաճույքների՝ օրենքներ կիրառում:

6. Որ իրենք անձնատուր կլինեն, եթե երաշխավորվի իրենց և երկրի հայերի անվտանգությունը»⁴⁴⁵:

Վերլուծելով «ոչ այնքան պահանջկոտ հեղափոխական» Անդրանիկի հայտարարությունները, Քիառը դրանք բնորոշում է իբրև «գործողության ծրագիր, որը չի կարող սարսափեցնել ոչ մեկի, նույնիսկ նորին կայսերական մեծությանը»⁴⁴⁶ և ըստ այդմ՝ ևս մեկ անգամ ընդգծում հայ ֆիդայիների առաջադրած պահանջների օրինականությունը:

Թեպետ Քիառն ընդունում է ազատագրական շարժման

⁴⁴⁵ P. Quillard. La Quinzaine // "Pro Armenia". 15 mai 1904. Տես նաև P. Quillard, Pour l'Arménie. Mémoire et dossier, p. 87. Հարկ է նշել, որ Անդրանիկն առաջադրել է նաև քաղաքական պահանջներ, օրինակ՝ ազատություն շնորհել Տարոնում ձերբակալված քաղաքական հայ բանտարկյալներին, որոնք վրիպել են Քիառի ուշադրությունից: Տես Հ. Ս. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 252; Հ. Ռ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 124:

⁴⁴⁶ P. Quillard. La Quinzaine // "Pro Armenia". 15 mai 1904.

ղեկավարների պահանջների չափավորությունը, այնուամենայնիվ, չի ժխտում հեղափոխական տրամադրությունների առկայությունը հայերի շրջանում, որը սակայն հիմնավորում է Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող պայմաններով: «Իրականում, Թուրքիայում, ինչպես նաև Ռուսաստանում, հայերն, *անհրաժեշտության դեպքում* (ընդգծումը մերն է – Վ. Պ.), հեղափոխականներ են: Դա չի նշանակում, թե նրանք տուրք են տալիս միայն ահաբեկչությանը և ընդունում միայն խելահեղ պայքարի անհրաժեշտությունը: Նրանք հեղափոխականներ են, և այդ այն դեպքում, երբ նրանք հպատակներից ամենահնազանդներն են, ինչը բնորոշ է նրանց գերակշռող մասին: Նրանք հեղափոխականներ են, քանզի ինքնակալական, բացարձակ անիշխանության, կրոնական և քաղաքական ճնշումների այս երկրներում ներկայացնում են արևմտյան գաղափարներն ու նշակույթը»⁴⁴⁷:

Ինչպես տեսնում ենք հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը Քիառի տված գնահատականները միանգամայն իրատեսական են և անկողմնակալ: Նրա անուրանալի արժանիքներից առանձնացնենք, մասնավորապես, հայ ժողովրդի մղած պայքարին առնչվող՝ բազմապիսի խնդիրների քննությունը:

Հայ ժողովրդին սատարելու ասպարեզում Քիառի ծավալած բազմաբնույթ գործունեությունը և ցուցաբերած մեծ հետևողականությունը պայմանավորված է գլխավորապես նրա քաղաքացիական ուրույն դիմագծով, որին բնորոշ են թե ազնվությունն ու շիտակությունը և թե՛ հանուն արդարության մարտնչելու անսամձահարելի ցանկությունն ու կիրքը⁴⁴⁸: Նրա ժամանակակիցներից ոմանք (Ա. Ժերար, Ա. Ֆոնտենաս) իրավամբ ընդգծել են այն հանգամանքը, որ Կոստանդնուպոլսում բնակվելու ժամանակաշրջանում նա խիզախել է վտանգի ենթարկել իր ազատությունը և նույնիսկ կյանքը՝ հանուն հայ

⁴⁴⁷ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 15 mars 1906.

⁴⁴⁸ Նշենք, որ «Դրոշակի» խմբագրությունը Քիառին բնութագրել է իբրև «հզոր գրիչ մը, անկաշկանդ միտք մը, բարձր հոգի մը» ունեցող անձնավորության: Տես «Դրոշակ», 1899, թիվ 8, էջ 115:

ժողովրդի ողբերգության հավաստի պատկերը եվրոպական հանրությանը ներկայացնելու գործի⁴⁴⁹: Հետագայում՝ 1903 թ., Հայաստանում և Մակեդոնիայում ծավալված իրադարձությունների շուրջ՝ Վ. Բերարի և իր ցուցաբերած մեծ հետաքրքրությունը Քիառը մեկնաբանել է հետևյալ կերպ. «Մենք տեղում ծանոթացել ենք այս ժողովուրդների երկարատև նահատակությանը, հետաքրքրվել նրանցով և պատմելով այն մասին, ինչ տեսել ենք, կատարել ենք սոսկ մեր պարտքը, ասել ճշմարտությունը»⁴⁵⁰:

Ըստ այս ամենի՝ Ֆ. դը Պրեսանսեն, անտարակույս, ունեցել է բոլոր իրավունքները հավաստելու, որ ի դեմս Քիառի «հայերն ունեին անվեհեր մարտիկ, անխոնջ պաշտպան, խելամիտ խորհրդակալ»⁴⁵¹:

Հայ իրականության մեջ Քիառի հայանպաստ գործունեությունը թեև հավուր պատշաճի չի արժեվորվել, այնուամենայնիվ, չի շրջանցվել լռությամբ: Ֆրանսիական գրականության զարգացման ասպարեզում նրա վաստակի գնահատականը դեռևս 1895 թ. տվել է Չոպանյանը, ով դրա հետ մեկտեղ չի գլացել հայ ընթերցողին թարգմանաբար ներկայացնել նաև նրա որոշ ստեղծագործություններ⁴⁵²: Քիառի անունը հնչել է, մասնավորապես, 1912 թ.՝ նրա վաղաժամ մահվան կապակցությամբ, որի բոթը ցնցել է հայ ժողովրդի պաշտպաններին, անհուն վիշտ պատճառել հայ գործիչներին և մտավորականներին:

Ի շարս քաղաքական և հասարակական կազմակերպությունների (ՀՅԴ, Հնչակյան կուսակցություն, Թուրքիայի Հայոց պատրիարքարան, Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարան), նրանցից շատերը (Անդրանիկ, Մ. Ջավարյան, Ռ. Ջարդարյան, Վարդգես, Գ. Ջոհրապ, Սիամանթո և ուրիշներ) ցավակցական հեռագրեր են հղել Քիառի այրուն⁴⁵³, հանդես եկել

⁴⁴⁹ Տե՛ս A la mémoire de Pierre Quillard, p. 44, 50.

⁴⁵⁰ Pour l'Arménie et la Macédoine, p. 304.

⁴⁵¹ A la mémoire de Pierre Quillard, p. 193-194.

⁴⁵² Ա. Չոպանյան, Պիեռ Քիառ. – «Ծաղիկ», 1895, թիվ 15, էջ 525-541: Այս հոդվածի մասին տե՛ս Կ. Լ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 79-80:

⁴⁵³ Տե՛ս «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի – 31-ը հունվարի/13-ը փետրվարի 1912:

նրան նվիրված հոդվածներով⁴⁵⁴:

Նշանավոր հայ քաղաքական գործիչ Ավետիս Ահարոնյանը և Չոպանյանը մասնակցել են Քիառի հիշատակին նվիրված՝ 1912 թ. փետրվարի 16-ին Փարիզում գումարված նիստին և հանդես եկել ջերմ ելույթներով, արժեվորել հայ ժողովրդի պաշտպանության ասպարեզում ներդրած նրա լուծան⁴⁵⁵: «Նրա փառապանծ անունը, – ինչպես նշել է Ահարոնյանը, – որն ակնածալից դրոշմված է հայ ժողովրդի սրտում, ինչպես նրա թանկագին գավակ Քրիստափորի (Միքայելյան – Վ. Պ.) անունը, ընդմիշտ կմնա իբրև արդարության, ազատության և ճշմարտության կենդանի խորհրդանիշ»:

Հայ հեղափոխական դաշնակցության օրգաններ «Ազատամարտն» ու «Դրոշակը», որին, ի դեպ, Քիառը պարբերաբար թղթակցել է⁴⁵⁶, տպագրել են նրա մահախոսականները (անստորագիր)⁴⁵⁷: «Ազատամարտում» կարդում ենք. «Հայաստանի այս պատմական Գողգոթայի ճամբուն վրա էր, որ հանդես եկավ ահա Պիեռ Քիառը, – հանդես եկավ գաղափարական հրապարակախոսի և Հայկական դատի հավատացյալ առաքյալի բոլոր անկեղծությամբն ու անձնվիրությամբը, և եղավ համր հայության լեզուն Եվրոպայի խղճին առջև, բռնակալության ահարկու դատախազը, իր «Պրո Արմենիայով», դիվանագիտական աշխարհին մոտ և գործակալը՝ հայ մարտնչող սերունդին»⁴⁵⁸:

Գ. Ջոհրապը, որին Քիառի մահվան գույժը, իր իսկ խոստովանությամբ, հարկադրել է ծնկի գալ, տվել է նրա գործունեության հետևյալ գնահատականը. «Ֆրանսայի մեջ է իր գերեզմանը. բայց իր անունը մերն է բոլորովին: Իր հրապարակագրի

⁴⁵⁴ Նույն տեղում, 29-ը հունվարի/11-ը փետրվարի 1912: Նրանցից ոմանց հոդվածները ֆրանսերեն թարգմանությամբ զետեղվել են նաև Քիառի հիշատակին նվիրված՝ 1912 թ. Փարիզում լույս ընծայված ժողովածուի մեջ: Տե՛ս A la mémoire de Pierre Quillard, p. 215-236.

⁴⁵⁵ A la mémoire d Pierre Quillard, p. 16-29, 30-47.

⁴⁵⁶ «Դրոշակ», 1906, թիվ 5, 9; 1907, թիվ 3, 5:

⁴⁵⁷ «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի 1912; «Դրոշակ», 1912, թիվ 2, էջ 17-20:

⁴⁵⁸ «Ազատամարտ», 25-ը հունվարի/7-ը փետրվարի 1912:

կյանքը մերն է, մեր ազգին Պատմության էն պայծառ էջերեն, մեկ է. իր հիշատակը մերն է և բովանդակ Հայությունը պիտի հսկե անոր վրա»⁴⁵⁹: Իսկ Սիամանթոն, չբավարարվելով Քիառին նվիրված հոդվածի լույս ընծայմամբ⁴⁶⁰, նրա հիշատակին է ձոնել «Հռետորը գերիններուն» բանաստեղծությունը⁴⁶¹:

Նշենք նաև, որ հայ մտավորականներից ոմանք հանդես են եկել Քիառի արծանը կանգնեցնելուն, Սասունում Քիառի անվան վարժարան հիմնադրելուն առնչվող առաջարկություններով և հանուն այդ մտահղացումների իրականացման սկիզբ են դրել հանգանակությունների⁴⁶²: Այդ նախածեռնությունները, սակայն, չնայած առաջին դրական արծագանքներին⁴⁶³, հաջողությամբ չեն պսակվել: Կոստանդնուպոլսում, Փարիզում, Բուլղարիայի զանազան քաղաքներում հանգրվանած հայկական համայնքները Քիառի մահվան կապակցությամբ կազմակերպել են սգո հանդեսներ⁴⁶⁴, իսկ թաղման արարողության ժամանակ Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը նրա դագաղը կրել են հայ ուսանողները⁴⁶⁵՝ հարգանքի վերջին խորին տուրքը մատուցելով, ըստ Ահարոնյանի բնորոշման՝ «մեծ հայասեր», «արդարության և ազատության մեծ ռահվիրա»⁴⁶⁶ Պիեռ Քիառին, ով հայ ժողովրդին սատարելու ասպարեզում ի հայտ բերած անձնվիրությամբ և անշահախնդրությամբ դարձել է իր ժողովրդի ժողովրդավարական հինավուրց ավանդույթների անմար հրի ջահակիրը:

⁴⁵⁹ Գ. Չոհրապ, Հայկական սուգ.– «Ազատամարտ», 29-ը հունվարի/11-ը փետրվարի 1912: Տես նաև Գ. Չոհրապ, Երկերի ժողովածու, չորս հատորով, հ. Գ, Երևան, 2002, էջ 468:

⁴⁶⁰ Սիամանթո, Քիառ մտերիմ.– Սիամանթո, Ամբողջական երկեր, Անթիլիաս, 1989, էջ 228-229:

⁴⁶¹ «Դրոշակ», 1912, թիվ 3: Տես նաև Սիամանթո, Տաղ Քիառի հիշատակին.– Սիամանթո, Անտիպ երկերի ժողովածու, Երևան, 2002, էջ 297:

⁴⁶² «Ազատամարտ», 29-ը հունվարի/11-ը փետրվարի, 17-ը փետրվարի/1-ը մարտի 1912:

⁴⁶³ Նույն տեղում, 1/14-ը փետրվարի, 5/18-ը փետրվարի 1912:

⁴⁶⁴ Նույն տեղում, 1/14-ը փետրվարի, 4/17-ը փետրվարի, 5/18-ը փետրվարի 1912:

⁴⁶⁵ Նույն տեղում, 27-ը հունվարի/9-ը փետրվարի 1912:

⁴⁶⁶ A la mémoire de Pierre Quillard, p. 16.

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Նահատակվող հայ ժողովրդի պաշտպանությամբ հանդես եկած ֆրանսիացի կրոնական գործիչների դրոշակակիր հայր Ֆելիքս Շարմետանը XIX դարի 90-ական թթ. լայնածավալ աշխատանք է իրականացրել ոչ միայն Հայոց ցեղասպանության գործընթացի հավաստի պատկերը ֆրանսիական հասարակությանը ներկայացնելու⁴⁶⁷, այլև հանգանակությունների միջոցով արևմտահայերին նյութապես օժանդակելու ասպարեզում:

Ի տարբերություն ֆրանսիացի շատ այլ ժամանակակիցների՝ հայր Շարմետանն Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող անցքերի մասին տեղեկություններ պարբերաբար ստացել է տեղերում գտնվող ֆրանսիացի միսիոներներից⁴⁶⁸: Արևմտահայության բոցաշունչ պաշտպանը համիդյան ջարդերը նշավակող՝ Փարիզի Լյուքսեմբուրգյան ակումբում 1896 թ. մայիսի 18-ին ունեցած իր առաջին իսկ ելույթներից մեկում ցեղասպանության մեկնաբանման հարցում գրավել է միանգամայն հստակ դիրքորոշում՝ այն դիտելով իբրև բացառապես կրոնական պառճառներ ունեցող եղելություն. «Մահմեդական

✓ ⁴⁶⁷ Տե՛ս P[ère] F[élix] Charmetant, Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d.; *Նույնի* L'Arménie agonissante et l'Europe chrétienne. Appel aux chefs d'Etat. Paris, s. d; (տե՛ս նաև անգլերեն քարզմանությունը՝ P[ère] F[élix] Charmetant, Dying Armenia and Christian Europe. An Appeal to those in Power, London s. d.); *Նույնի* Le Livre jaune et la question d'Orient // "Revue diplomatique et coloniale" (Paris), 1897, N 1, du 1^{er} mars.

⁴⁶⁸ Տե՛ս Pour les Arméniens // "Annales catholiques". 16 mai 1896, N 1286, p. 137-138; E. Khayadjian, նշվ. աշխ., էջ 78:

մոլեռանդությունը մի ամբողջ ժողովրդի դատապարտել է բնաջնջման և մահվան՝ նրա հավատքի պատճառով»⁴⁶⁹: Ինչ վերաբերում է մազապուրծ եղածների վերապրած «սարսափների մանրամասներին», ապա դրանք, ըստ նրա՝ գործադրվել են, որպեսզի հայերին «հարկադրեն ուրանալ իրենց հավատքը»⁴⁷⁰:

Հայր Շարմետանը սրտի անհուն կսկիծով է արծագանքում յաթաղանից փրկված հայերի անելանելի կացությանը. «Ի՛նչ արհավիրք, ի՛նչ թշվառություն կարող է համեմատվել հազարավոր քրիստոնյաների արհավիրքների և թշվառությունների հետ, որոնցից խլել են ամեն ինչ, որոնց տները կողոպտել են ու հրկիզել և որոնք մնում են անապաստան, առանց հագուստի, առանց մթերային պաշարների, որոնք դատապարտված են կամ ուրացության, կամ սովամահության՝ եթե մենք նրանց շուտափույթ օգնության չհասնենք»⁴⁷¹:

Ողբերգական իրադարձությունների ծավալմանը զուգընթաց՝ ընդլայնվել են նաև հայր Շարմետանի հայանպաստ գործունեության ոլորտները: Նա անվարանորեն ձեռնամուխ է եղել հայերի կոտորածների վրա լույս սփռող արժանահավատ փաստաթղթերի հրապարակմանը: Հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այս խիստ էական հանգամանքի վրա, քանզի նա առաջիններից էր, ովքեր մինչ այդ՝ Հայոց ցեղասպանության մասին աղոտ պատկերացումներ ունեցող ֆրանսիական հասարակության սեփականությունն են դարձրել Օսմանյան կայսրությունում ծավալված իրադարձությունների անսքող պատկերն արտացոլող վավերագրերի՝ գուցեև փոքրածավալ, սակայն արժեքավոր ժողովածուներ, որոնց օգնությամբ հնարավոր է եղել թեև մասամբ, այդուհանդերձ, ստույգ պատկերացում կազմել կոտորածների ընթացքի և չափերի մասին:

Հայր Շարմետանի՝ հավանաբար, 1896 թ. լույս ընծայած

⁴⁶⁹ Conférences sur les massacres d'Arménie. – La vérité sur les massacres d'Arménie, p. 91. Տե՛ս նաև R[évérend] P[ère] F[elix] Charmetant. Livre d'or des martyrs de la Charité. Hommage aux victimes de la catastrophe du 4 mai 1897. Paris. 1897, p. VIII, IX.

⁴⁷⁰ Conférences sur les massacres d'Arménie, p. 91-92.

⁴⁷¹ Նույն տեղում, էջ 93:

շատ կարևոր՝ «Հայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն ամփոփում է ֆրանսիական և հայկական ծագում ունեցող մի շարք արժանահավատ վավերագրեր, որոնք ուղեկցվում են նրա սեղմ, բայց ընդգրկում մեկնաբանություններով: Դրանց թվում առանձնանում է «Հայաստանի կոտորածների պաշտոնական աղյուսակը», որը Ֆրանսիայում առաջին անգամ հրատարակվել է նրա նախածեռնությամբ (ավելի ուշ այն զետեղվել է նաև «Դեղին գրքում») (I, 199-211)⁴⁷²:

Այս փաստաթուղթն առաջին անգամ, ըստ էության, արժեվորել է Պոլ Կամբոնը՝ Արտաքին գործերի նախարար Ֆիլիպ Բերտելոյին հղած՝ 1896 թ. հունվարի 25-ի թվակիր նամակում. «Այս աշխատանքն իրականացրել են վեց դեսպան՝ ըստ համապատասխան հյուպատոսների՝ իրենց հղած զեկուցագրերի: Այդ զեկուցագրերը քննարկվել են համատեղ և համեմատվել, որոնց համադրությունից ծնունդ է առել այս աղյուսակը»: Կամբոնն, ի դեպ, աղյուսակում ամփոփված տեղեկություններն ամենևին սպառնիչ չի համարում, քանզի, համաձայն նրա հավաստման՝ «փոստն այդ իրադարձությունների մասին ամեն օր հաղորդում է նորանոր մանրամասներ» (I, 198):

Ամեն դեպքում, խոսքը վերաբերում է անժխտելի հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթի, որն ամենայն մանրամասնությամբ արտացոլում է 1895 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Օսմանյան կայսրության տասնմեկ վիլայեթում ծավալված իրադարձությունները: Աղյուսակը բաղկացած է հինգ սյունակից, որոնք տեղեկություններ են հաղորդում համապատասխանաբար՝ կոտորածների բնակավայրերի, ամսաթվերի, զոհերի քանակի, տեղի ունեցած անցքերի և դրանց դրդապատճառների, իշխանությունների գրաված դիրքորոշման մասին: Փաստաթղթում բազմիցս հստակորեն մատնանշվում է Հայոց ցեղասպանությանն իշխանությունների

⁴⁷² Առաջին անգամ այս փաստաթուղթը հրատարակվել է «Կապույտ գրքում». տես “Turkey”, N 2 (1896). Correspondance relative to the Armenian Question, and Reports from her Majesty’s Consular Officers in Asiatic Turkey, London, p. 298-337.

ունեցած մեղսակցությունը, որոնց թողտվությամբ, իսկ հաճախ՝ կարգադրությամբ տեղի են ունեցել կոտորածները, ինչպես նաև ընդգծվում է գորքերի մասնակցությունը ջարդերին ու կողոպուտին⁴⁷³:

Հայր Շարմետանը գնահատելով «այս պաշտոնական փաստաթուղթն իբրև բացարձակապես արժանահավատ, որն առանց չափազանցությունների և սին արտահայտությունների, թվերի ու փաստերի անողոքությամբ իրագելում է Հայաստանի կոտորածների իսկությանը, որոնք չափերով և սարսափելի մանրամասներով մեծապես գերազանցում են՝ առաջին տեղեկությունների շնորհիվ մեզ համար բացահայտված պատկերը», դրա լույս ընծայումը համարում է իր «մարդասիրական և հայրենասիրական պարտքը»⁴⁷⁴: Աղյուսակի տեղեկությունները չհամարելով ամենևին ամբողջական և վերջնական, հայր Շարմետանն, այնուամենայնիվ, դրա վերլուծությունից հանգում է միակ հնարավոր հետևության, պնդելով, որ խոսքը վերաբերում է «իսկական մարտիրոսության: Արժանահավատ թվերի միջոցով այն (աղյուսակը – Վ. Պ.) օր առ օր, ամիս առ ամիս, հավաստում է, որ *գոհերի՝ միայն հիմնական բնակավայրերում ճշգրտված թիվը հասնում է զրեթե երեսուն հազար կոտորված քրիստոնյայի, եթե նույնիսկ մի կողմ թողնենք այն մարդկանց շատ ավելի ահռելի թիվը, ովքեր սպանվել են հյուպատոսների տեսադաշտից դուրս, քրիստոնյաների՝ այսօր ավերված հազարավոր գյուղերում*»⁴⁷⁵ (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.):

Ժողովածուում տեղ են գտել նաև հինգ այլ փաստաթղթեր, որոնցից ամենա հետաքրքիրն ականատեսների վկայությունների հիման վրա՝ գրիգորյան եպիսկոպոսության անդամներից մեկի կազմած «Համառոտ վիճակագրությունն» է: Այստեղ արդեն մանրամասնորեն նկարագրվում են ոչ միայն կայսրության տասնմեկ վիլայեթի գյուղերում տեղի ունեցած վայրագությունները, կանանց (այդ թվում հղի), նկատմամբ գործարկված

⁴⁷³ P[ère] F[élix] Charmetant, Martyrologe arménien, p. 10-40.

⁴⁷⁴ Նույն տեղում, էջ 3:

⁴⁷⁵ Նույն տեղում, էջ 4:

սուկալի բռնությունները, այլև քահանաների սպանությունները, եկեղեցիների և վանքերի պղծումն ու կողոպտումը⁴⁷⁶:

«Հայկական նահատակություն» ժողովածուից բացի, հայր Շարմետանը, հավանաբար, 1897 թ., առանձին գրքուկով լույս է ընծայել ևս մեկ արժեքավոր փաստաթուղթ. խոսքը վերաբերում է արևմտահայերի՝ «Ռուսական տարածքում գտնվող Արարատի և Կովկասի մեր հայ եղբայրներին» հղած՝ 1896 թ. դեկտեմբերի 15-ի թվակիր դիմումին: Դրան նա կցել է «Բեռլինի պայմանագիրը ստորագրած վեց մեծ տերությունների պետական ղեկավարներին, վարչապետներին, դեսպաններին և նախարարներին» հղած իր կոչը, որով նրանց հորդորում է փրկել «ամենքի կողմից լքված այս ժողովրդին, որը ներկայումս բնաջնջվում է ոչ թե մեծ հեկատոմբերում, այլ կրելով՝ պատմության մեջ երբևէ չարձանագրված ամենանողկալի, ամենասարսափելի տառապանքներ»⁴⁷⁷: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի բնակիչների կազմած փաստաթղթին, ապա դրանում մանրամասնորեն շարադրված են զանգվածային կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում հայ բնակչության հանդեպ դրսևորվող նոր վերաբերմունքի առանձնահատկությունները՝ անողոք հալածանքները, անհատական սպանությունները, տնտեսական կեղեքումը, կրոնափոխության պարտադրումը և այլն, որոնք հետապնդում են «հայ ազգի դանդաղ, սակայն հավաստի բնաջնջման» նպատակ⁴⁷⁸:

Տարբեր առիթներով թուրքերին համեմատելով ամենավայրագ բարբարոսների հետ, ինչպիսիք էին Չինգիզ խանը, վանդալները, հոները, հայր Շարմետանը մատնանշում է այն էական զանազանությունները, որոնք առկա են նրանց և թուր-

⁴⁷⁶ Լույն տեղում, էջ 46-70:

⁴⁷⁷ Père F[el]ix Charmetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 1-2. Այս փաստաթղթերը վերահրատակվել են նաև «Անալ կատոլիկ» ամսագրում: Տե՛ս «Annales catholiques», 28 avril 1897, N° 1385, p 521-529; 1^{er} mai 1897, N° 1386, p. 17-28. Հայր Շարմետանի այս կոչը «Դրոշակն» անվանել է «սրտաճնիկ»: Տե՛ս «Դրոշակ», 1899, թիվ 3, էջ 46:

⁴⁷⁸ Père F[el]ix Charmetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 11.

քերի վարքագծի միջև: Ըստ նրա՝ եթե նախորդ դարաշրջաններում մարդկային հասարակության պատմության խաչմերուկներում քրիստոնյա ժողովուրդների հետ ունեցած շփումների ընթացքում իրենց արյունոտ հետքը թողած բարբարոսների հանցանքները պարբերական բնույթ չեն կրել, ապա թուրքերը «դարեր ի վեր մնացել են տարբեր քրիստոնյա ազգությունների ազահ և վայրենի բռնակալները», ովքեր քրիստոնյաների նկատմամբ կիրառում են այնպիսի «կատաղի հալածանքներ, որոնք ավելի սարսափելի են, քան Դոմետիանոսի և Ներոնի հալածանքները»⁴⁷⁹:

Հիմնավոր ծանոթությունը վերը նշված փաստաթղթերի հետ հայր Շարմետանին հնարավորություն է ընձեռել ամբողջությամբ ընկալել հայերի նկատմամբ թուրքերի կիրառած քաղաքականության ոլորտում ի հայտ եկած փոփոխությունների իմաստը. «Թվում է, թե թուրքերն այսօր ցանկանում են հետևել այլ մարտավարության: Քրիստոնյաներին իրենց կայսրությունում բնաջնջելու համար՝ նրանց այլևս չեն կոտորում զանգվածաբար, այլ աշխատում են ամայացված նահանգներում բարոյալքել քրիստոնյա կնոջը, որին, կոտորածների պահին, ավելի հաճախ խնայել են և ուրանալու դրդել հայկական ընտանիքների ու համատարած գյուղերի»⁴⁸⁰: Մարտավարության այդ փոփոխությանը, մեկ այլ առիթով, նա տալիս է սպառիչ մեկնաբանություն. «Թուրքերը հասկացել են, որ այս սպանություններից եվրոպան վերջապես սկսել է հուզվել, և քանի որ նրանք այժմ երկյուղում են զինված միջամտությունից՝ փոխել են մարտավարությունը: Մեկ տարուց ի վեր, հատկապես ամենահեռավոր նահանգներում, նրանք ամենասահարկու և ամենաանողոք հալածանքների միջոցով որդեգրել են հայ ազգին տանջահարությամբ նահատակելու, քղարկված ձևով բնաջնջելու մեթոդները, որին երդվել են անհետացնել դանդաղորեն, բայց անվարան, դիմելով սակայն անհրաժեշտ զգուշություն»

⁴⁷⁹ P[ère] F[elix] Charmetant, Martyrologe arménien, p. 41, 42.

⁴⁸⁰ Նույն տեղում, էջ 42:

մերի, որպեսզի Եվրոպային մեծ հուզմունք չպատճառեն»⁴⁸¹:

Նշված ժողովածուներում հրատարակված փաստաթղթերին հայր Շարմետանի տված մեկնաբանությունները վկայում են Օսմանյան կայսրությունում 1890-ական թվականներին ծավալված ողբերգական իրադարձությունների վերլուծության հարցում նրա դիրքորոշման կրած էական փոփոխությունների մասին: Եթե մինչ այդ հայերի կոտորածները նա պայմանավորում էր բացառապես կրոնական առճակատումից բխող՝ մահմեդական մոլեռանդ բնակչության գործողություններով, ապա այժմ, վերստին մատնացույց անելով «կրոնական մոլեռանդության» և «քրիստոնյա ժողովրդի դեմ մահմեդականների ցուցաբերած մոլեգնության» հանգամանքը, պարբերաբար ընդգծում է ջարդերի իրականացման հարցում օսմանյան իշխանությունների դերը, ցեղասպանության «կանխատեսված և նախապատրաստված» բնույթը⁴⁸²: «Մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի, – գրում է նա, – մահմեդական միապետը, որին իր ուժիւրները մարդկային հասարակությունից վտարելու են, կարճ ժամանակամիջոցում, հանիրավի դատապարտել է անհետացման»⁴⁸³: Բոլորովին այլ առիթով անդրադառնալով կայսրության տասնմեկ մահանգում օսմանյան իշխանության ներկայացուցիչների՝ հայկական կոտորածների հարցում ունեցած մեղսակցությանը, նա նշում է, որ հենց նրանք են «թույլատրել քրիստոնյա բնակչության կոտորածը, եթե դրանք նրանք իսկ չեն կազմակերպել»⁴⁸⁴:

Թեև հայր Շարմետանի հայացքների համակարգում Յայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում կրոնական զանազանության հանգամանքի վճռորոշ նշանակությունը շարունակում է պահպանել գերիշխող դիրքեր, այդուհանդերձ, ակնհայտ է, որ նոր փաստաթղթերի հետ ծանոթության արդյունքում, նրա ուշադրությունը հավասարապես սևեռվել է նաև հայ ժողովրդի բնաջնջման ասպարեզում օսմանյան իշխանություն-

⁴⁸¹ Père F[el]ix Charmetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 4.

⁴⁸² P[è]re F[el]ix Charmetant, Martyrologe arménien, p. 41.

⁴⁸³ Père F[el]ix Charmetant, L'Arménie agonissante et l'Europe chrétienne, p. 1.

⁴⁸⁴ P[è]re F[el]ix Charmetant, Martyrologe arménien, p. 96.

ների ղեկավար դերի վրա: Կրկին անդրադառնալով թուրքերի մարտավարության փոփոխությանը, նա գրում է. «Այստեղ ևս, թվում է, թե գոյություն ունի մի ծրագիր, որին իշխանությունները հետևում են համաչափորեն՝ թե՛ քրիստոնյա կանանց բարոյալքելու և թե՛ հայերին իսլամ պարտադրելու համար»⁴⁸⁵: Ընդհանուր առմամբ, նա արդեն հավաստում է, որ 1895-1896 թթ. «սարսափելի հեկատոմբերը» երևան են եկել «ըստ տրված հրամանի և ազդանշանի»⁴⁸⁶:

Եզրափակելով իր մտորումները, հայր Շարմետանը հավաստում է. «Թուրքիայում ունեցած իր ներկայացուցիչների միջոցով նա [Եվրոպան – Վ. Պ.] տեղեկացել է այս սարսափելի ողբերգության բոլոր մանրամասներին: Նա իրագեկ է դարձել, որ երեք ամսվա ընթացքում քրիստոնյաների իսկական հեկատոմբերն ի հայտ են եկել ոչ թե անցողիկ, ծայրահեղ գրգռվածության հետևանքով, այլ ներդաշնակ ծրագրի հիման վրա, որը նախապարաստվել է խնամքով և կենսագործվել սառնասրտորեն»⁴⁸⁷: Ըստ այս ամենի՝ նա հանգում է միակ հնարավոր հետևության, այն է՝ ցեղասպանության սանձազերծման համար «սուլթանին ուղղակիորեն պատասխանատու ճանաչելու» անհրաժեշտությանը⁴⁸⁸:

1897 թ. լույս ընծայված «Դեղին գրքում» ամփոփված դիվանագիտական գրագրությունների ընթերցումը մեծապես նպաստել է հայր Շարմետանի հայացքների հետագա էվոլյուցիային: Այդուհետև՝ նա Հայոց ցեղասպանության գործընթացին տվել է ավելի սպառիչ, քան մինչ այդ, մեկնաբանություններ՝ դրանք դիտելով իբրև «մի ամբողջ աճգի կանխամտածված, անողոք և դիտավորյալ բնաջնջում, որը մոլեռանդ մահմեդականների միջոցով իրականացրել են թուրքական իշխանությունները, կանոնավոր բանակն ու կառավարության գործակալները, որոնք թվում է, թե պարտադրել էին շատ ավելի արյունարբու՝ քան Չինգիզ խաները և Լենկ Թեմուրները միա-

⁴⁸⁵ Նույն տեղում, էջ 42:

⁴⁸⁶ Père F[el]ix Charmetant, *L'Arménie agonissante et l'Europe chrétienne*, p. 4.

⁴⁸⁷ P[ê]re F[el]ix Charmetant, *Martyrologe arménien*, p. 95-96.

⁴⁸⁸ Նույն տեղում, էջ 96:

պետի՝ վաղուց ի վեր նախապատրաստած ծրագրի համաչափ կենսագործումը»⁴⁸⁹: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդգծել, որ չնայած մեզ հետաքրքրող հարցում հայր Շարմետանի մտահորիզոնի ընդլայնմանը, իրադարձությունների նկատմամբ շատ ավելի ընդգրկուն մոտեցման դրսևորմանը, նա, այդուհանդերձ, ամբողջությամբ չի ըմբռնել օսմանյան կառավարության հայաջինջ քաղաքականության իմաստը, որը հանգում էր արևմտահայության ոչնչացման միջոցով բռնագրավված հայկական պատմական տարածքների մաքրագարդման «ավելորդ» և «անհանգստություններ պատճառող» ժողովրդից:

Հարկ ենք համարում հայր Շարմետանի հայացքների հանկարգում առանձնացնել նաև ուշադրության արժանի մեկ այլ առանցքային՝ եվրոպական մեծ տերությունների և, մասնավորապես, Ֆրանսիայի ղեկավար շրջանների քաղաքականության խարազանման հանգամանքը, որոնք, ինչպես նա նշում է, և ոչ մի «պաշտոնական խոսք չեն ասել ի նպաստ զոհերի»: «Իբրև մարդ, իբրև ֆրանսիացի և իբրև քահանա, – հայտարարել է նա դեռևս իր առաջին ելույթներից մեկում, – ես դրա համար զգում եմ եռակի ամոթ»⁴⁹⁰:

Սանրամասն վերլուծելով համիդյան կոտորածների ընթացքում արևմտահայության հանդեպ եվրոպական պետությունների գրաված անկարեկից և անտարբեր վարքագիծը, հայր Շարմետանը չի վարանել զանազան առիթներով խստագույնս դատապարտել նրանց պարսավելի դիրքորոշումը: Ցեղասպանության «իրական մեղավորը», նրա կարծիքով, եվրոպան է⁴⁹¹, այն «քրիստոնյա եվրոպան, որը մեղավոր է, քանզի թույլատրել է այս ահարկու հեկատոմբերի երևան գալը Հայաստանում, որտեղ 300000 քրիստոնյա հենց նոր սպանվել է, կենդանի այրվել ու մահկանացուն կնքել ամենասարսափելի խոշտանգումների պայմաններում»⁴⁹²: Նա դառնությամբ է արձանագրում, որ երեք տարի շարունակ, հայերի բնաջնջման ծրագրի

⁴⁸⁹ F[el]ix Charmetant, *Le Livre jaune et la question d'Orient*, p. 3.

⁴⁹⁰ Conférences sur les massacres d'Arménie, p. 92.

⁴⁹¹ P[ê]re] F[el]ix Charmetant, *Martyrologe arménien*, p. 96.

⁴⁹² R[é]vérend] P[ê]re] F[el]ix Charmetant, *Livre d'or des martyrs de la Charité*,

կենսագործման ժամանակ, «Բեռլինի պայմանագրի ներքո ստորագրած տերությունները ոչինչ չեն կարողացել անել դրա ընթացքը կասեցնելու համար, իսկ նրանց անգոր դիվանագիտությունը որևէ խոչընդոտ չի հարուցել, քանզի նրա միջամտությունը վերածվել է պարզապես ներկայացուցչությունների, բանակցությունների կամ սպառնալիքների, որոնք թուրքիան չի բարեհաճել նույնիսկ լրջորեն ընդունել»⁴⁹³:

Հայր Շարմետանի ուշադրությունից չեն վրիպել նաև թուրքական դիվանագիտության խորամանկ մեքենայությունները: Ինչ վերաբերում է «թուրքին», ապա վերջինս դիվանագիտության ասպարեզում և ոչ մեկից չի երկյուղում. «Խուսափողական պատասխաններ տալու, հարցերի լուծումը հետաձգող բանաձևերի մշակման արվեստին նա տիրապետում է ամենաբարձր մակարդակով. նա սեթևեթելու արվեստի, անպտուղ քննարկումների վարպետ է և ոչ մեկն ի վիճակի չէ, ավելի հմտորեն, քան նա, բանակցություններն ապարդյուն դարձնել և վճիռները հետաձգել ու իրեն ճնշող գործառնությունները ձախողելու համար անհրաժեշտ ժամանակ շահել»⁴⁹⁴:

Իբրև ազնիվ ֆրանսիացի՝ հայր Շարմետանը խիստ ազդվել է, մասնավորապես, Հայոց ցեղասպանությանն ի տես՝ ֆրանսիական կառավարության պահպանած լռությունից: «Դեղին գրքի» ընթերցումից հետո՝ նա ցավով ընդգծում է. «Հիրավի, մնում ենք ապշած և վրդովված, որ ֆրանսիական կառավարությունը կարող էր նման փաստաթղթերը հրատարակելու համար սպասել չորս տարի, որոնց ընթացքում նա՝ Ֆրանսիան, խորհրդարանը, հասարակական կարծիքն անջրպետել է այս դարի ամենանշանակալից, ամենասահարկու և ամենաողբերգական անցքերից և նրանց պահել ամենակատարյալ անհրազեկության մեջ: Արդյո՞ք մենք ապրում ենք հանրապետական, թե կամայական վարչակարգի օրոք: Թվում է, թե Լյուդովիկոս XIV-ը և Նապոլեոնը կվարանեին, այսչափ երկար ժամանակ, գաղտնի պահել նման կարևորություն ունեցող փաստաթղթերը»⁴⁹⁵:

Հայր Շարմետանն անողոր է, հատկապես, իր լռությամբ

⁴⁹³ F[el]ix Charmetant, *Le Livre jaune et la question d'Orient*, p. 3.

⁴⁹⁴ Նույն տեղում:

⁴⁹⁵ Նույն տեղում, էջ 4:

իրականությունը հասարակական կարծիքից թաքցնող ֆրանսիական մամուլի նկատմամբ. «Մեղավորը, մասնավորապես, մամուլն է: Մենք ցավով տեսանք, հազվադեպ բացառություններից բացի, թե ինչպես է անգամ ամենաքաջարի և ամենամարտնչող լրագրերի մեծամասնությունը մերժում մեր հաղորդումներն ու լուրջություն պահպանում»⁴⁹⁶:

Փոխարենը, նա գովեստի խոսքեր է ուղղում եկեղեցու հասցեին, որը չի զլացել օգնության ձեռք մեկնել զոհերին և իրեն քաջալերել է նրանց համար հանգանակությունների կազմակերպման միջոցով գումարներ հայթայթելու հարցում⁴⁹⁷, շեշտում է բազմաթիվ եպիսկոպոսների ցուցաբերած աջակցությունը⁴⁹⁸: Նշենք նաև, որ չնայած սուլթանական կառավարության հարուցած խոչընդոտներին, ժողովված նյութական միջոցներն արևմտահայությանը բաշխվել են Կամբոնի միջոցով:

⁴⁹⁶ Conférences sur les massacres d'Arménie, p. 92.

⁴⁹⁷ Այս կապակցությամբ հայր Շարմետանը մշել է. «Կոտորածների առաջին իսկ պահից մենք մեր գրասենյակներում կազմակերպել ենք հասարակական հանգանակություն, որի շնորհիվ հազարավոր հայեր արդեն փրկվել են աներկբա մահից կամ ուրանալուց» (տե՛ս R[énérend] P[ère] F[élix] Charmetant, Livre d'or des martyrs de la Charité, p. IX): Այս հարցի կապակցությամբ տե՛ս նաև հայր Շարմետանի 1896 թ. ապրիլի 29-ի թվակիր նամակը «Անալ կատոլիկ» ամսագրի տնօրենին, որտեղ մանրամասն խոսվում է հանգանակությունների ընթացքի մասին. La Question arménienne // "Annales catholiques", 9 mai 1896, N 1284, p. 82-83: Ի դեպ, թե՛ 1897 մայիսի 4-ին Փարիզի Գթության շուկայում բռնկված հրդեհի զոհերի հիշատակին նվիրված՝ վերոնշյալ գիրքը և թե՛ 1896 թ. հրատարակած «Չայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն, նա վաճառքի է դուրս բերել հօգուտ հայկական կոտորածների զոհերի կազմակերպված հանգանակության:

⁴⁹⁸ Conférences sur les massacres d'Arménie, p. 92-93. Այս առիթով արքա Պիզանին ևս, անդրադառնալով Ֆրանսիայում ձեռնարկված հայանպաստ միջոցառումներին, 1896 թ. մայիսին հավաստել է. «Չնարավոր է դարձել ավելի քան 200000 ֆրանկ ուղարկել՝ հոգալու համար ամենահրատապ կարիքները. սուլից և ցրտահարությունից մահվան դուռը հասած այս դժբախտներին հաց և հագուստ է տրամադրվել»: Տե՛ս L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, Paris, 1896, p. 22. Նկատենք, որ շնորհիվ հայր Շարմետանի ջանքերի՝ 1897 թ. սկզբին արևմտահայերին առաքված գումարն արդեն հասել է 400000 ֆրանկի: Տե՛ս Pour les Arméniens // "Annales catholiques", 27 février 1897, N 1368, p. 509.

Այս առիթով, 1896 թ. փետրվարի 5-ին նա գրում է Բերտելոյին. «Քանի որ Դուռն ընդդիմանում է եվրոպացի բանագնացների միջոցով՝ զոհերի համար նախատեսված օգնության բաշխմանը, Արևելքի դպրոցների բարեգործական ընկերությունն իր գումարները և հագուստի արկղերը պետք է ուղարկի դեսպանատուն: Ես դրանք կառաքեմ հյուպատոսներին, որոնք բարեգործական ընկերության անունից և ըստ հ[այր] Շարմետանի ցուցումների՝ կապահովեն դրանց բաշխումը» (I, 213-214):

Հատկանշական է, որ ամենախիստ ձևով դատապարտելով ոչ միայն Աբդուլ Համիդի և Բարձր Դռան արյունոտ քաղաքականությունը, այլև մեծ տերությունների անտարբեր վարքագիծը, հանդիմանելով եվրոպային, պատասխանատվության իր եական բաժինն ունեցող՝ «մահմեդական բարբարոսության համագործակցի վերածվելու», «հարյուր հազար հայի սպանությունը թույլատրելու» և այդ ողբերգության «իրական մեղավորը» դառնալու հարցում⁴⁹⁹, ինչպես և իր ժամանակի ֆրանսիացի մտավորականների գերակշռող մասը, հայր Շարմետանը հանդես է եկել իբրև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման ջատագով՝ ֆրանսիական դիվանագիտության առջև ծառայած խնդիրը սահմանափակելով լոկ Արևմտյան Հայաստանում արմատական բարենորոգումների անցկացմանն ուղղված վճռական քայլերի իրականացմամբ: Դեռ ավելին. ելնելով Ֆրանսիայի ռազմավարական շահերից, ինչպես նաև եվրոպայում ուժերի հավասարակշռությունն անսասան պահպանելու մտադրությամբ՝ հայր Շարմետանը համառել է, որ թուրքերի գործադրած բռնություններից հայերին սատարելու հետ մեկտեղ Ֆրանսիան պարտավոր է միաժամանակ հանդես գալ թուրքերի հովանավորի դերում՝ դիմակայելով Օսմանյան կայսրության նկատմամբ եվրոպական տերությունների ոտնձգություններին⁵⁰⁰: Նման դիրքորոշումը միանգամայն հասկանալի է, քանզի Օսմանյան կայսրության տրոհումը, որը կարող էր հանգեցնել եվրոպական տերություններից մեկի դիրքերի շեշտակի ամրա-

⁴⁹⁹ P[ère] F[eli]x Charmetant, Martyrologe arménien, p. 96.

⁵⁰⁰ F[eli]x Charmetant. Le Livre jaune et la question d'Orient, p. 8, 13, 14.

պնդմանը Փոքր Ասիայում, անհարիր էր Ֆրանսիայի ավանդական արտաքին քաղաքականության շահերին:

Հայոց ցեղասպանությանը Ֆրանսիայում հրապարակայնացում տալու ասպարեզում հայր Շարմետանն ունի ևս մեկ արժանիք, որն իրավասու չենք անտեսել: Ինչպես վերը նշեցինք, ի սկզբանե նա վճռական քայլեր է ձեռնարկել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող արևմտահայության բնաջնջման գործընթացի շուրջ ֆրանսիացի մտավորականներին հավաստի տեղեկություններ հաղորդելու միջոցով դրդել նրանց սատարելու նահատակվող ժողովրդին⁵⁰¹:

Ինչպես տեսնում ենք նշանակալից է հայ ժողովրդի մեծ բարեկամ հայր Ֆելիքս Շարմետանի լուսնան 1890-ական թվականներին սանձազերծված հայկական կոտորածների անկողմնակալ պատկերը ֆրանսիական և եվրոպական հասարակությանը ներկայացնելու գործում: Նրա թեև համեստ, բայց գործնական ջանքերի շնորհիվ կործանումից, հիրավի, փրկվել են մեծաքանակ արևմտահայեր: Ուստի՝ ամփոփելով, ցանկանում ենք մեր կատարյալ համաձայնությունը հայտնել Բարոյական գիտությունների ակադեմիայի անդամ Անատոլ Լերուա-Քոլիոյի հետ, որը հավուր պատշաճի արժեվորել է հայր Շարմետանի բազմաբնույթ գործունեության նշանակությունը. «Թե՛ այս փաստաթղթերը հրապարակելով և թե՛ ասիական բարբարոսության գոհերի օգտին կամպանիա ձեռնարկելով, հայր Շարմետանը, Արևելքի դպրոցների բարեգործական ընկերությունը, մեր միսիոներներն առհասարակ, կարևոր ծառայություն են մատուցել ոչ միայն Հայաստանի քրիստոնյաներին, այլև եվրոպային, Ֆրանսիային, քաղաքակրթությանը»⁵⁰²:

Հայր Շարմետանը, սակայն, կաթոլիկ եկեղեցու միակ նվիրյալը չէր, ով ջանքեր է գործադրել հանուն հայ ժողովրդի փրկության: Բացի նրանից, արևմտահայության իրավունքների պաշտպանությամբ XIX դարի 90-ական թթ. հանդես է եկել նաև

⁵⁰¹ Այդ մասին տես վերը՝ սույն աշխատության III գլխում՝ էջ 101-102:

⁵⁰² Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M[onsieur] Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hôtel des Sociétés savantes le 9 juin 1896, Paris, 1896, p. 30.

պատմաբաններին նվազ հայտնի մեկ այլ կրոնական գործիչ՝ արքա Պիզանին, որի հայանպաստ, սակայն, շատ ավելի համեստ, քան նախորդի գործունեությունը, ինչպես արդեն նշել ենք, շրջանցվել է լռությամբ:

Ի դեպ, անկախ քաղաքական կողմնորոշման և իրադարձություններից տված՝ երբեմն անընդունելի գնահատականների հանգամանքներից, Պիզանին այն սակավաթիվ ֆրանսիացի ժամանակակիցներից է (Ֆ. դը Պրեսանսե, հայր Շարմետան և ուրիշներ), ովքեր կործանման դատապարտված արևմտահայության ճակատագրի հանդեպ ի սկզբանե դրսևորել են անթաքույց մտահոգություն, մասնակցել Ֆրանսիայում Հայոց ցեղասպանությանը նվիրված հրապարակային ելույթներին⁵⁰³, համիդյան կոտորածներին առնչվող, առաջին իսկ, դեռևս ոչ լիարժեք տեղեկությունները ստանալուն ևեթ արծագանքել Օսմանյան կայսրությունում ծավալված անցքերին:

Արևմտահայության ճակատագրին նվիրված արքա Պիզանիի առաջին հոդվածը լույս է ընծայվել 1895 թ.⁵⁰⁴, երբ Եվրոպայում դեռևս որևէ հստակ պատկերացում չունեին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Հիմնվելով մտաչելի, սակայն հաճախ անստույգ և նույնիսկ հակասական տեղեկությունների վրա, Պիզանին փորձում է բացահայտել օսմանյան լծի տակ հեծող արևմտահայերի ծանր կացությունը, վեր հանել դրա պատճառները և հպանցիկ ներկայացնել 1894-1895 թթ. տեղի ունեցած եղելությունների համառոտ պատկերը:

Հայկական հարցի նկատմամբ իր հետաքրքրությունն առաջ բերած դրդապատճառների առիթով Պիզանին նշում է. «Հենց նոր դժգոհության մի ալիք սահեց Եվրոպայի վրայով և քաղաքակիրթ ազգերն իրազեկ դարձան բարբարոսական, վայրագ արարքների: Հազարավոր քրիստոնյաներ հեծում են գարշելի լծի տակ: Կքված հարկերից, ամենասարսափելի թշվառության եզրին հասած՝ նրանք ապարդյուն դիմում են

⁵⁰³ Նույն տեղում, էջ 2:

⁵⁰⁴ P. Pisani, Les affaires d'Arménie. Paris, 1895.

դատարաններին, ուր նիստեր են գումարում նրանց ամենաոխերիմ թշնամիները: Նրանց, այսպիսով, մնում է լքել իրենց նախնիների հողը և բռնել տարագրության թախծոտ ճանապարհը, որը լի է այն մարդկանց դիակներով, ովքեր սովից ու վատթար վերաբերմունքից կնքում են իրենց մահկանացուն»⁵⁰⁵:

Համառոտակի հիշատակելով այն բեռնային տեսակետների մասին, որոնց տեղիք է տվել Օսմանյան կայսրությունն ալեկոծած անցքերի քննարկումը եվրոպացի ժամանակակիցների շրջանում, Պիզանին իր հիմնական խնդիրն է համարում «հնարավորության սահմաններում ճշմարտության առնվազն մի մասի բացահայտումը և այդ հարցի կարևորության արժեվորումը հավուր պատշաճի»⁵⁰⁶: Ուստի՝ Օսմանյան կայսրությունում առկա իրավիճակը հիմնավորապես ըմբռնելու մտադրությամբ, հեղինակը գերադասում է նախ՝ վերլուծել հայ ժողովրդի անցած ուղու հիմնական դրվագները մինչ Հայկական հարցի ծագումը 1878 թ.: Պիզանին ուշադրությունը գլխավորապես կենտրոնացնում է հայ ժողովրդի կյանքում հավատքի և եկեղեցու դերի վրա, որը պայմանավորված է նրա՝ իբրև հոգևորականի աշխարհընկալման յուրահատկություններով:

Ի շարս այն հիմնահարցերի, որոնք նա ենթարկվել է մանրագնին քննության, առանձնացնենք, մասնավորապես, ժողովրդագրական գործոնը: Այս հարցում, ցավոք, սահմանափակվելով սոսկ ֆրանսիացի պատմաբան Վիտալ Քինեի՝ կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների թվաքանակին վերաբերվող անստույգ տվյալներով, նա հանգում է իրականությանն ամենևին չադերսվող եզրակացությունների: Հղելով վերջինիս հաշվարկները, ով իր հերթին այդ տվյալները քաղել էր հայ բնակչության թվաքանակը կեղծող թուրքական սկզբնաղբյուրներից («սալնամեներ»), Պիզանին պնդում է, որ Փոքր Ասիայում հայերը կազմում էին բնակչության նվազագույն մասը, քանզի նրանց թիվը՝ 1350000-ի հասնող բնակչության ընդհանուր թվից հասնում էր 1250000-ի: «Ոչ մի տեղ.– գրում է նա,– քրիստոնյաների մեծամասնության չենք հանդիպում: Վանի

⁵⁰⁵ Նույն տեղում, էջ 5:

⁵⁰⁶ Նույն տեղում, էջ 6:

վիլայեթի հյուսիսում, ինչպես նաև Ադանայի վիլայեթի որոշ տարածաշրջաններում նրանց և մահմեդականների թվաքանակը հավասար է: Ինչ վերաբերում է հայերին, ապա Բիթլիսի վիլայեթում նրանք կազմում են բնակչության մեկ երրորդը, իսկ Ադանայի վիլայեթում՝ մեկ քառորդը»⁵⁰⁷: Դեռ ավելին, ըստ հեղինակի՝ 1865-1878 թթ. հայկական բոլոր տարածքներում ապրող 2500000 բնակչից միայն 500000-ն էր հայ⁵⁰⁸: Հիմնվելով այս թյուր տվյալների վրա, աբբա Պիզանին հանգում է այն եզրակացության, որ հայերը կազմում էին «փոքրամասնություն Օսմանյան կայսրությունում, փոքրամասնություն քրիստոնյա ժողովուրդների թվում, փոքրամասնություն բոլոր վիլայեթներում և գրեթե բոլոր մարզերում»: «Անհանգստություններ պատճառող» այս փոքրամասնությունը, սակայն, ինչպես նա նշում է, «ձգտում է անկախության, իսկ այդ ձգտումները սպառնալից են որքան մահմեդականների, նույնքան էլ քրիստոնյաների համար»⁵⁰⁹:

Ինչ վերաբերում է հայկական պատմական տարածքներում բնակվող քրիստոնյաներին՝ հայերից սպառնացող կարծեցյալ վտանգին, Պիզանին առանց պարզաբանումների՝ վերացականորեն հիշատակում է այն տարածայնությունների մասին, որոնք ի հայտ էին եկել Լևանտի քրիստոնյաների

⁵⁰⁷ Նույն տեղում, էջ 19:

⁵⁰⁸ Նույն տեղում: Ինչպես արդեն նշել ենք վերը, 1860-1870-ական թթ. Օսմանյան կայսրությունում կար շուրջ 3000000 հայ, որից 2500000-ը բնակվում էր Արևմտյան Հայաստանում: Ի դեպ, Քինեի տվյալներն անընդունելի է համարում նաև ժամանակակից ամերիկահայ պատմաբան Ս. Ա. Քարայանը, որն Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգների բնակչության թվաքանակի շուրջ կատարելով անհրաժեշտ ճշգրտումներ՝ նշում է. «Քինեի քառահատոր «Ասիական թուրքիան» աշխատությունը չի կարող դիտվել իբրև արժանահավատ տեղեկատվական սկզբնաղբյուր՝ Ասիական թուրքիայի կենտրոնական և արևելյան վիլայեթներում եղած հայ բնակչության համար: Այն չի կարող դիտվել նաև իբրև՝ ընդհանուր տեղեկատվական բնույթի արժանահավատ սկզբնաղբյուր Արևելյան թուրքիայի հայերի համար 1880-ական թթ.»: Տե՛ս S. A. Karayan, Vital Cuinet's *La Turquie d'Asie: A Critical Evaluation of Cuinet's Information about Armenians* // "Journal of the Society for Armenia Studies" (Michigan), 2000, vol. 11, p. 62.

⁵⁰⁹ P. Pisani. *Նշվ. աշխ.*, էջ 19:

(մասնավորապես, հայերի ու հույների) կրոնական դավանանքների միջև առկա զանազանությունների հետևանքով: Արդյունքում՝ խնդրո առարկա հարցի մանրամասների վերլուծությունից ձեռնպահ մնացող հեղինակի՝ քրիստոնյաների համար սպառնալիք ներկայացնող՝ հայերի ձգտումներին վերաբերող հայտարարությունը մնում է ձայն բարբառո անապատի: Փոխարենը, նա մանրամասնորեն քննարկում է (և դա նրա մոտեցման առավելությունն է), օսմանյան կառավարության քաղաքականությանն այլևայլ ելևէջներն ազգամիջյան փոխհարաբերությունների կարգավորման ասպարեզում, բացահայտում, մասնավորապես, նրա անվճռական դիրքորոշումը՝ ծայր առած ըմբոստությունները ճնշելու, վայրագությունները կանխելու և դրանց մեղավորներին պատժելու հարցում:

Պիզանիի համոզմամբ թուրքն անփույթ է և «գերադասում է հանդուրժել անկարգությունները, քան դրանք կանխել, ժխտում է վտանգի առկայությունը, որպեսզի այն վերացնելու հարկը չունենա... Նա անտարբեր է այն ամենի հանդեպ, ինչ տեղի է ունենում իր շուրջը»⁵¹⁰: Ըստ նրա՝ թուրքերի թույլ տված զանցանքը հանգում է նախ և առաջ թողտվության. «Նրանց թողտվությամբ, որը հետևանք է կամ անտարբերության, կամ արհամարհանքի և կամ անուշիմության, տեղի են ունեցել մեծ ապօրինություններ: Նրանք գրեթե ոչինչ չեն արել դրանք վերացնելու համար, իսկ այս իրավիճակը մեկ օրվա պատմությունն է, որ ունի»⁵¹¹:

Բացի դրանից, Պիզանին հմտությամբ բացահայտում է նաև քրիստոնյաների նկատմամբ թուրքերի մեջ արմատացած ատելության ակունքները. «Քրիստոնյաների հանդեպ նա (թուրքը – Վ. Պ.) տածում է գլխավորապես ատելություն, որովհետև օրինակելի մահմեդական է, սակայն այդ ատելությունը, կարծեք, պարուրված է արհամարհանքով»⁵¹²: Վկայակոչելով պատմության քառուղիներում արձանագրված

⁵¹⁰ Նույն տեղում, էջ 20:

⁵¹¹ Նույն տեղում, էջ 21:

⁵¹² Նույն տեղում, էջ 20-21:

«անառարկելի փաստեր», Պիզանին շեշտում է քրիստոնյաների ծայրաստիճան անապահովությունն Օսմանյան կայսրությունում, ուր նրանց ֆիզիկական գոյության համար չկային նվազագույն երաշխիքներ: Թուրքերն, ըստ նրա, ընդունակ են «կողոպտչական գործողությունները պատժելու հարցում՝ գայրույթ հարուցող դանդաղկոտություն ցուցաբերելու, մեղմ և երբեմն անբավարար ճնշումներ գործադրելու, մեղավորներին հապճեպ ներում շնորհելու, երբ այդ մեղավորները մահմեդականներ են, իսկ զոհերը՝ քրիստոնյաներ, կեղեքվողների ամենաարդար պահանջների նկատմամբ խորին արհամարհանքով վերաբերվելու՝ երբ այդ կեղեքվողները քրիստոնյաներ են, իսկ կեղեքիչները՝ մահմեդականներ»⁵¹³: Ինչպես տեսնում ենք, Պիզանին հաջողվել է ընկալել թուրքերին բնորոշ մի շարք էական առանձնահատկություններ:

Այդուհանդերձ, անդրադառնալով կայսրության տարածքում քրդերի գործողություններին, աբբա Պիզանին, ելնելով իր համոզմունքներից, նրանց Բարձր Պալատ գործակալներ չի համարում. «Միանգամայն զուր են նրանց մեզ ներկայացնում իբրև սուլթանի վրիժառություններն իրականացնող գաղտնի գործակալների: Արդյո՞ք թուրքերը երբևէ հրամաններ են տվել քրդերին: Դա խիստ կասկածելի է թվում, քանզի չկա այնպիսի ազգություն, որն ավելի տենչա անկախության»⁵¹⁴: Խուսափելով ամբողջ քուրդ ժողովրդի վրա նման մեղադրանք բարդելու պատասխանատվությունից, նշենք, այնուամենայնիվ, որ Պիզանին՝ այս հարցում որդեգրած դիրքորոշումն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է Օսմանյան կայսրությունում ծավալվող իրադարձությունների ընթացքին նրա անբավարար իրազեկությամբ: Նա, հավանաբար, դեռևս անտեղյակ է եղել 1890 թ. Աբդուլ Չամիդ II-ի կազմավորած՝ համիդիե անունը կրող պատժիչ զորամիավորումների գոյությանը, որոնք համալրվում էին գլխավորապես քրդերից:

Շրջանցելով 1878 թ. ի վեր Հայկական հարցի գոյությունը,

⁵¹³ Նույն տեղում, էջ 22:

⁵¹⁴ Նույն տեղում, էջ 23:

Պիզանին, այնուամենայնիվ, անուղղակիորեն անդրադառնում է թե՛ դրա նախապատմության հիմնական դրվագներին և թե՛ ծագման փուլերին: Թերևս հստակ պատկերացում իսկ չունենալով այդ հարցի ելության, անզամ գոյության մասին, նա դրան առնչվող հանգամանքների պարզաբանման խնդրում ցուցաբերում է հախուռն մոտեցում: Հայկական հարցի վերհանման հենքում կարելի է տեղադրել սուլթան Աբդուլ Մեջիդի՝ 1839 և 1856 թթ. հայերին շնորհած հրովարտականների քննությունը, թեպետ հեղինակը դրանք չի դիտում իբրև հարցի ծագման նախադրյալներ: 1839 թ. Գյուլխանեի հաթթը-շերիֆով «[Բարձր] Դռան ազդարարած՝ անկախ կրոնական զանազանությունից՝ բոլոր հպատակների՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը» Պիզանին իրավամբ համարում է ձևական: 1856 թ. հաթթը-հումայունին տված նրա գնահատականը ևս ընդունելի է: Այս հրովարտակը «պարունակում էր միայն սին խոստումներ: Դրանում արձանագրված կրոնական հավասարությունը մնալով թղթի վրա, չի թափանցել իրական կյանքի ոլորտը»⁵¹⁵, – գրում է նա:

Պիզանիի հետագա շարադրանքը պարզորոշ վկայում է, որ նա չի ըմբռնել այն նրբությունները, որոնք ժամանակի թելադրանքով՝ մեծ տերությունների դիվանագիտական մեքենայությունների հետևանքով, ծնունդ են տվել Հայկական հարցին: Հղելով, դիցուք, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերի՝ Արևմտյան Հայաստանին առնչվող հոդվածները, նա, որքան տարօրինակ է, անտեսում է դրանցում արձանագրված այն էական զանազանությունը, որը կապված է արևմտահայության հանդեպ՝ Բարձր Դռանը պարտադրվող պարտավորությունների ի կատար ածման հարցում վերջինիս ստանձնած պատասխանատվության հետ (եթե առաջինը նախատեսում էր Բարձր Դռան հաշվետվությունը միայն Ռուսաստանի առջև, ապա երկրորդը՝ բարենորոգումների իրականացման հարցում սահմանում էր մեծ տերությունների վերահսկողությունը):

⁵¹⁵ Նույն տեղում, էջ 24:

Նման պայմաններում, առավել ևս, եթե նկատի ունենանք իրադարձությունների լուսաբանման նրա որդեգրած մեկնակետը, միանգամայն օրինաչափ է, որ Պիզանին Բարձր Դռան՝ ստանձնած պարտավորություններին ընթացք տալուց ձեռնպահ մնալը մեկնաբանում է սոսկ կրոնական հողի վրա խարսխված շարժառիթներով. «Մահմեդականների և քրիստոնյաների իրավահավասարությունն անհամատեղելի է մահմեդական կրոնական օրենքի հետ, որի վրա խոյանում է Թուրքիայի ամբողջ սոցիալական կառույցը»,– եզրակացնում է նա⁵¹⁶:

Այս իրողությունը, ըստ Պիզանիի, վերջնականապես հուսախաբում է հայերին և դրդում նրանց ապստամբական գործողությունների: 1890-ական թթ. սկզբի հայ-թուրքական ընդհարումներն էրզրունում և Կոստանդնուպոլսում⁵¹⁷ նա քննարկում է Փոքր Ասիայում սփռված հայկական «տեղական կոմիտեների» գործունեության հենքի վրա: Այս իրադարձությունների շուրջ ունենալով, սակայն, հակասական տեղեկություններ, նա ցավով արձանագրում է. «Ո՞վ էրբևէ հասու կլինի ճշմարտությանը, երբ այդչափ մարդիկ շահագրգռված են այն շղարշելու հարցում»⁵¹⁸:

1894 թ. հուլիսին Սասունում տեղի ունեցած «նշանավոր կոտորածներին»՝ վերստին ստույգ տեղեկությունների սակավության պատճառով, Պիզանիի տված մեկնաբանություններն աղոտ են ու մակերեսային: Անտեսելով հայերի ըմբոստության իրական պատճառները՝ նա նրանց ընդվզումը պայմանավորում է սոսկ «ոմն Յամբարձումի» ծավալած նախապատրաստական աշխատանքով: Ինչ վերաբերում է կոտորածներին հաջորդած՝ եվրոպական տերությունների լիազոր ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի հետաքննությանը, ապա Պիզանին

⁵¹⁶ Նույն տեղում:

⁵¹⁷ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած իրադարձությունների մասին մանրամասն տես Յ. Գ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դ. վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 184-187; Ս. Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, էջ 172-177; Է. Ա. Կոստանդյան, Գում Գափուկի ցույցը (100-ամյակի առթիվ).– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թիվ 8, էջ 67-79:

⁵¹⁸ P. Pisani, նշվ. աշխ., էջ 26:

դրա արդյունքները բնութագրում է իբրև «մշուշապատ» և այդ իրողությունը պայմանավորում թե՛ հանձնաժողովի անդամների մոտեցումների զանազանությամբ և թե՛ «որոշ թուրք պաշտոնյաների անկեղծության բացակայությամբ»⁵¹⁹:

Ակնհայտ է, որ հեղինակը կամ դեռևս անբողջական պատկերացումներ չի ունեցել Օսմանյան կայսրության տարածքում աստիճանաբար թափ ստացող հայկական կոտորածների մասին, կամ գիտակցաբար շրջանցել է դրանց վերաբերող հավաստի տեղեկությունները: Անկախ այս հանգամանքից, Պիզանիին, անշուշտ, հաջողվել է լուծել իր առջև դրված հիմնական խնդիրը, այն է՝ բացահայտել «ճշմարտության առնվազն մի մասը»՝ թուրքերի՝ քրիստոնյաների և, մասնավորապես, հայերի նկատմամբ դրսևորված վերաբերմունքի կտրվածքով:

Լշենք նաև, որ Պիզանիի հաճախ մակերեսային, անգամ իրականությանը չհամապատասխանող մեկնաբանությունները չեն վրիպել ֆրանսիացի ժամանակակիցների ուշադրությունից: Մեկ տարի անց, բարոն Կարա դը Վոն, համիդյան կոտորածներին նվիրված իր հրապարակային ելույթում տվել է Պիզանիի հողվածի հետևյալ դիպուկ գնահատականը. «Պ[արոն] Պիզանին Յայաստանի գործերի մասին խոսում է խորին իմացությամբ: Սակայն նրա հողվածի ընդհանուր տոնը, որը ներթոժված էր այն ժամանակ դեռևս տիրապետող կասկածամտությամբ, հանրահայտ ճշմարտության առջև այսօր թվում է դժնի»⁵²⁰:

Այս հարցի կապակցությամբ որոշ պարզաբանումներ է տվել նաև Պիզանին՝ 1896 թ. մայիսի 3-ին, Փարիզի Կաթլիկական ինստիտուտում կայացած՝ հայկական կոտորածներին նվիրված իր հրապարակային ելույթում. «Իրադարձությունները... ինչպես ինձ թվում է, ես ներկայացրել եմ անկողմնակալորեն, Արևելքի գործերին՝ իմ իրազեկությունից բխող թերահավատությամբ: Ինձ հանդիմանել են պարտվածների նկատմամբ դժնի, զոհերի հանդեպ անողոք լինելու համար,

⁵¹⁹ Նույն տեղում, էջ 28:

⁵²⁰ Les massacres d'Arménie. Conférence faite au salon Bibliographique le 9 mars 1896. Par M[onsieur] le baron *Carra de Vaux*, Paris, 1896, p. 4.

սակայն մոռացել են, որ այն պահին, երբ ես գրում էի, զոհերը միայն այն անզգույշ անձինք էին, ովքեր հրահրել էին դաժան բռնությունները: *Ես կանխագգում էի, որ ամեն ինչ չէ, որ ավարտին է հասել, որ գրգռելով քնած վագրին, նրան կմղենք սարսափազդու զարթոնքի* (ընդգծումը մերն է – Վ. Պ.), բայց ոչ մեկն այդ ժամանակաշրջանում չէր կարող ենթադրել քրիստոնյա ազգի դեմ հյուսված զագրելի դավադրության մասին»⁵²¹: Յեղիմակի այս խոստովանության լույսի ներքո, կարելի է ենթադրել, որ 1895 թ. նա գիտակցաբար լռություն է պահպանել իրեն արդեն հայտնի արյունալի անցքերի շուրջ, դրանց սաստկացմանը չնպաստելու մտադրությամբ:

Իրադարձությունների սրընթաց զարգացումը, Հայոց ցեղասպանության գործընթացի ծավալումն ու դրա արծագանքները Ֆրանսիայում, զարկ են տվել Հայկական հարցի հանդեպ աբբա Պիզանիի հետաքրքրության աճին, իսկ ջարդերի անկողմնակալ պատկերն արտացոլող փաստաթղթերի որոշ հրապարակումներն օժանդակել են նրա իրազեկության ընդլայնմանը և նրան մղել համիդյան կոտորածների անսքող պատկերը, մատչելի սկզբնաղբյուրների ընծեռած հնարավորության շրջանակներում, ներկայացնելու իր ամբողջության մեջ: Այդ մասին է վկայում արդեն հիշատակված նրա հրապարակային ելույթը, որն զգալիորեն տարբերվում է նախորդից, քանզի ծանոթությունը 1896 թ. հայր Շարմետանի հրատարակած «Հայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուում⁵²² զետեղված՝ ֆրանսիական և հայկական ծագում ունեցող վավերագրերի հետ, մեծապես նպաստել է կոտորածների չափերի ու զոհերի քանակի շուրջ նրա պատկերացումների հստակեցմանը:

Աբբա Պիզանին Հայկական հարցը, որի գոյությունն արդեն ընդունում է, քննարկում է Օսմանյան կայսրության տարածքում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցած զանազան անցքերի լայն հետնախորքի վրա, բազմիցս մատնանշում

⁵²¹ L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, p. 15.

⁵²² P[èr]e F[el]ix Charmetant. Martyrologe arménien.

Յունաստանում, Լիբանանում, Բուլղարիայում տեղի ունեցած քրիստոնյա ժողովուրդների կոտորածները: Ղա, անկասկած, նրա դիրքորոշման կրած փոփոխության հետևանքն է: Այդուհանդերձ, նա շարունակում է իրադարձությունները մեկնաբանել խիստ սահմանափակ տեսանկյունից և հավաստում է, որ դրանք ծնունդ են առել բացառապես կրոնական առճակատման հնոցում:

Օսմանյան իշխանությունների՝ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ գործադրած բռնությունները, տնտեսական կեղեքումը, կայսրության տարածքում նրանց համար արդարադատության բացակայությունը նա քննարկում է միմիայն քրիստոնյաների և մահմեդականների դավանանքների միջև առկա տարբերության, «անհավատների» հանդեպ թուրքերի անհանդուրժողականության հենքի վրա: «Իսլամի պատմությունը երկարատև նահատակության պատմություն է, որի ընթացքում արյունոտ տառերով միմյանց են շաղկապվել այն բոլոր քրիստոնյա ժողովուրդների անունները, որոնք կքված են մահմեդականների տիրապետության տակ»,– գրում է նա⁵²³:

Ի շարս օսմանյան լծի տակ հեծող քրիստոնյաների՝ աբբա Պիզանին առանձնացնում է հայերին, որոնց և այլ ժողովուրդների ճակատագրերի միջև համեմատության իսկ եզրեր չի նշմարում. «Դեռևս ստրկության մեջ գտնվող քրիստոնյա ազգերի թվում, չկա այնպիսինը, որի ճակատագիրը համեմատելի լինի հայերի ճակատագրի հետ»,– նշում է նա⁵²⁴:

Հպանցիկ հայացք նետելով հայ ժողովրդի պատմական զարգացման առանձնահատկությունների վրա, նա մատնանշում է, մասնավորապես, վաղուց ի վեր Հայաստանի անկախության կորուստը և փորձում վերլուծել այն պատճառները, որոնք XIX դարի վերջին խոչընդոտում էին հայերին ձեռք բերել բաղձալի ազատագրումն օսմանյան լծից: Այս հարցում ևս աբբա Պիզանին գերադասում է նախապատվությունն անվերապահորեն տալ կրոնական գործոնին. ըստ նրա՝ դեռևս V դարում հայերը խզել են կրոնական բոլոր առնչությունները կաթոլիկություն

⁵²³ L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie, p. 5.

⁵²⁴ Նույն տեղում, էջ 8:

դավանող ժողովուրդների հետ և հենց «այդ կրոնական մեկուսացումը մեծապես նպաստել է քրիստոնեական տերությունների միջամտության հետաձգմանը»⁵²⁵: Ակնհայտ է, որ աշխարհայացքի սահմանափակության հետևանքով՝ մեծ տերությունների՝ Չայկական հարցում գրաված պասսիվ դիրքորոշումը նա մեկնաբանել է իրականության հետ հեռավոր առնչություն չունեցող հանգամանքով, անտեսելով դրա իրական պատճառը, այն է՝ Օսմանյան կայսրության տարածքային անբողջականության պահպանումը, որը պայմանավորված էր նրանց ռազմավարությամբ:

Պիզանին փոքր-իսկ տարակուսանք չի հայտնում 1839 և 1856 թթ. իրավարտակներով նախատեսված, սակայն «երբևէ անկեղծորեն հավանության չարժանացած» արտոնությունների չլեցնագործման հարցում: Նրա կարծիքով, այլ կերպ չէր կարող լինել «մի ժողովրդի մոտ, որն իբրև գերագույն օրենք ընդունում է Ղուրանը: Մահմեդականի համար, — շարունակում է նա, — մարդկային հասարակությունը բաժանված է երկու մասի՝ հավատացյալների և անհավատների. որևէ հավասարություն այս երկու կատեգորիայի միջև հավասարազոր է սրբապղծության և անհեթեթություն է»⁵²⁶:

Բացի դրանից, նա շեշտում է հայերի վիճակը վատթարացնող ևս մեկ հանգամանք. Արևմտյան Չայաստանի տարածքում բնակվող տարբեր մահմեդական ժողովուրդների և առաջին հերթին անհնազանդ քրդական ցեղերի հետ նրանց անմիջական հարևանությունը, որն իր նախադեպը չի ունեցել այն երկրներում, որոնք արդեն թոթափել են օսմանյան լուծը: Այս առիթով, հարկ է նշել, որ Պիզանին, ի տարբերություն նախորդ ելույթի, անդրադառնում է համիդիե զորամիավորումների կազմավորմանը և տալիս նրանց գործողությունների համառոտ, սակայն ընդգրկուն գնահատականը, այն է՝ «անհամար գողություններ, անհնազանդություն, անարգանքներ քրիստոնյաների հանդեպ, բռնի արարքներ, սպանություններ»⁵²⁷: Այս հարցում

⁵²⁵ Նույն տեղում, էջ 9:

⁵²⁶ Նույն տեղում, էջ 7:

⁵²⁷ Նույն տեղում, էջ 12:

աբբա Պիզանիի հավաստումները հիմնավորում են, որ ժամանակակից ցեղասպանագետների առաջադրած՝ «ցեղասպան հասարակության» կատեգորիան խիստ հատկանշական է Օսմանյան կայսրությանը և մեծապես օժանդակում է դրա տարածքում ազգամիջյան խնորունների հիմնավոր ըմբռնմանը⁵²⁸:

Այսպիսով, «հայերը,– ինչպես նա նշում է,– շարունակում էին ենթարկվել զազրելի բռնությունների, չնայած Բեռլինի պայմանագրում արձանագրված հստակ երաշխիքներին»⁵²⁹: Ստեղծված իրավիճակում, ըստ աբբա Պիզանիի՝ հայերին վիճակված էր ընտրել փակուղուց ելնելու միակ հնարավոր միջոցը՝ դիմել զենքի: Ուստի՝ տարբեր երկրներում նրանք հիմնում են կոմիտեներ և ձեռնամուխ լինում քարոզչական աշխատանքի, սակայն, նրա կարծիքով, «որքան նրանց կուսակցության ղեկավարները ձեռներեց էին, նույնքան ազգի հիմնական զանգվածը նվազ հակում ուներ զենք կրելու»: Միակ նշանակալից ըմբոստությունը, որն այս անգամ ևս արժանացել է նրա ուշադրությանը՝ 1894 թ. Սասունում բռնկված ապստամբությունն է, որի ճնշումը հանգեցրել է «ջարդի»⁵³⁰:

1895 թ. հայերի կազմակերպած բողոքի ցույցը Կոստանդնուպոլսում աբբա Պիզանին համարում է «վտանգավոր ուղու» ընտրություն, որն, այդուհանդերձ, որդեգրվել է, չնայած այն բանին, որ «հոգևորականությունը, որի շարքերում կային շատ մեծ հայրենասերներ, բայց նաև զգույշ ու փորձառու անձինք, նման նախագծին վերաբերվում էր անհանգստությամբ»⁵³¹: Ցույցին հաջորդած մի քանի օրվա ընթացքում, ինչպես նա նշում է, «հայերին հետապնդել են, կալանավորել, կոտորել... վայրագ ամբոխը և ոչ պակաս վայրագ ոստիկանությունը»⁵³²:

Հիմնվելով հայր Շարմետանի հրատարակած՝ վերը

⁵²⁸ Այդ մասին տես I. L. Horowitz. *Gouvernement et génocide.*– I.e livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, p. 311; Н. Оганесян, *Арменочид в контексте геноцидологии.*– «Գիտության գիրք», 2005, հ. 5, էջ 21-23:

⁵²⁹ L'abbé P. Pisani, *Les massacres d'Arménie*, p. 12.

⁵³⁰ Նույն տեղում, էջ 13:

⁵³¹ Նույն տեղում էջ 13-14:

⁵³² Նույն տեղում էջ 14:

հղված փաստաթղթերի ժողովածուում ամփոփված վավերագրերի վրա՝ աբբա Պիզանին վկայակոչում է Հայաստանի տարբեր բնակավայրերում տեղի ունեցած հայկական ջարդերը, թվարկում տարբեր վիլայեթներում զանգվածային կրոնափոխությանը, կանանց առևանգմանը, հոգևորականների նկատմամբ գործադրված կտտանքներին, վանքերի և եկեղեցիների կողոպտմանը վերաբերող փաստեր, ընդգծում ցեղասպանության իրականացման հարցում մահմեդական մոլեռանդ բնակչության, ոստիկանության և կանոնավոր բանակի զինվորների համագործակցությունը:

Այնուամենայնիվ, իրադարձությունների նկատմամբ տեղական իշխանությունների որդեգրած վարքագծի վերլուծության հարցում նա դրսևորում է անկողմնակալ մոտեցում, մատնանշում տարբեր բնակավայրերում որոշ թուրք պաշտոնյաների՝ հայերի հանդեպ դրսևորած բարյացակամ վերաբերմունքը: Ելնելով համանման փաստերից՝ աբբա Պիզանին եզրակացնում է. «Նրանք կարող էին, այդուհանդերձ, խոչընդոտել չարիքին, որովհետև ամենուր, որտեղ նման ցանկություն են դրսևորել՝ դրան հասել են»⁵³³:

Աբբա Պիզանին ընդունում է ցեղասպանության կանխանտածված բնույթը. «Հույներին, – նշում է նա, – ամենուր խնայել են: Մեր առջև կուրացած ամբոխի վայրագությունները չեն հառնում. ո՛չ, իրականացնողները գործել են ոչ թե տարերայնորեն, այլ նախօրոք ընտրել են և մատնացույց արել մահվան դատապարտվածներին»⁵³⁴: Կոտորածների իրականացման հարցում նա ընդգծում է թուրք փաշաների դերը, որոնք «քաջալերում էին վայրագություններ գործող մոլեռանդներին»: Դեռ ավելին. Պիզանին, փաստորեն, համիդյան կոտորածները դիտում է իբրև պետական մակարդակով տեղի ունեցող իրադարձություն. «Կարելի է կարծել, – գրում է նա, – որ մի գաղտնագրված բանագնաց կտրել-անցել է երկիրը՝ հաղորդելով այս հրամանը (կոտորածներին առնչվող – Վ. Պ.), որին յուրաքանչյուրն իր

⁵³³ Նույն տեղում, էջ 20:

⁵³⁴ Նույն տեղում, էջ 17-18:

պարտքն է համարում ենթարկվել: Նշմարելի է նաև, որ կոտորածները հաճախ սկսվել են ուրբաթ օրը, այնժամ, երբ մահմեդականները՝ սրբազան պատերազմի մի քանի մոլեգին կոչերով ոգեշնչված դուրս էին գալիս մզկիթից»⁵³⁵:

Այս հարցում, սակայն, նրա դիրքորոշումը միանշանակ չէ, քանզի ինչ վերաբերում է պատասխանատուների դիմագերծմանը՝ նրա մեկնաբանությունները խիստ մակերեսային են: Արձանագրելով, որ դրանից մեկ տարի առաջ ոչ մեկը չէր կարող «ենթադրել քրիստոնյա ազգի նկատմամբ նման նողկալի դավադրության» մասին, նա ջանում է բացահայտել հայ ժողովրդի ողբերգության պատճառները. «Ասել և գրել են, որ հայերի բնաջնջումը, որը Հայկական հարցի լուծման ամենից արմատական միջոցն է, նախապատրաստում է սուլթանի կառավարությունը: Ես վարանում եմ ընդունել այդ կարծիքը... Ըստ իս՝ բնաջնջման հրամանը կայսերական ապարանքից չի արձակվել. դա, հավանաբար, տրվել է ավելի բարձրից: Սուլթանից վեր գտնվում են կրոնական եղբայրությունները, որոնք իսլամում ամենագոր են»⁵³⁶:

Այսպես, իրադարձությունների քննարկումը պարփակելով սոսկ կրոնական առձակատման շրջանակում, նա, ցավոք, չնայած այդ ժամանակաշրջանում հրապարակված փաստաթղթերի ընձեռած հնարավորությանը, անկարող է գտնվել հաղթահարելու իր իսկ հայացքների սահմանափակությունը և ցուցաբերելու համակողմանի մոտեցում: Ի վերջո՝ դեռևս ամբողջությամբ չընկալելով Հայկական հարցին լուծում տալու՝ Աբդուլ Համիդի նախընտրած տարբերակի էությունը, նա սուլթանին ամբողջությամբ գերծ է պահել կոտորածների հարցում նվազագույն իսկ պատասխանատվությունից:

Պիզանին անդրադառնում է նաև այն նյութական աջակցությանը, որը հայր Շարմետանի ջանքերի շնորհիվ Ֆրանսիայում կազմակերպվել էր ցեղասպանությունից մազապուրծ հայերի օգտին: Չեռնպահ մնալով եվրոպական տերությունների՝ արևմտահայության ճակատագրի հանդեպ ցուցաբերած

⁵³⁵ Նույն տեղում, էջ 17:

⁵³⁶ Նույն տեղում, էջ 16:

անկարեկից վերաբերմունքի հասցեին քննադատական խոսքեր ուղղելուց, նա կոչ է անում իր հայրենակիցներին այդուհետև ևս հայերին տրամադրել նյութական օգնություն:

Ինչպես տեսանք, աբբա Պիզանիի ելույթների միջև կան եական զանազանություններ, որոնք պայմանավորված են վերին արդեն հիշատակված հանգամանքներով: Դրանց թվում, անկասկած, կարևորագույնը՝ նրա ելույթների միջանկյալ շրջանում համիդյան ջարդերի սաստկացումն է, որի առիթով նա իր հրապարակային ելույթի եզրափակիչ մասում հայտարարել է. «Այսպիսիք են այն ողբերգությունները, որոնք հենց նոր արյունաներկ են արել քրիստոնեական տարածքը: Նման դժբախտություններին ի տես, հարկը չկա խորհրդածելու, թե արդյոք զոհերն անզոյշ են եղել՝ զրգռելով իրենց կլանած հրեշի»⁵³⁷: Մենք համոզված ենք, որ հենց այս հանգամանքն է դրդել աբբա Պիզանիին Չայոց ցեղասպանության շուրջ հանդես գալ շատ ավելի արմատական դիրքերից:

Չայոց ցեղասպանությունը միևնույն ելակետային դիրքերից է լուսաբանել նաև աբբա Լ. Գոնդալը, որի հայեցակարգը ևս կրում է իրադարձությունների վրա մահմեդականների և քրիստոնյաների միջև առկա կրոնական առճակատման թողած վճռորոշ ազդեցության կնիքը: Նրա համոզմամբ՝ «այդ դժբախտ երկրում» ազգային անջրպետներն իրենցից ոչինչ չեն ներկայացնում կրոնական զանազանությունների համեմատությամբ, քանզի «թուրքը՝ անհաշտ մահմեդականը, քրիստոնյայի հանդեպ տածում է այնպիսի ատելություն, որը ոչնչով չի կարող հագենալ և կասեցվել»⁵³⁸:

Անտարակուսելի է, որ ֆրանսիացի կրոնական գործիչների՝ Չայկական հարցին նվիրված ելույթները, չնայած նրանց աշխարհայացքի ակնհայտ սահմանափակությանը, որի հետևանքով Չայոց ցեղասպանությունը սխալմամբ մեկնաբանել են գլխավորապես իբրև կրոնական զանազանության հողի վրա տեղի ունեցած իրադարձություն, այնուամենայնիվ, նպաստել

⁵³⁷ Նույն տեղում, էջ 22:

⁵³⁸ L. Gondal, նշվ. աշխ., էջ 55:

են օսմանյան լծի տակ տառապող հայ ժողովրդի ողբալի կացության շուրջ Ֆրանսիայում հավաստի պատկերացումների ձևավորմանն ու հայասիրական շարժման ընդլայնմանը: Նրանց թվում ցանկանում ենք առանձնացնել հայր Շարմետանի ներդրումը, որի ջանքերի շնորհիվ հրատարակված փաստաթղթերը մեծապես օժանդակել են ֆրանսիացի ժամանակակիցներից շատերին կողմնորոշվելու Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող՝ Հայոց ցեղասպանության գործընթացին առնչվող, զանազան մանրամասներում:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅՆԵՐԻ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Խարազանուների ընդհանուր հորձանուտում, որը XIX դարի 90-ական թվականներին Ֆրանսիայում կյանքի կոչվեց Յայոց ցեղասպանության կազմակերպիչներին դատապարտելու անհրաժեշտությամբ, ուրույն տեղ են զբաղեցնում համիդյան կոտորածների մեկնաբանության հարցում տարբեր մոտեցումներ դրսևորած ֆրանսիացի մտավորականների կազմակերպած հրապարակային ելույթները, որոնք միմյանցից տարբերվում են բնույթով, վեր հանված հիմնահարցերի ընդգրկումով և վերլուծություններով, ինչը պայմանավորված է ոչ միայն հեղինակների հայացքների զանազանությամբ, այլև նրանց օգտագործած տարատեսակ սկզբնաղբյուրներով:

Ֆրանսիայում հայկական կոտորածներին նվիրված առաջին հրապարակային ելույթներից մեկը հնչել է արևելագետ, պատմաբան բարոն Կարա դը Վոյի⁵³⁹ կողմից Փարիզի Մատենագիտական սրահում՝ 1896 թ. մարտի 9-ին⁵⁴⁰: Անտեսելով Յայկական հարցի գոյության իսկ փաստը և հետևաբար՝ դրա լուծման ուղղությամբ Աբդուլ Յամիդ II-ի գործադրած եռանդագին ջանքերը, նա, հարկավ, 1890-ական թվականներին Օսմանյան կայսրությունն ակեկոծած ողբերգական իրադարձությունների դրդապատճառներին չի տվել սպառիչ մեկնաբանություններ:

Կարա դը Վոն ուշնդրությունը կենտրոնացնում է, մաս-

⁵³⁹ Carra de Vaux. Etude d'histoire orientale. Le Mahometisme, le génie sémitique et le génie arian dans l'Islam, Paris, 1898; նույնի La doctrine de l'Islam, Paris, 1909.

⁵⁴⁰ Les massacres d'Arménie. Conférence faite au salon Bibliographique le 9 mars 1896. Par M[onsieur] le baron Carra de Vaux, Paris, 1896.

նավորապես, Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թշվառ վիճակի, կոտորածների ընթացքի և դրանց հարակից հարցերի վրա: Նրա կարծիքով անելանելի կացությունը հայերին դրդել է ընդվզելու, որն արտահայտվել է, առաջին հերթին՝ Օսմանյան կայսրության սահմաններից դուրս լրագրեր հրատարակելու և հանրահավաքներ կազմակերպելու միջոցով: Ընդ որում, այդ ասպարեզում հայերի ծավալած գործունեության դեմ ուղղված օսմանյան կառավարության վարքագիծը ենթարկվում է նրա խիստ քննադատությանը. «Ավելի մեծ ազատություններ ստանալու մտադրությամբ նրանց (հայերի – Վ. Պ.) ձեռնարկած փոքրագույն իսկ շարժումը թուրքերը կարող են դիտել իբրև ապստամբական գործողություն»⁵⁴¹: 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում կազմակերպված բողոքի ցույցին հաջորդած բռնությունների առիթով Կարա դը Վոն եզրակացնում է. «Ասիայում այս պահին մահմեդական ոգին ամբողջությամբ պատրաստ էր մեծ հանցանքներ իրագործելու և հեռվում, անհայտ հովտում, բոցկլտաց այն կայծը, որից պետք է սարսափելի հրդեհ բռնկվեր»⁵⁴²:

Թուրքերի հետ մեկտեղ քրդերին և լազերին համարելով հայերի ողբերգության «գլխավոր հեղինակներ»՝ Կարա դը Վոն իբրև կոտորածների միակ հնարավոր դրդապատճառ դիտում է մահմեդականների և քրիստոնյաների միջև վաղուց ի վեր գոյություն ունեցող կրոնական առճակատումը: Ըստ նրա՝ մահմեդական մուլեռանդությունը սանձազերծվել է 1894 թ. Սասունում «նողկալի դաժանությամբ իրականացված գործողություններից» ի վեր: «Հայերի դժգոհությունը, նրանց հուզումները, կոչերը տերություններին՝ նրանց նույնացրել են ապստամբներին: Անհավատների դեմ նախկինում Մուհամեդի արտաբերած մուլեգին անեծքները կիրառելի էին նրանց նկատմամբ»⁵⁴³:

Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած անցքերը Կարա դը Վոն բնութագրում է իբրև «սարսափելի կոտորած», «ահարկու

⁵⁴¹ Նույն տեղում, էջ 7:

⁵⁴² Նույն տեղում, էջ 8:

⁵⁴³ Նույն տեղում:

տեսարաններ», որոնք Տրապիզոնի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Մուշի և այլ նահանգներում իրականացվել են «հաջորդաբար կամ միաժամանակ ու անողոք համանմանությամբ»⁵⁴⁴: Նրա ելույթն, ի դեպ, զանազանվում է մյուս բուլոբից՝ այլոց շրջանցած խնդիրների շոշափմամբ, քանզի սակավաթիվ մտավորականներից է, ով հանգամանալից քննարկել է գյուղական վայրերում տեղի ունեցած վայրագությունները: «Թվում է, թե իրագործված դաժանությունները, – գրում է նա, – շատ ավելի բարբարոսական բնույթ են կրում գյուղերում, քան քաղաքներում»: Յենց գյուղերում է, որ, նրա կարծիքով, «ոչնչացնելու կամ կրոնափոխության միջոցով անհավատներին քնաջնջելու՝ մահմեդականների աններ գաղափարը, որն ամբողջությամբ անիրագործելի է քաղաքներում, իրականության է վերածվել ամենացավալի ձևով»⁵⁴⁵:

Յայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում որդեգրած մոտեցումը Կարա դը Վոյին, անկասկած, մղել է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գյուղերում վանքերի ու եկեղեցիների կողոպտման, ավերման, պղծման, ինչպես նաև մուլեգին կրքերի բորբոքման պատճառ դարձած՝ քահանաներին ամենադաժան խոշտանգումների ենթարկելու փաստերին: «Մահմեդական հորդաների մուլեգնությունը կրոնական տարրի հանդեպ, – հավաստում է նա, – ամենուր դրսևորվում է ծայրահեղորեն: Քահանաները ոչ միայն դատապարտված են վատթարագույն կտտանքների, այլև նրանց դիակներն են հոշոտվում»⁵⁴⁶:

Կտորածները նա համեմատում է «սարսափելի փոթորկի» հետ, որի ամեհի ալիքները կործանել են ամեն ինչ՝ հաշվի չառնելով՝ «ոչ տրված խոստումը, ոչ սահմանված իրավունքը, ոչ ընտանիքը, ոչ հավատքը, ոչ մանկությունը, ոչ մայրությունը, ոչ ի շարս այլ հանգամանքների՝ հարգանքի արժանի հոգևորականությանն ու կուսությունը»⁵⁴⁷:

⁵⁴⁴ Նույն տեղում, էջ 10, 11-12:

⁵⁴⁵ Նույն տեղում, էջ 10, 11:

⁵⁴⁶ Նույն տեղում, էջ 12:

⁵⁴⁷ Նույն տեղում, էջ 13:

Չեղինակը զանազան տեսանկյուններից վերլուծում է կոտորածների ընթացքում հայերի դրսևորած վարքագիծը, որն, ըստ էության, այլ անձանց հրապարակային ելույթներում իր արտացոլումը չի գտել: «Ասել են, թե հայերը սխալներ են թույլատրել: Եթե մենք պետք է մտածենք, – գրում է նա, – որ հին և քրիստոնյա ազգը, որին մահմեդական նվաճումը լծի տակ է դրել, սխալվում է՝ երբ հարաբերական անկախություն է որոնում, ես ընդունում եմ, որ հայերը սխալներ են թույլատրել»⁵⁴⁸: Բացառելով հայերի սադրիչ գործողությունների հնարավորությունը, Կարա դը Վոն ջանում է բացահայտել նրանց գրաված կրավորական դիրքորոշման պատճառները. «Նախ՝ կարելի է ենթադրել, որ եթե հայերն, ընդհանուր առմամբ, չեն մարտնչել, ապա այդ արվել է այն պատճառով, որ ցանկացած բնույթի պայքարն անհնար էր: Ինչ վերաբերում է մոտալուտ կոտորածներին ի տես նրանց անգործությանը, ապա դրան նպաստել են մի շարք պատճառներ՝ կառավարության հավաստիացումները, տերությունների գործողությունները, հյուպատոսների քայլերը»⁵⁴⁹: Այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում մշտել, որ Կարա դը Վոն սակավաթիվներից է, ով թուուցիկ հայացք է նետել հայերի ինքնապաշտպանության փաստերի վրա: «Հայերը, – գրում է նա, – մեծ հերոսությամբ պաշտպանվել են այնտեղ, որտեղ կարողացել են»: Խոսքը մասնավորեցնելով Ձեյթունի ինքնապաշտպանության վրա, հեղինակն այն համարում է «արդյունավետ», իսկ կայացած հաշտության պայմանները՝ «պատվավոր»⁵⁵⁰: Հարկ է նաև ընդգծել, որ թեև հարևանցիորեն, Կարա դը Վոն, այնուամենայնիվ, քննադատական խոսքեր է ուղղել թե՛ Ֆրանսիայի, որն անսալով հայերի կոչին, որևէ նախածեռնությամբ հանդես չի եկել և թե՛ հակասություններից բզկտվող եվրոպական բազմաթիվ ժողովուրդների հասցեին⁵⁵¹:

Ի վերջո՝ Հայոց ցեղասպանությունը բացառապես

⁵⁴⁸ Նույն տեղում:

⁵⁴⁹ Նույն տեղում, էջ 14:

⁵⁵⁰ Նույն տեղում, էջ 15:

⁵⁵¹ Նույն տեղում, էջ 8, 17:

կրոնական զանազանության հանգամանքով պայմանավորող հեղինակը եզրահանգում է. «Մեր կարծիքով Հայաստանի կոտորածների պատասխանատուն իսլամն է: Դրանք իրականացվել են ըստ Ղուրանի խրատների, իսլամականության ոգու և ավանդույթների ու հանուն այս կրոնի հավատացյալների համար ի սկզբանե նախանշված՝ անհավատներին ոչնչացնելու նպատակի»⁵⁵²: Անկախ այդ հանգամանքից, նա հպանցիկ մատնանշում է նաև ջարդերի հարցում թուրքական իշխանությունների պատասխանատվության հանգամանքը. «Թուրքական իշխանությունների մեղսակցությունը կոտորածներին անժխտելի է: Անհնար է հանցագործությունների այս լայնատարած համակարգը ներկայացնել իբրև քուրդ և լազ հորդաների՝ տարերայնորեն սանձազերծած բարբարոսության հետևանք»⁵⁵³: Բայց քանզի «թուրքական իշխանությունների մեղսակցությունը» որևէ փաստով նա չի հիմնավորում, այս անառարկելի եզրակացությունը վերածվում է մերկապարանոց հայտարարության: Այդուհանդերձ, նրա ելույթն աչքի է ընկնում քննարկված խնդիրների բազմազանությամբ, որը և կանխորոշում է նրա տեղը հրապարակային ելույթների թվում⁵⁵⁴:

Կարա դը Վոյի՝ Հայոց ցեղասպանությունն իբրև սոսկ կրոնական շղարշով պարուրված իրադարձություն մեկնաբանող ելակետային դրույթը լիովին համահունչ է Բարոյական գիտությունների ակադեմիայի անդամ (1887) Անատոլ Լեբուա-Բոլիոյի (1842-1912) դիրքորոշման հետ, որի՝ համիդյան կոտորածներին նվիրված հրապարակային ելույթը տեղի է ունեցել 1896 թ. հունիսի 9-ին, Գիտական ընկերությունների սրահում⁵⁵⁵: Ռուսաստանի և Եվրոպայի պատմությանը նվիրված

⁵⁵² Նույն տեղում, էջ 15:

⁵⁵³ Նույն տեղում:

⁵⁵⁴ Նշենք, որ 1897 թ. Կարա դը Վոն գրախոսել է Լեփսիուսի «Հայաստանը և Եվրոպան» (J. Lepsius, Armenien und Europa, Berlin, 1896) գիրքը: Տե՛ս «Revue de l'Orient chrétien», 1897. p. 120-122.

⁵⁵⁵ Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M[onsieur] Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hôtel des Sociétés savantes le 9 juin 1896, Paris, 1896.

մի շարք ուսումնասիրությունների հեղինակը⁵⁵⁶ ևս, հայկական կոտորածների պատմությանն առնչվող հարցերը քննարկել է ընդարձակ հենքի վրա:

Հայաստան այցելած Լերուա-Բոլիոն հայերին անվանում է «դժբախտ» և «ճնշված» ժողովուրդ, իսկ Հայկական հարցը՝ «ցավալի» ու «տանջահար»: Նա դառնությամբ է նշում, որ Հայաստանը վերածվել է սոսկ աշխարհագրական հասկացության, իսկ թուրքերը հավակնում են «քարտեզի վրայից ջնջել ոչ միայն Հայաստան անունը, այլև վերացնել հայ ժողովրդին»⁵⁵⁷: Հայերի համար ստեղծված ծանր կացությունը նա մասամբ պայմանավորում է հայկական նահանգները մայրաքաղաքից անջրպետող տարածությամբ. այնտեղ «թուրքական վարչության արատներն իրենց զգալ են տալիս ամենադժնի ձևով: Այնտեղ իսլամի հին ոգին գերիշխում է միահեծանորեն, այնտեղ չկա որևէ վերահսկողություն, քրիստոնյաների համար չկա արդարություն, այնտեղ ամենազոր են ոչ միայն փաշայի կամ կայմակամի կամքը, այլև հաճախ՝ վերջին թուրքի կամայական քմահաճույքները»⁵⁵⁸: Թուրքիան համարելով անսահմանափակ միապետություն, նա Աբդուլ Համիդին բնութագրում է իբրև «ժամանակակից մարդուն» բնորոշ որևէ հատկանիշից զուրկ անձնավորության, որը «հին թուրքերի սկզբունքների և նախապաշարմունքների յուրօրինակ գերին էր» և բացարձակապես հակված չէր հավասարություն հաստատելու «ռայայի» և մահմեդական հավատացյալների միջև⁵⁵⁹:

Ըստ Լերուա-Բոլիոյի բացատրությունների՝ վիատված հայերը, որոնց բողոքները նույնիսկ Բեռլինի վեհաժողովից հետո թե՛ եվրոպական դիվանագիտական և թե՛ օսմանյան ղեկավար շրջաններում, որոնք «նրանց պատասխանել են սպառնալիքներով կամ բանտարկությամբ», մնացել են

⁵⁵⁶ A. Leroy-Beaulieu, L'empire des czars et les Russes, Paris, 1882; *Մույնի* La France, la Russie et l'Europe, Paris, 1888; *Մույնի* Christianisme et socialisme, Paris, 1905.

⁵⁵⁷ Les Arméniens et la Question arménienne. Conférence faite par M[onsieur] Anatole Leroy-Beaulieu, p. 6.

⁵⁵⁸ Նույն տեղում, էջ 15-16:

⁵⁵⁹ Նույն տեղում, էջ 21, 23:

անարձագանք, հարկադրված դիմել են ինքնապաշտպանական միջոցների: «Չա՞րկ է արդյոք նրանց մեղադրել իրենց իսկ օգնելու ցանկությունն դրսևորելու համար»⁵⁶⁰, – տարակուսած դիմում է նա իր ունկնդիրներին: Քանի որ հայերը հիմնադրել են կոմիտեներ, լրագրեր և փորձել «իրենց հայրենակիցների շրջանում արթնացնել ազգային ոգին»՝ նրանց անվանել են անարխիստներ, միհիլիստներ և հեղափոխականներ: Իրականում, ինչպես նա նշում է, «այնժամ, երբ նրանք դառնում են այնքան անվեհեր, որ չեն հանդուրժում կեղեքումը, այնժամ, երբ համարձակվում են ինքնապաշտպանական ջանքեր գործադրել՝ նրանց անվանում են հեղափոխականներ, որոնց դեմ թույլատրելի է ցանկացած միջոցի կիրառումը»⁵⁶¹:

Ցնցված կոտորածներից՝ Լեռուա-Բուլիոն հայտարարում է. «Պատմությունը երբևէ չի արձանագրել, ես կասեմ ավելին, արևն իսկ... մեր տխուր՝ այդչափ հանցագործությունների հետևանքով արյունաներկ եղած երկրագնդի վրա, հավանաբար, երբևէ չի տեսել այնպիսի սարսափազդու ներկայացում, քան այն, որը շաբաթներ և ամիսներ շարունակ ընթացել է Արևելյան Անատոլիայի հարթավայրերում»⁵⁶²: Խուսափելով, ըստ էության, կոտորածների մանրամասների նկարագրության մեջ թափանցելուց, նա ճգնում է բացահայտել դրանց պատասխանատուներին: Որքան տարօրինակ է, բայց օսմանյան կառավարությանը և Աբդուլ Չամիդին խիստ բնորոշ և անկողմնակալ գնահատականներ տված պատմաբանը թե՛ մեկին և թե՛ մյուսին ամբողջությամբ զերծ է պահում հայկական ջարդերի պատասխանատվությունից: «Ո՞վ է այս կոտորածների պատասխանատուն» հարցին, հետևում է հետևյալ մշուշապատ և ծավալուն պատասխանը. «Ես չեմ համարձակվի ասել, որ դա կարող է լինել թուրքական կառավարությունը, ես հատկապես չեմ համարձակվի ասել, ինչպես ոմանք, որ դա կարող է լինել սուլթանը: Ոչ, պարոնայք, ես չեմ ցանկանում հավատալ, որ սուլթանը կարող էր նման հրաման արձակել: Ես չեմ կարող

⁵⁶⁰ Նույն տեղում, էջ 28:

⁵⁶¹ Նույն տեղում, էջ 29:

⁵⁶² Նույն տեղում, էջ 30:

ընդունել, որ Պուռը կամ Պալեն կարող էին կառավարիչներին՝ համանման ձևով հայ ազգի բնաջնջումը նախանշող ցուցում տալ: Բայց այն, ինչն ինձ հայտնի է, պարոնայք, այն, ինչը բխում է ականատեսների բոլոր պատումներից, հանգում է նրան, որ այս ամենը կատարվել է կանխամտածված ձևով՝ իշխանությունների ազդանշանի հիման վրա: Այն է՝ եթե Անատոլիայի խորքերում Ստամբուլից կամ Ելզըզ-Քյոչքից տրված հրաման չեն ունեցել, ապա գիտակցել են, որ կոտորելով՝ կարող են հաճոյանալ»: Մեկ այլ առիթով միևնույն հարցին տրված նրա մեկնաբանությունը նույնքան աղոտ է. «Բավական է պնդել, որ նրանք, ովքեր տվել են կոտորածների ազդանշանը, կարծել են, թե կարող են հաճոյանալ Պալեին»⁵⁶³:

Ինչպես տեսնում ենք, Լերուա-Բոլիոյի դիրքորոշումը ցեղասպանության պատասխանատուների դիմազերծման հարցում՝ մեղմ ասած միանշանակ չէ: Խիստ դժվար է, անշուշտ, եթե չասենք անհնար՝ կռահելն իսկ, թե սուլթանին և օսմանյան կառավարությանը կոտորածներին անմեղսակից համարող պատմաբանն ի՞նչ նկատի ունի «իշխանություններ» անորոշ հասկացության տակ: Շատ ավելի խրթին է կողմնորոշվելն այն հարցում, թե ո՞վքեր են կոտորածների ազդանշան տված խորհրդավոր անձինք, որոնց ինքնության բացահայտումը Լերուա-Բոլիոն խնամքով շրջանցում է:

Շարունակելով իր մտորումները, նա համառոտակի հիշատակում է XIX դարի ընթացքում Քիոսում, Լիբանանում, Բուլղարիայում, Եգիպտոսում տեղի ունեցած տարբեր՝ այդ թվում մահմեդականների կոտորածների մասին և հանգում որքան անտրամաբանական, նույնքան և անմեկնաբանելի հետևության. «Այդպիսիք են արևելյան քաղաքականության գործելամիջոցները. Իսկ դրանից հետո, պարոնայք, արդյո՞ք հայերի կոտորածը ձեզ զարմանք է պատճառում»: Հայկական ջարդերի հարցում նա գերադասում է, փաստորեն, մեղավոր ճանաչել «արևելյան քաղաքականությանը և մահմեդական մոլեռանդությանը», ձեռնպահ մնալով թե «արևելյան քաղաքականություն»

⁵⁶³ Նույն տեղում, էջ 31, 33:

հեղինակուկ հասկացության մեկնաբանումից և թե՛ այն կերտողների անունները թվարկելուց⁵⁶⁴:

Ինչ վերաբերում է «մահմեդական մոլեռանդությանը», ապա այդ առիթով արդեն Լերուա-Բուլիոն չի զլանում անհրաժեշտ պարզաբանումներ տալ, քանզի նրա որդեգրած հայեցակարգը խարսխվում է Հայոց ցեղասպանության հարցում կիրառվող՝ հեռահար նպատակներ հետապնդող օսմանյան պետական քաղաքականության փաստի ժխտման վրա և ուղղակիորեն հանգում հայկական կոտորածները զուտ կրոնական պիտակով սքողելու գաղափարին. «Եթե իսկական մեղավորը մոլեռանդությունը չէ, ապա քրիստոնյայի նկատմամբ տածվող ատելությունն ու նախանձն է, քանզի կրոնական ատելություններն այստեղ ծուլվում են ազգերի ատելությանը»: Հանգամանորեն անդրադառնալով տիրող իրավիճակի բարդացման հարցին, նա իրավամբ մատնանշում է մահմեդական զինվորների և սպաների մեծամասնության մասնակցությունը կոտորածներին, որոնց օգնությանը դիմել էին կարգ ու կանոն հաստատելու նպատակով: Քրիստոնյաների նկատմամբ տածած ատելությունը, սակայն, նրանց վերածել է կոտորածն իրականացնողների⁵⁶⁵:

Ելնելով ցեղասպանությունն իբրև միմիայն կրոնական երևույթ մեկնաբանելու տեսակետը բազմակողմանիորեն հիմնավորելու անհրաժեշտությունից, Լերուա-Բուլիոն վկայակոչում է զանազան, հիրավի, հավաստի փաստեր: «Հայերը, – գրում է նա, – միակ զոհերը չէ, որ եղել են: Հանգուցյալների թվում եղել են հարյուրավոր, եթե ոչ հազարավոր՝ տարբեր արարողակարգ ունեցող այլ քրիստոնյաներ»: «Բարդ և ցավոտ» Հայկական հարցի «ամենատխուր» կողմերից մեկը նա համարում է բռնի կրոնափոխությունը, որի՝ իբրև իր դիրքորոշման հիմնավորման հերթական կռվանի վրա հիմնվում է հաճույքով. «Բազմաթիվ վայրերում զոհերին՝ մահվան և ուրացման միջև ընտրության հնարավորություն է ընձեռվել»⁵⁶⁶:

⁵⁶⁴ Նույն տեղում, էջ 33:

⁵⁶⁵ Նույն տեղում, էջ 33, 34:

⁵⁶⁶ Նույն տեղում, էջ 34, 35:

Հասկանալի է, որ իրադարձությունների ընթացքին այս-
չափ իրազեկ պատմաբանը հազիվ թե անտեղյակ լիներ Օսման-
յան կայսրությունում պետական քաղաքականության մակար-
դակով իրականացվող հայկական կոտորածներին և դրանց
իրական դրդապատճառներին: Այդուհանդերձ, դժվարանում
ենք ասել, թե ի՞նչ գործոններ են նրան մղել զանց առնելու
ջարդերի կազմակերպիչների անունները և անտեսելու Հայոց
ցեղասպանության կազմակերպման և իրականացման հարցում
Բարձր Դռան մտադրություններն ու գործադրած ջանքերը: Ի
վերջո, նա զերադասում է սոսկ «մարդկային խղճի» անունից
պահանջել, որ «այդ դժբախտներին կրոնական ազատություն
տրվի»⁵⁶⁷:

Այսպես, Հայոց ցեղասպանությունը պատմաբանն ամբող-
ջությամբ պայմանավորում է մահմեդականների և քրիստոն-
յաների միջև վաղուց ի վեր առկա թշնամությամբ, որն անհրա-
ժեշտության պարագայում չի հապաղում իրավառւթել: «Այլ
միջոցների բացակայության հետևանքով՝ իսլամի գերիշխա-
նությունը հաստատվում է սրով»,– եզրակացնում է նա: Դրա
հետևանքով, «ոչ հեռավոր անցյալում ծաղկում ապրող այս
երկրամասն այսօր վերածվել է ամայի անապատի, լի ավերված
գյուղերով ու հրկիզված խրճիթներով», իսկ մազապուրծ հայերը
դատապարտված են կործանման, որովհետև «ցուրտը, սովը,
թշվառությունն անպատիժ ձևով ավարտին են հասցնում մար-
դասպանների գործը»⁵⁶⁸:

Ինչ վերաբերում է արևմտահայերին օժանդակություն
ցուցաբերելու հարցին՝ Լերուա-Բոլիոն առաջարկում է լռու-
թյամբ շրջանցել Արևմտյան Հայաստանի ինքնավարության կամ
անկախության պահանջը: Հաշվի առնելով XIX դարի վերջին
Եվրոպայում տեղի ունեցած ռազմաքաղաքական ուժերի
վերադասավորումը և Օսմանյան կայսրության արևելյան
նահանգներում առկա՝ ժողովուրդների ու կրոնների բազ-
մերանգ խճանկարը, նա հայկական ինքնավարության

⁵⁶⁷ Նույն տեղում, էջ 35:

⁵⁶⁸ Նույն տեղում, էջ 36:

պահանջը համարում է «երազանք»: Փոխարենը, եվրոպական պետությունների համար նա անհրաժեշտ է համարում Բարձր Դռնից պահանջել՝ «աշխարհի առջև եվրոպային խայտառակող վայրագությունների» կասեցումը և «համանման բարբարոսության կրկնությանը» խոչընդոտող զանազան, այդ թվում՝ հայերի համար ապրելու, աշխատելու, կրոնը դավանելու երաշխիքներ⁵⁶⁹:

Լեռուա-Քոլիոն քննադատում է մեծ տերությունների անկարեկից վարքագիծը Հայոց ցեղասպանության հարցում, ֆրանսիական մամուլի լռակյացությունը, քառասունից հիսուն հազար հայի հեղված արյունը համարում «դիվանագիտության անշրջահայացության և անփութության» հետևանք⁵⁷⁰: Նա «Եվրոպայի պարտականությունն» է համարում թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ վերահսկողության սահմանումը, որն, ըստ նրա՝ հնարավորություն կընձեռներ հայերի կոտորածների կասեցման միջոցով ի չիք դարձնել Օսմանյան կայսրության ներքին գործերին եվրոպական տերություններից որևէ մեկի զինված միջամտության հավանականությունն ու հողմացրիվ անել մեծ պատերազմի բռնկման հեռանկարը: Լինելով Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման ջատագով, երկյուղելով դրա տրոհումից, Լեռուա-Քոլիոն մեծ շահագրգռվածություն է հանդես բերում, մասնավորապես, այնտեղ բնակվող ժողովուրդների անվտանգությունն ապահովելու հարցում, որը դիտում է իբրև Օսմանյան կայսրության գոյատևման ամենաանհրաժեշտ նախապայման: Հակառակ դեպքում, նրա համոզմամբ, կայսրությունը «մեկը մյուսի ետևից կկորցնի իր բոլոր եվրոպական և ասիական, նահանգները... Ահա հենց սրանից է, որ թե՛ հանուն [Բարձր] Դռան և թե՛ հանուն եվրոպայի, մենք ցանկանում ենք խուսափել. և այդ աղետը կանխելու համար այն, ինչ մենք պահանջում ենք, պարոնայք, ես կասեմ մեկ բառով՝ դա այնպիսի թուրքիա ունենալն է, որը բնակվելու

⁵⁶⁹ Նույն տեղում, էջ 38, 39:

⁵⁷⁰ Նույն տեղում, էջ 20, 32:

համար պիտանի լինի ամենքի՝ թե՛ քրիստոնյաների և թե՛ մահմեդականների համար»⁵⁷¹:

Ինչպես տեսնում ենք, Լերուա-Բոլիոն, կամա թե ակամա, այս ելույթով հանդես է գալիս, փաստորեն, ոչ այնքան իբրև հայերի, որքան եվրոպական երկրների միջև գոյություն ունեցող հավասարակշռության պահպանման ջերմեռանդ պաշտպան՝ հմտորեն օգտագործելով հայկական խաղաքարտը⁵⁷²: Ամեն դեպքում, նրա ելույթն, անկախ իրադարձություններից տրված՝ հաճախ անընդունելի մեկնաբանություններից, անկասկած, նպաստել է լռության այն ամուր պատմեչի սասանմանը, որը հայկական կոտորածների եղելությունն անջրպետում էր ֆրանսիական հասարակության լայն խավերից: Այդ առիթով, ի դեպ, տարիներ անց, նա հայտարարել է. «ես առաջինն էի, որ Փարիզում, կոտորածների շուրջ տիրող լռության ժամանակաշրջանում, հայերի համար հանդես եկա ելույթով»⁵⁷³:

Ֆրանսիայում հնչած հրապարակային ելույթների թվում ակադեմիական բարձր մակարդակով և վերլուծությունների

⁵⁷¹ Նույն տեղում, էջ 40:

⁵⁷² Այս հարցի վրա որոշ չափով լույս է սփռում Սապահ-Գյուլյանի վկայությունը, որի խնդրանքով ֆրանսիացի պատմաբանը հանդես էր եկել այս ելույթով: Ըստ նրա՝ Յանուտոն խնդրել էր հռետորին «չափավոր լեզու գործածել»: Տես Ս. Սապահ-Գյուլյան, Եզվ. աշխ., էջ 153:

⁵⁷³ La Manifestation au Théâtre du Château-d'Eau de Paris (15 février 1903). – Pour l'Arménie et la Macédoine, p. 59. Սապահ-Գյուլյանը ևս հավաստում է, որ Լերուա-Բոլիոյի գրքուկի լույս ընծայումից հետո (ի դեպ, 10000 օրինակով), «հասարակական խնդիրներով պարապող մեկը չմնաց, որ մեծանուն դասախոսի մտքերին հաղորդակից չլիներ» (տես Ս. Սապահ-Գյուլյան, Եզվ. աշխ., էջ 154): Նշենք նաև, որ Լերուա-Բոլիոյի գրքուկին նվիրված ընդարձակ հոդված է լույս ընծայել «Մշակ» թերթը, որտեղ ոչինչ չի ասվել Հայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում հեղինակի գրված դիրքորոշման մասին, բայց փոխարենը՝ քննության նյութ են դարձել հայերի անցյալի, դավանանքի հետ կապված երկրորդական բնույթի հարցերին վերաբերվող նրա տեսակետները (տես «Մշակ», 1896, թիվ 100): Ավելի լայն կտրվածքով, սակայն վերստին առանց վերլուծական մոտեցման՝ Լերուա-Բոլիոյի գրքուկը ներկայացվել է նաև ֆրանսիական մամուլում: Տես Les Arméniens et la Question arménienne, conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu. – La vérité sur les massacres d'Arménie, p. 121-125.

խորությամբ առանձնանում է ֆրանսիացի ականավոր պատմաբան, Ալբեր Վանդալի ելույթը, որն անուրանալի ավանդ ունի հայ ժողովրդին սատարելու, նրա իրավունքները պաշտպանելու և Չայոց ցեղասպանության կազմակերպիչներին անարգանքի սյունին գամելու ասպարեզում: Լինելով ոչ միայն խոշոր նապոլեոնագետ, այլև XVIII դարի ֆրանս-թուրքական դիվանագիտական հարաբերությունների պատմության ուսումնասիրող⁵⁷⁴, նա, բնականաբար, ամենայն ուշադրությամբ հետևում էր Օսմանյան կայսրության տարածքում ծայր առած իրադարձությունների ընթացքին: Բացի դրանից, պատմագիտական ահռելի գիտելիքների տեր գիտնականը հիանալիորեն պատկերացնում էր Օսմանյան կայսրության զարգացման պատմական օրինաչափությունները, նրա տեղն ու դերն իր օրերի եվրոպական մեծ տերությունների քաղաքականության տատասկոտ խաչմերուկներում, Չայկական հարցի էությունն ու ցեղասպանության դրդապատճառները:

Քաղաքացիական կայուն դիմագիծ ունեցող պատմաբանը չէր կարող լռությամբ շրջանցել Աբդուլ Չամիդի սանձագերծած հայկական կոտորածները, որոնք նրան դրդել են, նախապես Պոլ Կամբոնից հավաստի տեղեկություններ ստանալուց հետո⁵⁷⁵, 1897 թ. փետրվարի 2-ին Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում՝ շուրջ 1500 ունկնդրի ներկայությամբ, հանդես գալ այդ հարցին նվիրված հրապարակային ելույթով⁵⁷⁶, որը Պ. Կուլբոն՝ նույն հարցին նվիրված իր ելույթում բնութագրել է իբրև «սքանչելի»⁵⁷⁷: Քիչ անց,

⁵⁷⁴ A. Vandal. Une ambassade française en Orient sous Louis XV, Paris. 1887; *Առյճի* Napoléon et Alexandre I^{er}, t. 1-3, Paris, 1891-1896; *Առյճի* L'avènement de Bonaparte. t. 1-2. Paris, 1902-1907.

⁵⁷⁵ L. Villate, նշվ. աշխ., էջ 164:

⁵⁷⁶ Ըստ Սապահ-Գյուլյանի վկայության՝ «երբեք մի դասախոսություն դեռ այդքան մեծ հետաքրքրություն և ոգևորություն չէր առաջացրել»: Տես Ս. Սապահ-Գյուլյան, Պ. Ալբեր Վանդալի դասախոսությունը. – «Նոր դար», 1897, թիվ 31:

⁵⁷⁷ P. Coulbaut, Les massacres d'Arménie et le rôle des puissances européennes // "Revue des facultés catholiques de l'ouest" (Paris), juin 1889, p. 14.

Վանդալի ելույթը հրատարակվել է առանձին գրքույկով⁵⁷⁸:

Վկայակոչելով բազմաթիվ անհերքելի փաստեր՝ Վանդալն անկողմնակալորեն ուրվագծում է Օսմանյան կայսրությունն ալեկոծած աննախադեպ իրադարձությունների համայնապատկերը, դրանց տալիս հավաստի գնահատականներ: Արևմտահայերի կոտորածները Կոստանդնուպոլսում և Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում նա բնութագրում է իբրև «մեծագույն կոտորած», «հրեշավոր արարք», այն ժամանակների վերադարձ՝ «երբ թուրքմենական հորդաներն ասպատակում էին քաղաքակիրթ և քրիստոնեական Ասիան»⁵⁷⁹: 1894 թ. օգոստոսին Սասունի տարածաշրջանում տեղի ունեցած կոտորածների մասին նա գրում է. «Երբ քրիստոնյաներով բնակեցված որոշ գյուղերում հրաժարվեցին արդեն վճարված հարկը կրկին վճարելուց, անկանոն զորքերը և համիդիեները հարձակվեցին երկրամասի վրա: Ավելի քան երեսուն գյուղ հրկիզվեց, բնակչությունը զանգվածաբար ոչնչացվեց և երբ մասամբ միջազգային քննիչ հանձնաժողովն այս վայրերը ժամանեց, հանդիպեց մարդկանց դիակներից բաղկացած մի սարի, դիակներից ուռճացած գետնի»⁵⁸⁰:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության դրդապատճառներին, ապա Վանդալը դրանք պայմանավորում է հայկական կոմիտեների գործունեությամբ, նշելով սակայն, որ դրա «ակունքներն իրենց հերթին բխում էին չարաշահումներից, աննկարագրելի բռնություններից և պայմանագրերին ընթացք չտալուց»⁵⁸¹:

⁵⁷⁸ Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris. 1897 (տես նաև Ա. Վանդալ, Հայերը և բարեփոխումները Թուրքիայում, ֆրանսերենից թարգմանությունը՝ Վարուժան Պողոսյանի, Երևան, 2001): Սապահ-Գյուլյանն, ի դեպ, վկայում է, որ սույն գրքույկը լույս է տեսել 15000 օրինակով: Տես Ս. Սապահ-Գյուլյան, Պատասխանատուները, էջ 156:

⁵⁷⁹ Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal, p. 14, 15, 17.

⁵⁸⁰ Նույն տեղում, էջ 15:

⁵⁸¹ Նույն տեղում, էջ 13:

Համաձայն Վանդալի դիրքորոշման՝ Հայոց ցեղասպանությունն իրականացվել է ոչ թե տարերայնորեն, այլ ըստ նախօրոք ծրագրված և մանրազնին մշակված նախագծի: Նա, մասնավորապես, ընդգծում է Պալեի վճռորոշ դերը հայկական կոտորածների նախապատրաստման գործում: Անդրադառնալով Տրապիզոնում, Երզրումում, Դիարբեքիում, Մուշում, Ուրֆայում, Բիթլիսում, Վանում, Սվազում, Կեսարիայում, Մալաթիայում սանձազերծված կոտորածներին, նա առանձնահատուկ մշանակություն է տալիս, մասնավորապես, լայն տարածում գտած՝ «Ղեկավարը թույլատրում է սպանել հայերին»՝ որպես ասուլթ թևածող խոսքին՝ որն ամենուր՝ «մի քանի շաբաթում, միայն այն վայրերում, ուր եվրոպական հյուպատոսներն էին բնակվում», պատճառ էր դարձել ավելի քան երեսուն հազար զոհի: «Հայաստանի մակերեսը, – նշում է նա, – ծածկվում է կարմիր բծերով, որոնք բազմանում են, ընդարձակվում, մոտենում միմյանց և համապատասխանում քաղաքների տեղավայրերին»⁵⁸²:

Պատմաբանի ուշադրությունից չի վրիպել միաժամանակ զորքերի, համիդիե ջոկատների և մուլեռանդ մահմեդական բնակչության՝ կոտորածների իրականացման ընթացքում ունեցած եռանդուն մասնակցությունը: «Քաղաքներում հաշվեհարդարն իրագործում են զորքերը և մուլեռանդ մահմեդական բնակչությունը: Նրանք հարձակվում են քրիստոնյաների վրա, սպանում տղամարդկանց, կանանց, երեխաներին. այս ամենը չլսված, չտեսնված զազրելիություններ և վայրագություններ են: Կապկապված և անշարժ ծնողների ծնկների վրա մասնատում են նրանց երեխաներին, մսագործներն իրենց կրպակներում ցուցադրում են հայերի մասնատված մարմինները. սրանք ներոնյան մղձավանջներ են, հայերը, որոնց վրա նավթ են լցնում, այրվում են ինչպես ջահեր: Միմարեթների բարձունքից մյուզները ժողովրդին աղոթքի կոչելու փոխարեն՝ դրդում են կոտորածի, դաժանության, այնուհետև՝ նրանք մարդասպաններին մատնացույց են անում քրիստոնյային, որը փախչում է, թաքնվում

⁵⁸² Նույն տեղում, էջ 16:

տների միջև, հետապնդողների համար ճշգրտում են նրա տեղը և մարդկանց որսը, այս դժոխային որսը շարունակվում է»⁵⁸³:

Ամենևին մոռացության չտալով թե՛ կրոնական գործոնի և թե՛ մահմեդական մոլեռանդության ունեցած կործանարար դերը հայկական կոտորածներում, Վանդալն, այդուհանդերձ, ուշադրությունը սևեռում է հայերի նկատմամբ սուլթանի վարած քաղաքականության գլխավոր միտումի՝ ցեղասպանության միջոցով նրանց բնաջնջելու հանգամանքի վրա. «Այս ամենը, – գրում է նա, – կատարվում է Պալեի հրահրմամբ, նրա հրամանով: Պալեի համար ֆանատիզմը սպանության մեքենա է, որի ընթացքը նա շարժման մեջ է դնում, ըստ իր հայեցողության՝ ակտիվացնում, կարգավորում»: Մեկ այլ առիթով, նա շեշտում է. «Գոյության փոքր-իսկ նշանի առկայության դեպքում նրան (հային – Վ. Պ.) սպանում են»⁵⁸⁴:

Ակնհայտ է, որ ֆրանսիացի պատմաբանն արևմտահայերի կոտորածներն իրավամբ դիտում է իբրև պետականորեն իրականացվող քաղաքականության հիման վրա տեղի ունեցող եղելություն: Այդ մասին են վկայում նաև նրա՝ Կոստանդնուպոլսում 1896 թ. հայ հեղափոխականների կողմից Օսմանյան բանկի գրավման դիպվածին տված մեկնաբանությունները: Այս հարցում Վանդալն ուշադրություն է դարձնում այն անձանց խորամանկ ու նենգ վարքագծի վրա, ովքեր իրականացնում էին պետության ղեկավարի մտահղացումները. «Դավաճանները նախապես Պալեին իրազեկել են նրանց (հեղափոխականների – Վ. Պ.) մտադրությանը, որը, սակայն, թույլ է տվել, որ այդ փորձն ի կատար ածվի, որպեսզի այն օգտագործի իբրև պատրվակ՝ հայերի, անպաշտպան հայերի համատարած կոտորածի համար»: Յետևաբար, սուլթանի որդեգրած քաղաքականությունն այս հարցում նա բնութագրում է իբրև միապետի՝ իր իսկ հպատակների մի ստվար հատվածի դեմ հյուսած դավադրություն⁵⁸⁵:

Ըստ այս ամենի և չանսալով Յանտոյի՝ «չատ խիստ

⁵⁸³ Նույն տեղում:

⁵⁸⁴ Նույն տեղում, էջ 16-17, 20:

⁵⁸⁵ Նույն տեղում, էջ 14, 19:

հարձակողական դիրք» չգրավելուն առնչվող խնդրանքին⁵⁸⁶, Վանդալն Աբդուլ Չամիդին համարում է «աշխարհին երբևէ հայտնի՝ մարդկանց ամենամեծ դահիճներից մեկը» և պատմության մեջ առաջին անգամ նրան անվանում «կարմիր սուլթան»⁵⁸⁷, ով «դատապարտված է ավելի վատթար կացության, քան հազարավոր հանգուցյալները և այս կայսրությունում, որտեղ այդքան մարդիկ են տառապում, միմյանց ատում և իրար սպանում, ամենամեղավորն ու ամենադժբախտն է ամենքից»⁵⁸⁸:

Քաջ գիտակցելով իր՝ իբրև պատմաբանի բարոյական ու քաղաքացիական պարտքը, Վանդալը չի բավարարվում սոսկ փաստերի թվարկումով և ելույթի երկրորդ մասը նվիրում է ստեղծված անելանելի կացությունը շտկելու ուղիների որոնմանը: Նրա համոզմամբ՝ «Թուրքիան ընդունակ չէ բարենորոգվելու: Չետևաբար, հարկ է այն բարենորոգել բռնի միջոցներով»: Օսմանյան կայսրությանը ֆինանսական համատիրություն պարտադրող վարչակարգի հաստատումը համարելով «արդյունավետ դեղամիջոց», նա, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն կատաղի դիմադրությունները, որոնց այդ տարբերակն անվարանորեն կյանքի կկոչի, գերադասում է դրանից ձեռնպահ մնալ՝ նախապատվությունը տալով տեղական բնույթի բարենորոգումների իրականացման անհրաժեշտությանը (խոսքը, մասնավորապես, վերաբերում է վերահսկողության ներքո գտնվող և երաշխիքներ ունեցող տեղական բարենորոգումների համակարգի հաստատմանը, հայկական նահանգներում եվրոպացի կառավարիչների նշանակմանը, հարկերի գանձման կարգավորմանը, անկողմնակալ արդարադատության հաստատմանը և այլն)⁵⁸⁹, որոնք, նրա կարծիքով, ոչ միայն

⁵⁸⁶ Ս. Սալահ-Գյուլյան. նշվ. աշխ., էջ 154:

⁵⁸⁷ Չայոց ցեղասպանության պատմագրության մեջ պատմաբաններից ոմանք այս բնորոշումը սխալմամբ վերագրել են այլ գործիչների: Օրինակ՝ Մուսա Պրանսը՝ Կլեմանտյին, իսկ Վ. Գուստը՝ Կամբոնին: Տե՛ս Moussa Prince, նշվ. աշխ., էջ 299: Վ. Գուստ, Չայերի ցեղասպանությունը: Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երևան, 2002, էջ 66:

⁵⁸⁸ Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal, p. 13, 21.

⁵⁸⁹ Նույն տեղում, էջ 35-37:

կկասեցնեին արևմտահայերի ջարդերը, այլև շեշտակիորեն կբարելավեին նրանց վիճակը: Հարցի լուծումը հաջողությամբ պսակելու համար, ըստ նրա՝ անհրաժեշտ էր, որ Ֆրանսիան հող նախապատրաստեր «հանուն փոխզիջումների ու համաձայնության կայացման, դառնար բոլոր բարի ցանկությունների կենտրոն և համախմբման վայր»⁵⁹⁰: Ուստի՝ նա ֆրանսիացի գրողներին, հրապարակախոսներին, հասարակական և կրոնական գործիչներին կոչում է ձևավորել կառավարության հայանպաստ քաղաքականությանն օժանդակող հասարակական կարծիք:

Ամբողջությամբ ձեռնպահ մնալով եվրոպական պետությունների ղեկավար շրջանների և ֆրանսիական կառավարության՝ Հայկական հարցի և արևմտահայերի ցեղասպանության նկատմամբ դրսևորած անկարեկից վերաբերմունքի քննադատությունից, Վանդալը բավարարվում է Ֆրանսիայի արևելյան քաղաքականության առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծությամբ, ելնելով իր պետության շահերից՝ ընդգծում, ի թիվս այլոց, Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու անհրաժեշտությունը: Իբրև 1893-1895 թթ. ձևավորված ռուս-ֆրանսիական դաշինքի ջատագով, Վանդալն այս հարցի լուծման հեռանկարը շաղկապում է ռուս-ֆրանսիական հարաբերությունների հետագա զարգացմանը: Ընդունելով, որ դաշնակիցների «շահերն Արևելքում չեն համընկնում», նա, այդուհանդերձ, չի բացառում հաշտության եզրեր գտնելու հավանականությունը, նույնիսկ պնդում է, որ «այս ուղղությամբ համատեղ գործունեությունը և անգամ նախաձեռնությունը թե՛ մեկ և թե՛ մյուս տերության համար կլինեն նույնքան օգտակար, որքան և պատվաբեր»⁵⁹¹:

Իր մտորումների ընթացքում Վանդալը տուրք է տվել Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մարդասիրական բնույթի գերազնահատմանն Արևելքում, գունազարդել կառավարող շրջանների բարյացակամ դիրքորոշումն Արևելյան

⁵⁹⁰ Նույն տեղում, էջ 49:

⁵⁹¹ Նույն տեղում, էջ 46, 48:

հարցում: Սակայն կասկածից վեր է և այն, որ եթե եվրոպական պետությունների ղեկավարները նրա առաջարկությունները կենսագործելու ցանկություն դրսևորեին, ապա դրանք, անկասկած, արդյունավետ կլինեին:

1890-ական թվականների կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանում մեծ տերությունների ղեկավար շրջանները շարունակել են դրսևորել նախկին անկարեկից վերաբերմունքը հայերի ճակատագրի նկատմամբ, ինչն արդեն Վանդալը թռուցիկ հիշատակում է 1903 թ. ժնևում՝ «Եվրոպայի հայ ուսանողների միության» աջակցությամբ վերահրատարակված իր ելույթի հակիրճ առաջաբանում⁵⁹²: Թե՛ գրքույկի վերահրատարակումը և թե՛ դրա առաջաբանը վկայում են ոչ միայն Վանդալի հետևողականության ու սկզբունքայնության, այլև հայ ժողովրդի գոյատևման հարցում նրա անկեղծ շահագրգռվածության մասին:

Բարձրագույն հետազոտությունների դպրոցի պրոֆեսոր Լեոն Մարիլիեի (1842-1901)՝ Հայկական հարցին նվիրված ելույթը կայացել է 1896 թ., չնայած լույս է ընծայվել մեկ տարի անց: Շոշափված հիմնահարցերի բազմազանությամբ և գիտական մեկնաբանություններով, թեպետ Մարիլիեի ելույթն ակնհայտորեն զիջում է Վանդալի ելույթին, այնուամենայնիվ, զուրկ չէ հետաքրքրությունից: Խիստ ուշագրավ են, մասնավորապես, վերջինիս դիտարկումներն արևմտահայերի քաղաքական նպատակների շուրջ: Վերլուծելով Սասունի հայկական գյուղերում քրդերի՝ պարբերական բնույթ կրող ասպատակություններին ամռնչվող խնդիրը, հեղինակը նշում է ոչ միայն հայերի շրջանում դրանց հետևանքով առաջ եկած դժգոհությունների մասին, այլև բացառում է «առձակատում հրահրելու» նրանց ցանկությունը: Միևնույն հարցը քննարկելով շատ ավելի լայն կտրվածքով, իբրև թուրքերի՝ իրավիճակի հավաստի պատկերը խեղաթյուրելու պատասխան՝ Մարիլիեն հայտարարում է. «Նրանք (հայերը – Վ. Պ.) չեն ձգտում անկախության, որն անհնարին էր դառնում աշխարհագրական

— ⁵⁹² A. Vandal. Les Arméniens et la réforme de la Turquie. Genève. 1903, p. 3.

տեսակետից նրանց երկատման պատճառով, այլ կցանկանային, որ բարենորոգումներ իրականացվեին այն վարչակարգում, որի ենթակայության ներքո էին գտնվում և այդուհետև՝ իրենց կյանքը, ունեցվածքը, կանանց և աղջիկների պատիվը պաշտպանվեր հարևան քրդերի ու չերքեզների բռնություններից, բիրտ կրքերից և անհագությունից»⁵⁹³:

Թեև մակերեսորեն, հեղինակն, այնուամենայնիվ, վկայակոչում է Հայկական հարցի գոյության փաստը, Բեռլինի վեհաժողովի՝ Բարձր Դռանը պարտադրած բարենորոգումների տխուր ճակատագիրը, բազմաթիվ առիթներով հանգամանորեն անդրադառնում հայերի անապահով վիճակին. «Այն հայերին, որոնք իրենց ապրանքները, տները, կանանց պատիվը և երբեմն սեփական կյանքը պաշտպանելու հանցանքն են գործել՝ նետում են բանտ», – գրում է նա⁵⁹⁴:

Ինչ վերաբերում է օսմանյան կառավարությանը, որը հայերին հանիրավի կասկածում էր անկախ և ինքնուրույն Հայաստան կազմավորելու փափագներ գուրգուրելու համար, ապա Մարիլիեն հայերի նկատմամբ նման դիրքորոշումը շաղկապում է տերությունների պարտադրած բարենորոգումների ծրագրի կենսագործման պահանջին: Ստեղծված պայմաններում՝ սուլթանը հայերին սկսում է դիտել իբրև նենգ հպատակների, ուստի՝ նրա և օսմանյան պաշտոնյաների միջև ձևավորվում է հայացքների ընդհանրություն, որի արդյունքում բազմապատկվում են հայերի նկատմամբ կիրառվող հալածանքները⁵⁹⁵: Թեև Հայոց ցեղասպանությունը հեղինակն ուղղակիորեն չի դիտում իբրև մի իրադարձություն, որը ծնունդ էր առել սուլթանի որդեգրած՝ Հայկական հարցին վերջնական լուծում տալու «միակ» հնարավոր եղանակի կենսագործման հետևանքով, ամեն դեպքում, հստակորեն մատնացույց է անում օսմանյան միապետի և պաշտոնական անձանց ղեկավար դերը կոտորածներին ընթացք տալու հարցում, որոնք ամեն բանից

⁵⁹³ L. Marillier, La Question armenienne, Paris. 1897, p. 2, 3.

⁵⁹⁴ Նույն տեղում, էջ 9:

⁵⁹⁵ Նույն տեղում, էջ 5, 6:

բացի, ջանում էին զոհերին իբրև մեղավորներ ներկայացնելու միջոցով «զանգվածային կոտորածին» օրինականություն հաղորդել⁵⁹⁶:

Այսպես, ամբողջ ելույթի ընթացքում, Մարիլիեն ամենևին չըջանցելով ջարդարարների գործած վայրագությունները, անվանելով նրանց «բարբարոսներ»⁵⁹⁷, պարբերաբար ընդգծում է օսմանյան իշխանությունների՝ կոտորածներին ունեցած մեղսակցության հանգամանքը: Օրինակ, 1895 թ. Արևմտյան Հայաստանի բազմաթիվ քաղաքներում և գյուղերում տեղի ունեցած ջարդերի առիթով նա, մասնավորապես, մատնանշում է «տեղական իշխանությունների լռակյաց հանցակցությունը, որոնց դիրքորոշումն, անկասկած, կյանքի է կոչվել ավելի վերին շրջանների թողտվությամբ, իսկ երբեմն՝ հստակ հրամանների հիման վրա»⁵⁹⁸: Հեղինակի համանման դիտարկումներին ենք հանդիպում նաև 1896 թ. Բիթլիսում, Մարաշում, Ուրֆայում և այլ վայրերում տեղի ունեցած կոտորածների դրվագների նկարագրության ընթացքում⁵⁹⁹: Ցեղասպանության գլխավոր պատասխանատու համարելով Աբդուլ Համիդին, նա հեզմանքով ակնարկում է հայկական կոտորածների հարցում մեղքի բաժինն ունեցող օսմանյան պաշտոնյաների հանդեպ սուլթանի «բարյացակամ» վերաբերմունքի անսասանությունը⁶⁰⁰:

Ամեն դեպքում, Մարիլիեն տարբեր առիթներով ընդգծել է նաև որոշ թուրք նահանգային ղեկավարների և կրոնական գործիչների՝ հայերի նկատմամբ դրսևորած բարյացակամ վերաբերմունքը: «Այդուհանդերձ, սխալ կլինի այս նողկալի սպանությունների համար պատասխանատու ճանաչել,– գրում է նա,– իսլամականությունը կամ նույնիսկ ամբողջ թուրք ժողովրդին: Իմամներն ու մուֆտիները ջարդարարների մոլեգնությունից հաճախ փորձել են սատարել քրիստոնյաներին, քաջարի թուրքերն իրենց մոտ են ընդունել և կյանքի գնով

⁵⁹⁶ Նույն տեղում, էջ 9:

⁵⁹⁷ Նույն տեղում:

⁵⁹⁸ Նույն տեղում, էջ 15:

⁵⁹⁹ Նույն տեղում, էջ 17-18:

⁶⁰⁰ Նույն տեղում, էջ 14:

զորավիզ եղել հայ հարևաններին, ...պաշտոնյաները գերադասել են իրենց իսկ շնորհագրությունը, քան արդարությունն ու մարդասիրությունը ոտնահարող հրամանների ի կատար ածումը: Այս կոտորածների սարսափելի պատասխանատվությունը թուրքական կայսրությունում պետք է միայն նրանք կրեն, ովքեր, անշուշտ, այդ են ցանկացել, անկասկած, դրան առնչվող խորհուրդներ և, հավանաբար, հրամաններ տվել»⁶⁰¹:

Միաժամանակ Մարիլիեն քննադատական խոսքեր է ուղղում եվրոպական տերությունների հասցեին՝ սուլթանի հետ մեկտեղ, իրավամբ, նաև նրանց վրա բարդում կոտորածների պատասխանատվությունը: Եվրոպական տերությունները պարտավոր էին, ըստ նրա՝ կոտորածից, բռնի կրոնափոխությունից փրկել մի ժողովրդի, որի «միակ զանցանքն այն է, որ թույլատրել է իրեն մորթել առանց դիմադրության»: Եվրոպայի միջամտությունը դիտելով իբրև միջազգային պայմանագրերի միջոցով հավաստված իրավաբանական պարտավորություն, Մարիլիեն շարունակում է. «Նա կարող էր, եթե այդ ցանկանար, անել այն, ինչ պետք է աներ. նա ի զորու էր, սակայն չցանկացավ այդ անել»⁶⁰²:

Տարիներ անց, հարգանքի խորին տուրք մատուցելով Մարիլիեի հիշատակին՝ «Անահիտ» ամսագրի խմբագրությունը նրա ողբերգական վախճանի առիթով տվել է նրա գործունեության հետևյալ բարձր գնահատականը. «Մարիլիե գլխավոր նախադրդիչներեն մին եղավ Ֆրանսայի մեջ հայասիրական շարժման զարթունին և մինչև իր վերջին վայրկյանը իր սիրտը մեզի հետ եղավ, իր բոլոր ուժերը մեր դատին տրամադրությանը մվիրված մնացին... Մեր ժողովուրդը պիտի չմոռնա այդ կեղեքվածներու սրտանց բարեկամ ու պաշտպան հանդիսացող ֆրանսացիին անունը»⁶⁰³:

Մարիլիեի ելույթին հաջորդել է Պ. Կուլբոյի՝ Հայոց ցեղասպանությանը մվիրված հրապարակային ծավալուն

⁶⁰¹ Նույն տեղում, էջ 19: Տես նաև էջ 6-7, 15:

⁶⁰² Նույն տեղում, էջ 19:

⁶⁰³ «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 10-11, էջ 266:

ելույթը, որը կայացել է 1899 թ. փետրվարի 24-ին Անժերի Կաթուղիական համալսարանում: Վկայակոչելով այդ ժամանակաշրջանում արդեն լույս ընծայված թե՛ ֆրանսիական և թե՛ անգլիական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուներում ամփոփված հարուստ նյութերը, նա, ինչպես և Վանդալը, ցուցաբերում է ընդգրկուն մոտեցում՝ բազմապիսի առանցքային հարցերի վերհանմամբ: Հեղինակի դիրքորոշումը խարսխվում է մի շարք դրույթների՝ Օսմանյան կայսրությունում հայերի ծանր կացության, բարենորոգումների անցկացման հարցում՝ Բարձր Դռան չկանության, օսմանյան կառավարության՝ պետական քաղաքականության մակարդակով իրականացրած ցեղասպանության, եվրոպական տերությունների քննադատության վրա:

Հայերի վիճակի վատթարացումը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո նա մեկնաբանում է օսմանյան գահակալի հայահալած քաղաքականության սաստկացմամբ, որն «իրականացրել էր բազմաթիվ բարենորոգումներ, բայց միայն թղթի վրա և ոչ ավելին»⁶⁰⁴: Ըստ նրա՝ թեպետ թուրքերը հայերի գանգատները որևէ հետաքրքրության չեն արժանացրել, սակայն, անվարանորեն դիմել են իրենց խիստ բնորոշ մեթոդներին, որոնք, ինչպես նշում է Կուլբոն, «հայտնի են ամենքին: Պահպանելու համար իրենց տիրապետությունը՝ թուրքերը երբևէ չեն խորշել դիմելու ամենաարյունալի միջոցների: Այնժամ, երբ հուլյներն են անհանգստություն պատճառում՝ նրանց կոտորում են, այնժամ, երբ եմիչերիներն այլևս պիտանի չեն դառնում՝ նրանց գնդակոծում են, երբ հայերն են գանգատվում՝ նրանց բնաջնջում են»⁶⁰⁵:

Չանտեսելով այն էական դերը, որը սուլթանի կայացրած որոշումների կենսագործման և իրադարձությունների հետագա ընթացքի վրա ունեցել են թե՛ կրոնական զանազանության հանգամանքը և թե՛ մահմեդական մոլեռանդությունը (հեղինակը, մասնավորապես, նշում է կրոնափոխության հազարավոր դեպքերի հետևանքով քրիստոնյաների և մահմեդականների

⁶⁰⁴ P. Coulbaut. նշվ. աշխ., էջ 3, 4:

⁶⁰⁵ Նույն տեղում, էջ 5:

միջև թվական հավասարակշռության խախտման մասին), Կուլբոն շարունակ ուշադրության կենտրոնում է պահում հայերի հանդեպ պետականորեն դրսևորվող քաղաքականության հանգամանքը: «Դուռը վճռել էր ոչնչացնել հայերին երկաթի, կրակի և սովի միջոցով», – հավաստում է նա: Ըստ նրա՝ 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայերի ջարդերը հետևանք էին Պալեի արձակած հրահանգների, իսկ երկարատև ամիսների ընթացքում հազարավոր քրիստոնյաների կոտորածը կանոնավոր զորքերն իրականացրել էին անձամբ սուլթանի արձակած հրամանների հիման վրա⁶⁰⁶:

Աբդուլ Յամիդի որդեգրած՝ հայերի զանգվածային ջարդերի քաղաքականության մեկնակետն իրավամբ համարելով 1894 թ., Կուլբոն, այդուհանդերձ, գտնում է, որ լայնահուն կոտորածների սանձազերծմանը մեծապես նպաստել է 1895 թ. աշնանն Օսմանյան կայսրությունում թևածող՝ սուլթանի՝ քրիստոնյաներին զիջումներ անելուն վերաբերող շշուկը, որն Արևմտյան Չայաստանի զանազան նահանգներում հանգեցրել է «սուլթանի պաշտոնյաների ղեկավարությամբ» ծավալուն կոտորածների: «Այդ պահից ի վեր, զոհերի թիվը հարկ է հաշվել հազարներով, այլ ոչ թե հարյուրներով... Գրեթե երեք ամսվա ընթացքում հայերով բնակեցված բոլոր գյուղերը կողոպտվել են, այնուհետև՝ հրկիզվել, բնակիչները՝ ոչնչացվել»: Կոտորածին ավելի մեծ թափ հաղորդելու մտադրությամբ է, որ «Աբդուլ Յամիդը քրդերին բաժանել է մի քանի թնդանոթ՝ և կատարելագործված հրացաններ»⁶⁰⁷:

Չայր Շարմետանի հրապարակած փաստաթղթերի ուսումնասիրությունը Կուլբոյին թույլատրում է եզրակացնել. «Սխալ կլինի կարծել, թե Չայկական հարց այլևս գոյություն չունի... Կարմիր սուլթանը փոխել է մարտավարությունը... Չանգվածային կոտորածների համակարգը մերժվել է, այժմ դիմել են առանց դատ ու դատաստանի մահապատիժների,

⁶⁰⁶ Նույն տեղում, էջ 5, 10, 14:

⁶⁰⁷ Նույն տեղում, էջ 7, 10, 11-13:

անհատական սպանությունների, բռնի կրոնափոխությունների և, մասնավորապես, սովամահության»⁶⁰⁸: Ակնհայտ է, որ Կուլբոն, ի տարբերություն շատերի, հավուր պատշաճի արժեվորել է խիստ էական այս հանգամանքը՝ մատնանշել հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականության շարունակական բնույթը՝ զանազան եղանակների կիրառմամբ:

Կուլբոյի ելույթում մեծ տեղ է հատկացված եվրոպական պետությունների քաղաքականության վերլուծությանը, որը հիմք է ծառայել խստագույնս դատապարտելու նրանց՝ հայերի ողբերգությանն ի տես դրսևորած քամահրական վերաբերմունքը: «Յայերի ճակատագիրը,– գրում է նա,– տերություններին առանձնապես չի անհանգստացնում. ֆինանսական հարցից բացի, խոսքը նրանց համար նախ և առաջ՝ վերաբերում է այն բանին, որ խոչընդոտեն իրենցից որևէ մեկի ազդեցության ընդլայնմանը կամ նրա տարածքի ընդարձակմանը»⁶⁰⁹: Տերությունների վարած քաղաքականության ոլորտում նա առանձնացնում է նրանց՝ անվերապահորեն որդեգրած՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման և տարանջատ գործողություններից ձեռնպահ մնալու սկզբունքները: Չանտեսելով, սակայն, նրանց պառակտող տարածայնությունները, Կուլբոն ծաղրի է ենթարկում այսպես կոչված «եվրոպական համերգը»՝ տերությունների կարծեցյալ միասնական գործողությունը, որը հիմնվում է նրանց միջև առկա «փոխադարձ անվստահության և ատելության վրա» և «ծնունդ է առել ոչ թե հետաքրքրությունների ընդհանրությունից, այլ նկրտումների հակադրությունից»: Յենց այս դիրքերից է նա մոտենում նաև Յայկական հարցի լուծմանը ռուս-ֆրանսիական դաշինքի լույսի ներքո՝ անհնարին համարելով, ի տարբերություն Վանդալի, «հակասական շահերի հաշտեցումը»⁶¹⁰:

Եվրոպական պետությունների թվում Կուլբոն, սակայն, բացառություն է անում Ֆրանսիայի համար՝ նրան ներկայացնում իբրև քրիստոնյաների երդվյալ հովանավորի, որի «բարի

⁶⁰⁸ Նույն տեղում, էջ 30-31:

⁶⁰⁹ Նույն տեղում, էջ 26:

⁶¹⁰ Նույն տեղում, էջ 26-29:

համբավն աշխարհում բազում դարեր ի վեր նրան վերածել է ազգերի խաղաղասեր դատավորի»: Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումը համարելով Ֆրանսիայի արտաքին քաղաքականության վաղեմի սկզբունքներից, նա միաժամանակ հավաստում է, որ Ֆրանսիան, այդուհանդերձ, երբևէ չի հրաժարվել իր օժանդակությունը ցուցաբերել քրիստոնյաներին՝ մահմեդականների հետ նրանց հակամարտության խաչուղիներում⁶¹¹:

Հիննվելով «Դեղին գրքի» վրա, Կուլբոն վկայակոչում է բազմաթիվ արժանահավատ փաստեր՝ ակներև դարձնելու համար կոտորածների ընթացքում՝ Օսմանյան կայսրությունում ծառայողական պարտականություններն իրականացնող Ֆրանսիացի դիվանագետների՝ հայերի հանդեպ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքը, որոնց միջամտության շնորհիվ փրկվել են բազմաթիվ մարդկային կյանքեր: «Ֆրանսիան, ինչպես դուք տեսնում եք, – եզրակացնում է նա, – Հայաստանում տեղի ունեցող կոտորածների ժամանակ իր ներկայությունն Արևելքում զգալ է տվել հիասքանչ ձևով: Մեր դեսպանի (Պոլ Կամբոնի – Վ. Պ.) հպարտ խոսելաոճը հարգանք է ներշնչել սուլթանին»⁶¹²:

Հայերի փրկության հարցում Ֆրանսիայի քաղաքականության ձախողումը նա մեկնաբանում է Արևելքում բողոքականության տարածմամբ, որը տեղիք է տվել Անգլիայի և հատկապես Գերմանիայի վարկի բարձրացմանը: Հենց դրանով է նա պայմանավորում Ֆրանսիայի գործադրած ջանքերի փոխարինումը «եվրոպական համերգի» անպտուղ գործունեությամբ:

Վանդալի հետքերով գունազարդելով Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը և նրան ներկայացնելով Արևելքում բնակվող քրիստոնյա ժողովուրդների ջերմեռանդ հովանավորի դերում, Կուլբոն դրանով իսկ ստանձնում է իր երկրի պետական քաղաքականության ջատագովի դերը: Ֆրանսիացի դիվանագետների գործադրած ջանքերը (թե՛ Բարձր Դռան առջև բողոքի ձայն բարձրացնելու ուղղությամբ և թե՛ անպաշտպան

⁶¹¹ Նույն տեղում, էջ 14-16:

⁶¹² Նույն տեղում, էջ 19-20, 21:

հայերին նահանգներում օգնության ձեռք մեկնելու հարցում) համիրավի շրջանցելն անհարկի է: Սակայն հարկադրված ենք միաժամանակ շեշտել, որ գովերգելով Ֆրանսիայի պետական քաղաքականության մարդասիրական բնույթն Արևելքում, Կուլբոնն Հայոց ցեղասպանության կասեցման ուղղությամբ ֆրանսիական կառավարող շրջանների կարծեցյալ շահագրգռվածությունն ու հետևողականությունը չի հիմնավորում որևէ փաստով:

Հարկ է չանտեսել Սապահ-Գյուլյանի ջանքերով 1896 թ. Փարիզում կազմակերպված «հռչակավոր սալոնների տեր՝ նշանավոր բոլոր տիկիկներից մի բացառիկ» հավաքը⁶¹³, որտեղ համիդյան ջարդերին նվիրված ելույթով հանդես է եկել տիկին Զուդրի-Մենոսը: Հայերի ցեղասպանության իրականացումը նա պայմանավորում է «Հայկական հարցից ձերբազատվելու» նպատակ հետապնդող՝ Աբդուլ Համիդի ծրագրած քաղաքականությամբ: Խոսելով Տրապիզոնի կոտորածների մասին, նա, մասնավորապես, նշում է, որ դրանք սկսվել են «Կոստանդնուպոլսից տեղ հասած գաղտնի հրամանների հիման վրա», հավաստի է համարում «իշխանությունների մեղսակցությունը» նահանգներում ընթացող հայերի կոտորածներին, չի անտեսում կրոնափոխությանն առնչվող փաստերը⁶¹⁴:

Ինչ վերաբերում է 1894 թ. Սասունի իրադարձություններին, հեղինակը հայերի ըմբոստությունը մեկնաբանում է այն փաստով, համաձայն որի՝ նրանք չհասնելով իշխանություններից ակնկալվող արդարության՝ «հարձակվել են գողերի վրա և նրանցից ետ կորզել իրենց ունեցվածքը», իսկ կառավարությունն անմիջապես, խախտված կարգը վերականգնելու «պատրվակով», այնտեղ զորքեր է ուղարկել: Թուրք ջարդարներին նա բնութագրում է իբրև «հրեշների», իսկ 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ցույցին հաջորդած արյունալի բախումներն անվանում «իսկական կոտորած»: Զուդրի-Մենոսը հայկական կոտորածները

⁶¹³ Ս. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 156:

— ⁶¹⁴ M[adame] Hudry-Menos, Les massacres en Arménie, Paris, 1896, p. 3, 6, 10.

դիտելով իբրև «նոր Սուրբ Բարդուղիմեոսյան գիշեր», համոզված է, որ «անհնար է մատնանշել այն բոլոր քաղաքների անունները, որտեղ մահնեղական մոլեռանդությունն ահաբեկչություն, մահ և հուսալքություն է սփռել»⁶¹⁵: Միաժամանակ նա մատնանշում է այն թուրք պաշտոնյաներին, որոնք արել են իրենցից կախված հնարավոր ամեն ինչ՝ կոտորածները կասեցնելու համար⁶¹⁶:

Հայոց ցեղասպանության հարցում հեղինակը խստագույնս դատապարտում է եվրոպական տերություններին, որոնք «թուլատրել են իրականացնել այն ամենասարսափազդու կոտորածները, որոնց վկան է դարձել քաղաքակիրթ կոչվող դարաշրջանը»: Այս հարցում այս կամ այն չափով մեղավոր համարելով բոլոր մեծ տերություններին՝ նա հավաստում է, որ օգտվելով նրանց անգործությունից, սուլթանը նրանց, փաստորեն, ծաղր ու ծանակի է ենթարկել: Հուլդրի-Մենոսը քննադատում է, մասնավորապես, ֆրանսիական կառավարությանը, որն ի տարբերություն անգլիականի, ձեռնպահ էր մնում արխիվային փաստաթղթերի ժողովածուի՝ «Դեղին գրքի» հրապարակումից⁶¹⁷:

Եզրափակելուց առաջ նշենք, որ ֆրանսիացի մտավորականների հրապարակային ելույթները մեծապես նպաստել են Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության հավաստի պատկերը եվրոպական հասարակությանը ներկայացնելու գործին, որը և կանխորոշում է նրանց պատմական նշանակությունը: Եթե մինչև 1896 թ., գլխավորապես ֆրանսիական մամուլի խորհրդավոր լռության պատճառով, Ֆրանսիայում հայկական կոտորածների մասին գոյություն ունեին խիստ աղոտ պատկերացումներ, ապա մի քանի տարի անց արդեն՝ շնորհիվ ֆրանսիացի մտավորականների հայանպաստ գործունեության և այդ թվում նրանց հրապարակային ելույթների՝ կոտորածների անսքող պատկերը հառնել է իր ամբողջ ողբերգական բազմերանգությամբ:

⁶¹⁵ Նույն տեղում, էջ 11:

⁶¹⁶ Նույն տեղում, էջ 4, 6, 11:

⁶¹⁷ Նույն տեղում, էջ 3, 4:

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ
ԺԽՏՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտող տեսակետը խոր արմատներ ունի պատմագրության մեջ: Նման բնույթի «աշխատություններ» լույս են տեսել դեռևս 1890-ական թվականներին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ֆրանսիայում ևս հրատարակվել են հոդվածներ և գրքեր, որոնց հեղինակները, տուրք տալով ֆրանսիական կառավարության թրջամետ քաղաքականությանը, հարցը մեկնաբանել են՝ ելնելով օսմանյան կառավարությանը սիրաշահելու դիրքերից: Այս ասպարեզում առաջնության դափնին, անտարակույս, պատկանում է 1894-1895 և 1896-1898 թթ. Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարար, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1897), մոլի թրջամետ Հանոտոյին, որն իր ամբողջ հեղինակությունը, ինչպես արդեն նշեցինք, գործադրում էր հայկական կոտորածներին առնչվող հավաստի տեղեկությունները հանրության լայն խավերից քողարկելու համար: Հանոտոյի դիրքորոշման լավագույն վկայությունը «Ռեյու դը Պարի» ամսագրում լույս ընծայված «Արևելքում» խորագիրը կրող անստորագիր հոդվածն է⁶¹⁸, որն ըստ ժամանակակիցների վկայության՝ պատկանում է նրա գրչին⁶¹⁹:

⁶¹⁸ *** En Orient // "Revue de Paris", livraison du 1^{er} decembre 1895. Նշենք, որ Հանոտոյի հոդվածը որոշ կրճատումներով վերատպվել է Պ. Քիառի և Լ. Մարթերիի գրքույկի հավելվածում. տես P. Quillard & L. Margery. Գլ. աշխ., էջ 41-45:

⁶¹⁹ Տես Պ. Քիառի անթվակիր նամակը Ա. Չոպանյանին՝ ԳԱԹ, ֆ. Ա. Չոպանյանի, բաժին III, վավ. 9465: Տես նաև V. Bérard, Գլ. աշխ., էջ 286: Հարկ է, անտարակույս, նշել, որ Հանոտոն սույն հոդվածը գրել է նախարարի պաշտոնից հրաժարվելուց հետո: Այդ մասին տես P. Quillard, La Quinzaine // "Pro Armenia", 1^{er} janvier 1906.

Հանոտոյի մտորումներուն ակնառու է Աբդուլ Համիդին գովերգելու միտումը: Այս առիթով, ի դեպ, նշենք, որ Վ. Տատրյանը Հայոց ցեղասպանության լուսաբանման հարցում Հանոտոյի որդեգրած դիրքորշումը մեկնաբանում է մի կողմից՝ ֆրանսիական «ազգային շահերով», իսկ մյուս կողմից՝ նրա՝ Օսմանյան կայսրությունում հավատարմագրված ֆրանսիացի նախկին դիվանագետի՝ Աբդուլ Համիդի հանդեպ տածած «անձնական զգացմունքներով»⁶²⁰, ինչն արդեն մեզ թվում է անհավանական: Ամեն դեպքում, ըստ Հանոտոյի՝ սուլթանը «շատ ուշադիր և խիստ շրջահայաց է, որպեսզի հնարավոր լինի նրան անակնկալի բերել: Իրականում, — շարունակում է հեղինակը, — նա նշմարում է այն, ինչը մենք չենք տեսնում... Երբ մենք նրան մեղադրում ենք անուշադրության համար, նրա ուշադրությունն ամբողջությամբ կլանված է լինում մեր անփույթ հայացքից վրիպող կարևոր գործերով»⁶²¹: Աբդուլ Համիդին համարելով «աստվածավախ մահմեդական», հանձին որի, մահմեդականությունն Օսմանյան կայսրությունում գտել է իր առաջնորդին, նա նշում է, որ սուլթանն «իր այլ հպատակների հանդեպ ցուցաբերել է քնքշություն, մեծահոգություն և անկողմնակալություն»⁶²²: Ուստի՝ Հանոտոն վստահ է, որ միայն նա է ի գորու լուծել «Հայաստանն արյունաներկ արած բռնությունների և չարաշահումների հետևանքով անցյալ ծնճանը ծառացած խնդիրը»⁶²³:

Ինչպես տեսնում ենք, հանիրավի գովերգելով սուլթանին՝ Հանոտոն, այնուամենայնիվ, չի ժխտում հայկական կոտորածների փաստը: Այդուհանդերձ, նա հմտորեն շրջանցում է դրանց պատասխանատուների դիմագերծումը, իսկ հայկական զանգվածային կոտորածները միտումնավոր մեկնաբանում իբրև կրոնական շղարշ ունեցող իրադարձություն: Նա գտնում է, որ «խոսքն, ընդհանուր առմամբ, վերաբերում է քրիստոնյաների և մահմեդականների միջև տեղի ունեցող պայքարի մասը

⁶²⁰ V. Dadrian. Եզվ. աշխ., էջ 158:

⁶²¹ ***, En Orient. p. 451-452.

⁶²² Նույն տեղում, էջ 453:

⁶²³ Նույն տեղում:

կազմող հազարից մեկ միջադեպի», այլ ոչ թե պետական քաղաքականության վրա խարսխված ցեղասպանության: Ավելին, Յանոտոն չի տարակուսում, որ այդ միջադեպը կարող էր կարգավորվել «փոխզիջումների» ճանապարհով, եթե կանխապես ձեռնարկվեին անհրաժեշտ միջոցներ:

Յանոտոն կտրականապես դեմ է արտահայտվում եվրոպական տերությունների միջամտությանն Արդուլ Յամիդի ներքին գործերին, որը կարող էր հանգեցնել Օսմանյան կայսրության՝ մեծ տերությունների համար խիստ անցանկալի տրոհմանը: Ուստի՝ այս հարցում իր դիրքորոշմանը հիմնավորում տալու համար, նա մեղավորի դերում ներկայացնում է եվրոպական այն պետություններին, որոնց ներկայացուցիչները զբաղվել են Սասունի կոտորածների հետաքննությամբ⁶²⁴ և սուլթանի անվճռականությունը պայմանավորում է միմիայն մեծ տերությունների միջամտությամբ, որը, «շատ է երկարած գվել» և դարձել, ըստ նրա հայեցակարգի՝ հարցի լուծման ձախողման միակ պատճառը⁶²⁵:

«Վերջին խռովությունների ամենացավոտ հետևանքը՝ Եվրոպայի նոր միջամտության հիմնավորումն է», – գրում է Յանոտոն⁶²⁶: Ֆրանսիայի ղեկավար շրջանների համար խիստ անցանկալի այս հարցի կապակցությամբ նա առաջադրում է փակուղուց ելնելու, իր համոզմամբ, լավագույն տարբերակը: «Յարկ է, որ այն (ճգնաժամը – Վ. Պ.) դիտվի իբրև միայն ներքին հարց: Յենց սա է, որ պետք է ցանկանան ամենքը: Սուլթանը մնում է իր երկրի տեր ու տնօրենը»⁶²⁷: Սիաժամանակ քաջ գիտակցելով, որ Օսմանյան կայսրության ներքին գործերին մեծ տերությունների միջամտության կասեցումը պայմանավորված է գլխավորապես սուլթանի ներքին քաղաքականությամբ, Յանոտոն ուշադրությունը կենտրոնացնում է այն ուղիների վրա, որոնք, ըստ նրա՝ հարցի խաղաղ կարգավորման գործընթացում կարող էին ունենալ էական նշանակություն: «Յարկ է,

⁶²⁴ Նույն տեղում:

⁶²⁵ Նույն տեղում, էջ 455:

⁶²⁶ Նույն տեղում, էջ 456:

⁶²⁷ Նույն տեղում, էջ 458:

որ նա (սուլթանը – Վ. Պ.) հակված լինի շտապ իրականացնելու իր ստանձնած պարտավորությունները... Ամեն ինչից բացի, պետք է խուսափել այն ամենից՝ քրիստոնյաների հանդեպ բռնություններից, օտարերկրացիների համայնքների կամ համայնքների անդամների վրա հարձակումներից, ինչը կարող է առիթ տալ տերությունների ուղղակի միջամտությանը»⁶²⁸: Ֆրանսիայի ռազմավարական, ինչպես նաև ֆինանսական շահերից բխող՝ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությունից ելնելով, Յանտոն եզրափակիչ խոսքում ևս, ի շարս այն խնդիրների, որոնք Յայկական հարցին լուծում տալու ասպարեզում ծառայած էին օսմանյան գահակալի առջև, առաջնային նշանակությունը հատկացնում է «խելամիտ, չափավոր, զգույշ» բարենորոգումների կենսագործմանը⁶²⁹: Ըստ այս ամենի՝ օրինաչափ է, որ նա անվարանորեն կոչում է Ֆրանսիացի լրագրողներին «չտարածել տազնապալից լուրեր»⁶³⁰, այն է՝ շրջանցել հայկական կոտորածներին առնչվող իրողությունների լուսաբանումը:

Հայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում Յանտոնի դիրքորոշումը քննադատության են ենթարկել նրա ֆրանսիացի ժամանակակիցներից Պ. Բիառը և Լ. Մարժերին, որոնք բացասել են նրա առաջադրած որոշ դրույթները, ապացուցել, որ հայկական ջարդերը պայմանավորված են եղել

⁶²⁸ Նույն տեղում, էջ 458-459: Այս հարցում Յանտոնի քաղաքականությանը Մուսա Պրանսը տվել է սպառիչ գնահատական. «Չնայած ահռելի հուզմունքին, որով ակնկոծվեց ֆրանսիական հասարակական միտքը կոտորածների պատճառով, այդ ժամանակ Արտաքին գործերի նախարար Գաբրիել Յանտոնը՝ տեղեկատվական մամուլի կազմակերպած լուսության օժանդակությամբ, հաղթանակով պսակեց չմիջամտելու սկզբունքը»: Տես Moussa Prince, նշվ. աշխ., էջ 322:

⁶²⁹ ***, En Orient, p. 460-461. Ինչպես վերը նշեցինք, հիրավի, չժխտելով արևմտահայության կոտորածների փաստը, Յանտոն, այդուհանդերձ, նույն թեզերն է առաջադրել նաև 1896 թ. նոյեմբերի 3-ին Ազգային ժողովում ունեցած ելույթում: Տես Discours de M. Hanotaux, Ministre des Affaires étrangères. à la séance de la Chambre des députés du 3 novembre 1896. – Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, p. 318.

⁶³⁰ ***, En Orient, p. 458-459.

պետական քաղաքականությամբ, այլ ոչ թե քրիստոնյաների ու մահմեդականների միջև առկա դավանանքների հակամարտությամբ. «Կոտորածները կազմակերպել էր միայն Պալեն, որը տվել էր դրանց ազդանշանը և ապահովել իրագործումը», – գրում են նրանք⁶³¹: Ընդհանուր առմամբ, նրանք գտնում են, որ սույն հոդվածում Չանոտոն «որոշակիորեն հանդես է գալիս սուլթանի, այն է՝ Պալեի դիրքերից»⁶³²: Ուստի՝ Բերարն ունեցել է բոլոր իրավունքները նրան «ֆրանսիական հասարակության և կառավարության առջև» «Աբդուլ Չամիդի դատապաշտպանն» անվանելու⁶³³, իսկ Քիառը, մեկ այլ առիթով, նրա հոդվածը բնութագրել է իբրև «նողկալի»⁶³⁴:

Պատահական չէ, որ տարիներ անց, երբ քաղաքական գործունեությունը լքելուց հետո Չանոտոն զբաղվում էր միայն գիտահետազոտական աշխատանքներով⁶³⁵, իր հիմնական պատմագիտական ուսումնասիրություններից մեկում երկու ստվարածավալ գլուխներ հատկացնելով Արևելյան հարցի և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ու Բեռլինի վեհաժողովի պատմության քննությանը, շրջանցել է թե՛ Չայկական հարցի ծագման ու գոյության փաստը և թե՛ Չայոց ցեղասպանության իրողությունը⁶³⁶:

Չայոց ցեղասպանության արժանահավատությունը

⁶³¹ P. Quillard & L. Margery. նշվ. աշխ., էջ 18:

⁶³² Նույն տեղում, էջ 32:

⁶³³ V. Bérard. նշվ. աշխ., էջ 286: Նշենք նաև, որ Աբդուլ Չամիդը բարձր է գնահատել Չանոտոյի ջանքերը և նրան պարգևատրել է սուլթանին մեծ ծառայություններ մատուցած անձանց շնորհիվ՝ Իմթիյազի շքանշանով: Այդ մասին տես P. Quillard & L. Margery. նշվ. աշխ. էջ 32: Օսման Նուրի, Աբդուլ Չամիդ երկրորդը և նրա իշխանության շրջանը. – Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, հ. Դ, Թուրքական աղբյուրներ, թարգմանությունը բնագրից՝ Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Գ. Սանթրոքյանի, Երևան, 1972, էջ 180: Սուլթանը նրան արժանացրել է նաև «գերազանցություն» տիտղոսի և զեներալի աստիճանի: Տես Y. Ternon, նշվ. աշխ., էջ 128:

⁶³⁴ P. Quillard. La Quinzaine // “Pro Armenia”, 15 mars 1906.

⁶³⁵ G. Hanotaux. La politique de l'équilibre: 1907-1911. Paris, 1912: *Մույնի* La guerre des Balkans et l'Europe: 1912-1913. Paris, 1914; *Մույնի* Histoire illustrée de la guerre de 1915. t. 1-17. Paris, 1915-1926.

⁶³⁶ G. Hanotaux. Histoire de la France contemporaine (1871-1900). t. 4. Paris. 1908.

ժխտող հեղինակներից հիշատակենք Պ. Բ. Ալլոշին, ում բնորոշ է ոչ միայն ցեղասպանության փաստը ժխտելու, այլև օսմանյան բարբարոսական կայսրության պատմությունը կեղծելու և նրա գահակալներին բացահայտորեն ներքողելու միտումը⁶³⁷: Նույնիսկ 1453 թ. Կոստանդնուպոլիսը գրաված, ավերած, բնակչությանը սրի քաշած ու կողոպտած արյունարբու սուլթան Մեհմեդ II-ի (1451-1481) հասցեին նա անամոթաբար մեծարանքի խոսքեր է շռայլում, ընդգծում, որ սուլթանն իբր հույներին ընծեռել է իրենց կրոնը դավանելու ազատություն և նրանց տվել ունեցվածքը տնօրինելու հնարավորություն⁶³⁸:

Ընդունելով պանիսլամիզմի գոյությունը, Ալլոշն, այդուհանդերձ, անբողջությամբ ժխտում է այդ գաղափարախոսության քաղաքական բնույթը և ագրեսիվ էությունը, որը հետապնդում էր իսլամ դավանող ժողովուրդներին պանթուրանական միասնական մեծ պետության մեջ միավորելու նպատակ: Փոխարենը, նա պանիսլամիզմը ներկայացնում է իբրև լոկ կրոնական արմատներ ունեցող գաղափարախոսություն, որն իբր «հիմնվում է ոչ թե ուժի, այլ հավատքի վրա»⁶³⁹:

Ինչ վերաբերում է արևմտահայության ճակատագրին, ապա՝ Ալլոշը կտրականապես չի ընդունում Յայկական հարցի գոյությունը: Վերլուծելով Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերը, նա շրջանցում է դրանցում գետեղված՝ հայերին վերաբերող հողվածները, իսկ Յայկական հարցն անվանում «կարծեցյալ»⁶⁴⁰: Անդրադառնալով ժողովրդագրության հարցին, նա նվազեցնում է Արևմտյան Յայաստանի տարբեր վիլայեթներում և կայսրության զանազան քաղաքներում (Մանուրեթ ուլ Ազիզ, Բիթլիս, Տրապիզոն, Կոնիա) բնակվող հայերի թվաքանակը: «Փոքրամասնություն կազմող նրանց համայնքը հաճախ խիստ նվազ է», – գրում է նա⁶⁴¹:

⁶³⁷ P. B. Allauch, La Turquie et les Ottomans, Paris, [1894]; *Նույնի* La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, Paris, 1895.

⁶³⁸ P. B. Allauch, La Turquie et les Ottomans, p. 40.

⁶³⁹ Նույն տեղում, էջ 120-121:

⁶⁴⁰ Նույն տեղում, էջ 155:

⁶⁴¹ Նույն տեղում, էջ 156: Այս մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության II գլխում՝ էջ 58:

Առաջին հայացքից, Ալլոշի դիտարկումներն այս հարցում կարող են արտառոց թվալ, առավել ևս եթե նկատի ունենանք, որ 1889-1891 թթ. նա բնակվել է Բիթլիսում և շրջագայել Արևմտյան Հայաստանի զանազան նահանգներում: Իրականում, նման մոտեցումն ամբողջությամբ համապատասխանում է նրա հայեցակարգի միտվածությանը, քանզի հեղինակի գլխավոր նպատակներից մեկը՝ Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող ազգային խնդիրների շրջանցումն է:

Թեև իր հուշերն ամփոփող՝ 1895 թ. վերահրատարակված «Իրականություն Հայաստանի մասին» խորագիրը կրող գրքի առաջաբանում նա մատնանշում է, թե դրանք իբր «վերջին պատահարների ազդեցության ներքո» չեն գրվել⁶⁴², այդուհանդերձ, ելնելով նրա շարադրանքի ընդհանուր ոգուց, դժվար չէ կռահել, որ դա ստահող հայտարարություն է՝ որին հեղինակը դիմել է հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ զցելու մտադրությամբ:

Իրականում Ալլոշը ֆրանսիական հանրության ուշադրությունը բեռնում է սոսկ երկու հիմնական գաղափարների վրա. դրանք են՝ հայերի բարեկեցությունն Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում և հպատակների նկատմամբ Աբդուլ Համիդի բարյացակամ վերաբերմունքը: Արևմտյան Հայաստան այցելած, բայց տարօրինակ ձևով այնտեղ տիրող իրավիճակին «անիրագեկ» հեղինակը՝ անտեսելով XIX դարի վերջին լուսավորության, մշակույթի և կրոնի ասպարեզներում օսմանյան վարչակարգի հայահալած քաղաքականության սաստկացումը⁶⁴³, պնդում է, թե իր այցելած վայրերում՝ կառավարությունն ամենուր հայկական եկեղեցիների և դպրոցների հանդեպ մշտապես ցուցաբերել է անսահման բարեհաճ վերաբերմունք: Արևմտահայության հուսակտուր վիճակի կապակցությամբ նա գրում է. «Ասիայում հայերն ամենուր ապրում են շքեղության մեջ»⁶⁴⁴:

Թե Ալլոշի այցելությունը Հայաստան և թե՛ նրա գրքերում

⁶⁴² P. B. Allauch. La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, p. 6.

⁶⁴³ Այդ մասին տես Ա. Հանքարյան, նշվ. աշխ., էջ 49-51:

⁶⁴⁴ P. B. Allauch. La vérité sur l'Arménie. Récit d'un témoin oculaire, p. 24, 38, 43.

նկարագրված դեպքերը ժամանակագրական առումով նախորդում են համիդյան կոտորածներին: Այդուհանդերձ, Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի իրավիճակին և նրանց կյանքի պայմաններին վերաբերող, սակայն այցելուի՝ իրականության հետ հեռավոր իսկ առնչություն չունեցող վկայությունները՝ արևմտահայերի բուն կացության մասին փոքրիշատե ստույգ պատկերացում ունեցող ընթերցողին անվարանորեն հանգեցնում են սոսկ մեկ հնարավոր հետևության. այն է՝ հեղինակի հետապնդած հիմնական նպատակը 1890-ական թվականների կեսին տեղի ունեցած հայկական զանգվածային կոտորածների կազմակերպիչ Աբդուլ Յամիդին՝ փոքր-իսկ պատասխանատվությունից զերծ պահելն է: Սուլթանին մեծարելու միտումը Ալլոշի հիմնախնդիրներից է, ով, ըստ նրա՝ գահ ելնելուն ևեթ, հաղթահարել է այն բոլոր «դժվարությունները, խոչընդոտները և վտանգները, որոնք կարող էին երևան գալ... Նա գահակալի մեծ հատկամիշներին միակցել է մարդկային բոլոր արժանիքները»⁶⁴⁵:

Աբդուլ Յամիդին անսքող վերցնելով իր հովանու ներքո, նա նշում է. «Ո՞վ է մեր օրերում ցանկանում հանդես գալ սուլթանի դեմ: Գավառներում տեղի ունեցած մի քանի խախտումների համար պետության ղեկավարին պատասխանատու դարձնելը հրեշավոր արարք է: Աբդուլ Յամիդը համայն աշխարհի ամենամեծահոգի, և ես կարող եմ ասել, ամենաազնվաբարո միապետն է»⁶⁴⁶: Ալլոշն ընդգծում է հատկապես Աբդուլ Յամիդի կարծեցյալ՝ խիստ բարյացակամ վերաբերմունքն իր հպատակների նկատմամբ: Սուլթանը «խիստ մտահոգ է, – ինչպես նա նշում է, – իր հպատակների բարօրությամբ և այնքան մեծ նշանակություն է տալիս իր քաջարի բանակի արյունը խնայելուն, որ սուսերը պատյանից հանում է միայն կայսրության շահերը պաշտպանելու համար»⁶⁴⁷: Ուստի՝ միանգամայն օրինաչափ է, որ նա ոչ միայն լռությամբ է շրջանցում համիդիե հրոսակախմբերի չարաբաստիկ գործողությունները, այլև

⁶⁴⁵ P. B. Allauch, La Turquie et les Ottomans, p. 102.

⁶⁴⁶ P. B. Allauch, La vérité sur l'Arménie, p. 32.

⁶⁴⁷ P. B. Allauch, La Turquie et les Ottomans, p. 105.

դրանց կազմավորման փաստն իսկ հիմնավորում է առաջիկա պատերազմների, որոնց մեջ Թուրքիան կարող է ընդգրկվել, մասնակցելու անհրաժեշտությամբ⁶⁴⁸:

Այս պայմաններում, հետաքրքրությունից զուրկ չէ հայացք նետել սուլթանի՝ ազգային փոքրամասնությունների հանդեպ դրսևորած նրա գնահատականների վրա: Ըստ նրա խորհրդածությունների՝ շատերը, «համենայն դեպս՝ անհրազեկ անծիմք», չեն ցանկանում հաշվի առնել, թե ինչպիսի «ահռելի ծանրության» ներքո է կքված սուլթանը, որի՝ կայսրության ներքին մահանգներում խաղաղություն ապահովելու և բոլոր տերությունների հետ ներդաշնակության մեջ գոյակցելու ջանքերը մազնահատում է իբրև «հերկուլեսյան արարք», առավել ևս՝ երբ խորհում ենք, թե որքան տարրերից է բաղկացած Օսմանյան կայսրությունը և թե որքան թշնամիներով է այն շրջապատված»⁶⁴⁹: Դեռ ավելին. հեղինակը վկայակոչում է հմուտ դիվանագետների, որոնք հաշվի առնելով Աբդուլ Յամիդի հայացքների լայնախոհությունը, խելամտությունը, տատասկոտ հարցերում ցուցաբերած սառնասրտությունը, նրան անվանում են «աշխարհին զարմանք պատճառող՝ հիասքանչ սուլթան»⁶⁵⁰:

Խորհրդավոր դիվանագետների (որոնց անունները սակայն չեն հիշատակվում) այս բնորոշման հետ կարելի է, ընդհանուր գծերով, համամիտ լինել: Հիմնավորելու համար այդ հավաստումը, ցանկանում ենք վկայակոչել Դենի Կոշենի՝ 1897 թ. փետրվարի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում ունեցած ելույթը, որը հայկական կոտորածների կապակցությամբ հայտարարել է. «Հարկ է նրան (Աբդուլ Յամիդին – Վ. Պ.) արժանին հատուցել: Ամեն ինչ արվել է ըստ հիասքանչ մեթոդի: Հազարավոր այրված տները՝ սուլթանի հպատակների տներն էին, հարյուր հիսուն հազար կամ երկու հարյուր հազար սպանված մարդիկ՝ սուլթանի հպատակներն էին»⁶⁵¹:

⁶⁴⁸ Նույն տեղում, էջ 162:

⁶⁴⁹ P. B. Allauch. La vérité sur l'Arménie. p. 32.

⁶⁵⁰ Նույն տեղում, էջ 33:

⁶⁵¹ D. Cochin, նշվ. աշխ., էջ 58:

Ալլոշի գրքերում անհնար է գտնել թե հայկական կոտորածներին և թե օսմանյան վարչակարգի հայահալած քաղաքականությանն առնչվող նվազագույն իսկ ակնարկ. փոխարենը՝ նա հիշատակում է այն խռովության մասին, որին, ըստ նրա մշուշապատ մտորումների՝ հայերին դրդել են դիմելու ինչ-որ խորհրդավոր՝ «շահագրգիռ անձինք»։ Հենց նրանց վրա է, որ հուշերի առաջաբանում, հեղինակը հեռակա կարգով բարդում է, իր իսկ շրջանցած՝ 1894-1895 թթ. հայկական կոտորածների պատասխանատվությունը։ Նրանք «թաքնվում են վարագույրի ետևում մինչ այն պահը, որը նրանց նպաստավոր է թվում՝ հասարակական դժբախտությունից օգտվելու և համուն իրենց շահերի այն օգտագործելու համար։ Պ[արոնայք] առաջնորդները լավ կանեն, եթե այցելեն այն երկրամասերը, որտեղ մենք հենց նոր շրջագայել ենք։ Նրանք, սակայն, խորամանկաբար գերադասում են ապրել եվրոպական կենտրոններում, որտեղ, զարտուղի ճանապարհներով ձեռք բերված դրամով, ոսկեգօծ և հարուստ կահավորված սենյակներում՝ վայելում են հրահրիչների՝ իրենց կյանքին համապատասխան հաճույքներ»⁶⁵²։

Հետևությունը մեկն է՝ Աբդուլ Համիդը «իրեշտակ» է, իսկ հայկական կոտորածների պատասխանատուները՝ եվրոպայում բնակվող և խռովության դրդող հրահրիչներն են։ Ստանձնած անշնորհակալ առաքելությունն Ալլոշին չի հաջողվել, սակայն, կատարել ցանկալի մակարդակով։ Նա չի վկայակոչում գեթ մեկ փաստ այն մասին, թե ո՞ր ասպարեզներում է երբևէ դրսևորվել Աբդուլ Համիդի «մեծահոգությունը» քրիստոնյա հպատակների նկատմամբ կամ ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ պարագաներում է ի հայտ եկել նրա «ազնվաբարո» վարքագիծը։ Փոխարենը, նրա առաջադրած կեղծ վարկածը՝ կապված Հայոց ցեղասպանության պատճառ դարձած՝ կայսրության տարածքից դուրս գտնվող հայ հեղափոխականների գործունեության հետ, հետագա տասնամյակներում որդեգրել են ցեղասպանության արժանահա-

⁶⁵² P. B. Allauch, La vérité sur l'Arménie, p. 33.

վատությունը ժխտող և պատմական անցյալը խեղաթյուրող բազմաթիվ թուրք պետական գործիչներ⁶⁵³ և նրանց հավատարմորեն ծառայող պատմաբաններ:

Ալլոշին ծայնակցում է, սակայն, քննարկվող հարցի նկատմամբ ցուցաբերվող շատ ավելի լայն ընդգրկումով, Ռ. Դե Կուրսոնը, ով ևս, ըստ իր հավաստման, երկու անգամ այցելել է Օսմանյան կայսրության «ասիական նահանգները, որոնք դրանից հետո խռովահույզ են եղել արիեստական ապստամբությամբ» և հայկական կոտորածների հետքերով՝ այսպես կոչված՝ հայկական «ապստամբական շարժմանն» է նվիրել առանձին ուսումնասիրություն⁶⁵⁴: Ի տարբերություն նախորդ հեղինակի՝ նա մանրագնին քննարկում է հայկական քաղաքական խմբակցությունների և, մասնավորապես, Յնչակյան կուսակցության մասնակցությունը XIX դարի 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում սկիզբ առած «խմորումներին», որոնք հրահրում էր անգլիական կառավարությունը: Այս երկու թեզերը Դե Կուրսոնի գրքույկի առանցքն են, ուստի՝ նա ջանք ու եռանդ չի խնայում դրանք հիմնավորելու համար:

Ըստ նրա մեկնակերպի՝ քանի որ օսմանյան կառավարությունը հայերին ընձեռել էր մայրենի լեզվով խոսելու, եկեղեցիներ, սոցիալական հաստատություններ, դպրոցներ ունենալու և մի շարք այլ արտոնություններ՝ նրանք խիստ գոհ էին իրենց վիճակից, իսկ հեղափոխական կամ ապստամբական տրամադրությունները նրանց խորթ էին: «Չկա, այսպիսով, ավանդական հակակրանք երկու ազգի միջև, և մոլեռանդ մահմեդականների կողմից քրիստոնյաների հարստահարումը միմիայն անգլիացի գրողների երևակայության արգասիքն է»⁶⁵⁵, – գրում է նա:

Ելնելով անգլիական մամուլում լույս ընծայված հողվածների հեղինակների հետ Դե Կուրսոնի բանավեճից, կարելի է պատկերացում կազմել նրա հայացքների համակարգի մասին:

⁶⁵³ Տես օրինակ 1917 թ. սեպտեմբերի 24-ին Թալեաթի արտասանած ճառը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի Համընդհանուր վեհաժողովում. A. Beylerian, նշվ. աշխ., էջ 417-419:

⁶⁵⁴ R. Des Coursons. La rebellion arménienne. Son origine-son but, Paris, 1895.

⁶⁵⁵ Նույն տեղում, էջ 26:

Նախ՝ նա նվազեցնում է հայկական նահանգներում բնակվող հայերի թիվը, պնդում, որ մահմեդականներն այնտեղ շուրջ երեք անգամ գերազանցել են քրիստոնյաներին⁶⁵⁶: Չշրջանցելով հայերի ծանր սոցիալական վիճակը, Դե Կուրսոնն, ըստ էության, որևէ զանազանություն չի նշմարում նրանց և կայսրության մահմեդական հպատակների կացության միջև, սակայն, առանձնացնում է քրիստոնյաների օգտին վկայող մեկ իրողությունը՝ ուշադրություն հրավիրելով նրանց գինապարտ չլինելու հանգամանքի վրա: Նա քննադատում է թուրքերին պարբերաբար զրպարտող անգլիացի տարբեր հեղինակների, որոնց փաստարկների հենքն է համարում «բոլոր իրավախախտումների և քրեական հանցանքների, կողոպուտների, տեղական ընդհարումների հանրագումարը, որը հանրությանն է ներկայացվում իբրև մահմեդականների վայրագությանը զոհ դարձած խեղճ հայերի դեմ ուղղված հալածանք»⁶⁵⁷: Դրանով իսկ, նա ամբողջությամբ ժխտում է Օսմանյան կայսրությունում էթնիկական հողի վրա տեղի ունեցող հալածանքներն ու ընթացքի մեջ գտնվող կոտորածները:

Ինչ վերաբերում է «անհուն մեծահոգությամբ» օժտված սուլթանին, ապա Դե Կուրսոնը հայտարարում է. «Եթե ցանկություն առաջանա վերընթերցելու անգլիական լրագրերի հավաքածուն, դյուրությամբ կարելի է համոզվել, որ Եվրոպայում և ոչ մի գահակալ այդչափ լուտանքների չի արժանացել, այդչափ չի զրպարտվել և այդչափ չի անվանարկվել», որքան Աբդուլ Յամիդը: Ըստ նրա՝ սուլթանի հասցեին ուղղված վիրավորանքները հասնում են աներևակայելի չափերի և անբարյացակամության դրոշմը կրող այդ «կողմնակալ կարծիքը հոգնեցնում է ընթերցողին, հատկապես, երբ խորհում ենք այն մասին, որ խոսքը վերաբերում է այնպիսի նրբազգաց, խելացի, աշխատասեր միապետի, ինչպիսին է Աբդուլ Յամիդը»⁶⁵⁸:

Դե Կուրսոնն այն համոզմունքին է, որ հայկական (մասնավորապես, Յնչակյան) կուսակցությունները ստեղծվել

⁶⁵⁶ Նույն տեղում, էջ 32: Այդ մասին տես սույն աշխատության II գլխում՝ էջ 58:

⁶⁵⁷ Նույն տեղում, էջ 36:

⁶⁵⁸ Նույն տեղում, էջ 92, 36:

են անգլիացիների հրահրմամբ և գործուն աջակցությամբ: Ուստի՝ պատահական չէ, որ հայկական շարժման զարթոնքը նա պայմանավորում է 1892 թ. Գլադստոնի իշխանության գլուխ անցնելով, իսկ հայկական կուսակցությունների «հրահրիչ» գործունեությունը ներկայացնում իբրև հայկական ապստամբությունների բռնկման պատճառ, որն իր հերթին հանգեցրել է անցանկալի հետևանքների: «Ապստամբությունն անհրաժեշտաբար կյանքի է կոչում բռնություն, իսկ յուրաքանչյուր բռնություն՝ առաջադիմության այս կամ այն չափով երկարատև կասեցում», – հավաստում է նա⁶⁵⁹:

Այսպիսին են Դե Կուրսոնի կռվանները, որոնք հետագա տասնամյակներում բազմիցս վկայակոչելու են ոչ միայն թուրք, այլև այլազգի՝ Չայոց ցեղասպանությունը ժխտող տարբեր հեղինակներ: Ինչպես տեսնում ենք, անկախ այն բանից, թե որոնք են դրա շարժառիթները, նա խեղաթյուրում է փաստերը, ամբողջությամբ շրջանցում 1878 թ. ի վեր մեծ տերությունների դիվանագիտական շրջանակներին բազում անհանգստություններ պատճառած Չայկական հարցի գոյությունը, ինչպես նաև Օսմանյան կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ՝ համիդյան վարչակարգի կիրառած հալածանքները, գործադրած բռնությունները և արևմտահայության դեմ սանձազերծած ցեղասպանության գործընթացի իրողությունը:

Դե Կուրսոնի ելակետային դրույթների առիթով, նպատակահարմար ենք գտնում վկայակոչել նրա ֆրանսիացի ժամանակակիցներից մեկի՝ տիկին Յուդրի-Մենոսի հավաստումը. «Սուլթանի խոստումները մնացին իբրև մեռյալ տառեր: Չայերիտասարդության մի մասն այդժամ դիմեց ազգին՝ խնդրելով բողոքել և բարենորոգումների կենսագործման պահանջ ներկայացնել: Ազգային զարթոնք խթանելու նպատակով ձևավորվեցին հայրենասիրական կոմիտեներ: Յենց այս իրողությունն են անվանել հայկական ապստամբություն և այն վերագրել անգլիական մեքենայություններին»⁶⁶⁰: Ի դեպ, իմաստ ունի

⁶⁵⁹ Նույն տեղում, էջ 12:

⁶⁶⁰ M[adame] Hudry-Menos, նշվ. աշխ., էջ 5:

հիշատակել, իրադարձությունների ժամանակակից թուրք գործիչ Մուրադ բեյի վկայությունը ևս. «Երբ Թուրքիայում արտասանում էին «հավատարիմ ազգ» բառերը, ամենքը հասկանում էին, որ խոսքը վերաբերում է հայերին»⁶⁶¹:

Հայոց ցեղասպանության հավաստիությունը ժխտող հեղինակներից է Լուի Ռուսսոն, որի աշխատությունը նվիրված է Օսմանյան կայսրությունում, մասնավորապես, XIX դարում տեղի ունեցած «առաջընթացների» ուսումնասիրությանը տարբեր՝ մտավոր, ռազմական, տնտեսական և այլ ոլորտներում⁶⁶²: Հեղինակը բացահայտորեն հետապնդում է օսմանյան գահակալներին, հատկապես, Աբդուլ Համիդ II-ին մեծարելու, Օսմանյան կայսրությունն իբրև արևմտյան երկրներն ակնկոծած առաջադիմական միտումներն ընդօրինակող պետություն ներկայացնելու նպատակ: Ռուսսոն ոչ միայն շեշտում է «առաջադիմության և գեղեցիկի» նկատմամբ թուրքերի ունեցած կարծեցյալ հակումը⁶⁶³, այլև, դիմելով կեղծարարության՝ ժխտում է XIX դարում օսմանյան վարչության բռնակալական բնույթը, այն ներկայացնում իբրև օրենքների վրա հիմնվող պետություն⁶⁶⁴: Այլ կերպ ասած, հետամնաց և բռնակալական Օսմանյան կայսրությունը, ըստ ժամանակակից տերմինաբանության, նա ներկայացնում է իբրև իրավական պետություն, որը, ինչպես ջանում է ապացուցել, պարբերաբար բարելավել է իր տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների կացությունը:

Անհրաժեշտ ենք համարում այս հենքի վրա քննարկել Աբդուլ Մեջիդի՝ 1856 թ. փետրվարի 18-ին՝ հայերին սոսկ դատարկ խոստումներ շռայլած հաթթը-հումայունին տված Ռուստոյի մեկնաբանությունները, ըստ որոնց՝ այդ հրովարտակով թուրքերն իբր դադարել են լինել «նվաճող ազգ» և մուտք են գործել «եվրոպական մեծ ընտանիք»⁶⁶⁵: Հարկ է մանրամասնել,

— ⁶⁶¹ Mourad bey, *Le Palais de Yildiz et la Sublime Porte. Le véritable mal d'Orient*, Paris, 1895, p. 16.

— ⁶⁶² L. Rousseau, *L'effort ottoman*, Paris, 1907.

⁶⁶³ Նույն տեղում, էջ 50:

⁶⁶⁴ Նույն տեղում, էջ 111:

⁶⁶⁵ Նույն տեղում, էջ 294:

որ այս առիթով՝ հեղինակը հերթական անգամ շեշտում է սոսկ թուրքերի՝ եվրոպական կենսակերպի չափանիշներին մերժենալու կարծեցյալ ձգտումը, ամբողջությամբ անտեսելով այն պատմական հանգամանքները, որոնք օսմանյան ղեկավարներին դրդել էին հրապարակել Թանգիմաթի երկրորդ փուլը սկզբնավորած այս հրովարտակը: Ռուստոն շրջանցում է հաթթը-հունայունի հրապարակման հիմնական նպատակը, այն է՝ եվրոպական նորանվճարություններն ընդօրինակելու միջոցով կանխել Օսմանյան կայսրության փլուզումը և թուրքերի հովանու ներքո՝ կայսրության տարածքում բնակվող ժողովուրդներին միաձուլել օսմանական ազգի մեջ⁶⁶⁶:

Ելնելով իր իսկ որդեգրած հայեցակարգից՝ Ռուստոն լռության է մատնում Չայկական հարցն ու Չայոց ցեղասպանությունը: Չենց դրանով է բացատրվում նաև այն, որ Օսմանյան կայսրության կազմավորման առիթով նա հիշատակում է օսմանյան զանազան գահակալների կողմից Բյուզանդիայի, բալկանյան երկրների նվաճման մասին (նույնիսկ դրվատում Կոստանդնուպոլիսն արյամբ հեղեղած, ավերած ու կողոպտած արյունռուշտ Մեհմեդ II-ին, ով, ըստ նրա՝ քաղաքի պարիսպների վրա փառապանծորեն «ծածանել է Մուհամեդի դրոշը»⁶⁶⁷), սակայն, որևէ տեղ, նույնիսկ հպանցիկ, չի ակնարկում հայկական պատմական տարածքների ռազմակալման մասին:

XIX դարի վերջին թե Բարձր Դռանը և թե՛ եվրոպական պետություններին արդեն մեծ անհամգստություններ պատճառած Չայկական հարցը, որի լուծումը հղի էր կայսրության տարածքային ամբողջականության տրոհմամբ, դարձել էր արևմտահայության ցեղասպանության գործընթացի սանձազերծման հիմնական պատճառը: Ուստի՝ օսմանյան գահակալին մեծարող ֆրանսիացի հեղինակը գերադասում է շրջանցել դրա գոյության փաստը, խուսափելու համար Աբդուլ Չամիդի վրա ստվերի նշույլ իսկ ձգելուց: Նույնիսկ համիդիե գորամիավորումների գործունեությունը, որոնք, ինչպես պարզվում է, կարող էին միայն «պատերազմի պարագայում օգտակար» լինել, նա պար-

⁶⁶⁶ Այդ մասին տես P. A. Сафрастян. նշվ. աշխ., էջ 49:

⁶⁶⁷ L. Rousseau, նշվ. աշխ., էջ 149:

փակում է արաբների՝ Եմենում բռնկված ապստամբությունը ճնշելու շրջանակներում⁶⁶⁸, չհիշատակելով Արևմտյան Հայաստանում գործած նրանց չարիքների մասին:

Ռուստոն ոչ միայն անտեսում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, այլև ազգամիջյան հարաբերություններն Օսմանյան կայսրությունում չի դարձնում ուսումնասիրության առանձին թեմա: Այդուհանդերձ, ելնելով հեղինակի զանազան դիտարկումներից, կարելի է, ընդհանուր գծերով, քննարկել նրա տեսակետները նաև այս հարցում: Օսմանյան կայսրության տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման և տնտեսական կեղեքման իրողությունները ժխտող, Թուրքիայում խաղաղություն հաստատելու ուղղությամբ Աբդուլ Համիդի «ջանքերը» ներբողող պատմաբանը⁶⁶⁹, ընդունում է, այնուամենայնիվ, XIX դարում կայսրությունը ցնցած «մեծ ապստամբությունների» և դրանց ճնշման ընթացքում գործադրված վայրագությունների փաստը, որոնց պատասխանատվությունը, սակայն, բարդում է ոչ թե Բարձր Դռան կամ նույնիսկ «թուրքական կանոնավոր բանակի զինվորների», այլ չերքեզ բաշիբոզուկների և ալբանացի կամավորների վրա⁶⁷⁰, որոնք, ինչպես կարելի է ենթադրել, հավանաբար, գործել են սեփական նախաձեռնությամբ:

Հարևանցիորեն հիշատակելով միայն բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումների մասին, Ռուստոն ամբողջությամբ ժխտում է թե՛ օսմանյան պետության՝ Բալկաններում վարած ցեղասպան քաղաքականության փաստը և թե՛ օսմանյան բռնատիրության դեմ՝ բալկանյան ժողովուրդների մղած պայքարի ազգային-ազատագրական բնույթը, շրջանցում դրա պատճառները: Օսմանյան կեղեքիչ լուծը թոթափելու, հայրենիքի ազատագրման համար պայքարի ելած հույներին, սերբերին և բուլղարացիներին նա ներկայացնում է իբրև հրոսակախմբերում միավորված՝ ահաբեկչություն սփռող, գավառներն ամայացնող, քաղաքներն ու գյուղերը հրկիզող, խաղաղ

⁶⁶⁸ Նույն տեղում, էջ 167:

⁶⁶⁹ Նույն տեղում, էջ 247:

⁶⁷⁰ Նույն տեղում, էջ 143:

բնակչությանը ոչնչացնող «համարձակ ավազակների»⁶⁷¹: Գիտակցաբար խեղաթյուրելով Բալկանյան թերակղզում տիրող իրավիճակի հավաստի պատկերը, Ռուստոն ջանում է հիմնավորել բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելու ուղղությամբ օսմանյան վարչակարգի կիրառած բռնությունների անհրաժեշտությունը և ընդվզում բոլոր նրանց դեմ, ովքեր «համարձակվում են մեղադրել օսմանյան զորքերին՝ ոչ մահմեդականների նկատմամբ գործած վայրագությունների համար»⁶⁷²:

Անկախ այս ամենից, ինչպես տեսնում ենք, Ռուստոն, այնուամենայնիվ, ընդունում է Օսմանյան կայսրությունն ավելորժած ազգային-ազատագրական շարժումների իրողությունը և դիմելով բացահայտ կեղծիքի՝ դրանք մեկնաբանում է, ինչպես և Ալլոշը (առանց ճշգրտելու, սակայն, թե որ ժողովուրդների ներկայացուցիչներին է վերաբերում խոսքը), գլխավորապես, արտասահմանում բնակվող՝ կայսրության տարբեր ժողովուրդների՝ անհնազանդության դրող հրահրիչների գործունեությամբ⁶⁷³: Ըստ այդմ՝ Օսմանյան կայսրությունում բարենորոգումների իրականացմանը ցանկալի ընթացք տալու համար, նա անհրաժեշտ է համարում կասեցնել թե «հեղափոխական կոմիտեների» գործունեությունը, որոնք ի շարս պառակտողական բնույթի այլևայլ արարքների, «ենթակա դասակարգերին զինում են միմյանց դեմ, սերմանում տարածայնություններ» և թե արգելել «ապստամբ հոգևորականությանը կապեր պահպանել արտասահմանի հետ»⁶⁷⁴:

Ռուստոն, սակայն, չի բավարարվում օսմանյան վարչակարգին անհանգստություններ պատճառող խնդրումների համար պատասխանատվությունը հեղափոխական կոմիտեներից բացի հոգևորականության (հեղինակն, ի դեպ, չի մեկնաբանում, թե որ ժողովուրդների պարագայում) վրա բարդելով: Օսմանյան կայսրությունում բռնկված ապստամբությունների

⁶⁷¹ Նույն տեղում, էջ 175:

⁶⁷² Նույն տեղում, էջ 176:

⁶⁷³ Նույն տեղում, էջ 176, 247, 307, 309:

⁶⁷⁴ Նույն տեղում, էջ 309:

համար Աբդուլ Չամիդին և նրա վարչակարգը փոքր-իսկ պատասխանատվությունից զերծ պահելու մտադրությամբ՝ նա պնդում է, որ կայսրության տարածքում հուզումների բռնկման և «եղբայրասպան պատերազմների» սանձազերծման պատճառ միշտ դարձել է քրիստոնեությունը⁶⁷⁵: Ակնհայտ է, որ օսմանյան վարչակարգի և հպատակեցված ժողովուրդների միջև կայսրությունում տեղի ունեցող ընդհարումների հիմնական պատճառները (հալածանքներ, պետական քաղաքականության մակարդակով իրականացվող զանգվածային բնաջնջումներ, մշակութային առաջընթացի արգելակում, մշակութային արժեքների ոչնչացում և այլն) հեղինակը գիտակցաբար խեղաթյուրում է, իսկ առճակատումների պատճառը նույնիսկ փորձում մեկնաբանել դավանանքների զանազանությամբ:

Միաժամանակ Ռուսսոն ծագում է հիմնավորել Բարձր Դռան՝ «դավաճանությունները, նենգությունները, չարագործությունները» պատժելու իրավասությունները: Այս հարցում հեղինակը ևս մեկ անգամ ուշադրությունը հրավիրում է սուլթանի՝ կայսրությունում կրքերը մեղմացնելու, համընդհանուր խաղաղություն հաստատելու, քրիստոնյաների և մահմեդականների մերժեցումն ապահովելու և աղանդավորությունն արմատախիլ անելու ուղղությամբ գործադրած ջանքերի վրա⁶⁷⁶:

Ինչպես տեսնում ենք, Ռուսսոյի հայեցակարգն աչքի է ընկնում ակնհայտ միտումնավորությամբ, որը չէր կարող, բնականաբար, իր դրոշմը չթողնել ոչ միայն քննարկվող հարցերին տված նրա մեկնաբանությունների, այլև նրա շարադրանքում ընդգրկված հիմնախնդիրների ընտրության վրա (մասնավորապես, Չայկական հարցի շրջանցում):

Ձատագովական դիրքերից է գրված է. Լո ժոնի գրչին պատկանող Աբդուլ Չամիդի կենսագրականը, որը, ոչնչով չզանազանվելով սրբերի վարքագրությունից, ընդգրկում է սուլթանի գործունեության դրվագները մինչ հայկական

⁶⁷⁵ Նույն տեղում, էջ 309-310:

⁶⁷⁶ Նույն տեղում, էջ 308:

կոտորածների սանձազերծումը⁶⁷⁷: Նրա դիրքորոշումը բնութագրելու համար միանգամայն հատկանշական են Դ. Սպիրովի խոսքերը. «Սուլթանին անվանել մարդասեր, այն սուլթանին, որի հրամանով ամեն ամիս մորթվում է 500 գյավուր, անհեթեթություն է, իսկ եթե ուզում եք՝ նաև խայտառակություն, և միայն ցնդած ուղեղը, մարդկային մթազնած միտքն ու խիղճը կարող են նման բան ասել»⁶⁷⁸:

Անկախ այն բանից, թե ինչ դրդապատճառներից ելնելով են քննարկված գրքերի հեղինակները կեղծել Օսմանյան կայսրության պատմությունը, շրջանցել հայ և քրիստոնյա այլ ժողովուրդների բնաջնջման՝ օսմանյան միապետների քաղաքականությունը, կատարել են արդյոք Բարձր Դռան պատվերը, թե սեփական նախածեռնությամբ սատարել են Ֆրանսիայի պետական քաղաքականությունը, նրանք, փաստորեն, սկզբնավորել են Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ այս իրադարձության պատմականությունը ժխտող և առ այսօր հարատևող ուղղությունը:

Այդուհանդերձ, ինչպես տեսանք, Հայոց ցեղասպանության փաստը ժխտող՝ պատմական իրադարձությունները գիտակամորեն մեկնաբանելու հետ հեռավոր առնչություն չունեցող գրականության տեսակարար կշիռը նվազ է: Առավել ևս, եթե նկատի ունենանք ֆրանսիական պատմագրության ձեռքբերումներն այս ասպարեզում, ապա ակնբախ կդառնա, որ նշված հեղինակները չէին կարող Ֆրանսիայում վճռորոշ ազդեցություն ունենալ հասարակական կարծիքի ձևավորման վրա:

⁶⁷⁷ E. Le Jeune. Comment on sauve un empire. S. M. I. le Sultan Ghazi Abdul Hamid Khan II et son œuvre, 2^{ème} ed., Paris, 1895.

⁶⁷⁸ Դ. Ա. Սպիրով, նշվ. աշխ., էջ 48:

ՎԵՐՁԱԲԱՆ

Ամփոփելով Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ ուսումնասիրվող սույն թեմային նվիրված մեր խոսքը, հարկ ենք համարում ուշադրությունը բևեռել էական նշանակություն ունեցող մի շարք խնդիրների վրա: Ինչպես տեսանք, Հայոց ցեղասպանության պատմականությունն ընդունող ֆրանսիացի հեղինակները մի շարք սկզբունքային հարցերում առաջադրել են իրարամերժ գնահատականներ: Ըստ այդմ՝ իմաստ ունի մանրամասնել նրանց մեկնաբանությունների զանազանության պատճառները: Այդ կապակցությամբ նպատակահարմար ենք գտնում սահմանափակվել առանցքային նշանակություն ունեցող մի քանի հարցերի քննարկմամբ:

Ֆրանսիացի հեղինակներից ոմանք փաստերով չեն հիմնավորում, իսկ երբեմն նույնիսկ ամբողջությամբ անտեսում են օսմանյան իշխանությունների ունեցած վճռորոշ դերը Հայոց ցեղասպանության կազմակերպման գործում, այն պայմանավորում գլխավորապես կրոնական զանազանության հանգամանքով, որի պատճառը թե՛ նրանց հայացքների սահմանափակությունն է, թե՛ օգտագործած սկզբնաղբյուրների սակավությունը և թե՛ քաղաքական հովերին տուրք տալու իրողությունը: Սակայն ուշադրությունը կենտրոնացնելով միմիայն՝ Հայոց ցեղասպանության իրականացման ընթացքում, հիրավի, իր էական դերն ունեցած կրոնական տարբերության հանգամանքի վրա, այդ հեղինակներն ամբողջությամբ չըջանցում են Հայոց ցեղասպանության իրական դրդապատճառները և այդ գործընթացին բնորոշ առանձնահատկությունները:

Հարկ է, մասնավորապես, նկատի ունենալ, որ ֆրանսիացի պատմաբանների և մտավորականների մի մասն իրենց աշխատությունները գրել են մինչ «Դեղին գրքի» և փաստաթղթերի այլ ժողովածուների լույս ընծայումը, որը նրանց՝ պատմական անցքերի մեկնաբանության ակնբախ միակողմանիու-

թյան հիմնական պատճառներից է: Հակառակ դեպքում, ինչպես բացատրել հայր Շարմետանի հայացքների ակնհայտ էվոլյուցիան, ով միայն «Դեղին գրքի» ընթերցումից հետո է իրադարձություններին տվել շատ ավելի սպառիչ մեկնաբանություններ:

Ոմանք Հայոց ցեղասպանությունը քննարկել են Բարձր Դռան՝ կայսրության տարածքում բնակվող քրիստոնյա և մահմեդական այլ ժողովուրդների նկատմամբ կիրառած քաղաքականության ընդհանուր հենքի վրա, որն ինքնին ողջախոհ մոտեցում է: Այդուհանդերձ, նրանք երբեմն չեն մատնանշել այն հանգամանքները, որոնք հայ ժողովրդի պարագայում Բարձր Դռան կիրառած՝ օսմանյան պետական քաղաքականությունը զանազանում էին կայսրության տարածքում բնակվող այլ ժողովուրդների նկատմամբ գործադրվող զանգվածային բռնություններից: Արդյունքում՝ նրանք անտեսել են, մասնավորապես, Հայկական հարցին լուծում տալու՝ սուլթանի որդեգրած յուրօրինակ տարբերակը, որի նպատակը Հայկական հարցից մեկընդմիջտ ձերբազատումն էր:

Ֆրանսիայի ավանդական արևելյան քաղաքականության շահերին համապատասխանող՝ ֆրանսիացի մտավորականների գրեթե անսասան դիրքորոշումը, որը հանգում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու անհրաժեշտությանը, միանգամայն օրինաչափ է: Անարգանքի սյունին գամելով Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և հանդես գալով հանուն հայ ժողովրդի շահերի պաշտպանության, նրանք, այդուհանդերձ, բավարարվել են Օսմանյան կայսրության սահմաններում նրա համար ստեղծված անհանդուրժելի պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումների կենսագործման պահանջով, ինչպես նաև Հայկական հարցում՝ Ֆրանսիայի, և եվրոպական տերությունների քաղաքականության քննադատությամբ:

Հայոց ցեղասպանության գործընթացի կասեցումը ենթադրող՝ մեծ տերությունների զինված միջամտությունն անխուսափելիորեն կհանգեցներ Օսմանյան կայսրության տարածքի մասնատմանը և իբրև դրա անմիջական հետևանք՝ Ֆրանսիայի ախոյաններից որևէ մեկի դիրքերի անրապնդմանը Մերձավոր

Արևելքում⁶⁷⁹, որն ամենևին չէր համընկնում Քե դ'Օրսեի ռազմավարական նկրտումներին:

Խնդրո առարկա հարցին բոլորովին այլ ելակետներից է մոտեցել դը Կոնտանսոնը, ով ուշադրությունը բևեռել է, մասնավորապես, եվրոպացի բազմաթիվ վարկատուներին՝ օսմանյան կառավարության ունեցած ահռելի պարտքերի հանգամանքի վրա, որի հետևանքով տերություններն անվերապահորեն շահագրգռվածություն էին հանդես բերում «Արևելքում status quo-ի պահպանության հարցում»⁶⁸⁰: Այս առիթով հարկ է նշել, որ XIX դարի երկրորդ կեսին՝ շուրջ 143.2 միլիոն թուրքական լիրայի սահմանում՝ մեծ տերություններին՝ «օսմանյան պարտքի» 62.9 տոկոսը, օսմանյան վարչակարգը պարտք էր միայն Ֆրանսիային⁶⁸¹: Օսմանյան կայսրության արդյունաբերության, առևտրի և տնտեսության ոլորտներում նշանակալից կապիտալ ներդրումներով ֆրանսիացի վարկատուները գերազանցում էին եվրոպական մյուս տերությունների իրենց գործընկերներին⁶⁸²: Ըստ Վ. Տատրյանի տվյալների՝ 1896 թ. ֆրանսիական կապիտալ ներդրումներն Օսմանյան կայսրությունում հասնում էին երկու բիլիոն ֆրանկի⁶⁸³: Նման պայմաններում, ինչպես մեծ տերություններից յուրաքանչյուրը, Ֆրանսիան ևս ամենևին շահագրգռված չէր Օսմանյան կայսրության մասնատմամբ, որը հղի էր նաև ֆինանսական ահռելի գումարների կորստի հեռանկարով:

Հաշվի առնելով քննարկվող հարցի կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ հիշատակել, որ արևմտահայության ամենաջերմեռանդ, սակայն տարբեր քաղաքական հավատամքներ դավանած գրեթե բոլոր ռահվի-

⁶⁷⁹ Այս մասին տե՛ս *E. Lavisse. Questions // "Revue de Paris", livraison du 15 janvier 1897, p. 459-460. Տե՛ս նաև *Unjgh Notre politique orientale // "Revue de Paris", livraison du 15 janvier 1897, p. 282, 310-311.**

⁶⁸⁰ *L. de Contenson, նշվ. աշխ., էջ XI:*

⁶⁸¹ *Е. К. Саркисян, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, с. 186.*

⁶⁸² *Նույն տեղում, էջ 187-188:*

⁶⁸³ *V. Dadrian, նշվ. աշխ., էջ 156:*

րաները (հայր Շարմետան, Ժորես, Բերար) նույնիսկ չեն հղացել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանությունը հարցականի ներքո դնելու գաղափարը: Ինչպես տեսնում ենք խոսքը, փաստորեն, վերաբերում է մի ամբողջ ժողովրդի հասարակական գիտակցությանն ու մտածողությանը, ուստի՝ պատահական չէ, որ 1890-ական թվականներին արևմտահայերի շահերի պաշտպանությամբ հանդես եկած սոսկ եզակի ֆրանսիացի մտավորականներ են առաջադրել զինված միջամտության և անխուսափելիորեն դրանից բխող կայսրության տարածքային ամբողջականության մասնատման պահանջ: Քիառից բացի, հիշատակենք Անրի Ռոշֆորի անունը, որի համոզմամբ «Թուրքիայի մասնատումը» պարտադրվում էր ամենակարճատև ժամանակամիջոցում⁶⁸⁴:

Ի դեպ, հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման գաղափարը խոր արմատներ ունի և վաղուց ի վեր՝ նույնիսկ մինչ Արևելյան հարցի ծագումը 1822 թ. Վերոնայի՝ Սրբազան դաշինքի վեհաժողովում, եղել է Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հիմնական նախապայմաններից: Դրան հետամուտ էր դեռևս Նապոլեոն I-ը, որը 1806 թ. հունիսի 20-ին՝ Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի դեսպան Սեբաստիանիին հղած գաղտնի հրահանգում գրում էր. «Ես չեմ ձգտում Կոստանդնուպոլսի կայսրության մասնատմանը. եթե ինձ առաջարկեին նույնիսկ դրա երեք քառորդը, ես այդ չէի ցանկանա: Ես ցանկանում եմ ամրապնդել ու հզորացնել այդ մեծ կայսրությունը և այն օգտագործել այնպիսին, ինչպիսին այն կա՝ Ռուսաստանին դիմակայելու համար»⁶⁸⁵:

XIX դարում այս վարդապետությունն ամրագրվեց միջազգային տարբեր պայմանագրերում, մասնավորապես, 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրի 7-րդ հոդվածում⁶⁸⁶:

⁶⁸⁴ Այդ մասին տես *Ե. Khayadjian*, նշվ. աշխ., էջ 87:

⁶⁸⁵ Հղումը ըստ՝ *В. Г. Сироткин*, Наполеон и Александр I, М., 2003, с. 110.

⁶⁸⁶ Сборник договоров России с другими государствами, 1856-1917, М., 1952, с. 25

Թեպետ, ինչպես ցույց տվեց իրադարձությունների զարգացման ընթացքը, Օսմանյան կայսրության տրոհման գործընթացը կասեցնելն անհնար էր, այդուհանդերձ, ոչ միայն Ֆրանսիան, այլև եվրոպական տերություններից յուրաքանչյուրը ջանացել են, հնարավորության սահմաններում, խոչընդոտել իրենց ռազմավարական շահերին անհարիր՝ կայսրության՝ «հիվանդ մարդու», իսկ հետագայում՝ Թուրքիայի մասնատմանը:

Ինչ վերաբերում է ռազմակալված հայկական տարածքների ճակատագրին, ապա՝ մեծ տերությունները մշտապես ջանք ու եռանդ չեն խնայել դրանց ազատագրմանը և, իբրև դրա հետևանք՝ այս տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը դիմակայելու համար: Հիշատակենք, թեկուզ Սան Ստեֆանոյի պայմանագրին հաջորդած՝ 1878 թ. հունիսի 4-ին Կոստանդնուպոլսում Անգլիայի՝ Օսմանյան կայսրության հետ կնքած պայմանագիրը, ըստ որի՝ եթե Ռուսաստանը փորձեր «տիրելու Ասիայում Նորին կայսերական մեծություն սուլթանի ունեցած այն երկրներից, որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի», նա պարտավորվում էր «միանալ Նորին կայսերական մեծություն սուլթանի հետ, զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար»⁶⁸⁷: Ուստի՝ պատահական չէ, որ Մ. Վարանդյանը Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքն անվանել է «չարաշուք» և «աղետավոր»⁶⁸⁸:

Հարկ ենք համարում ընդգծել ևս մեկ հանգամանք, կապված քննարկվող ժամանակաշրջանում Եվրոպայի գրաված դիրքորոշման հետ, որը հայրենական պատմագրության մեջ միշտ չէ, որ արժանացել է համակողմանի և սպառնիչ լուսաբանման: Անդրադառնալով այս հարցին՝ մեր նախորդները հաճախ սահմանափակվել են մեծ տերությունների քաղաքա-

⁶⁸⁷ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կի-րակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 104:

⁶⁸⁸ Մ. Վարանդեան, Հայկական շարժման նախապատմություն, հատոր երկրորդ, ժընեվ, 1913, էջ 189, 190:

կանության խարազանմանն առնչվող հուզումնալից և մակերեսային դիտարկումներով: Իրականում, անկողմնակալ պատմաբանն ուշադրությունը կենտրոնացնելով այս հանգամանքի վրա, իրավասու չէ անտեսել Օսմանյան կայսրությունում հավատարմագրված եվրոպացի դիվանագետների անձնուրաց վարքագիծը, ինչպես նաև արևմտյան մտավորականների ծավալած հայանպաստ գործունեությունը:

Հիրավի, մի կողմից՝ Հայկական հարցում մեծ տերությունների կառավարող շրջանների քաղաքականության, ինչպես նաև նրանց ծառայող գրչակների որդեգրած վարքագծի, իսկ մյուս կողմից՝ Ֆրանսիացի դիվանագետների ու մտավորականների մի մասի դիրքորոշման միջև առկա է ահռելի զանազանություն: Եթե եվրոպական պետությունների պաշտոնական շրջանները, ելնելով իրենց ռազմավարական շահերից, արևմտահայության ճակատագիրը մատնել են բախտի քմահաճույքին, ապա զանազան երկրների և, մասնավորապես, Ֆրանսիայի, ժողովրդավարական խավերն ի սկզբանե զորավիգ են եղել արևմտահայությանը և ներդրել բոլոր ջանքերը՝ նահատակվող ժողովրդին կործանումից փրկելու համար: Ըստ այդմ՝ նպատակահարմար ենք գտնում այս հարցում վկայակոչել իրադարձությունների ժամանակակից՝ հայ գործիչների մեկնաբանությունները: Արշակ Չոպանյանն, օրինակ, այս առիթով իրավամբ նշել է. «Այն պահուն, ուր կառավարությունը սուլթանին մեղսակից կ'ըլլար հրապարակավ, ուր լրագրությունը ամենամեծ մասամբ դահիճը կը պաշտպաներ, ճշմարիտ Ֆրանսան իր զայրույթի ձայնը լսելի ըրավ. այդ Ֆրանսան Արևելքի քրիստոնեից պաշտպան կաթոլիկ Ֆրանսան չէր (բացի հ[այր] Շարմետանեն, որ անկեղծորեն ու հարատևորեն հայուն դատը պաշտպանեց, կաթոլիկ կուսակցությունը գաղջ ու երկդիմի համակրություն մը ցուցուց և թրքասեր գործը ոյուրացուց Հանոտոյին), այլ հեղափոխության Ֆրանսան էր, որ առանց վերապահման իր բացարձակ զայրույթը գոռաց, – Կլեմանսո, Սևերին, Լավիս, Բերար՝ մանուլին մեջ, Անատոլ Ֆրանս՝ բեմ իջնելով իր աշխատանոցեն ուրկե առաջին անգամ ըլլալով

դուրս կ'ելլեր հանրային գործունեության համար, ժորեստ՝ խորհրդարանը սարսելով իր շանթահարիչ բողոքովը»⁶⁸⁹:

Այս կապակցությամբ համահունչ կարծիք է հայտնել Ա. Ահարոնյանը, որը Քիառի հիշատակին նվիրված՝ 1912 թ. փետրվարի 16-ին Փարիզում ունեցած ելույթում ընդգծել է Յայկական հարցում ֆրանսիական կառավարության պաշտոնական քաղաքականության և ֆրանսիացի մտավորականների գրաված դիրքորոշման ներհակության փաստը. «Պաշտոնական Ֆրանսիան ևս մեզ թողել էր մեր թագակիր դահճի ողորմածությանը. այն ևս, առանց իր վեհ անցյալին վայել բողոքարկման, թույլատրել էր, որ մարդկության դեմ ուղղված մեծ հանցագործությունն իրականացվի: Սակայն, գոյություն ուներ մեկ այլ Ֆրանսիա՝ Վոլտերի, Լաֆայետի, Վիկտոր Յյուգոյի և Պաստորի Ֆրանսիան: Այդ փառապանծ Ֆրանսիան կանգուն էր՝ իբրև հավերժական պահապանն այն ազնվաբարո ավանդույթների, որոնք միշտ եղել են և կլինեն այս երկրի վեհության ու անդիմադրելի հմայքի առհավատչյան»⁶⁹⁰:

Նշենք, ի դեպ, որ նույնն են հավաստել նաև ֆրանսիացի մի շարք գործիչներ, այդ թվում Ֆրանսը⁶⁹¹ և Քիառը: «Դրոշակի» խմբագրությանը հղած՝ 1899 թ. հոկտեմբերի 24-ի թվակիր նամակում վերջինս գրել է. «Քաղաքակիրթ անվանվող ժողովուրդների կառավարությունները դարձել են ձեր դահճի հանցակիցներն ու ծառաները, որոնց նա վճարում է ֆինանսական կոնցեսիաներով և պարգևատրում շքանշաններով: Սակայն բոլոր այդ երկրներում ձեզ գորավիզ են սրտի մարդիկ և հեղափոխականները, որոնք հրաժարվում են միանալ իրենց իսկ ղեկավարների և թշնամիների՝ կառավարողների պաշտոնական պատվազրկությանը:

Ձեզ հետ միասին և ձեզ համար մեր ամբողջ ուժերով մենք

⁶⁸⁹ Ա. Չոպանյան, Դարավերջի Ֆրանսան.– «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 5-6, էջ 155:

⁶⁹⁰ A la mémoire de Pierre Quillard, p. 21-22.

⁶⁹¹ Այդ մասին տես Ե. Գասպարյան, Անատոլ Ֆրանսը և հայ ժողովուրդը, էջ 60:

կշարունակենք պայքարը մեծ մարդասպանի դեմ՝ խոսքով ու գրչով, իսկ երբ պահը վրա հասնի՝ գործողությամբ»⁶⁹²: Քիառը հայ ժողովրդի ֆրանսիացի պաշտպանների առաջնահերթ պարտականությունն է համարում, այսպիսով, եվրոպական հանրությանը «շարունակ իրագեկել հայկական նահատակությանը վերաբերող գործին և անդուլորեն մերկացնել պատասխանատու անձին և վարչակարգը»⁶⁹³: Հիրավի, մինչ Հայոց ցեղասպանության գործընթացի ավարտը՝ ֆրանսիացի մտավորականները հավատարիմ մնացին Քիառի պատգամին⁶⁹⁴:

Ֆրանսիացի գործիչների հայանպաստ գործունեությունը բարձր է գնահատել նաև Մ. Վարանդյանը. «Այդ շարժումը միանգամայն ապարդյուն չանցավ: Գանգատներ ունի, անշուշտ, հայ վատաբախտ ժողովուրդը, իրավացի գանգատներ եվրոպական հասարակություններու անտարբերության առիթով: սակայն, մյուս կողմեն իրողություն է և այն՝ որ արևմտյան, մասնավորապես, ֆրանս-բրիտանական հանրային կարծիքը... ձգտեր է և ստեպ հաջողեր է՝ 1896-են ի վեր – սանձ դնել Ելըզգի ջարդարար ախորժակներուն և արգելել գանգվածային կոտորածները»⁶⁹⁵: Նա արժեվորել է հատկապես այդ շարժման դերը 1910-ական թվականներին Արևմտյան Հայաստանում նախատեսվող բարենորոգումների իրականացման ուղղությամբ նախաձեռնված քայլերին ընթացք տալու ասպարեզում (նկատի ունենալով, մասնավորապես, եվրոպացի տեսուչներ Վեստենենկի և Հոֆֆի նշանակումները): «Այդտեղ է, որ, ի շարս այլ ազդակներու, արևմտյան հանրային կարծիքը – խթանված մշտապես Հ.Յ. Դաշնակցության կողմեն – ունեցեր է, անտարակույս, իր բաժին դերը»⁶⁹⁶:

XX դարի սկզբին ֆրանսիացի մտավորականների մարտական ելույթները, բնականաբար, առաջ են բերել, Աբդուլ

⁶⁹² «Դրոշակ», 1899, թիվ 8, էջ 115:

⁶⁹³ P. Quillard, La Quinzaine // “Pro Armenia”, 25 novembre 1902.

⁶⁹⁴ Տե՛ս օրինակ Վ. Պողոսյան, Մի անտիպ փաստաթուղթ.– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, թիվ 3, էջ 174-176:

⁶⁹⁵ Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, էջ 192-193:

⁶⁹⁶ Նույն տեղում, էջ 193:

Համիդի երկյուղը: Վերջինս, օգտվելով Ֆրանսիայում գործող օրենքների ընձեռած հնարավորությունից, ցանկացել է դատական գործ հարուցել արևմտահայության ֆրանսիացի պաշտպանների դեմ: Այս առիթով «Անահիտ» ամսագրի աշխատակազմը Քիառին անվանել է նախատեսվող դատի «գլխավոր դերակատար», որը «Թուրքիո արդի կացությունը ամենեն մանրամասն ու ամենեն ներքին կերպով գիտցող ֆրանսիացիներեն է»⁶⁹⁷: Աբդուլ Համիդը, թեև փոքր-ինչ ուշացումով, այդուհանդերձ, գիտակցել է, թե իր համար ինչպիսի հետևանքներով են հղի դատական քննության արդյունքները և հրաժարվել է իր պահանջից: Այս հանգամանքը Քիառին հիմք է տվել ծաղրելու սուլթանին, որն, ըստ նրա՝ «գանգատվում էր, մասնավորապես, այն բանի համար, որ իրեն անվանում էին «մեծ մարդասպան, մեծ մսագործ, կարմիր սուլթան, կարմիր գազան»։ Երբ նա իմացել է, որ փաստն ապացուցվելու է դատական նիստում, հրաժարվել է իր բողոքից, խոստովանելով, այսպիսով, որ ինքն արժանի է բոլոր այդ տիտղոսներին»⁶⁹⁸:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ լայն տարածում գտած՝ ցեղասպանության պատմականությունը ժխտող տեսակետի առաջին մունետիկների բարբառանքների առիթով, հարկ ենք համարում նշել, որ նրանց թեզերը հետագա տասնամյակներում բազմիցս վկայակոչել և ուռճացրել են ցեղասպանության հավաստիությունը ժխտող թուրք և այլազգի պատմաբանները, որոնցից շատերը գործադրել են բուռն ջանքեր՝ Հայոց ցեղասպանության և հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրելու ուղղությամբ, անվարան որդեգրել, հատկապես, Օսմանյան կայսրությունում հայերի բարեկեցության

⁶⁹⁷ «Սուլթանին դատը».- «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 1-2, էջ 41:

⁶⁹⁸ P. Quillard, Pro Armenia // "Pro Armenia", 25 novembre 1900. Այս առիթով, ի դեպ, «Անահիտ» ամսագրի աշխատակազմը սոսկ կսկիծ է հայտնել և հեզմանքով նշել. «Այդ դատը, եթե տեղի ունենար, սուլթանին կամքովը կատարված միակ բարի գործը պիտի մնար, և անոր խափանումը Ելըզի Մարդասպանին ամենեն ծանրակշիռ ոճիրներեն մեկը կրնանք համարիլ»: Տես «Սուլթանին դատը».- «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 3, էջ 79:

վարկածը, տուրք տվել դարերի ընթացքում՝ թուրքերի և ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում հայերի, «խաղաղ գոյակցության» տեսությանը⁶⁹⁹:

Այս առումով, XIX դարի վերջի և XX դարի սկզբի ֆրանսիացի ժամանակակիցների՝ Հայոց ցեղասպանության գործընթացին նվիրված մերկացուցիչ ելույթները ձեռք են բերում առավել մեծ նշանակություն և այժմեականություն: Թե՛ գիտական մանուլում և թե՛ ֆրանսիական խորհրդարանում ծավալած նրանց գործունեությունը մեծապես խթանել է Հայոց ցեղասպանության պատմությունը լուսաբանող արժեքավոր սկզբնաղբյուրների հրատարակմանը և հարցի պատմության գիտական լուսաբանմանը: Ֆրանսիացի պատմաբանների գերակշռող մասը հավուր պատշաճի չի մեկնաբանել Հայոց ցեղասպանության գործընթացին առնչվող որոշ, այդ թվում էական հարցեր, մասնավորապես, համակողմանիորեն չի լուսաբանել դրա դրդապատճառները: Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրության սկզբնավորման համար մենք նրանց ենք պարտական, ինչը պայմանավորում է նրանց գործունեության պատմական նշանակությունը:

Ընդհանուր առմամբ, ֆրանսիացի պատմաբանների, և մտավորականների՝ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ուսումնասիրություններն աներկբայորեն հավաստում են մի շարք էական իրողություններ և դրանով իսկ նպաստում այս իրադարձության պատմության մեր օրերի կեղծարարների առաջադրած տեսակետների մերկացմանը.

1. Հայոց ցեղասպանությունն իրականացվում էր պետական քաղաքականության մակարդակով՝ անձամբ Աբդուլ Համիդ II-ի հրահրմամբ, նախօրոք մշակված ծրագրի հիման վրա:

⁶⁹⁹ Տե՛ս օրինակ P. Loti, *Les massacres d'Arménie*, Paris, 1918; G. Gaillard, *Les Turcs et l'Europe*, Paris, 1920; Enver Zia Karal, *Armenian Question*, Ankara, 1975; Salahi R. Sonyel, *Displacement of the Armenians. Documents*, Ankara, 1978; *Facts from the Turkish Armenians*, Istanbul, 1980; P. A. Moser, *Arméniens. où est la réalité?* Saint-Aquilin-de-Pacy, 1980; *The Armenian Issue in Nine Questions and Answers*, Ankara, 1982; E. Uras, *նշվ. աշխ.*, էջ 370-371:

2. XIX դարի վերջին և XX դարի սկզբին օսմանյան վարչակարգի ղեկավարները հայ ժողովրդի բնաջնջումն ակնհայտորեն իրականացնում էին «մտադրվածության» կամ «դիտավորության» հիման վրա, որը «ցեղասպանության»՝ իբրև երևութի սահմանման հիմնական բնորոշիչներից է: Ըստ այդմ՝ Աբդուլ Յամիդ II-ի գահակալության օրոք տեղի ունեցած արևմտահայության զանգվածային՝ շուրջ 300000 զոհ կլանած ոչնչացման գործընթացը հարկ է բնութագրել իբրև Յայոց ցեղասպանության առաջին փուլ:

3. Յայոց ցեղասպանության գործընթացը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում երբևէ չի մարել, այլ իրականացվել է տարատեսակ եղանակների կիրառմամբ, ինչպիսիք են զանգվածային կոտորածները (1894-1896 թթ., 1904 թ.), իսկ դրանց միջանկյալ շրջանում՝ անհատական սպանությունները, արհեստականորեն կազմակերպված սովը, բռնի կրոնափոխությունը, բնաջնջման նպատակ հետապնդող՝ մարդկանց տեղափոխվելու արգելքը և այլն:

4. XIX դարի երկրորդ կեսին օսմանյան բռնի վարչակարգի լծի տակ հեծող արևմտահայության հանդեպ կիրառվել է ռասիստական քաղաքականություն, որը պատճառ է դարձել արտասահմանում հայկական կուսակցությունների գործունեության համար:

5. Օսմանյան բռնատիրության դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարն օրինաչափ է, քանզի այն պայմանավորված է եղել արևմտահայության ծանր կացությամբ, այլ ոչ թե արտասահմանում հիմնադրված հայկական կուսակցությունների հրահրմամբ: Յայ ֆիդայիների իրականացրած կարծեցյալ բռնություններին վերաբերող առասպելը հիմնազուրկ է:

6. XIX դարի 80-90-ական թվականներին արևմտահայությունը պայքարել է ոչ թե հանուն անկախության, այլ անելանելի կացության բարելավման, միջազգային պայմանագրերով նախատեսված բարենորոգումների կենսագործման: Յայերը երբևէ նախահարձակ չեն եղել և օսմանյան իշխանություններին

հիմք չեն տվել իրենց նկատմամբ կիրառել «արդարացված» բռնություններ:

7. Հայոց ցեղասպանության հիմնական պատճառներից է եղել Հայկական հարցին լուծում տալու անհրաժեշտությունը, այլ ոչ թե հայկական կուսակցությունների գործունեությունը:

8. Եվրոպական մեծ տերությունները Հայոց ցեղասպանության հարցում ստանձնել են անտարբեր դիտորդի դեր և ելնելով իրենց քաղաքական, տնտեսական, ֆինանսական շահերից ձեռնպահ մնացել Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելուց, որն Աբդուլ Համիդի համար ճանապարհ է հարթել իրականացնելու արևմտահայության ոչնչացման քաղաքականությունը:

9. 1893-1895 թթ. ռուս-ֆրանսիական դաշինքի կայացումից հետո հանրապետական Ֆրանսիան և ինքնակալական Ռուսաստանը Հայկական հարցում որդեգրել են համահունչ քաղաքականություն, որը չի նպաստել Հայոց ցեղասպանության գործընթացի կասեցմանը:

10. Հայոց ցեղասպանության գործընթացն, այնուամենայնիվ, ինչ-որ չափով սանձահարվել է շնորհիվ ֆրանսիացի մտավորականների գործուն աջակցության:

Եւրոպայի մեծ տերությունները, որ Հայոց ցեղասպանության գործընթացին մվիրված ֆրանսիացի պատմաբանների, մտավորականների և քաղաքական գործիչների բազմազան ելույթների, ամենագնահատելի կողմերից մեկը, անտարակույս, հայ ժողովրդի ողբերգության մասին հեռավոր իսկ պատկերացումներ չունեցող եվրոպացի ժամանակակիցներին, երբեմն գուցե ոչ լիարժեք, այդուհանդերձ, տեղեկություններ հաղորդելն է: Թեև նրանց ձեռնարկած քայլերն էականորեն չեն ազդել Ֆրանսիայի պետական արևելյան քաղաքականության ուղղության փոփոխության վրա, այդուհանդերձ, ինչպես իրավամբ նշել է Իվ Տերնոնը՝ «նրանց շնորհիվ է Ֆրանսիան իրազեկ դարձել Հայաստանի դժբախտություններին»⁷⁰⁰:

Ըստ այդմ՝ մեր պարտքն է հարգանքի խորին տուրք մա-

⁷⁰⁰ Y. Ternon, նշվ. աշխ., էջ 132:

տուցել հայ ժողովրդի՝ ֆրանսիացի նվիրյալների հիշատակին և անկողմնակալորեն արժեվորել Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության ու գնահատման ասպարեզում նրանց մեծ ներդրումը, ամենևին, չվարանելով, մատնանշել նրանց մոտեցումների սահմանափակությունները և ոչ իրատեսական հարցադրումները կամ երբեմն մակերեսային մեկնաբանությունները: Հայոց ցեղասպանության պատմության կեղծարարներին դատապարտող պատմաբանը պարտավոր է տալ թե՛ իրադարձությունների և թե՛ իր նախորդների գործունեության հավաստի գնահատականները՝ խուսափելով փոքրիսկ գունազարդումներից:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբբաս շահ – 110

Աբդուլ Չամիդ II – 5, 8, 10, 25, 45,
51-57, 59-60, 66-68, 71, 73-81,
83, 86, 91-94, 98-99, 103, 105,
108, 115-117, 120, 123, 126, 138,
141-144, 146, 149, 153-154, 156,
161-162, 184, 190, 199, 202, 207-
208, 214, 218, 222, 225, 228,
231-232, 234, 236-239, 241,
243-244, 247, 256--260

Աբդուլ Մեջիդ – 191, 243

Ադոսիդես Ա. տես Դորիս Ժ.

Աթաբեկյան Լ. – 165

Ալեքսանդր III – 69

Ալլոշ Պ. Բ. – 235-237, 239-240

Ահարոնյան Ա. – 171-172, 255

Աղայան Ծ. – 18, 97, 157, 167

Աճառյան Յ. – 117

Անդրանիկ – 162, 164-168, 170

Ապպիա Գ. – 62-63

Ավետիսյան Յ. – 20

Բ

Բախչինյան Ա. – 9

Բարիդոն Ռ. – 59-61

Բարրալ Պ. – 19

Բաուեր Ե. – 8

Բերար Վ. – 49-56, 72, 133, 139,
170, 234, 252, 254

Բերժերոն – 22, 24, 28, 35

Բերտելո Ֆ. – 175, 184

Բեքեր Ժ. – 48, 78-80

Բշարե Խալիլ – 168

Բրայս Զ. – 39

Բրյուա Ժ. – 114

Բուլիմիեր – 22, 25, 28

Գ

Գալոյան Գ. – 58

Գասպարյան Ե. – 19, 100, 118, 138,
141, 255

Գլադստոն Ռ. – 45, 56, 59, 70, 242

Գյուլլիուա – 22, 32-33, 36

Գուլիս Ժ. – 76-78

Գոնդալ Լ. – 37, 200

Գրիգորյան Յ. – 157, 165-166

Գուստ Վ. – 218

Գևորգ Զառուշ տես Սարիատ

Գևորգյան Յ. – 19

Դ

Դալլաքյան Կ. – 38, 170

Դե Կուրսոն Ռ. – 240-242

Դելկասե Տ. – 152, 155, 161

Դեմոսթենես – 117

Դեշանել Պ. – 105

Դիլոն Է. – 59

Դոմեթիանոս – 178

Դոտի-Աուլի – 33

Դորիս Ժ. – 92

Դրեյֆուս Ա. – 134

Դրիո Է. – 11, 15, 48, 68-70

Ե

Եղիշե – 115

Ձ

Ձավարյան Ա. – 170
Ձարդարյան Ռ. – 170
Ձեքի փաշա – 123, 156
Ձիա փաշա – 35
Ձուլա է. – 134
Ձոհրապ Գ. – 170-172

Թ

Թալեաթ փաշա – 240
Թառոյան Կ. – 19, 157
Թոյնբի Ա. – 39
Թևֆիկ փաշա – 36

Ժ

Ժերար Ա. – 169
Ժորես ժ. – 11, 21, 38, 97, 113-120,
124-125, 130-131, 157, 252, 255

Ի

Իսմայիլ բեյ – 25

Լ

Լամի է. – 73-75
Լանգլուա Շ.-Վ. – 12
Լանգլուա Վ. – 115
Լավիս է. – 12, 15, 37-38, 56, 70-
72, 81, 139, 254
Լաֆայետ Մ. – 255
Լենկ Թեմուր – 110, 180
Լեո – 97
Լերուա-Բուլիո Ա. – 11, 44, 185,
206-213
Լեփսիուս Յ. – 9, 206
Լյուդովիկոս XIV – 182
Լո ժոն է. – 247

Լոնգվիլ – 29, 33
Լոռիս-Մելիքով Յ. – 97
Լևեյր Մ. տես Քիառ Պ.

Խ

Խաչատրյան Ա. – 19
Խարազյան Մ. – 17
Խորենացի – 115
Խվոստով Վ. – 148-149
Խրիմյան Մ. – 163
Խուրշուղյան Լ. – 8

Կ

Կահրն Մ. Լ. – 81-84
Կահյուե Ա. – 87-91
Կամբոն ժ. – 37
Կամբոն Պ. – 22-37, 175, 183, 214,
218, 227
Կարա դը Վո – 193, 202-206
Կարապետյան Մ. – 18
Կարապետյան Ն. – 104
Կարլիե է. – 45-47
Կարլիե Մ. – 26, 28-29, 45
Կինյապինա Ն. – 149
Կիրակոսյան Ջ. – 19, 48, 119, 253
Կլավդիոս Էլիանոս – 133
Կլեմանտ ժ. – 11, 39, 97, 102-109,
157, 218, 254
Կյուրրի Ֆ. – 31
Կոնտամսոն Լ. դը – 36, 56-59, 133,
251
Կոշեն Ռ. – 21, 109-113, 116, 130-
131, 139, 157, 238
Կոստանոյան է. – 157, 164, 192
Կուլբր Պ. – 48, 214, 223-228
Կուկունյան Ա. – 148

Յ	Մնացականյան Ա. – 18, 98
Համբարձում – 192	Մոնո Գ. – 12
Համբարյան Ա. – 19, 58, 146, 157, 167, 236	Մուհամեդ – 41, 203, 244
Հայրապետյան Հ. – 14	Մուն Ա. դը – 21, 125-131
Հայրունի Ա. Ն. – 9	Մունիր բեյ – 144, 161
Հանոտո Գ. – 21, 24, 32-34, 37-38, 72, 120, 124, 146, 213, 217, 230-234, 254	Մուստաֆա փաշա – 40
Հերոնդաս – 133	Մուրադ բեյ – 243
Հյուզո Վ. – 255	Յ
Հովհաննիսյան Ն. – 18	Յամբլիբոս – 133
Հովնան Գ. – 100	Ն
Հորոուից Լ. Ի. – 7	Նապոլեոն I – 15, 182, 252
Հոֆֆ – 256	Նգրուրյան Գ. – 108-109
Հուբբար Գ.-Ա. – 131	Ներոն – 178
Հուդրի-Մենոս – 228-229, 242	Ներսիսյան Մ. – 6-7, 9, 157
Հուսեյն փաշա – 63	Նիկոլայ II – 70
Ղ	Շ
Ղարիբջանյան Գ. – 19	Շարմետան Ֆ. – 11, 16, 44, 48, 101-102, 139, 173-174, 176-186, 194, 197, 199-200, 250, 252, 254
Ս	Շվիտեր Հ. դը – 93
Սալբոլմ Մ. Բ. – 64	Շուբլիե Մ. – 84-87
Սակլեր Ֆ. – 10	Չ
Սանֆրեդ Ա. – 114	Չառնի Ի. – 7
Սարժերի Լ. – 146, 230, 233	Չինգիզ խան – 177, 180
Սարիլիե Լ. – 220-223	Չոպանյան Ա. – 17, 38, 55-56, 66, 98, 110, 134-135, 138-139, 170-171, 230, 254-255
Սարկոսյան Ս. – 192	
Սելիբ-Կարազյոզյան Գ. – 9	Պ
Սելբոնյան Մ. – 50	Պաստոր Լ. – 255
Սենմեդ II – 235, 244	Պեգի Շ. – 142
Սեյրիե Գ. – 22, 24, 26-28, 32-34, 38	
Սիլերան Ա. – 131	
Սիբայեյան Բ. – 97, 171	
Սկոտչյան Լ. – 157	

Պեյլերյան Ա. – 13, 86
Պիզանի – 11, 16, 44, 183, 186-200
Պինոն Ռ. – 80
Պոդոսյան Կ. – 8
Պոդոսյան Յ. – 104, 137, 157, 166-168
Պոդոսյան Ս. – 8, 19
Պոդոսյան Վ. – 14, 36, 38, 215, 256
Պոնյոն – 34
Պորփյուր – 133
Պրանս Ս. – 218, 233
Պրեսանսե Ֆ. դը – 9, 11, 38, 97, 113, 117, 121-125, 134, 170, 186

Ռ

Ռադիբ փաշա – 40
Ռամբո Ա. – 81
Ռեզլա Պ. դը – 91
Ռեմի Կ. տես Սևերին
Ռոբերտի Ե. – 97
Ռոշֆոր Ա. – 97, 252
Ռուզոն – 22
Ռումմել Ռ. Ջ. – 7
Ռուստո Լ. – 243-247

Ս

Սահակյան Ռ. – 9, 18, 109
Սանթուրջյան Գ. – 234
Սապահ-Գյուլյան Ս. – 49-50, 109, 115, 117-119, 213-215, 218, 228
Սարհատ – 164
Սարուխանյան Տ. – 39
Սաֆրաստյան Ա. – 234
Սաֆրաստյան Ռ. – 6, 8
Սեբաստիանի Օ. Ֆ. – 252
Սենյոբոս Շ. – 12, 15, 81
Սերոբ – 166-167

Սիանանթո – 170, 172
Սիլլիեր – 26, 35
Սիմոնյան Յ. – 157, 164, 168
Սիմոնյան Պ. – 58
Սոֆոկլես – 133
Սպիրով Դ. – 10, 248
Սուլմարիպա – 26, 28, 30, 35
Սևերին – 11, 101-102, 254

Վ

Վահրամյան Ա. – 140
Վանդալ Ա. – 9, 11, 15, 37, 70, 139, 214-220, 224, 226-227
Վարանդյան Ս. – 97, 117, 132, 139-140, 144, 149, 155-156, 165, 253, 256
Վարդանյան Յ. – 192
Վարդգես – 170
Վարժապետյան Ն. – 147
Վեստենենկ – 256
Վիլիելմ II – 55, 59, 144
Վոլտեր Ֆ. Մ. Ա. – 255

Տ

Տասնապետյան Յ. – 10, 97
Տատրյան Վ. – 21, 37, 231, 251
Տարոնեցի – 164
Տեր-Վարդանյան Գ. – 19
Տերնոն Ի. – 260

Ց

Ցիցերոն – 117

Ք

Քայաջյան Է. – 17
Քարայան Ս. Ա. – 188

Քիառ Պ. – 16, 48, 98, 118, 133-
172, 230, 233-234, 252, 255-257
Քինե վ. – 58, 187
Քոչար Մ. – 143-144

Օ

Օնար խալիֆ – 67
Օսման – 41
Օսման Նուրի – 234

Ֆ

Ֆերդինանդ Յերուղ Ա. – 134
Ֆինո ժ. – 64-66
Ֆիշեր Յ. – 165
Ֆիցմորիս – 31
Ֆոնտենաս Ա. – 134, 169
Ֆրանս Ա. – 5, 11, 97-100, 134, 254-
255
Ֆրեմոն Պ. – 94

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աղանա (տարածաշրջան) – 28, 188

Աղիյաման – 32

Ալբանիա – 93

Ալբիստան – 32

Ալեքսանդրետտա

(տարածաշրջան) – 29

Ալեքսանդրետտա (քաղաք) – 22, 33

Ակն – 27

Աղաթեր – 30

Աղջա-Գյունեյ – 30

Ամերիկա – 59

Ամերիկայի Միացյալ Նահանգներ – 148

Այնթաբ – 56

Անատոլիա – 29, 103, 128

Անգլիա – 9, 31, 50-51, 84, 89-90, 148-149, 227, 253

Անգորա – 22, 28, 32, 34-36

Անդոք լեռ – 137

Անժեր – 224

Անկարա տե՛ս Անգորա

Ապրանք – 33

Առաքելոց վանք – 165, 167

Ասիա – 103, 215, 236, 253

Ասիական Թուրքիա – 147, 188

Աստոյի գոմ – 33

Արաբկիր – 39, 41-43

Արարատ – 150, 177

Արևելյան Անատոլիա – 208

Արևելյան Թուրքիա – 188

Արևելք – 56-57, 144, 193, 219, 227-228, 251, 254

Արևմտյան Հայաստան – 9, 14, 22, 36, 39, 44, 51, 56, 58, 60, 62, 66, 69, 88, 102-103, 111, 129, 140, 148, 151, 159, 177, 184, 188, 191, 196, 203, 211, 215, 222, 225, 235-236, 240, 256

Աֆրիկա – 12, 103

Բ

Բաբերդ – 42

Բագառիճ – 30

Բալկանյան թերակղզի – 246

Բալկաններ – 150, 245

Բալու – 42

Բայաս – 33

Բայբուրդ տե՛ս Բաբերդ

Բեռլին – 23, 60, 68-69, 80, 84, 88, 99-100, 104, 106, 118, 125, 129, 135-136, 147, 151-154, 182, 191, 197, 207, 221, 234-235

Բերա – 133

Բիթլիս (տարածաշրջան) – 188, 204

Բիթլիս (քաղաք) – 41-42, 145, 216, 222, 235-236

Բիրեցիկ – 31-32, 57

Բյուզանդիա – 244

Բոսֆոր – 92

Բրյուսել – 17

Բուլղարիա – 9, 79, 172, 195, 209

Գ

Գառգառ – 42

Գելիեգուզան – 137

Գերմանիա – 9, 227
Գյուլիսանն – 191
Գողգոթա – 171
Գվինեա – 12

Դ

Դամասկոս – 22
Դապիկ – 162
Դերջան – 30, 33
Դիարբեքիր – 22, 24, 26-28, 32-35,
38, 51, 69, 89, 216
Դիվրիզի – 47
Դորուկ – 33
Դվնիկ – 33

Ե

Եգիպտոս – 209
Եմեն – 245
Եվրոպա – 10, 35, 43, 53, 56, 62,
65-66, 70, 72, 77, 81, 88, 99-
100, 116, 118, 120, 125, 129,
131, 144, 150, 152-153, 163-
165, 171, 178-181, 184-186,
211-212, 220, 223, 239, 241, 253
Երզնկա – 39, 41
Երուսաղեմ – 7
Երևան – 8
Եփրատ – 32

Զ

Չարա – 47
Չեյթուն – 22, 35, 62, 159, 205
Չմյուռնիա – 22

Է

Էսպելերեկ – 30
Էրզրում (տարածաշրջան) – 204

Էրզրում (քաղաք) – 22, 24, 28, 35,
39-40, 45, 192, 216

Թ

Թունիս – 12
Թուրքիա – 22, 25, 49, 66, 70, 75,
80, 94, 150, 153-155, 169-170,
180, 182, 192, 207, 212, 238,
243, 252-253

Ժ

ժնն – 98, 144, 220

Ի

Իսրայել – 8

Լ

Լիբանան – 9, 44, 195, 209
Լոնդոն – 39, 100, 106, 144
Լևանտ – 188

Խ

Խանասոր – 162, 165-166
Խաչիկ Օղլու գոմ – 30
Խասքոյ – 29
Խարբերդ – 40, 42
Խիզան – 42
Խնձրի – 30

Կ

Կարաբուլաղ – 30, 33
Կարահիսար – 47
Կեսարիա – 27, 33, 216
Կիլիկիա – 22, 39, 44
Կոնգո – 12
Կոնիա – 235

Կոստանդնուպոլիս – 9, 22, 24-25, 28, 43-44, 54, 58, 61, 69, 86, 89, 111, 122-123, 125-127, 133, 138-139, 142, 146-147, 156, 158-159, 169-170, 172, 192, 203, 215, 225, 228, 235, 244, 252-253

Կովկաս – 177

Կրեոնտ – 93

Յ

Յալեպ – 22, 31, 34

Յաճճ – 26

Յայաստան – 23, 43, 49-50, 55, 65-66, 70, 78, 85, 87, 90, 99-101, 103, 106, 117, 119, 123-124, 140, 169, 171, 176, 181, 185, 193, 195, 206-207, 216, 221, 231, 236, 260

Յեռավոր Արևելք – 12

Յիսնի-Մանսուր – 42

Յնդկաչին – 12

Յոռոմ – 100, 107

Յունաստան – 82, 195

Ղ

Ղալաթիա – 127, 133

Ս

Սաղազասկար – 12

Սալաթիա – 39, 69, 89, 216

Սակեդոնիա – 99-100, 134, 169

Սամրտանք – 42

Սամուրեթ ուլ Ազիզ – 235

Սանթառա – 33

Սարաշ – 32, 39, 56, 222

Սարգվան – 147

Սեծ Բրիտանիա տե՛ս Անգլիա

Սերձավոր Արևելք – 87, 90, 100, 250-251

Սերսին – 26, 28, 35

Սիսիս – 30

Սոլլա Սուլեյման – 28

Սոնպելիե – 19

Սուշ (տարածաշրջան) – 145, 155, 162, 168, 204

Սուշ (քաղաք) – 42, 69, 110, 123, 136, 145, 155, 161, 167, 216

Շ

Շվեյցարիա – 9

Շուշնամերկ – 168

Չ

Չարշանբա – 30

Չուրք Մարզպան – 29

Պ

Պայաս տե՛ս Բայաս

Պարիզ տե՛ս Փարիզ

Պարսից ծոց – 150

Պարսկաստան – 165-166

Պեր Լաշեզ – 172

Պոլիս տե՛ս Կոստանդնուպոլիս

Ռ

Ռուսաստան – 9, 69, 88-90, 106, 119, 148-149, 169, 191, 206, 252-253, 260

Ս

Սան-Ստեֆանո – 87, 191, 235, 253

Սասուն (տարածաշրջան) – 28, 101, 125, 136-137, 145, 162,

168, 215, 220,
Սասուն – 22, 24-25, 32, 51, 65, 69,
86, 89, 110-111, 118, 121, 123,
135, 155-156, 158-159, 161,
164, 167, 172, 192, 197, 203,
228, 232

Սեբաստիա տես Սվազ

Սղերդ – 40, 42

Սպարկերտ – 42

Սվազ – 22, 26, 29, 45-47, 89, 216

Ստամբուլ – 127, 209

Սուրբ Դավիթ – 30

Սուրբ Թորոս – 30

Սև ծով – 150

Սևերեկ – 32

Վ

Վան (տարածաշրջան) – 42, 187,
204

Վան (քաղաք) – 39, 45, 62, 104,
159, 166-167, 216

Վանա (լիճ) – 123

Վատիկան – 16, 107

Վերոնա – 252

Տ

Տարոն – 168

Տրապիզոն (տարածաշրջան) –
204

Տրապիզոն (քաղաք) – 22, 25, 35,
40-41, 71, 111, 216, 228, 235

Տևրիկ տես Դիվրիզի

ՈՒ

Ուզելի – 33

Ուռհա տես Ուրֆա

Ուրֆա – 22, 26, 32-34, 39, 56, 62,
66

Փ

Փարիզ – 19, 38, 49-50, 64, 70, 97-
98, 102, 117, 123, 134, 139-140,
144, 146, 171-173, 183, 193,
202, 213-214, 228, 252, 255

Փիրիս – 30

Փոքր Ասիա – 54, 87, 103, 110, 185,
187, 192

Ք

Քիոս – 9, 209

Քյոթուր – 30, 33

Օ

Օսմանյան կայսրություն – 5-6, 9-
11, 14, 22, 31, 37, 43-44, 49-50,
57-60, 64-65, 68, 70-73, 75-76,
80-82, 87-91, 94-95, 97, 100,
105-106, 108, 111, 113, 120, 125,
129, 131, 135-136, 138, 142-144,
147-148, 161, 164, 169, 173, 175,
177, 179, 184-188, 190, 193-194,
196, 201-203, 212, 214-215,
218-219, 224-225, 227-229, 231-
233, 236-238, 240-244, 248,
250-254, 257, 260

Ֆ

Ֆրանսիա – 9-11, 13-17, 21-22, 24,
26, 32-34, 36-37, 44-45, 49-50,
54-56, 59, 64, 68, 70-73, 75, 80,
84, 90, 94, 96-98, 101-102, 105-
106, 108, 113, 117-119, 125, 130-
131, 140-141, 148-149, 151,
153, 155, 161, 171, 175, 181-
186, 194, 199, 201-202, 205,
213, 219, 223, 226-227, 229-
230, 232-233, 238, 248, 250-255,
257, 260

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	5-20
ԳԼՈՒԽ I ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԸ	21-48
ԳԼՈՒԽ II ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ	49-96
ԳԼՈՒԽ III ԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԳՐՈՐԾԻՉՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	97-132
ԳԼՈՒԽ IV ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԻԵՌ ՔԻԱՌԸ	133-172
ԳԼՈՒԽ V ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՍԲ	173-201
ԳԼՈՒԽ VI ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ	202-229
ԳԼՈՒԽ VII ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ ԺԽՏՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	230-248
ՎԵՐՋԱԲԱՆ	249-261
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ	262-266
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ.....	267-270

Վարուժան Պողոսյան

Հայոց ցեղասպանության առաջին փուլը
ֆրանսիական պատմագրության և
հասարակական մտքի գնահատմամբ
(XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)

Варужан Погосян

Первый этап геноцида армян через призму
французской историографии и общественной мысли
(конец XIX – начало XX века)

Խմբագիր՝ Ջենմա Պետրոսյան
Համակարգչային շարվածքը՝ Վարուժան Պողոսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Վերա Պապյանի
Կազմի ձևավորումը՝ Ալվարդ Օհանջանյանի

Հրատ. պատվեր՝ N 178:

Հանձնված է արտադրության՝ 15.08.2005 թ.:

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆: Թուղթ՝ օֆսեթ N 1:

17 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան 24:

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090548

VARUZHAN POGHOSYAN

A $\frac{\pi}{90548}$

**LA PREMIERE ETAPE DU
GENOCIDE DES ARMENIENS
A TRAVERS LE PRISME DE
L'HISTORIOGRAPHIE ET DE LA
PENSEE PUBLIQUE FRANÇAISES
(FIN DU XIX° - DEBUT DU XX° SIECLES)**



ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈԳՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու: Հիմնական աշխատությունները նվիրված են XVIII դարի ֆրանսիական բուրժուական հեղափոխության, հայ-ֆրանսիական պատմական առնչությունների պատմության, XIX-XX դդ. ֆրանսիական պատմագրության հարցերին: Ֆրանսերենից հայերենի է թարգմանել է մեծ թվով գիտական աշխատություններ, այդ թվում Արթուր Պեյլերյանի աշխատասիրությամբ 1983 թ. Փարիզում լույս ընծայված «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)» փաստաթղթերի ժողովածուն (հ. I-II, Երևան, 2005): Բազմիցս ներկայացրել է խորհրդային և հայրենական պատմագիտությունը միջազգային գիտաժողովներում: